

Ս Ի Ո Ն

ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱԳԼԻՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ. Հոգևոր Հունձ, Ազգայանպանում, Կրօնական Դաստիարակութիւն. — 2. ԿՐՕՆԱԿԱՆ. Նախաշինք. Բ. Ե. — 3. Պարսկամեջիկ Ս. Գիրս Նոր Կտակարանի. «Զի դուք յազատութիւն կոչեցեալ կի, եղբարք» Զ. Թ. Մ. — 4. Մանկշակին. Վիշին Սրայեան. — 5. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Եզնիկ. Ե. Ե. Դ. — 6. ՊԱՏՐԱԿԱՆ. Քրիստոսի Մ. Ծննդեան Եկեղեցին եւ Հայոց Վանքը Բերդեհեմի մէջ. Մ. Ե. Ա. — 7. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ. Պոյսը. Նոսար. — 8. Փարսասձ Մշուշը. Նոսար. — 9. Անգին Հրճուանքը. Նոսար. — 10. Հեծերգ Տընջեան. Արսէն Երկար. — 11. Հայաստանեայց Եկեղեցւոյ Թեմերուն Կազմակերպութիւնը Եւրոպայի մէջ. Թ. Ե. Գ. — 12. Անկեղծը. Բակ. — 13. Պողոս Փաշա Նուպար. Թ. Ե. Գ. — 14. Պողոս Նուպար. Բակ. — 15. ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ. Ամիրսովյաքի Ամասիացւոյ Անգիսաց Անպիս կամ Բաւարան թշկական նիւթոց. Գրեց՝ Կ. Թ. Բաւարեան. Բ. Ե. — 16. Հայոց Հայրիկ. Գրեց՝ Հայկ Աճառեան. Բ. Ե. — 17. Մի գրեց. . . , Այլ գրեցեմ. . . . Գրեց՝ Հ. Ա. Ղազկիւան. Բ. Ե. — 18. Յուշագիրք. Գրեց՝ Ա. Թ. Մակարեան. Գ. Մ. — 19. Վարդապետ. * — 20. Ցաւակցականք Ամեն. Դուրեան Եզիշի Ս. Պատրիարքի մահման առթիւ. — 21. Մայր Արոն. — 22. Յոթեան Մեարոյթ Թ. Սեքեանցի. — 23. Կարողիկոսութիւն Կիլիկիոյ. — 24. Մահ Պատրիկ ԿԵ. Կիւլպիկեանի. — 25. Այլ եւ այլ. — 26. Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ.

The SION an Armenian Monthly of Religion

Printed in JERUSALEM - PALESTINE

ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔ (Ա.Լ.ՊՈՍ)

ՀԱՅ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ

Տէր,

Պատիւ ունիմ իմացնել Ձեզ թէ ՀԱՅ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔԸ (ալայով) պատրաստած եմ արտոնութեամբ Ամեն. Տ. Եղիշէ Դուրեան Ս. Պատրիարքի (այժմ հանգուցեալ), իր Յիսնամեայ Յորել-եանին առթիւ:

Պատկերները իրական լուսանկարներ են եւ ո՛չ թէ ընդօրինակութիւն կամ սպագրութիւն, մեծութիւնը 18x24 սանդիմէդր, իւրաքանչիւր լուսանկարին պատմական բացատրութիւնը դրուած է երեք լեզուներով (Հայ. Անգղ. Ճառաներէն):

ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔՍ կազմուած է գեղեցկագիտօրէն, գործ մովար կողով, որուն վրայ տպուած է Դաւթի պարիսպը:

ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔՍ կը բովանդակէ 50 իսկական լուսանկարներ. սկիզբը Երուսաղէմի պարիսպները, յետոյ Սրբոց Յակոբեանց Վանքը իր գլխաւոր մասերով, ողբացեալ Դուրեան Եղիշէ Ս. Պատրիարքի յօբելինական վերջին լուսանկարները. Հայոց վերաբերեալ շէնքերու եւ յիշատակարաններու լուսանկարները, ինչպէս նաեւ Սրբազան Եպիսկոպոսներու, Միաբաններու, Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի առակերտաց, Եւայն Եւայն, լուսանկարները, ամէնքն ալ հետաքրքրական նորութիւններ:

Այս ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔԸ այնպիսի գործ մըն է որ արժանի է ամէն ազգասէր հայու տան կամ մասեանադարանին զարդը կազմելու:

Այս լուսանկարները ազնիւ պարծանք մը պիտի ներշնչեն Ձեզ, եւ պիտի ըսէք թէ Հայ Ազգին այսօրու կորուստներէն վերջ դեռ ինչե՛ր ունինք եղեր Երուսաղէմի մէջ:

Այս զգացումներով է որ կը համարձակիմ առաջարկել Ձեզի որ օրինակ մը գնէք ՀԱՅ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ այս ՊԱՏԿԵՐԱԳԻՐՔԷՆ, որուն գինն է հասը 10 Ամերիկեան Զօլար, կամ 40 Անգլիական Շիլին, կանխիկ. ապահովագրեալ փոստի ծախքը մէջն ըլլալով:

Նամակ կամ դրամ դրկել

հետեւեալ հասցեով

ARAM HASHADOUR

P. O. Box 751

JERUSALEM (Palestine)

Ա.ՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

նկարիչ

Ուսուցիչ Ժառ. Վարժարանի

ի Վանս Ս. Յակոբեանց

ԵՐՈՒՍԱԴԷՄ



ՄԻՈՆ, ՀԱՅ ԱՄՍԱԳԻՐ



Գ. ՏԱՐԻ—ՆՈՐ ՇՐՋԱՆ

1930 ՅԼԱ.—ՕԳՍՏ.—ՍՊՏՄԵՐ.

ԹԻԻ 7-8-9

ԽՄԲԱԳՐԱԿԱՆՔ

ՀՈԳԵԻՈՐ ՀՈՒՆՁՔ

Ամեն. Դուրեան Սրբազանի մահով սգաւոր Ս. Յակոբը, պահ մը պայծառացաւ ժպիտներով՝ Յունիսի 22ին, Ս. Լճմիածնի Կաթողիկէ Եկեղեցւոյ Տօնին, քահանայական Չեռնադրութեանը առթիւ մեր Ընծայարանի Կիւլպէնկեան Դատարանի ութը Սարկաւաղներուն, Եօթանասնական թուականներէն ի վեր առաջին անգամն էր որ Ս. Յակոբի մէջ դպրոցական մասնաւոր պատրաստութեամբ օժտուած երիտասարդներ, աւարտելով իրենց ուսմանց համար ծրագրուած շրջանը, շքեղ և հոգեյոյզ հանդիսաւորութեամբ մը կը կոչուէին Սուրբ Ժառանգութեան, ընդունելով քահանայական Չեռնադրութեան շնորհը և օծութիւնը Ս. Հոգւոյն:

Հոգեւոյս Ս. Պատրիարքը ինքն պիտի կատարէր այս Չեռնադրութիւնը Վարդապետին, դպրոցական տարւոյն ճշգր վերջը: Մահը խլեց մեր ձեռքէն այդ թանկագին անձնաւորութիւնը, սուրբ քահանայութեան մշտաժպիտ և լուսաշող տիպարը, և մենք զրկուեցանք իր կրօնաշունչ պատգամներէն, որոնցմով պիտի պայծառակերպէր իր նորընծայ աշակերտները և պիտի հրճուեցնէր հոգիները հաւատացեալներու բազմութեան:

Բայց այդ նուիրական ժամուն Դուրեան Սրբազանի յիշատակն ու հոգին կը թրթռացնէր Ս. Յակոբի մթնոլորտը և անշուշտ Անոր շունչին թարմութիւնը զգացին իրենց կուրծքերուն տակ այս նորընծաներ, երբ իրենց երեսը դարձուցին արեւմուտք, ծնրադիր և ձեռամբարձ, դէմդիմաց պատրիարքական սեւաւքօղ աթոռին հետ, և երգուեցաւ Աստուծային և երկնաւոր շնորհը, հաշակելու համար իրենց մատաղ հոգիներուն նուիրումը աստուծային պաշտօնին՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ:

Երուսաղէմի Ընծայարանին այս հոգեւոր հունձքին մէջ էր մեր Մեծ-Վարդապետի հոգին, որ իր Յորեկեանին առթիւ կարուկ և յատակ կերպով արտայայտեց թէ ինքն իրրեւ Հայաստանեայց Եկեղեցւոյ քահանայ եղած էր ինչ որ եղած էր, և թէ իր կեանքին մնացեալը պիտի նուիրէր քահանաներ հասցընելու իր Մայրենի Եկեղեցւոյն: Դուրեան Սրբազանի կեանքին վերջալոյսին հասունցած հոգեւոր հունձքն եղաւ այս Չեռնադրութիւնը, որ պատմական մեծ արժէք մը պիտի ունենայ Ս. Յակոբի համար մասնաւորապէս և Հայց. Եկեղեցւոյ համար ընդհանրապէս:


1915 տարին, Հայ ժողովուրդի ջախջախման թուականն է: Համաշխարհային պատերազմը մոխիրներու վրայ նստեցուց Հայ Ազգը: Մենք ամէն բան կորսնցուցինք, բացի մեր ապրելու իրաւունքէն և վերաշինուելու հաւատքէն: Հայ Ազգին համար ամէն բան է իր Մայրենի եկեղեցին: 1915 էն ի վեր այս եկեղեցին ալ սարսեցաւ և սասանեցաւ: Արմաշի Դպրեվանքը, որ կազմակերպեալ կարևոր հաստատութիւն մըն էր հոգեւորականներու պատրաստութեան համար, կործանած էր իր կարգին: Միակ կեդրոնը կը մնար Երուսաղէմ, որ Մեծն Բրիտանիոյ դրօշին տակ ամէն ապահովութիւն կուտար վերստեղծելու նոր Դպրեվանք մը: Այս տողերը գրողին ջանքերով և ողբացեալ Բարերար Պատրիկ էֆ. Կիւլպէնկեանի առատաձեռնութեամբն հնարաւոր եղաւ Ամեն. Դուրեան Սրբազանի տրամադրութեան տակ զնեւ, պէտք եղած անձերը եւ գրամական միջոցները և Ս. Յակոբի Միաբնակութեան բարեյօժար օժանդակութեամբ կազմակերպել Ընծայարանը 1925 ին, եւ հինգամեայ խնամոտ կրթութեան մը շնորհիւ հասունցընել և պատրաստել Ս. Յակոբի մէջ առաջին հոգևոր հունձքը:

Պատրաստութիւն ըսելով կը հասկնանք Հայ. եկեղեցւոյ պաշտօնեաներուն հոգևոր եւ մտաւոր արժէքներուն եւ արժանիքներուն կազմակերպութիւնը: Հայ. եկեղեցին, իր պատմական կեանքի ընթացքին մէջ, միշտ ջանքեր ըրաւ պատրաստելու իր պաշտօնեաները: Եւ մեր օրերուն՝ Արմաշի Դպրեվանքէն սկսեալ մինչեւ Երուսաղէմի Ընծայարանը, եւ վաղն ալ Անթիլիասի Կիլիկեան ձեմարանը, մեր նախնեաց այդ բարձր և պայծառ տեսիլն է որ կ'առաջնորդէ Հայ. եկեղեցւոյ՝ իր պաշտօնեաները պատրաստելու համար իրենց փափուկ պաշտօնին:

Տգիտութիւնը, որ մայրն է բոլոր չարիքներու, պէտք է որ վերնայ մեր Մայրենի եկեղեցւոյ պաշտօնէութեան մէջէն: Պաշտօնէութեան տգիտութիւնն է պատճառը Հայ. եկեղեցւոյ վրայ յաժող ստուերներուն, Հնարաւորութեան սահմաններուն մէջ թոյլ պիտի չտանք որ հոգիով և մտքով անպատրաստ մարդիկ սքեմաւորուին. թոյլ պիտի չտանք որ աշխարհիկ կեանքի պայքարին մէջ նաւաբեկեալներ, եկեղեցական պատմաւճանի տակ ծածկուին կրծելիք հաց մը գտնելու համար. վերջապէս թոյլ պիտի չտանք որ Հայ ժողովուրդը ուժանայ իր եկեղեցիէն և մոռնայ իր հայրենի աւանդութիւններն ու առաքինութիւնները և աւրէ իր հայացի նկարագրին ամէնէն աղուոր գիծերը՝ այլասերիչ ազդակներու տակ:

Այս եղած է քառասուն տարիներէ ի վեր, Արմաշէն մինչև Սիոն, հետապնդուած նպատակը: Եւ ասոր համար է որ արժէք եւ նշանակութիւն ունի Կիւլպէնկեան Ընծայարանի ութը Սարկաւագներուն Ձեռնագրութիւնը, ժառանգաւորաց Վարժարանին նախակրթական քառամեայ շրջանին վրայ՝ հինգամեայ խնամեալ հոգևոր և մտաւոր դաստիարակութեամբ պատրաստուելէ ետքը:

Այս ութը երիտասարդներ 1915 ի ապականիչ արհաւիրքներէն ճողպարած հոգիներ են: Իւրաքանչիւրի կեանքին մէջ հայ տառապանքին, հայ ժողովուրդի զոյւթեան պայքարին մէկ գրուազը կ'ապրի: Շատ յուզիչ եւ ցնցիչ են առնալ իրենց պատմական մանրամասնութիւններուն մէջ: Անոնց անմեղ բայց գիտակից մանկութիւնը քալած, քալած է արիւնի եւ կորուստի բոլոր ճամբաներէն. տեսած են եւ հիմայ շատ լաւ կը յիշեն իրենց ծնողաց, իրենց



քոյրերուն և եղբայրներուն, իրենց ազգականներուն և ծանօթներուն փճացման պարագաները: Անոնք Ս. Յակոբի հայրական հովանիին տակ դռան հարազատ ծնողքի մը գուրդուրանքը, իրենց կեանքին ապահովութիւնը, իրենց հոգիին և մարին համար մաքուր և առողջ սնունդ մը, և զմայլելի միջոցներ և դիւրութիւններ՝ զարգանալու և պատրաստուելու համար:

Անոնք այս բոլոր խնամքները չէին կրնար ուրիշ կերպով արժեցնել բայց եթէ նուիրուելով իրենց Մայրենի եկեղեցւոյն և ծառայելով Աւետարանի Դատին. Դատ մը որուն անունով հալածուած էին իրենց ծնողքը և իրենց կեանքը առողջ հայ ժողովուրդը:

Սիւնի յաջորդ սինակներուն մէջ մեր ընթերցողները պիտի գտնեն նորընծաներու կենսագրութենէն միայն քանի մը գիծեր . . . :

Իսկ այս Խմբագրականին մէջ մեր նպատակն է վեր հանել սա՛ իրողութիւնը թէ Ս. Յակոբի մէջ ձեռք բերուած հոգևոր հունձքին ամբողջութիւնը նոր ոյժ և նոր կորով մը կը բերէ այս դարաւոր հաստատութեան և այս հաստատութեան միջոցով ալ Հայաստանեայց եկեղեցւոյն:

Մեր նորընծաներէն իւրաքանչիւրը կը ներկայացնէ արժէք մը՝ իրրեւ անհատականութիւն, որ ժամանակի կը կարօտի իր վերջին եւ փորձ կազապարը առնելու համար: Ժամանակը եւ դործնական կեանքը, մա՛նաւանդ ուսանելու եւ ուսուցանելու յարատեւ եւ կանոնաւոր աշխատանքն է որ պիտի կերպաւորէ եւ պիտի կերտէ իրենց մտաւոր ոյժը, լաւագոյն պայմաններու մէջ կարենալ ծառայելու և օգտակար ընծայելու համար իրենց ծառայութիւնը:

Ս. Յակոբի միջնորդութեամբ կրօնականացնող է. իրենց դպրոցական դրասեղաններուն վրայ, ինչպէս նաեւ Սրբոց Յակոբեանց խնկաբոյր և խորհրդաւոր կամարներուն տակ, անուշաբու անոնց հոգևոր կեանքը: Եւ վստահ ենք որ փորձառութեան բովբին մէջ աւելի եւս պիտի շինուի այդ կեանքը եւ պիտի ուժաւորուի: Այնքան շատ և այնքան զանազան են ազգականները և զսպանակները իրենց մտաւոր պարներուն, մեր Տէր Յիսուս Քրիստոսէն, Պօղոս, Թադէոս և Բարթողիմէոս Առաքեալներէն, Սահակ-Մեսրոպէն, Օձնեցիէն, Նարեկացիէն, Շնորհալիէն, և այլն, մինչև Վարժապետեան, Խրիմեան, Օրմանեան և Դուրեան:

Ի՞նչ ըրինք այս նորընծաներուն մտաւոր պատրաստութեան համար:

Հինգ տարիներու շրջանին մեր ըրածը համեատ իրականութիւն մըն է: Դուրեան Սրբազանի նման բազմահմուտ եւ փորձ Վարդապետի մը չունչին և ուղղութեան տակ տունք իրենց ինչ որ կարելի էր: Իւրաքանչիւր նիւթի համար տարեկան 30-33 ժամ դաս յատկացուեցաւ. հայերէններու (գրաբար եւ աշխարհաբար) մասնաւոր խնամք տարուեցաւ. հայագիտական նիւթերու ծանօթացան. օտար լեզուներու մէջ Անգլիերէնի մա՛նաւանդ այնչափ վարժուեցան որ կրնան գրել եւ խօսիլ եւ նոյն իսկ քարոզի փորձեր ընել չափով մը. Ֆռանսերէնով կը կարգան և բաւական կը խօսին: Ասին Յունարէն, Լատիներէն, Եբրայերէն եւ Արաբերէն լեզուներու տարերքը՝ իրենց ուսման եւ ընթերցման մէջ դժուարութիւններու առջեւ չգլխելու չափ: Ուսան Ս. Դիրքը եւ անոր մատենագրութեան պատմութիւնը, եւ շատ լաւ սորվեցան իրենց Ազգին և եկեղեցւոյն պատմութիւնը և Պատմութիւնը Ընդհ. եկեղեցւոյ, խը-

նամբով ուսումնասիրեցին իրենց Մայրենի եկեղեցւոյն դասնաքանութիւնը, սորվեցան, ջերմ պաշտպանը ըլլալով հանդերձ իրենց Մայրենի եկեղեցւոյն, այլասիրական ոգի տածել հանդէպ ուրիշ յարանուանութիւններու: Տեսան Գրիստոնէական կրօնի ամէնէն պահպանողական շատագոյութիւնը, նոյնպէս ամէնէն ազատ կարծիքները: Վարժուեցան Աստուծոյ խօսքը ուսանելու և ուսուցանելու գիտութեան եւ արուեստին, ինչպէս նաեւ եկեղեցական բնկերաբանութեան կանոններուն: Դուրեանի դասախօսութեամբ հմտացան Ազգային Մատենադրութեան պատմութեան, կրօններու պատմութեան եւ փիլիսոփայութեան պատմութեան: Վարժուեցան զրասեղանի լարուած աշխատութեան, եւ կրցան իրբեւ քէզ իրենց տրուած ինչ ինչ նիւթերը ուսումնասիրել իրենց ձեռնադրութենէն յառաջ: Վերջապէս իրենց նախակրթութենէն մինչև Ձեռնադրութեան օրը, երկա՛ր տարիներու ընթացքին, առտու իրիկուն կատարեցին աստուածային պաշտամունքը Ս. Յակոբի կամարներուն տակ՝ հայ ժամակարգութեան անթերի կիրարկումով, և սիրով կատարեցին Սուրբ Տեղերու մէջ իրենց պարտականութիւնը այն ծանր արարողութիւններու եւ թափօրներու առթիւ, որոնք անհրաժեշտ են հոս՝ Նրուսաղէմ՝ պահելու և պահպանելու համար հայ Ազգին միջեկեղեցական իրաւունքները:

Աւետարանը հունձքի եւ մշակի օրինակներով կը փոխաբերէ առաքելական գործը:

Խորունկ հրճուանքի և կրօնաշունչ զուարթութեան առիթ մըն է որ Սիոնի բարձունքին վրայ հոգեւոր յուսալից հունձք մը հասունցաւ:

Մեր ցնծութիւնը սակայն մռայլներ ունեցաւ՝ մեր անզուգական եւ յաւերժայիշատակ Մեծ-Վարդապետին, Ամեն. եղիշէ Դուրեան Սրբազանին տաւրածամ մահով: Ասոր վրայ աւելցաւ սուգի ամպ մըն ալ՝ Լնծայարանիս Բարերար ազնուասիրտ Պատրիկ էֆ. Կիւլպէնկեանի նոյնքան տարածամ և դառնաղէտ կորուստով:

Երկուքն ալ խանդավառ էին այս հոգեւոր հունձքին տեսիլով:

Այսօր իրականութիւն մը եղաւ այդ տեսիլը:

Մեր նորընծաներ շատ համեստ են: Վստահ ենք որ համեստութեան օժտութիւնը միշտ պիտի փայլի իրենց վրայ եւ ազդակ մը պիտի ըլլայ իրենց համար շարունակ ուժաւորուելու և յառաջանալու համար:

Բայց մենք ինչ ալ ըրած ըլլանք ոչինչ է, առանց աստուածային օրհնութեան:

Եւ իրենք, նորընծաներ, ինչ ալ եղած ըլլան, ոչինչ պիտի լինին առանց Գրիստոսի սիրոյն և ոգւոյն:

Միշտ մեծ ճշմարտութիւններ են փրկչին պատգամները:

Հունձ բազում եմ, եւ մեակի սակաւ (Մsp. Թ. 37. Ղկս. Ժ. 2):

Ձի բազում եմ կոչեցեալ, եւ սակաւ՝ ընտելալ (Մsp. ԻԲ. 14):

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՈՒՄ

Նշանակութեամբը շատ հին, պատմական իրողութիւն մը, իսկ իր ձեւով նոր բառ մը: Հայ ժողովուրդը կրցած է պահել իր գոյութիւնը և իր ազգային կեանքին աւանդութիւնները դարերու ընթացքին, պայքարելով այն ազգականերու դէմ որոնք սպառնացած են այլասերել զինքն: Նորութիւն մը ըսած չենք ըլլար եթէ յիշենք հայ ժողովուրդի ինքնապահպանութեան պայմանները. այսինքն՝ Հայ Արիւնը, Հայ Լեզուն, Հայ Եկեղեցին:

Հայ արիւնը նոյն ինքն հայ ընտանիքն է: Օտար ամուսնութիւններ կ'այլասերեն հայ արիւնը և պատճառ կ'ըլլան օտարանալու: Հայ արիւնը ո՛չ միայն կ'այլասերի օտար կամ խառն ամուսնութիւններով, այլ նաեւ ինքն իր մէջ կ'ապականի, երբ չեն յարգուիր ընտանեկան սրբութեան պայմանները և սեռային մաքուր կենցաղի սկզբունքը: Օտար կամ խառն ամուսնութիւններու մէջ բացառիկ իրողութիւններ կան, այսինքն ոչ-հայ աղջիկ մը երբ ամուսնանայ հայու հետ կրնայ օրհնաբեր ըլլալ իր գալուստը, հերիք է որ Հռութի պէս յայտարարէ թէ «քու ժողովուրդդ իմ ժողովուրդս է և քու աստուածդ իմ աստուածս է»: Բայց սեռային սրբութեան ապականութիւնները ունէ արդարացում չունին: Ախտաւոր, ապականեալ արիւն մը թշնամի է ցեղային ինքնուրոյն յատկութիւններու պահպանութեան. որովհետեւ կ'իյնայ ցեղին կորովը, կը տկարանայ անոր զիմադրական ոյժը կեանքի պայքարին մէջ, կը մթաղնի մտաւոր կեանքի պայծառութիւնը: Հիւանդոտ, տկար մարմինը չի ճառագայթեր այլևս ցեղային հարազատ յատկութիւնները. անոր տեսութեան հորիզոնը գերեզմանին եզերքն է այլևս:

Հայ լեզուն հայ արիւնի պէս կարևոր է ցեղային պահպանութեան համար: Հայ լեզու ըսելով չենք հասկնար միայն խօսակցութեան պարզ լեզուն. տիկա անհրաժեշտ է, բայց ամէն բան չէ, մանաւանդ նոր սերունդին տեսակէտէն. հայացի կրթութիւն և դաստիարակութիւն անհրաժեշտ է, առնուազն զօրաւոր նախակրթութեան մը սահմաններուն մէջ: Հայ մը, մանաւանդ զարգացած մշակուած հայ մը, իր մայրենի լեզուով կարգալու է, գրելու է, արտայայտուելու է. եթէ ոչ կ'իյնայ լեզուն. և այս վտանգը աւելի ակնյայտնի է Եւրոպայի և Ամերիկայի հայ գաղութներու մէջ. Այս է պատճառը որ Սիմն ասկէ յառաջ ալ խնամքով զգացուց հայացի զօրաւոր նախակրթութեան պէտքը այսօրուան հայ սերունդին համար, և այս անգամ նորէն կը մատնանջէ այդ կարևոր պէտքը:

Եթէ այսօր չկազմակերպուի հայացի զօրաւոր նախակրթութիւնը, վաղը շատ ուշացած պիտի ըլլանք: Վտանգը տեսնելէ ետքը զայն չվերցնել մէջտեղէն, խեղացի մարդու գործ չէ: Ուրիշ ամէն միջոց կեղակարծ է ըստ մեզ եւ պարզ ժամավաճառութիւն: Հայը որպէս զի հայ մնայ, հայերէն խորհելու է, հայերէն զգալու է, հայերէն կարգալու է, հայերէն գրելու է եւ հայերէն խօսելու է, իրիւ արդիւնք հայացի զօրաւոր նախակրթութեան:

Հայ Եկեղեցին, հայ արիւնէն և հայ լեզուէն ետքը, ամէնէն կենսական

պայմանն է հայ ժողովուրդի ինքնապահպանութեան, Հայաստանեայց եկեղեցին ո՛չ միայն իբրեւ կրօնական հաստատութիւն, հայ ժողովուրդին պատմական դիրք մը տուած է քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ ընտանիքին մէջ, այլ նաեւ անոր հովանիին տակ աշխուսցած եւ ամրացած են հայ ժողովուրդին ընտանեկան եւ ընկերային կեանքին սկզբունքները: Ասոր համար է որ հայ ժողովուրդը եւ Հայաստանեայց եկեղեցին նոյնացած են իրարու հետ ինչպէս պատմութեան մէջ նոյնպէս եւ այսօր: Մայրենի եկեղեցին է ան, չեւ կրնար զատել զայն իր զաւակներէն: Վարդանանք կը պուային Պարսից արքունիքին դէմ, ըսելով թէ մեր եկեղեցին մեր Մայրն է, իսկ մեր հայրը՝ Աւետարան: Տասնըհինգ դարերէ ի վեր այս եղած է հայ ժողովուրդին Դաւանանքը իր եկեղեցւոյ մասին:

Հայ եկեղեցւոյ կապը հայ ժողովուրդին հետ զարմանալի իրականութիւն մըն է եւ հայր հայ պահելու կենսական պայմանը: Գիտենք թէ հայ ժողովուրդին ինչինչ հատուածները քաղաքական դժբախտ իրողութիւններու ճնշումներուն տակ, կորնցուցած են իրենց մայրենի լեզուն, մայրենի լեզուն, այո՛, որ ինչպէս ըսինք պայման մըն է հայացիութեան. բայց զարմանալի իրականութիւն մըն է նաեւ որ թիւրքախօս, քրդախօս, արաբախօս, վրացախօս, եւ այլն հայը իր հայութիւնը կ'արտայայտէ իր Մայրենի եկեղեցիով: Մայրենի եկեղեցին ամէն ինչ է այս ալլալեղու Հայոց համար:

Հայաստանեայց եկեղեցին, իբրեւ գլխաւոր աղբակը հայ ժողովուրդի հայ պահպանութեան, իր մէջ պահած է նաեւ աղգային թանկագին արժէքներ զեղարուեստի ամէն ճիւղէն, եւ մասնաւորապէս պահպանն ու պահարանը եղած է Հայ լեզուի գանձերուն: Ընդհանուր եւ անխզելի զօդակապ մը բոլոր Հայոց մէջ, ուր որ ալ սփռուած ըլլան անոնք, ի՛նչ պայմաններու ներքեւ ալ գրտնուին: Ո՛չ մէկ յարանումութիւն, ո՛չ մէկ հատուած, ո՛չ մէկ կուսակցութիւն, ինքզինք չի նկատեր եւ չի կրնար նկատել անկէ դուրս, ի՛նչ ալ եղած ըլլայ անոնց իւրաքանչիւրին կարծիքը եւ ուղղութիւնը. վասն զի ամէնքն ալ, վերջապէս, կ'զգան որ հայ են եւ Մայրենի եկեղեցին՝ եկեղեցին է հայութեան, եւ իրենք բան մը կը պարտին Անոր՝ իրենց զոյութեան մէջ:

Այս իրականութիւններուն հանդէպ իրենց աչքը խփողներ եւ իրենց Մայրենի եկեղեցին հարուածողներ՝ ստորագործներ են պարզապէս: Յանցաւորէն չէ որ կը հանդիպինք հայ մամուլի ամէնօրեայ հրատարակութեանց մէջ այնպիսի գրուածներու, որոնք վիժածներ են տհաս ուղեղներու: Մէկ երկու անկրօն կամ հակակրօն գրողներուն գիրքերը բաւական դրամադուլիս կը հայթայթեն եւ հեղինակութեան հովեր կուտան մեր երիտասարդներէն ոմանց որ վճիռներ արձակեն կրօնական եւ հոգեբանական այնպիսի խնդիրներու մասին, որոնք մարդկային միտքը կ'զբաղեցնեն սկիզբէն ի վեր: Այնպիսիներ քաջութիւն կը համարին կործանել հայուն հայրենի հաւատքը, եւ կը կարծեն խղճի եւ մտքի ազատութեան փաստ կարծել իրենց կարծեցեալ քննադատութիւնները եկեղեցւոյ դէմ, մինչ ատենք ամէնէն պերճախօս փաստերն են իրենց խորունկ տգիտութեան՝ հանդէպ այս աշխարհի կրօնական իրականութիւններուն եւ իրենց աղգային եւ եկեղեցական պատմութեան մասին:

Բոլոր անոնք որ կը սիրեն իրենց Մայրենի եկեղեցին պէտք չէ որ քա-

ջալերեն կրօնքի և եկեղեցւոյ դէմ արտայայտուած այս իմաստակութիւնները : Պէտք է որ կրօնքը արհամարհուի հայ ժողովուրդի մտաւորական խաւերուն մէջ : Ազնիւ մտաւորականութեան մը հետ չի կրնար հաշտուիլ այդպիսի արհամարհանք մը :

Մայրենի եկեղեցին իրօք մայրը եղած է հայ ժողովուրդին : Այդ մայրը իրաւունք ունի յարգանք պարտադրել նոյն իսկ իր ամէնէն անառակ և ապերասան զաւակներուն վրայ :

Հայ եկեղեցին օժտուած է խորունկ կրօնականութեամբ մը, այսինքն հոգեւոր կենսական արժէքներով : Անոնք որ այս իրականութիւնները չեն կրնար տեսնել, աւելի մեծ իմաստութեան մը ապացոյցը տուած կ'ըլլան լռելով քան թէ բարբառնալիքներ զրականացնելով :

Հայաստանեայց եկեղեցին կեդրոնական ազդակն է «Ազգապահպանում»ին, պէտք է դուրդուրալ անոր վրայ, պէտք է յարգել զայն. պէտք է նուիրուիլ անոր բարեկարգութեան և պայծառութեան :

ԿՐՕՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Քանի որ Մայրենի եկեղեցին կենսական դեր մը ունի հայ ժողովուրդի ինքնապահպանութեան մէջ, պէտք է որ այս եկեղեցին ուժաւորուի և պայծառանայ :

Եկեղեցին նոյն ինքն ժողովուրդն է, հայ ժողովուրդը : Եւ հայ ժողովուրդը շատ բաներ կորսնցուց 1915 էն ի վեր, իբրեւ հետեանք հալածանքներու, տարադրութեան, կոտորածներու, յախաղակութեանց, եւայլն եւայլն : Այս տասնհինգ տարիներու ընթացքին հայ ժողովուրդը սազին անդին տեղաւորուեցաւ, համախմբուեցաւ, և սկսաւ վերականգնել իր սասանած կեանքը, և այս վերաշինական աշխատութեան մէջ ամէնէն յառաջ իր ուշադրութիւնը զարձուց իր զաւակներուն կրթութեան և իր Մայրենի եկեղեցւոյն վերաշինութեան :

Նոր միջավայրներ նոր պահանջներու առջև դրին հայ ժողովուրդը, որ հաւատարիմ իր դոյութիւնը պահող սկզբունքներուն, փարեցաւ իր Դպրոցին և իր եկեղեցւոյն : Հայ ժողովուրդի ողջմտութեան, ազգասիրութեան և կրօնասիրութեան ամէնէն փառաւոր ապացոյցներն են ասոնք. և հարկ անհրաժեշտ է որ օգնենք այս ողջամիտ ժողովուրդին որ վերաշինէ ինքզինքը իր նոր միջավայրներուն մէջ, չհատուածենք զայն, չկուսակցականացնենք զայն, չուժացնենք զայն իր Մայրենի եկեղեցիէն, չարաչար չգործածենք և չգործածել չտանք անոր համետ միջոցները և չապականենք անոր միտքը այն կերպերով, որոնք կը հակասեն անոր պատմութեան, որոնք կ'սպաննեն անոր ներկան, որոնք անասուզութեան ամպերով կը մուսլին անոր ապագան :

Դարմանելու համար մեր ահաւոր կորուստները Հայ ժողովուրդը պէտք է որ ունենայ իր Դպրոցները՝ Մանկապարտէզներէն մինչեւ նախակրթարաններ : Այս Դպրոցներ պէտք է գերծ ըլլան կուսակցական ճնշումներէ : Ուսուցիչներու միակ նպատակը պէտք է ըլլայ ազգային մաքուր գաստիարակութիւն, այնչափ մաքուր որ ուսանող սերունդը իր ամբողջ ազգին նայի և ոչ թէ այս կամ այն կուսակցութեան : Ազգը ամբողջութիւն մըն է, և ոչ թէ կուսակցութիւն մը : Կուսակցութիւնները ազգին ծառայելու են և ոչ թէ ազգը ծառայեցնելու են իրենց կուսակցական շահերուն : Շատ ցաւալի է որ հայ Դպրոցները գերծ չեն կուսակցական շահախնդրութիւններէ, և ասիկա ո'չ միայն զաւանք մըն է ազգային ընդհանուր և բարձրագոյն շահերուն, այլ նաեւ նոյն ինքն կուսակցութեանց, որոնք վերջապէս իրերամարտ կազմակերպութիւններ են և նոր սե-

բունդին տրուած կուսակցական գաստիարակութիւնը եզրայրատեցութեան եւ ըմբռնութեան գաստիարակութիւնն է միայն: Դժբախտաբար այս տխուր իրականութիւնը կը տեսնենք մէկն օր, մեր Դպրոցական եւ եկեղեցական կազմակերպութեանց շուրջ մղուող մրցակցութիւններու եւ պայքարներու մէջ: Եթէ կ'ուզենք որ մեր Դպրոցները ծառայեն հայ ժողովուրդի ազգային ճշմարիտ կրթութեան եւ գաստիարակութեան, պէտք է վերջ տալ այս յայտնի եւ գաղտնի կուսակցական խաղերու զարոյցներու մէջ:

Նոր միջավայրներու եւ նոր պայմաններու մէջ փափկացած է Հայց. եկեղեցւոյ վիճակն ալ: Մայրենի եկեղեցւոյն զաւակները, առանց տարիքի եւ սեռի խտրութեան, պէտք է որ գաստիարակուին: Այսինքն պէտք է որ լաւ սորվին իրենց եկեղեցւոյն պատմութիւնը, իրենց կրօնական պարտականութիւնները, գիտնան իրենց եկեղեցւոյն պաշտամունքին եւ արարողութեանց նշանակութիւնը: Այս է կրօնական գաստիարակութեան նպատակը իր մեծ գիծերուն մէջ: Եւ այս գաստիարակութիւնը տալու աճեցնելն է գիւրդին եւ ամենէն գործնական մեթոտն է Կիրակնօրեայ Դպրոցի մեթոտը, որ այսօր բոլոր աշխարհի վրայ կը կիրարկուի: Մենք Հայերս ալ կրնանք օգտուիլ կրօնական գաստիարակութեան այդ համաշխարհային մեթոտէն՝ պատշաճեցնելով մեր պէտքերուն, մեր ըմբռնումներուն. եւ մենք կրնանք այդ մեթոտը գործադրել ո՛չ միայն Կիրակի օրերը, այլ նաեւ շաբթուան մէջ ունէ օր: Ինչպէս որ ուրիշ անգամ բոսած ենք. Կիրակնօրեայ Դպրոց բացատրութիւնը անհրաժեշտութիւն մը չէ. կրնայ բոսուիլ, զոր օրինակ, Հայ եկեղեցւոյ Դպրոց, կամ պարզապէս եկեղեցական Դպրոց:

Մեր ազգային զարոյցներու մէջ կրօնական դասերը շատոնց մէկդի դրուած են. շարքի մէջ հազիւ մէկ ժամ կը տրուի, այդ ալ անձեռնհասներու կողմէն, ունէ դասադիրքի վրայ: Կիրակնօրեայ Դպրոցներ մեծ օժանդակներ պիտի բլլան ազգային զարոյցներու կողքին՝ աւելի դիւրին եւ աւելի խնամոտ մեթոտով մը մշակելով կրօնական գաստիարակութիւնը՝ ո՛չ միայն ուսանող սերունդին մէջ, այլ նաեւ չափահասներու մէջ որոնք զպրոց չեն յաճախեր այլեւս:

Ի նպաստ կրօնական դասխաւակութեան մեզի ընծայուած արտաքին ձեռնտրութիւնը պէտք է ընդունիլ շնորհապարտ զգացումներով, եւ այնքան լաւ արժեքնել զայն որ կարելի բլլայ աւելին ապահովել, եւ մեր ժողովուրդը գաստիարակել ողջմիտ կրօնքի սկզբունքներով եւ սորվեցնել անոր իր Մայրենի եկեղեցւոյն վերաբերեալ ամէն բան, որպէս զի գիտակցութեամբ սիրէ զայն եւ կատարէ իր պարտականութիւնները:

Ուրախ ենք որ Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսը իր բարձր հովանաւորութիւնը շնորհեց Սիւրբոյ մէջ կրօնական գաստիարակութեան գործին, որուն կազմակերպութիւնը ստանձնեց Լ. Զէնեանի պէս մաքուր եւ կարող երիտասարդ մը, որ հոգեւոր բարձր խառնուածք մը ունի, իր մանկութենէն Մայրենի եկեղեցւոյն սիրահար, յետոյ համալսարանական ուսումներով մշակուած միտք մը եւ զարգացած հոգի մը:

ՍԻՄՆ խորին վշտով գիտեց որ կրօնական գաստիարակութեան ձեռնարկը Հայէպի մէջ նշաւակ եղաւ կուսակցական տգեղ կիրքերու պոռթկումին: Մեր Մայրենի եկեղեցւոյն դէմ ներքին հաւածանք մըն է ասիկա: Լրագրիւններու սխալակները կեղտոտել ստացօղ լուրերով, եւ զրախօսութիւններով մրտաւել ջանալ ազամանդի պէս կարծր եւ մաքուր նկարագիրներ, քաջութեան ապացոյց չեն: Հայ. եկեղեցին իրեն վրայ հսկող պաշտօնական մարմիններն ունի Սիւրբոյ մէջ, ունի մանաւանդ փորձառու, հեռատես, իմաստուն Հայրապետ մը, յանձին ծերունագարդ Սահակ Բ. Կաթողիկոսի, որոնք գիտեն թէ ի՛նչ պէտք է Մայրենի եկեղեցւոյ ժողովուրդին կրթութեան համար:

Ն. Ս. Օժութիւնը Կիրակնօրեայ Դպրոցներու մասին իր հրատարակած Կոնկլավով, շատ լաւ բացատրած է իր ժողովուրդին կրօնական գաստիարակութեան կարեւորութիւնն ու պէտքը (*):

(*) Կիրակնօրեայ Դպրոցներու Սիւրբոյ մէջ կազմակերպութեան մասին Ն. Ս. Օժութեան հրատարակած Կոնկլավը խորապէս հետաքրքրական է եւ պիտի մնայ իբրեւ պատմական արժէք ունեցող վաւերագիր մը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան տարեգրութեանց մէջ:

Բայց երբ Հալէպի մէջ Հայ. եկեղեցւոյ գէմ իր անխելք զաւակներու ոմանց կողմէն տգեղութիւններ արտայայտուեցան, անդին, ասկից անկախ և ասոր հակառակ, բոլորովին նոր խօսակարգ մը հրապարակ գրուեցաւ Ա. Զամալեանի կողմէն Հայր հայ պանելու համար: Պատռնի Հայրենիքը անգրագարձած է Ա. Զամալեանի դասախօսութեան վրայ իր Ապրիլ 27 ի խմբագրականին մէջ, և Վահրէի Յուսաբերը արտատպած է զայն իր Մայիս 20, ԳՇ. Թիւի առաջին երեսին մէջ, որմէ յառաջ կը բերենք Ա. Զամալեանին առաջարկած միջոցները զաղութներու մէջ հայր հայ պանելու համար:

ա) Պահել և զօրացնել ազգային եկեղեցին, ինչպէս նաև ջանալ ազգայնօրէն անկախ դարձնել հայ բողոքական և կաթոլիկ եկեղեցիները:

բ) Պահպանել ազգային աւանդութիւններն ու սօները (նաեւ եկեղեցական)՝ «ազգային ինքնորոշութիւնը շեշտող իրենց յատկութեան պատճառով»:

գ) Պահպանել մայրենի լեզուն ամէն տեղ և ամէն կերպով թէ՛ մասնաւոր դպրոցներու միջոցով և թէ՛ դպրոցներէն դուրս մեր հանրային ու մասնաւոր յարաբերութեանց մէջ:

դ) Պահպանել հայկական անուններն ու մականունները:

ե) Պաշարիլ խառն ամուսնութեանց դեմ՝ ջանալով դիւրացնել հայ երկեսն երիտասարդներու փոխադարձ չփումը և ամէն կերպով դիւրացնելով հայ աղջիկներու ամուսնութիւնը հայ երիտասարդներու հետ:

զ) Տրամադրելի բոլոր միջոցներով զարգացնել հայերու «սեփական համագործակցութիւնը» թէ՛ մասնաւոր և թէ՛ հանրային գետնի վրայ փոխադարձ ամէն տեսակ օգնութիւններ ընկնով, ինչպէս որ, օրինակ, կ'ընեն Հրեաները:

Դ. և Զ. յօդուածներէ զատ, մնացածները նոյն են մեր ըսածներուն հետ, միայն սա տարբերութեամբ որ երբ մենք մեր Մայրենի եկեղեցւոյն պահպանութեան և ուժաւորման պէտքը կը շեշտենք ամէն անգամ, Ա. Զամալեան Հայ Բողոքական և Հայ Կաթոլիկ եկեղեցիներուն ալ ազգայնօրէն անկախ դառնալուն պէտքը կ'զգայ հայը հայ պահելու համար:

Ա. Զամալեանի խօսակարգին մէկ աղուոր արձագանգը արձանագրուած է զարձեալ Հայրենիքի մէջ Մ. Վերածինի կողմէն, զոր արտատպած է Պերութի Ազգայն թերթը իր Յունիս 17, ԳՇ. օրուան Թիւին մէջ:

Մ. Վերածին՝ ի պատիւ Գեր. Շահէ Ծ. Վ. Գասպարեանի, Անթիլիաս հաստատուելիք Կիլիկեան ձեմարանի Վերադառնալին, տրուած սեղանի վրայ ըրած ուղերձին մէջ ըսած է.

— «Առեւն հասած է որ Հայաստանեայց եկեղեցին գերագոյն ճիգ մը ընէ վերակազմութեան և կարող հովիւներու պատրաստութեան: Առանց անձնուէր և արթուն հովիւներու կարելի չէ պահպանել հօտ մը. որովհետեւ երբ հովիւներն անկարող են և քնաթաթախ, զրացի փարախներու ամենաբարեկամ և շէշող կարծուած հովիւներն անգամ կը փորձուին իրենց ոչխարներու թիւը բազմացնել ի վնաս հայաստանցիներու եկեղեցիին:

«Իրօնքը կրնայ տեսականօրէն խղճի խնդիր ըլլալ, և զուցէ ասիկա ճշմարիտ ըլլայ արեւմտեան քաղաքակիրթ, յառաջադէմ և ազատ երկիրներու և ժողովուրդներուն, բայց Հայերու համար նոյնը չէ: Կրօնքը խղճի խնդիր է օտարներուն. Իրօնքը ազգային խնդիր մըն է մեզի՝ Հայերու»:

Հրճուածքով կը զիտենք Հայց. եկեղեցւոյ մասին Զամալեանի և Վերածինի կողմէն արտայայտուած այս աղուոր կարծիքները: Այո՛, աղուոր են ատոնք, բայց ճիշդ չեն:

ՍԻՈՆ միշտ աշխատեցաւ սա՛ իրողութիւնը հասկըցնել իր ընթերցողներուն քե Հայաստանեայց եկեղեցին իր բոլոր նշանակութիւնը, իր բոլոր արժեքները կը պարտի իր կրօնական հանգամանքին: Վերցո՛ւր Իրօնքը Հայոց եկեղեցիէն, ան կը զազրի Ազգային եկեղեցի ըլլալէ: Իրօնքը խղճի խնդիր ըրէ Մայրենի եկեղեցւոյ զաւակներուն համար, ան կը կորսնցնէ իր կրօնական արժէքը և իր ազգային նշանակութիւնը: Առանց Իրօնքի, առանց հաւատքի և դաւանանքի եկեղեցի չի կրնար գոյութիւն ունենալ: Եկեղեցի ըսուածը հաւատացեալներու ժողով մըն է և ո՛չ թէ ազգային ընկերակցութիւն մը:

Արդ՝ Հայաստանեայց եկեղեցին, ժողովն է հայ հաւատացեալներու, և հաւատացեալներու այս ժողովը պէտք է որ դաստիարակուի իր կրօնքին և հաւատքին գիտութեամբը, որպէս զի կարենայ պահուիլ: Եւ կիրականորէն Դպրոցներուն նպատակն է կրօնապէս դաստիարակել հայ ժողովուրդը՝ հայը հայ պահելու համար:

Հայաստանեայց եկեղեցին ժողովն է հայ հաւատացեալներու, և պէտք է որ այս ժողովին վարիչները, այսինքն՝ հոգեւոր պաշտօնեաները, պատրաստուած ըլլան իրենց ուսումով, իրենց կրօնական մաքուր հաւատքով, իրենց վարքով ու բարքով, նուիրումով, որպէս զի կարենան առաջնորդել հաւատացեալներու բազմութեան և պահել զանոնք իրենց Մայրենի եկեղեցւոյն մէջ:

ԿՐՈՆԱԿԱՆ (ԴԱՍԵՐ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ)

ՆԱԽԱՏԻՆՔԸ

— Եւանջիլ է ձեզ յորժամ նախասիցեն զձեզ և հալածեցեն, և ասիցեն զամենայն բան չար զձեզ սուս վասն իմ. Յնճացէ՛ք և ուրախ լետի՛ք, զի վաճճ ձեր բազում են յերկիսս. զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ բան զձեզ էին (Մթ. Ե. 11 — 12):

Իններորդն է ասիկա Եւանջիլներուն և մեր ալ վերջին Դասը՝ Լեւոն Գարդին առաջին մասին վրայ:

Այս Եւանջիլն թէ և ընդհանուր կերպով ուղղուած է ունկնդիր ժողովուրդին, բայց մասնաւորապէս ուղղուած է իր աշակերտներուն: Պէտք է զիտել նաեւ որ նախորդ ութը Եւանջիլներուն ամփոփումն է ասիկա և պսակը: Այսինքն՝ նախատինքը և հալածանքը պատրաստ է բոլոր անոնց համար որ Աղիս և և հոգիով, որ Սգառն և և, որ Հեզ և և, որ Արդարութեան փայլն ու ծառայը ունին, որ Ողորմած և և, որ Սուրբ և և սրտով, որ Խաղաղասար և և, որ կը հաղաժուին արդարութեան համար:

Նախատինք և հալածանք անջատ չեն կրնար արտայայտուիլ և զործադրուիլ: Հալածողը նաեւ կը հայհոյէ, կը նախատէ: Ասիկա բնական ընթացքն է կատարի կիրքերուն: Պաղարիւնը, հանդարտ դատողութիւնը զործ չունի հալածիչներու և նախատողներու հոգեբանութեան մէջ: Նախապաշարումը լիովին կը կատարէ իր ա-

ւերիչ գերը երբ կը բռնկի բռնութիւնը մարդու ջիղերուն մէջ:

Բայց ի՞նչ է նախասիմը որ կցուած է հալածանքին: Բառին մէջ ասել մը կայ: Առանց ճանչնալու զիմացինդ և անոնց լաւ հասկցած ըլլալու անոր հոգին և տրամադրութիւնները՝ քու կողմէդ խմորուած ատելութիւնն է, որ կ'արտայայտուի արհամարհանքի, հայհոյանքի և այլ ձեւերու տակ: Եւ մարդ ի՞նչ որ կ'ատէ, միանգամայն կը հալածէ զայն, և հալածանքը իր նպատակին հասցընելու համար կը զիջանի ընել ի՞նչ որ կրնայ, առանց խտրելու միջոցները: Եւ այս միջոցներուն մէջ ամէնէն սոսկալիներն են այն սուս խօսքերը, որոնք կը յերկրուին անխիղճօրէն: Սուս խօսք խնամքով չեղաուած է. Եւանջիլ ձեզի երբ ձեզ նախասեն ու հալածեն և ձեր մասին ըսեն ամէն տեսակ զեշ և սուս խօսք իմ պատճառով: Ամենեւին կարեւորութիւն մի՛ տաք այդ զեշ և սուս խօսքերուն, զուք շարունակեցէ՛ք ձեր զործը. որովհետեւ զուք երկնային վարձք պիտի ստանաք ատոր փոխարէն: Ատելութեամբ և հալածանքով կ'արտայայտուի տգէտ և բռնաւոր մարդկութեան ընթացքը: Միայն զուք չէ՛ք որ կը նախատուիք և կը հալածուիք. ձեզ կանխող մարդարէներն ալ նախատուեցան այսպէս և հալածուեցան:

Աւետարանի հայեացքը բոլորովին տարբեր է մեր սովորական հայեացքներէն: Դուք, կ'ըսէ Տէր Յիսուս, ձեր պարտքը կատարելու ատեն ո՛չ միայն պիտի նախատուիք և պիտի հալածուիք, այլ նաեւ զեշ և սուս խօսք պիտի լսէք, այսինչ-

քրն՝ պիտի բամբասուիք, պիտի զրգար-
տուիք, առարկայ պիտի ըլլաք վայրահա-
շութիւններու, և երբ այս բաները տեղի
ունենան՝ չըլլայ որ արտմիք, թուլնաք ձեր
աշխատութեան մէջ, յայտնի կամ գաղտնի
վհատութիւն ևւ լքում զգաք. ընդհակա-
ռակը պէտք է որ ցնծութիւն զգաք, ու-
րախ ըլլաք որ ձեր աշխատութիւնները ու-
շագործութիւնը կը գրաւեն անոնց, որոնք
իրենց կեանքին համար չունին լայն հո-
րիզոններ. այնպիսիներուն բոլոր քաջու-
թիւնը կը կոյանայ ուրիշներուն բարու-
թիւնը և նուիրեալ ծառայութիւնը գէշ մեկ-
նելու մէջ, և այն ալ կամ տղիտօրէն, կամ
նախապաշարուածով, կամ անձնական նկա-
տումներով, կամ կուսակցական մասնակի
ևւ կողմնակի շահերով ևւ կամ վերջապէս
աւանյամատութեամբ: Դուք պէտք է որ
ազգութիւն այսպիսի պարագաներու մէջ:
Ընդհակառակը, փոխանակ Երանին՝ Վալ
ձեզի, թէք բոլոր մարդիկ ազէկ խօսին ձեր
մասին — «Վալ ձեզ յորժամ բարի ասի-
ցին զձէնջ ամենայն մարդիկ» (Ղկա. 6. 26),
որովհետեւ այդպիսի աղուոր խօսքեր սուտ
մարգարէներուն կ'ուզողութիւն երբեմն՝ հի-
մայ ձեր վրայ գէշ խօսողներու նախահարց
կողմէն:

* * *

Պէտք է խոստովանիլ որ Երանիներուն
այս վերջինը շատ լաւ կը պատշաճի հայ
կեանքի այսօրուան իրականութիւններուն
ևւ յստակօրէն կը պատկերացնէ մեր բար-
քերու անկումներուն խոշոր գիծերը:

Ոսկերեան այս գիշ ևւ սուս խօսկերու
վրայ խօսելու ատեն կը հասկնայ խեղա-
թիւրումը. այսինքն Աւետարանի քարո-
զիչներուն պիտի ըսեն կախարհ, մոլորեցու-
ցիչ, ժամագործ, ևայլն: Այսօր մեր աշ-
քերուն առջև ալ միևնոյն խեղաթիւրում-
ները, գէշ ևւ սուտ խօսքերը կ'ուզողին
մաքուր գործերը ևւ շնորհքով անձերը վար-
կաբեկ ընելու ևւ ազատելու համար:

Հասած ենք ժամանակի մը, ուր Աւե-
տարանի ոգին միայն պիտի կրնար մաք-
րագործել մեր ներքին կեանքին աղտերը
ևւ վերցնել ընկերային կեանքին աղակա-
նութիւնները: Հասած ենք հանգրուանի մը
ուր հայ լեզուին բառամթերքը քիչ կու
գայ մեր ատելութիւնները, մեր նախա-
պրինքները, մեր հալածելու կիրքերը ար-

տայայտելու համար: Հայ կեանքի, ըսենք
նաև մարդկային կեանքի աւանդական բա-
րոյագիտութեան գիծերը աւրուած են. ի-
րերը չենք ուզիր տեսնել իրենց բնական
վիճակին մէջ. կ'ուրանանք այնպիսի ար-
ժանիքներ, որոնք ընդհակառակը առիթ-
ներ պիտի ըլլային մեր ազգային ազնիւ
հպարտութեան. կը ցնխտանք այնպիսի
գիմագիծներ, որոնք աղամանղի չափ ա-
մուր ևւ մաքուր են. կ'արհամարհենք այն-
պիսի ծառայութիւններ, որոնց կարօտ են
մեր ազգին զաւակները. ամէն օր մաքով,
լեզուով, գործով ևւ գրով կը նախատենք
մեր նուիրականութիւնները թէ՛ կրօնքի և
թէ՛ ընտանիքի մարդերուն մէջ. ինչ որ չի
համաձայնիր մեր անձնական ևւ կուսակ-
ցական հաշիւներուն, ո'րչափ ակնյայտնի
առաքինութիւններ ևւ անժխտելի գեղեցի-
կութիւններ եղած ըլլան ատենք, կը թըք-
նենք ատոնց վրայ ևւ ոտնակոխ կ'ընենք
զանոնք:

Հիմայ այս պայմաններու մէջ է հայուն
կեանքը: Պաշարուած ենք նախատինքնե-
րով ու հալածանքներով: Ամէնէն պերճա-
խօս մարդը այն է այսօր՝ որ լաւ կը հայ-
հոյէ. ամէնէն հուժկու գրչի տապաններ
անոնք են՝ որ այդ հայհոյութիւնները կը
գրականացնեն սուտնի պէս լայնածաւալ
թերթերու սխանակներուն մէջ:

Կը նախատուի Աւետարանը, Հայց.
Եկեղեցին առարկայ կ'ըլլայ սուս ևւ գեշ
խօսկերու. խմատակներ են որ գրիչ ձեռք
կ'առնեն խեղաթիւրելու համար մեր ազ-
գային պատմութեան դասերը:

Փա՛ռք Աստուծոյ, այս գծախտ իրա-
կանութեան վերև կայ ուրիշ իրականու-
թիւն մը. այսինքն՝ Հայ ժողովուրդի զա-
ւակներուն մէջ մաքուր ծառայութեան գին-
ւորներուն գոյութիւնը:

Անոնք ցնծութիւն կ'զգան երբ կը նա-
խատուին Փրկչին անունով ևւ ի սէր իրենց
Մայրենի Եկեղեցոյն: Անոնք աւելի կը
զօտեալնուին իրենց հաւատքին ևւ աշխա-
տութեան մէջ, երբ կը տեսնեն թէ հալա-
ծանք կ'ուզողու իրենց գէժ: Անոնք կ'ար-
գահատին ստախօսներու ևւ զրպարտիչնե-
րու վրայ, որ բարձր սկզբունքներու կեղծ
գիմակներուն տակ կը ծածկեն իրենց երես-
ները, որպէս զի չմատենն սեւութիւնը
իրենց գիմագիծներուն:

եւ այս բոլոր տխուր իրականութիւններ ապացոյցներն են որ Աստուծոյ թագաւորութիւնը չէ կործանած հայ ժողովուրդին մէջ: Պէտք է ցնծութեան աղաղակներով փառարանել Աւետարանին հրաշալի կենսունակութիւնը այս աշխարհի վրայ:

Ոսկերեան կ'ըսէ. Ո՛չ ի չլսելոյ գրանան չարս, այլ ի լսելոյն եւ ստոյգիմարեալ չափելոյ, գործի շատրխին. լաւութիւն է ո՛չ թէ գէշ խօսքերը չլսելը, այլ լսելը եւ զայն քաջութեամբ տանելը. որովհետեւ այս կերպով գործնականապէս կը յանդիմանութիւն զանոնք ըսողներ: Վասն զի ո՛չ թէ չչարարութիւն է մեծութիւնը, այլ չարարութիւնը եւ չյուսահատիւնը:

Եթէ մէկը խոնարհ է, յայտնի է որ սուգի մէջ է ան իր մեղքերուն համար. եթէ սգաւոր է, յայտնի է որ արդար եւ ողորմած է ան. եթէ արդար եւ ողորմած է, յայտնի է որ մտախոհ է եւ սրբասիրտ. իսկ այսպիսի մէկը խաղաղարար ալ կ'ըլլայ: Եւ այս բոլոր առաքինութիւնները ունեցող մէկը պատրաստ կը գտնուի բոլոր նեղութիւններու դէմ, եւ ամենեւին չի յուզուիր երբ բամբասանքի խօսքեր լսէ, եւ բնաւ չի վախնար երբ հողար տեսակ չարանքներ քաշէ:

Աւետարանի բարոյագլխութեան ամէնէն յանդուգն, ամէնէն զմայլելի եւ ամէնէն աւելի կազդուրիչ ու քաջալերական դասն է ասիկա որով կը կնքուին ինք երանկները:

Հայ ժողովուրդին պատմական ճակատագիրն եղած է նախատուիլ, զրպարտուիլ եւ հալածուիլ իբրեւ քրիստոնեայ զանդուած մը. իսկ անոր նկարագիրը եղած է չլուսահատիլ, մաքուր եւ կենսաւետ պահել իր զոյութեան ներքին ոյժերը, իր ապրելու իրաւունքին գաղտնիքն ու զօրութիւնը:

Երանկ թէ հայ ժողովուրդին ընկերային կեանքին մէջէն դուրս քամուէին առեկութեան այս թոյնները, մաքրագործութիւն զիրար նախատելու, զիրար հալածելու, զիրար հարուածելու, գէշ եւ սուտ խօսելու եւ զրպարտելու հոգեկան այս ժահահոտ հիւանդութիւնները եւ մտային տկարութիւնները:

Հոգեկան այս մթութիւնները կրնան

փարատուիլ Աւետարանի ԼՈՅՍՈՒՎ, Հայ կեանքին այս բոլոր անհամութիւնները կրնան անուշնալ՝ միայն Աւետարանական ԱՂՈՎ: Մեր սիրտերուն բոլոր գէշութիւնները կըրնան ալիւլ եւ կրնան մաքրագործուիլ՝ միայն եւ միայն Փրկչին ՍԻՐՈՅՆ ԿՐԱՅՈՎ:

Երանկ՝ անոնց որ պահ մը կը բարեհաճին խլրտիլ եւ իրենց մօրացած կեանքին մէջ ճիգ մը կ'ընեն մօտենալու Փրկչին՝ խմելու համար Անոր Երանկներու տկանալիս աղբիւրէն:

Երանկ՝ բիւր Երանկ՝ այնպիսիներուն
Բ. Ե.

ՎԵՐՁ

ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Ի Ս. ԳԻՐՍ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Քննեցի գիրս: ԹԳ. 5, 39:

Ե.

«ԶԻ ԳՈՒՔ ՅԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԿՈԶԵՅԱԼ ԷՔ, ԵՂԲԱՐՔ» (Գղ. 5, 13):

4.

(Շար. ՏՆՍ վեր. կջ 170)

Դ.

Դարձեալ մեղմ եւ աղքատ չարեաց. իսկ չարն է՝ կամակոր, խեղաքիւր եւ խոտորակ ողորմութիւն կամաց, որ մօլի ինքնասիրութեամբ միայն զանձին խնդրէ փրկուք այլոց (տ. 1 կր 10, 24 եւ 13, 5. այլ եւ Հո 15, 1-3. Փայ 2, 4 եւ 2, 21): Մարդ բարի կը սիրէ զԱստուած եւ զմարդիկ, իսկ չարն՝ զանձն եւեթ. նա ինքն զինքն ի խաչ կը հանէ կարեօքն եւ ցանկութեամբ հանգերձ (Կղ 5, 24), իսկ սա՝ կը քանայ կը հնարէ զանձն եւեթ պահել ապրեցողացանել, սակայն կը կորուսանէ զնա (Ղկ 17, 33): Փոխանակ զի հոգին իշխէ ի վերայ հաճոյից եւ կարեաց, մարդ կը մտանէ ընդ լծով ծառայութեան ցանկութեանց եւ առնառակութեանց (Գղ 5, 1. կղ 3, 4. Հո

6, 16, 44.), որք կը պատրեն եւ կը մուրեցուցանեն զնա եւ կը ձգեն ի չարագործութիւնս: «Ապա այնուհետեւ ցանկութիւնն յղացեալ՝ զմեզս ծնանի, եւ մեզքն կատարեալ՝ զմահ ծնանին» (Յկ 1, 15. հմտ. Հո 6, 22): Այս է հոգեւոր մահն՝ որ ձգեալ տանի ի կուրծքիւն մտաց, ի պատրանս եւ ի հետ, խտտաբլտ եւ խաւարամած անհաւատութիւն, եւ յանդգամութեամբ Աստուծոյ, յաճախ եւս փոխանակելով զհաւատս ընդ զազիր սնապաշտութեան: Եւ այս ճշմարտութիւն պատշաճի ո՛չ միայն անհատին, այլ եւ կը զօրէ վասն համօրէն ազգաց: Քանզի ասէ Գիր՝ «Արդարութիւն զազգ բարձրացուցանէ. նուազեցուցանեն զազգս մեզք» (Ասկ. 14, 34). որպէս յայտ յանդիման ուսուցանէ տիեզերական պատմութիւն թէ՛ անցեալ դարուց եւ թէ՛ առաջակալ ժամանակիս:

Դ.

Իսկ բուն պատճառ գոյութեան չարին յաշխարհիս արդարեւ ըստ ինքեան զժուարիմաց իմն խնդիր է, անհաս մարդկեղէն մտաց:

Մարթ է միայն ասել թէ՛ ազատքիւնն մարդոյ է որ կ'ընծայէ զհնարաւորութիւն չարին. իսկ արդիւնագործութիւն չարին՝ որ եւնոյն ինքն մեղին, յառաջ գայ եւ կը կատարի յանցանոք մարդոյ, այս է՝ անհնազանդութեամբ եւ անաստութեամբ ընդդէմ պատմութեան Արարչին (տ. Հո 5, 12-21): Զի «որ ինչ ըստ Աստուծոյ կամացն լինի՝ բարի է, եւ որ ինչ արտաքոյ քան զնորա կաման լինի՝ այն չար է»: Յայտ է եւս թէ՛ «շարիքն որք գործին կամածինք են, եւ ո՛չ բնականք» — «ապա ուրեմն յիրաւի ասին մարդիկ արարիչք չարեաց»:

Մարդ, իբրեւ հոգեւոր եւ բանաւոր էակ, արարած Աստուծոյ, անձնիշխան եւ կարող է սահմանել եւ վարել զկամս եւ զգործս իւր ըստ օրինացն Աստուծոյ յաստատմանս իր կեանս, ի կեանս սիրոյ. եւ կամ խտտորել մոլորել ի կեանս՝ որոյ վախճանն ինքն իսկ յոր անձն եւ ընդդիմակաց Աստուծոյ, այսինքն է՝ ի կեանս անձնասիրութեան: Ուստի, որպէս ի վեր անդր ասացաւ, հրեանարաւորութիւն չարին՝ է նոյն ինքն անձնիշխանութիւնն մարդոյ. եւ պատճառական սկիզբն նորին, կամ զրգուծութիւնք

եւ հրապուրանք ի չարն՝ պատշաճական ինքնօրէն անձնակամութիւնն: Ուստի չարն չէ՛ լոկ միտումն քարոյ, այլ մանաւանդ հաստատուն դրական ինչ գործիւն, — կամ անորոշիւն եւ խեղաթիւրումն սկզբանց ի ձեռն անձնիշխան արարածին, որ զկամս անձին փոխանակ Աստուծոյն կամացն կը կացուցանէ: Եւ որովհետեւ չարն համատարար միտական միջնորդն եւ իրագործութեան քարոյն, ուստի չարն՝ ծառայելով յԱստուծոյ նախասահմանեալ տիեզերական նպատակին, ի խորհուրդս եւ ի յատաշարութեան վերահսկման Տեսչութեան քովն դրական իրականալի եւ իսկ սերն Աստուծոյ առ մարդկութիւն յայտ յանդիման ցուցանի անչափ գթութեամբ եւ անբաւ ողորմութեամբ նորա՝ իբրեւ փրկութիւնագործ եւ հաշտարար զօրութիւն եւ ազդեցութիւն ի ձեռն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի (հմտ. Հո 5, 8 44. Եփ 2, 4 44. Կղ 1, 1 44. Տա 3, 2 44. 1 Պա 1, 3. եւ 1 Յհ 4, 9 44. եւ այլուր), եւ այսու կենարար փրկագործութեամբ տեսչութիւնն հոգւոյ եւս քան զեւս ի կատարելութիւն հասանէ, այս է՝ ի քաղաւորութիւնն ճշմարտութեան, սիրոյ եւ բուն ազատութեան:

Ե.

Ըստ վերագոյն ճառելոցս ազատքիւնն մարդոյ, քրիստոնէական իմացութեամբ, նշանակէ՝ ազատ լինել ի մեղաց եւ զհալ եւ վարել զկեանս ըստ օրինացն Աստուծոյ:

Արդ, ի՞նչ իւրիք հնար է հասանել յազատութիւնս յայս, եւ զի՞ւրդ ծառայն մեղաց կարող է ազատ առնել զանձն յօրինացն մեղաց: Առ այս կը պատասխանէ Պաւղոս Առաքեալ թէ՛ «որեւն հոգւոյն ի Քրիստոս Յիսուս ազատեցին զիս յօրինաց մեղացն եւ մահու» (Հո 8, 2): Ապա ուրեմն Յիսուս Քրիստոս է միայն պարզելիչն այդպիսի շնորհաց, որ ասաց «առ Հրեայն հաւատացեալս, եթէ դուք կացջիք ի բանի իմում, ճշմարիտ աշակերտք իմ էք. եւ ծանիջիք զճշմարտութիւնն, եւ ճշմարտութիւնն [որ է ինքն իսկ Յս. Քս. հմտ. վեր. էջ 166 44.] ազատեցի զմեզ... Անկեանց որ ստեղծեալս՝ ծառայ եւ մեղաց (առ այս հմտ. Հո 6, 16. 20. եւ 2 Պա 2, 19)։... Իսկ արդ եթէ Որդին զձեզ ազատեցուցէ, ճշմարիտ ազատք լինիջիք» (Յհ 8, 31-36):

Այս է կատարեալ ազատութիւնն՝ զոր չնորհեաց մարդկան Փրկիչն աշխարհի, որ փրկեաց զհաւատացեալսն յիշխանութենէ խաւարի (Կղ 1, 13 եւ Գղ 4, 31), որով եւ բովանդակ իսկ արարածքն ազատեցին ի ծառայութենէ ապականութեան յազատութիւն փառաց որդւոցն Աստուծոյ (Հո 8, 21)։

Արդ, յայտ է թէ՛ ճշմարիտ ազատութիւնն յարդիւնս զայ, ի վեր քան զամենայն բարի գործովք եւ ընկերսիրութեամբ, կատարելով «զօրէնսն զարքունականս» (Յկ 2, 8) եթէ՛ «Սիրեցես զընկեր քո իբրեւ զանձն քո» (Մթ 22, 39)։ Ուստի պարտապան է քրիստոնեայն ո՛չ ըստ մարմնոյ կեալ, այլ Հոգւոյն Աստուծոյ վարել, զի այսպիսին է միայն որդի Աստուծոյ (Հո 8, 12 հ.)։ այլ եւ միշտ ի մտի ունելով զպատուիրանս Պաւլոսի Առաքելոյ յազապս վարուց եւ զործոց, զորս մի ըստ միովէ կը նշանակէ եւ որք բովանդակին յայս բան թէ՛ «Մի՛ յաղթիր ի չարէ, այլ յաղթեա բարեաւն չարին» (Հո 12, 1-21. հմտ. եւ Գղ 5, 16-26)։

Ապաքէն ի գէպ է հարեանցիւ յիշել աստէն թէ՛ ե՛ն ոմանք որպէս յառաջագոյն նոյնպէս եւ յայժմու ժամանակիս, «մարդք ապականեալք մտօք՝ անպիտանք ի հաւատս» (2 Տմ 3, 8), մոլորեալք եւ մոլորեցուցիչք (2 Տմ 3, 13), որք խարէպատիր մեծաբանութեամբ այլոց «ազատութիւն» կը քարոզեն, «ազատութիւն» կը խոստանան, այլ սակայն կարծեցեալ ազատութիւն նոցա ո՛չ այլ ինչ է, բայց եթէ վատթարագոյն ստրկութիւն։ Այսպիսի մարդիկ, «ինքեանք ապականութեանն ծառայք» (2 Պտ 2, 19) «իրեւ պատուակ չարութեան ունին զազատութիւնն» (1 Պտ 2, 16), «ի պատճառս մարմնոյ» եւեթ (Գղ 5, 13), եւ ո՛չ՝ «իրեւ Աստուծոյ ծառայք» (2 Պտ 2, 16)։ —

Առ այս արժան է դարձեալ կրկնել թէ՛ ազատութիւն ո՛չ է ապերասանութիւն եւ անիշխանութիւն, այլ միաբանութիւն ընդ Աստուծոյ եւ հպատակութիւն կամացն Նորին։

Եւ համանգամայն ասել, Յակովբոս Առաքեալ զհանգամանս քրիստոնէական ազատութեան համառօտէ զայս օրինակ. «Այնպէս խօսեցարուք եւ այնպէս արարէք, որպէս զի ազատքեան օրինօքն իցէք

զատելոց» (Յկ 2, 12)։ յայս կատարեալ օրէնս ազատութեան պարտ է յառել եւ ի նմին կալ (Յկ 1, 25)։ սոյն օրէնքն ազատութեան ինքն ըստ ինքեան կատարեալ, արդար եւ սուրբ է (Հո 7, 12) եւ զկատարելութիւն կը պահանջէ եւ կը պարզեւէ, բայց ո՛չ եթէ արտաքին բռնապատութեան պայմանաւ — վասն զի այտի բարոյական կատարելութիւն չէր կարող ըլնել —, այլ իբրեւ օրէնք որ ինքնին իսկ յառաջ ածէ զազատութիւն, այնու զի հայր յինքնիշխան կամ մարդոյ, միով բանիւ՝ նոգեալ օրինակ կամ օրինակ Հոգւոյն կենաց ի Քրիստոս Յիսուս (Հո 8, 2)։

Զ.

Հուսկ ուրեմն մեայ խնդրելի թէ՛ զի՞որդ մեկնելի է յանկուրիս եւ միաբանութիւն գործոյ եւ ազդեցական կարողութեան Աստուծոյ ընդ մարդկեղէն ազատութեան։

Էւ ծածուկ խնդրոյս արդեամբք իսկ անբովանդակելի եւ անհաս է մտաց։

Առ այս ա՛յնչափ միայն մարթեմ ասել թէ՛ ընդունելով եւ ճանաչելով զտէրութիւնն, զվարչութիւն եւ զխնամակալութիւնն Աստուծոյ՝ կը հաստատի միանգամայն ազատութիւնն մարդոյ, նոյնպէս եւ յանկութիւն եւ ազերսն մարդկեղէն անձնական կենաց ընդ Աստուածեղինի (1 Կր 3, 9 «զի Աստուծոյ գործակից եմք» հմտ. 1 Թս 3, 2), առանց անգիտանալոյ թէ՛ ամենայն ազատութիւն արարածական բնաւ իսկ չէ կարող բացարձակ լինել եւ առանց սահմանաւորութեան։

Գործակցութիւնն մարդկեղէն ազատութեան ընդ Աստուածեղէն գործողութեան եւ ազդեցական կարողութեան բռնազանցօրէն անհասական է եւ անմիկնելի։ Սակայն բարեպաշտ անձն ոչ ինչ զբժուարութիւն կը գտանէ յայտմ մասին, զի բարեպաշտութիւնն յեցեալ է ի հաստատուն վստահութիւն եւ ի հաւատս, եւ փորձառութեամբ զիտակ իսկ է համազօրութեան երկոցունց սատարաց եւ ազդեցութեանց, յոյր սակս կ'զգայ եւ կ'իմանայ զանձինն ազատութիւն իբրեւ «յիւսուծոյ դրոշմ», ձգեալ եւ կրեալ, եւ զգորութիւն եւ զազդեցութիւն Աստուծոյ ի մարդն՝ իբրեւ զազատութիւն։

5.

Եւ արդ, բովանդակելով զվերասացեալսն, ասեմ՝ թէ նշմարիս ազատութիւնն միայն ֆրիստնեական ազատութիւնն է, որ նոյն է ընդ ծառայութեան Աստուծոյ, իսկ անձնօրէնութիւնն կամաց մարդոյ հաստատեալ կայ ի միակամութիւն ընդ Աստուծոյ, կամ ի համակերպութիւն եւ ի հպատակութիւն կամացն Աստուծոյ:

Այս է ազատութիւնն՝ յոր ըստ բանի Առաքելոյն՝ կոչեցեալ է ամենայն քրիստոնեայ: Վասն որոյ պարտի ամենայն հաւատացեալ «զնալ արժանի Տեսնոյ յամենայն հաճութեան, յամենայն գործս բարութեան պտղաբեր եւ աճեցուն զխոտութեամբն Աստուծոյ» (Կղ 1, 10), եւ նմանող լինել Բրիստոսի (1 Կր 11, 1) եւ Աս-

տուծոյ Հօր իբրեւ որդի սիրելի (Եփ 5, 1), «զի որ Հոգւովն Աստուծոյ վարին, նոքա են որդիք Աստուծոյ» (Հռ 8, 14):

Ո՞չ ապաքէն զերագոյն փոխան մարդկեղէն կենաց աստուածանականութիւնն է, — ո՞չ ապաքէն Հոգի է Աստուած (ՅՆ 4, 24). եւ որովհետեւ «Տէր Հոգին է», ապա ուրեմն ո՞չ այլուր բայց միայն «ուր Հոգի Տեսնեմ եւ, անդ ազատութիւն եմ» (2 Կր 3, 17):

Ֆ. Յ. Մ.

Վրեպք սպագրութեան ի նախընթաց հասածի Պարապմանցս.

էջ 171 ր. տ. 3 ի վ. ընթ. սկզբունք
» 171 » » 27 ի վ. փոխ. զլաւն ընթ. զլարն
» 172 » » 8-9 ի ն. ընթ. ապրեցունցե

ՄԱՆԻՔԱԿԵՆ

Բարեկամս՝ Ասեփ Կիւրքուրեանի

Խամուած ես ալ, հիւանդ արտի մը հանգոյն,
Որուն մեջ զո՛ւր Սերն իր դիւքանքն է ծորեր.
Խամուած ես ալ, ո՛վ մանիւշակ դողդոջուն,
Հովուն շունչէն բրբաբեր:

Ժամ մ'է անցած, երբ իմ ձեռքերն ակամայ
Եկան խըլել կեանքիդ բաժինը արդար.
Հիմա դաշտին խոտերուն հետ կը հեւայ
Դողդոջ ցօղունդ՝ շիւղի մը պէս դալկահար:
Լո՛ւռ ու քախճոս կ'իջնեմ անդունդը արտիդ,
Ուրկէ աւաղ, կեանքը տակաւ կը փախչի,
Կոպերուս տակ ծընունդ կ'առնեն շիր առ շիր
Կոյս կայլակներ արցունքի:

Խամուած ես ալ, զոն մ'ես յիմա՛ր բաղձանքի,
Զոր չըկրցայ զսպել զուրիս ակնարկով.
Կրնայի՛ր դեռ ծրծել սիւքեր զարունի,
Նրազն ըմպել զով առուակի մ'հոգեբով:
Կրնայի՛ր դեռ, պայծառ իրկուն մը զարնան,
Արժանանալ կոյսի մ'ամբիժ նայումքին.
Պարզե՛լ սիրոյ երազանքներն ոսկեման՝
Անոր աղուռ՝ հոգիին:

Կրնայի՛ր դեռ . . . : Արդ հառաչ մ'ես, ո՛վ հոգիս,
Մայր բընութեան տրիստր արեւն դուրս ժայթքած.
Կ'իյնա՛ս ձեռքս, եւ հովուն հետ կը փախչիս
Կոյսի մը պէս, որուն սիրտն եմ արիւնած:

Գրեմ՝ հոգեակ, զընա ցօղունդդ զսնել,
Վերջին անգամ մ'ալ արցունքներդ քափե.
Կեանքն է այսպէս, նամբուն վրայ այս անե՛լ
Ամեն ինչ լո՛ւռ կ'արտառուէ . . . :

Վահեսիկ

ՎԻՉԷՆ ՍՐԱՊԵԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ե Ձ Ն Ի Կ

Դուրեան Սրբազանի դիտողութիւններն ու սրբագրութիւնները

Մեր ողբացեալ Մեծ-Վարդապետին կամին է որ կը կոտորեն հրատարակելով իր այս վերջին աշխատութիւնը, զոր բնական ճիշդութեամբ անխնայ անհատական ջանքով մը շարադրեալ մէջ, քննադատական, քննադատական, քննադատական կը խօսէր նախնային ժողովրդին հետ իր անձնական դիտողութիւնները, եզրնակի մէջ ալ սրբագրութիւններ քան իր սուր դատողութեամբ, բայց առիթ հետաքննելու տալով էր Հ. Ե. Փէշիկեան պատմիչը եւ բացատրեց Քաղաքական մէջ եզրնակի շեղումներն եւ վեցսիկեան հրատարակութեան պայմանները, որոնց հետեւեցաւ Քաղաքական մասնակցի իւրաքանչիւր թիւի զոյլուն՝ ամենէն յառաջ կը կարգաւ Հ. Փէշիկեանի յօդուածները եւ բերանացի կ'ընէր մեզի իր դիտողութիւնները։ Խնդրեցինք իրէն որ Սիւնի համար ամփոփէ իր այդ դիտողութիւնները եւ հրատարակէ իր իսկ քան սրբագրութիւնները, որոնք մեծ նպաստ մը պիտի բերէին եզրնակի նման դասական մասնակցի մը զորմէն բնագրական վերահաստատութեան։ Դաւանան հիւանդութեան ազդակներուն ճակ կը տեսնուէր եւ կը հրաժարէր ծանր աշխատանքներ քննել։ Եւ կ'սպասէր որ Հ. Փէշիկեան աւարտէ իր աշխատութիւնը Քաղաքական մէջ։ Ան սուրեց, բայց ինքն միշտ վստահեցաւ զորմէն ձեռնարկելու, զորմէն իր առողջական վիճակէն։ Վերջապէս յօժարեցաւ նեղ տոնել զբիշը։ Իր հիւանդութեան ճիշդ նախնային օրերուն մէջ յանախ խօսեցաւ եզրնակի սրբագրութեան մասին, հերքեց Նալբանի վերագրուած բերութիւնները, եւ քան։ — «զոն եմ որ ձեռք մը տուի աշխատութեան», եւ անկողին ինկաւ։ Զաւանցանքի մը պահուն քան ինքն թէ ա'ն իր տեղէն եզրնակի մասին գրածներն եւ բաղդատէ ձեռնարկէին հետ։ Ֆուստեղէնի հետ կապ մը չուէր իր քան աշխատանքը։ Դուր հանգիստ քննել, Սրբազան, կ'առնէր, կը բաղդատէր եւ կը հրատարակէր ըսի։ Այս բոլորին պատճառները անմասնաւոր եմ ՍՄՈՆի սպասող թիւին մէջ։

Դուրեանեանով կը հրատարակենք այսօր իր այս վերջին բանասիրականը։ Զնաւ եղած ինքնամբ տարին որ չապրի ինքն սխալ։ Դուրեան Սրբազան էր բան մը գէշ, այնքան կը սրբագրէր եւ կը զոյգէր իր գրածը որ ինքն միայն կ'ընէր անոնց մէջէն իրաւ ելլել։ Տոյն բանասիրութիւնը կ'ընէր շարունակ միմեկուն վրայ ալ, մեծ դժուարութեան մասնակցով գրաւարներ։

Եզրնակի սրբագրութեանց առիթ գրուած այս բանասիրական յօդուածը բարեխախտաբար ինչ տեղ դժուարութեան մասնակցով մեզ։ Այնպէս որ կ'ընենք ըսել թէ անքերի է առաջ հրատարակութիւնը այս սխալներու մէջ։

Շատ ցաւալի է սակայն որ Դուրեան Սրբազան իր սրբագրութիւնները հասուցած է մինչեւ Դրո Գիւրգիսին, եւ չէ կրցած Դրո ու վերջին զիւրին, Մարկիոսի աղանդի ելծուածին, սրբագրութիւնները գրի առնել։

Թեքեւս որ մը առիթ ունենանք իր գործածած եզրնակի լուսանցարութիւններէն ու ճորտէն օգտուելով՝ այդ Գիւրգիսի մէջ ալ իր քան սրբագրութիւնները հրատարակել ՍՄՈՆի մէջ։

Դիտել կու տանք նաեւ որ Դուրեան Սրբազան ինքն վերնագիր չէր գրած իր այս աշխատութեան նախաբանը։

ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Իբր չորս տարի առաջ (1926 թ.) Գ. տպագրութեամբ Վենետիկէն հրատարակուած եզրնակի աշխատանքն անցընող մը, առաջին իսկ էջին վրայ հանդիպելով ա'յն «Զեւեղութեան»-ին, որ բառ առ բառ նոյն է իր նախորդներուն հետ եւ ուր դիտելով որ մինչեւ իսկ «գործմել» բառը անփոփոխ պահուած էր հոն իր տպագրական սխալովը, միտքէն պիտի չանցընէր բնաւ թէ քան որդ գարէ մ'իվեր առաջարկուած բնագրական ուղղութիւններու մասին (ի ձեռն նորայրի, Գալէմբեարեանի, Աճառեանի, Կայնի) կարեւորութիւն մը ընծայուած ըլլար Հրատարակիչին կողմէ, և յուսախարձեղով պիտի դնէր այդ նոր օրինակը՝ արդէն հինն իր ձեռքին տակ ունենալով։

Այդ յուսախարութիւնը սակայն՝ որ ծանր պիտի կռուէր բանիմաց ընթերցողի մը՝ պիտի ամրանար ա'լ առիթի ցաւազին տպագրութեամբ մը, երբ պատահաբար տեսնէր այդ նոր տպագրութեան 16 էջին վրայ «զհոգեաց մարդկանց» ի եւ 25 էջին վրայ «յԱստուծոյ շնորհ» ի նման տնուշազիր վրիպակներու։ Ինչպէս կարելի է ուրեմն, բանասիրական տեղ ճշգրտման վերաբերմամբ քան մը կամ կիւ քանի տեղամ գտնել եզրնակեան այդ տողերու մէջ, քանի որ Հրատարակիչը «ընդ բնաւ սլանան» (էջ 21) և «ճշգրտել քննիցեն» խօսքերուն և և և գիրքին տեղամ չէր ուզած զոհել։ Բայց ահա տեղ մը «զանձին և և թ խորհիցի զգորութիւնն» հին ձեւը սրբագրուած պիտի տես-

քերն (ո՛չ քերին) յանոյշս (գնիցի)։ (Եզ-
նիկ, էջ 27 և 214)(*)։ Եթէ մերեքը հա-
շարիս — աշարիս քաշիս նշանակէր, ի՞նչպէս
հնար կ'ըլլար հաշտեցնել «մերեք մեղաց»ը
(Իմաստ. Ի 20), «մերեք սրբութեանց»ի
հետ (Ա. Մն. ԻԸ 12)։ Ընդհակառակը մութ
արմատէն կ'ածանցի միայն ածականը՝ (ո-
րուն յոգնակի ձեռով գործածութիւնը կոս-
կածելի է ինքնին) և միայնովին գոյական-
նը, և այլն։ Կը սիրենք իրաւունք տալ Հ.
Պաղիկեանի, որ վենետիկի վանքին Գ.
Ճառքնաբերէն մէջ կը բերէ Եզնիկի նոյն
խնդրական տողերն յիշեցնող խօսք մը.
«Եթէ ոչ նախ զրիժ և՛ զմեր տչացն մաք-
րիցեն, ոչ կարեն զճառագայթս արեգա-
կանն նկատել»։ Միենոյնը կը կարգանք
նաեւ մեր վանքի հին և՛ ընդարձակ ձա-
ռքնաբերին մէջ (Ա. Հատոր Բ) «որ զաման
ճառագայթից արեգականն կամին տեսա-
նել՝ և՛ էթէ ոչ նախ զրիժ և՛ զմեր տչացն
մաքրիցեն, ոչ կարեն», և այլն։ Եթէ միայն
փոխանակուի մերեքով, մութ բանեռու «ճո-
ղալ»ուն յայտնի հակասութիւնն ալ վերջ
կը գտնէ ինքնին։ Եզնիկ ըսել կ'ուզէ.
աչքը պղտորող աղբին ու քիժին մթերքը՝
որ բերեցուն (այսինքն նայուածքին) շուրջ
կը փափիին, արեւելք չեն ըլլար լոյսին
նայելու՝ և՛ էթ մաքրուին։ Ի դէպ է յիշել
Պաւստոսի Կարկեղոսացիին խաղին (Ա. Հան-
դէս, Տեսիլ Բ) սա տողերը Փրանսերէն
թարգմանութեամբ. «Mes yeux, qui étaient
pleins d'ordure (կամ d'une humeur visqueuse)
ce matin, comme ils sont clairs maintenant!
— Mais tu as encore un peu d'ordure dans
l'oeil (in medio oculo = զրոք) — Prête-moi
le secours de ta main».

Էջ 7. «Ի չգոյէ և ի գոյէ»։ Արարչու-
թեան գործը՝ որ ի չգոյէ կ'սկզբնաւորի, կը
շարունակուի նաեւ ի գոյէ։ Եթէ ճիշդ է այս
փարզապետութիւնը, հարկ չենք տեսներ
սխալ համարիլ ի գոյէ բառը։ Զմ. Տպա-
գրութեան «Եկին ի չգոյէ ի գոյ» բացա-
ւորութիւնը ուղիղ կը գտնէ, և Բագրա-
տունին կը վերագրէ անուշադրութեան
վրիպակ մը։ Դիտել կուտանք որ՝ «Ի լի-
նել (ն գիրն աւելորդ է) և ի գոյանալ եկին

ի չգոյէ ի գոյ» խօսքին մէջ՝ վերջին բառը
ինքնին նոյնաբանութիւն (tautologie) մըն
է «Ի լինել և ի գոյանալ եկին» բառերէն
յետոյ։ Մեզ կը թուի թէ «ի գոյեան սխալ
մը չէ ըստ իմաստին, ինչպէս ուղեցիւնք
հասկնալ, և ջնջելին է «ի գոյ» բառը»(*):

Էջ 9. «Արանցի Մոգուց»ի առաջին բա-
ռը Արեւաց կարգաւոր առաջարկութիւնը ըն-
դունելի կը նկատէ Հ. Փէշիկեան, բայց չէ
համարձակած սրբագրել։ Կ'արժէ յիշել որ
Փաւստոսի մէջ ալ (էջ 202) նոյն սխալը կը
տեսնուի. «մինչև անմի գործն Արանց(1)
առնէին»։ Եւ յետոյ՝ ինչպէս յայտնի է,
Եզնիկ իր գործին յատակագիծը կը գնէ
մեր առջև, յիշելով քով քովի յոյն հեթա-
նոսները, Պարսիկները կամ Մոգերը, և
Հերձուածողները (Մարկիոն) և այլն։ Գա-
լով Mariès-ի յաւելուածական տողերուն՝
տրամաբանօրէն շատ ուղիղ են, և անհրա-
ժեշտ է ցատկուած տողեր մը ենթագրել,
խօսքին իմաստը լրացնելու համար։

Էջ 13. «զգայականացն անշուշից» բա-
ցատրութիւնը, զոր Mariès հակասական նը-
կատած և փորձուած է սրբագրել աւելի
անհասկնալի տողերով, կը հովանաւորուի
Հ. Փէշիկեանէ, ըստ որում զգայական բա-
ռը զգալի ալ կը նշանակէ։ Բայց նախ կ'ար-
ժէ դիտել տալ որ հրեշտակներէն կամ
մարդկային հոգիներէն անմիջապէս յետոյ
անշուշից իրերու յիշատակութիւնը շատ բը-
նական չերեւի ինքնին. երկրորդ՝ զգայա-
կան բառին զգալի կամ շոշափելի նշանա-
կութեամբ կիրարկումը ընտանի և սովոր-
ական չենք նկատեր Գաւական մատե-
նագրութեան համար. երրորդ՝ Արշարու-
նիէն մէջ բերուած վկայութեան մը հա-
մաձայն՝ զոր ՀԲ ունի «անշուշից» բառին
տակ, կը կարգանք «զգայականացն և ան-
շուշից», ուր որոշապէս կը զատուի «զգայա-
կան» արարածները «անշուշից» արարած-
ներէն։ Չենք հասկնար սակայն՝ թէ ինչո՞ւ
ՀԲը Եզնիկի «զգայականացն անշուշից»ին հետ
անխառնաբար կը յիշէ Արշարունիի այդ
խօսքը, առանց ռեւէ անդրադարձումի։
Անգամ մըն ալ մտադրութիւն զարձնելով

(*) Հմտ. միւս = մի ևս = միւս. Կարելի է
մասն բառն ալ սղեալ ձեւն համարիլ «մի ասին»
բառին։

(1) Ըստ Եննիոց, զոր օր. երկրորդ նախ իբր
յոյնէ կը գոյանայ, և յետոյ իբրեւ զոյ կ'արտա-
դրէ ամէն ինչ որ ի նմանէ է (հմտ. Եզնիկի տա-
ղերը տեղւոյն վրայ)։

եղնիկեան տողերուն վրայ... «Ե պահէ կենդանի զբանաւորսն աներեւոյթս և ոչ նախանձի: զհրեշտակաց ասեմ և զհոգեաց մարդկան, և զգայականացն անշնչից յիւրաքանչիւր կայանի», կը տեսնենք շարադրութեան անշնչայտնի թերութիւն մը, և կ'ենթադրենք թէ բայ մը կը պակսի [և խնամ չանի] զգայականացն և անշնչից յիւրաքանչիւր կայանի»:

Էջ 17. «Նուաճէր» բայի բէն աւելորդ է անշուշտ: Հարկ չի կայ՝ Աստուծոյ գործը ժամանակաւոր ցոյց տալու աղճատ ձեռագիրներու վստահելով:

Կասկած չի վերցնել՝ թայց նախադրութեան բացառական խնդիր տալու կանոնը: Հ. Փէշիկեան կրնար ուղղել. «Յայսց կոտայ»:

— Միւսնոյն էջին վրայ, «յոչինչ դառնալ և դարձուցանել չէ պատշաճ զիւր բընակիչսն» խօսքին մէջ աւելի ուղիղ կը նշկատենք պատշաճաւ կարգաւ, սամահաւաճ խմատով, ինչպէս և 27 և 41 էջերուն վրայ գործածուած պատշաճեանները. «ուստի դարուեստն յոչնչէ ի մարդիկ պատշաճաւ հարկ է ասել»։ «քանզի չէր հմուտ այլ իմիք, բայց այնմ և եթ՝ յոր պատշաճեան էր»:

Էջ 23. Հ. Փէշիկեան «յամենայն ի հիւզն լինել» խօսքն ուղղած է «յամենայն ի հիւզն լինել», նոյնին հարցական ձեռն համաձայն՝ որ է «յամենայն ի հիւզն լինել»։ Բայց նոյն էջին վրայ «և եթէ ի մասն ինչ միայն ի նման» խօսքը՝ որ բայը կը պակսի՝ թողուած է անփոփոխ: Ըստ մեզ՝ հարկ է ուղղել, և կարգաւ «եթէ ի մաս[ի]ն ինչ միայն ի նման», ինչպէս ետեւէն եկող «եթէ ոչ ի նմա և ոչ ի մասին ինչ նոր» խօսքն ինքնին կը թեւադրէ այդ սրբադրութիւնը:

Էջ 26. «Ե ոչ միայն արգս և դարգս»: Նոր տպագրութեան մէջ և չաղկապը անուշադրութեամբ դուրս մնացած է: Նոյն էջին վրայ՝ «զարուեստն կարէ ցուցանել» տեղ՝ թերեւ անտեղի չըլլայ կարգաւ կացուցանել (= յանդիման): Հ. Փէշիկեան, «Ե ոչ արգասիս նիւք»ը փոխած է նիւքոյի: Կարեւոր է այս ուղղումը, բայց ուղղագրոյն ևս է կարգաւ «և զարգասիս նիւթոյ», և ո՛չը իբրեւ գրչագրական սխալ մը քննել: Հիմնաւոր ուղղութեան կը կարօտի այս խօսքը որ խառնակ է, և արուած բացա-

արութիւնը հակառակորդ կողմին կրնայ վերագրուիլ (բղղա. էջ 30):

Էջ 31. «բարի արարաւածս» ուղղելի է արարածս, ինչպէս նոյն տպագրութեան վերջը կ'ըսուի «բարեօք արարածոցն»:

— Նոյն էջին վրայ «գոր ասեն»ը պէտք է կարգաւ «զի ասեն»:

Էջ 32. «անհնարին է ասել», կարգաւ անհնար:

Էջ 33. «ապա չգոյր ժամանակ՝ յորում չէր անարար»: Հ. Փէշիկեան իրաւամբ քննած է այդ չ բացասականը, թէ և Զեռաղիրները չեն թոյլտարեր այդ յապաւումը:

Էջ 36. «ի պատիմս մնանին», պէտք է ուղղել՝ մնանին: (Հմմտ. էջ 84) «յայնպիսի տանջանս մնանիցի»:

Էջ 40. Համակերբս թէ համակերպս. — երկրորդը աւելի բանաւոր կը համարինք: — վասն որոյ գովեսք. — պէտք է տրամաբանօրէն աւելցնել՝ ո՛չ մակրայը:

Էջ 43. «Այլ այն և եթ առաջի կայր, կամ անալ Աստուծոյ կամ չանալ, և զնոյն և եթ պատճառ չարին իմանալ»: Հոս երկրորդ նախադասութեան նոյնով անալ ու չանալը միանգամայն կը շփոթուին իրարու հետ: Ո՞ր սրբագրեր է արդեօք իդմիրեան տպագրութեան չա՛տ ուղիղ ստաղերը. և զնոյն չանալն և եթ պատճառ չարին և իմանալ» (էջ 37):

Էջ 45. «Եթէ զնոս ինչ հանեալ էր» — «Եթէ զնա նոյնպէս որպէս եղեն պահեաց» խօսքերուն մէջ ևս զերանուէր չէ դրուած իրմէ առաջ բառի մը տեղ՝ որ պէտք էր ըլլալ ըստնարկու կամ ստանալ: Կ'սպասուէր «նախանձու ըստնարկուին եմուտ մահ յաշխարհ» Սողոմոնեան առածը, զոր ետքը (էջ 75) յիշած է Եղնիկ: Նոյն էջին վրայ՝ «քանզի ոչ թէ — յորժամ իցին ուրուք երկու ծառայք... մի՛քե» խօսքերուն կապակցութիւնը ուղիղ չէ: Լաւ է կարգաւ «Բանդի ո՛չ եթէ, յորժամ... պատճառ չարեաց զտէրն պարտ իցէ իմանալ»: Ընդմիջօրկուած բառ մը կ'երեւի մի՛քեն: Հ. Փէշիկեան «պտէ՛րն» ի վրայ պարոյկ մը դնելով՝ ամբողջ խօսքին ըստնարկուէր չէ նկատի առած:

Էջ 48. «Ի թեթու մատուցեալ»ը՝ իբրեւ ո՛ճ՝ կը մնայ կասկածելի: Եթէ ուղղուի սրբագրել և հասկնալի բառով մը փոխանակել «թեթուք»ը, մենք պիտի համարձա-

կէինք կարգաւ սապէս. «այլ կարծեօք և քերես մատուցեալ», և այլն: Պէտք է ըսել թէ և չազկապին ի ի փոխուելը գրչագիրներու մէջ սովորական երեւոյթ մըն է, և ատով միայն կրնայ մեկնուել «ի քերես»ը եթէ իրօք սխալ մըն է:

Էջ 49. Վասն ընդ անագորոյն թշնամութիւն ընդ մարդոյն ունելոյ. — ջնջելի է առաջին ընդը:

Էջ 58. մրցել... մարտնչիցի! հայերէն չէ: Պէտք է կարգաւ մարտնչիցի:

Էջ 65-66. «Ըստ իւրաքանչիւր մի ըստ միով»: Թերեւս աւելորդ չըլլայ՝ ըստ իմաստին՝ աւելցնել և կարգաւ «ըստ իւրաքանչիւր պիտոյից կամ դարմանոց» և այլն:

Էջ 65. «գեղնեղի լինի» ընտրելի է Իգմիրեան Ձեռագրին «գեղ լինի» ձևը:

Էջ 68. «յետ յանցանելոյ պատուիրանաւ». աւելորդ է չ նախամասնիկ նախդիրին գործածութիւնը. — անսովոր պիտի ըլլա՞ր ըսել տալ եղնիկի «գլխատուծոյ պատուիրանաւ յանցանել» փոխանակ «գլխատուծոյ պատուիրանաւն անց» (էջ 71):

Էջ 69. «կախալիս ուսուցանէ». — համեմատելով քիչ յետոյ՝ հսպիս և ընչապրտուս ուսուցանէ» (ո՛չ ուսուցանեն) խօսքին հետ, անտեղի չենք համարիր բառը կարգաւ կախալ ինչ ուսուցանէ, նկատի ունենալով մանաւանդ՝ որ քոթիւն եզակի ենթակային չի կրնար պատկանիլ յոգնակի ստորագրի մը: Նոյն էջին վրայ՝ «քարբոս իգակերպ», զոր Հ. Նահապետեան կ'առաջարկէ կարգաւ իմակերպ, ընդունելութիւն չէ գտած Հ. Փէշիկեանի կողմէ, և գիտել կը տրուի թէ Ձեռագիրները այդ փոփոխութիւնը չեն թոյլատրեր: — «Բարբո» *βασίλειον* կոչուած օձն է (Ազմ. Ղ. 13. Ես. ԺԹ 5 երկիցս), բայց եզնիկի համար յունական բառիկալուքը թերեւս այնքան ծանօթ չէր որքան ֆարբ (հմտ. էջ 107):

Էջ 69-70. «յնասակարութեան» պէտք է կարգաւ «վասն յնասակարութեան», ինչպէս ունի Իգմիրեան Տպագրութիւնը (էջ ...):

Էջ 86. «Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի»: Անիմաստ է այս խօսքը. պէտք է կարգաւ, «Եւ այս յԱստուծոյ՝ անարժանիցն յիրաւի լինի», ինչպէս բացատրողական բառերէն ալ կ'երևի:

Էջ 86-87. Ուղղութեան կը կարօտի

«Եւ արդ քան անդէն կապել կախարդացն զգեն... Լաւ էր թէ յայտնէր... օգնականութիւն գտանէր բուժելոյ ի չարէն».

Էջ 88. «նա և մինչդեռ ճանցիմ իսկ ունակ ի գեղ...» պարբերութեան մէջ զբրուած նմա եզակի գերանունը և սասակեր եզակի չէղոք բայը յոգնակի պէտք էին զրուիլ:

Նոյն էջին վրայ. Ձի ոյր իւր ինչ (ոք) է, յիւրն չտայ և խնայէ. և որ ո՛չ է իւր, և այլն. վերջին որը պէտք է կարգաւ ոյր...

Էջ 90. որոց նշանացն նշխար? Թէ նըշմար:

Էջ 92. «Ասորնեայք» բառը՝ որ Ձեռագիրներու մէջ «Ասորնեայք» պէտք է ըլլայ, ինչպէս Իգմիրեան տպագրութեան վերադրուելէն ալ կ'երևի արդէն, Հ. Փէշիկեան նոյն պահած է իր նոր տպագրութեան մէջ (էջ 142), և Յանկին մէջ ալ: Այնուամենայնիւ կը գրէ իր Յօդուածներուն մէջ՝ թէ «Յեցած Աճառեան Ձեռագրի և իր տուած փաստերուն՝ վերջին տպագրութեան մէջ՝ մենք ալ ստորնկայք փոխեցինք»: Ձենք գիտեր թէ 1926 ի Գ. տպագրութիւնը՝ որուն քանի մը օրինակները մեր մօտ կը գտնուին, Ե՛րբ ունեցած է Դ. տպագրութիւն մըն ալ ուր փոխուած ըլլայ նոյն բառը: Յայտնի է որ Հ. Փէշիկեան գործին տպագրութենէ շատ վերջը անդրադարձած է բառին ստույգ ձևին, ինչպէս ինքն ալ կը գրէ իր յօդուածներէն մէկուն սկիզբը (Բազմալիպ, 1929 Մարտ, Թիւ 3): Իգմիրեան տպագրութեան ակնարկելով այդ առթիւ, միայն 14 վրիպակներ:

Էջ 98. «անուանք զբանգսանաց». — Իգմիրեան տպագրութեան «ի բանաստեղծիցն գտեալք»ը, եթէ մեկնութիւն մը նկատուի «բանգտանք» ի համար, իմաստէն չի հեռանար: Մենք հաւանական կը համարինք կարգաւ. «անուանք բանագիտաց» կամ «բանագիտից» (*): Ոսկերերան կը գրէ. «Ասեն զիմաստնոցն թէ բանագեթ են (յոյն. ποιεῖται, բանաստեղծ)», և որպէս կամին առասպելս կարկատեն» (Մեկն. Թղթ. Ա. 804):

(*) Ոչ ՀԲ և ոչ Աճառեր չունին բանագէ բառը բանաստեղծ նշանակութեամբ, և ոչ ալ բանգսանի բառը՝ զոյգութիւն ունի իրենց մօտ: Գէտ կամ զիտ արմատներուն զանազան օձանցումը կը տեսնենք ինչ ինչ բառերու մէջ. սագիտ = սագսանի:

«Առ երես արարած իցի» խօսքը անփոփոխ պահպանելը, և Ձեռագիրներում յենյով՝ նորայրի ուղղագրութիւնը չընդունող բանասէրներուն կը մնայ, զոհացուցիչ թարգմանութիւնը տալ այդ տողերուն:

Էջ 99. «Զի մարմնաւորի չէ հնար՝ թէ ի ջուրս կեցցէ (կեցէ)»: Արագրութեան կարօտ է այս մարմնաւորը, որ ջուրին մէջ պիտի չկրնայ ապրիլ. ձուկերը մարմնաւոր չեն ուրեմն: Բայց թերեւ անուշադրութենէ մը մօտ գտած ըլլայ վաղուց՝ հարկ է փոխանակել ցաւնայնոյն բառով, ինչպէս կը պահանջէ խօսքին կարգը:

Էջ 103. «Ի դուր է կա՛լ կա՛լ տակ ի կալս և ոչ Ա՛ռ տա՛ւ — Հ. Փէշիկեան կ'ըսէ թէ «այս հետաքրքրական և մթին ընթերցումը քննութեան և մեկնութեան չէ արժանացած բանասէրներէն», և կը փորձէ մեկնել ու հաւանական իմաստ մը դուրս հանել անկէ: Այլիւն փորձ մը ըրած է այդ մասին, (Հիմն Հաւաստ, էջ 171): Մեր կարծիքն ալ յայտնած ենք ժամանակին (ՏԽՍ Մասիս 1900 թիւ 24) սա տեսութեամբ թէ զեւրը խաբելու բառախաղ մըն էր կալ գոյականին և կա՛լ (բռնէ) բառերուն միջև, իբր թէ ա՛ռ ա՛ռ բայի յայտնի նշանակութենէն դուրս կրնային օգտուիլ զեւրը: Հ. Փէշիկեանի առած բացատրութիւնը զուարճալի կը թուի մեզի, «վիշապը ըրունի», ձեռքին ա՛ռ, լրացուցիչ յաւելումով: Հ. Գ. Գալմաթեան ալ՝ նոյն այդ բառերը «վիշապներուն բերանը տալն աւելի տրամաբանական» կը նկատէր (Մասիս 1900 թիւ 26 էջ 404 բ):

Էջ 104. «Զկեղքսանդրէ խորէին դեմ» — վերջին բառը մենք հաւանական կը դաննենք կարգալ դիւրի. վասնզի զեւրուն զորքը չէր անշուշտ, եղիպսական հնարողութեամբ կամ կախարհամբ, ինչպէս կը գրէ Եզնիկ, չիլի մէջ գնել ունէ մէկը: Պէտք է համեմատել Սողոմոնի սա խօսքն ալ. «Ի դիւրական արուեստի խորէութիւնս անկանէին» (Իմաստ. Ժէ 7):

Էջ 108. «Յայլս արարածոցն ընդէր մաղրի գերկրպագութիւն հեթանոսութեան» խօսքին մէջ բոլորովին անսովոր կը հնչէ մաղրել բայը իր ծանօթ նշանակութեամբը: Կարելի է կարծել որ յոյն բնագրի մը παρακαλέω բայը Եզնիկի կողմէ անուշադրութեամբ թարգմանուած ըլլայ այդպէս, փո-

խանակուցել, հրախել կամ յորդորել թարգմանելու: Նման օրինակ սխալ մը սպրդած է արդէն Գործք Առաքելոցի մէջ ալ (ԻԸ 20), ուր «աղայցիի զձեզ՝ տեսանել և խօսել»ը պէտք էր թարգմանել՝ «կոչելի կամ հրախելի զձեզ», և այլն:

Էջ 111. «խառափ» բառը, իբրեւ ἀπαξ մը, կը մնայ կասկածելի: Հ. Փէշիկեան չէ ուզած անդրադառնալ բնաւ խոռափին վրայ՝ ինչպէս ունի Իզմիրեան տպագրութիւնը:

Հոս փակադիմ մը բանանք. Հ. Փէշիկեանի յաճախակի ըրած ակնարկութիւններէն յայտնի կ'երևի՝ որ նախնի հրատարակութիւնը՝ կամայական սրբագրութիւններ կրած ըլլայ: Մենք այդ կարծիքէն չենք. քանի որ իբրեւ գործին հրատարակչը Ձեռագրին «գրչախաղութիւններ» միայն յապաւած է, և ո՛չ թէ այս կամ այն բառերը ըստ կամս փոխած. իսկ զիսկապաքանց բառանումը բնագրին վրաս մը չէ բերած ինքնին: Եւ յետոյ, ո՞վ տեսեր ու բաղդատեր է Իզմիրեան բուն Ձեռագիրը՝ իր Տպագրին հետ, նախնի սրբագրութիւնները մի առ մի դուրս բերելու համար:

Էջ 113. «յարգանդի մօր իւրեանց» — պէտք է կարգալ հօր: Հմտ. «Զրուան հայր մեր. — Զայն լուեալ Արճմին՝ ծակեաց գորովայնն և ել եկաց առաջի հօրն (էջ 114). «զբարեայ և զչարի ի միջի հօրն» զճնունդն համբաւէ (էջ 122). և եղիլէ կը գրէ «Արճմն ու Որմիզդ ի հօրն ծնուն և ոչ ի մօրէ»:

Էջ 117. յանդիմանեալ յաղջկանց խըտղեալոյ (նոյն բառը էջ 179). դիտողութիւն մը

Էջ 120. «պատճառ» բառը «պատշաճ» կարգալ աւելի բանաւոր է, ինչպէս ուրիշներ զիտած են արդէն:

Էջ 121. զսահմանօք եզեւթ. չէ սրբագրուած:

Էջ 125. «զեմեղել» թողուած է անփոփոխ. զեմեղել իմաստ չունի:

— Նոյն էջին վրայ «զիւրան... զընդալ» ուղղելի է «չիւրան» (հմտ. էջ 88):

Էջ 127. «ղար հայիլ»ը զոր ընդունած է Հ. Փէշիկեան և յետոյ կ'ուզէ զար հայելի փոխել, արդէն իսկ 1826 տպագրութեան մէջ կ'երևի. այսպէս կարգացած են նաև՝ Փարիզի և Պոլսի տպագրութիւններն ալ: Զէր արժեք ևս դառնալ, և վէճի նիւթ ընել վերստին:

Էջ 129. Ինչո՞ւ ընդհանուր ուղղադրութեան համաձայն չգրուի, որդոյն, որդւով երկու անդամներով (և այլ ուր ևս) և գրուի որդոյն, և այլն: Աւելորդ է ըսել՝ թէ յայտնի սխալ մըն է գրչութեան ա՛յս ու ասոր նմանները:

Էջ 130. «Քան Ձրուանայ որդի արարիչ տայր, որ ի վերն քան զՁրուանն էր՝ ինկն խկ խրովի չկարէ՞ր...» պէտք է սրբազրել. կամ քե (ըստ Իգմիրեան Ձեռագրին) «Քանզի Ձրուանայ՝ որդի արարիչ տայր որ ի վեր քան զՁրուանն էր, ինքն խկ խրովի չկարէ՞ր», և այլն. և թարգմանել այսպէս. կամ թէ՛ որովհետեւ Ձրուանէն վեր գտնուող էակ մը որ Ձրուանին արարիչ որդի մը կուտար, ինքն իրմով չէ՞ր կրնար:

Էջ 132. Քանզի բարին և չար ի միում անկանկ(!) ոչ մարթէին. — Իգմիրեան Ձեռագիրն ունի «ի միում Տեղի»: Թէեւ քիչ մը անսովոր՝ բայց կարելի է համեմատել նոյն խկ եզնիկի «ի միում զիւղին հետ: Գալով անկանկին՝ կը մնայ կասկածելի. կ'առաջարկենք կարգաւ սղանկ, որ յարմար բառն է:

— Նոյն էջին վրայ՝ Նորայրի զոյխարի սրբազրութիւնը յիշելու առթիւ՝ Հ. Փէշիկեան կը դնէ դարձեալ զոյխարէ, որ անշուշտ տպագրական սխալ մըն է: Իգմիրեան Ձ. ունի արդէն զոյխարաց:

Էջ 133-134. Ձէ մարթ գհուր և զջուր ի մի վայր առնել: Ճիշդ բացատրութիւն մը չերևիր, թէրեւս պէտք ըլլայ կարգաւ՝ «ուռնել»:

— Նոյն էջին վրայ. «Ընդէ՞ր ոչ յաղթեաց յաշտածին ծնունդն, և եղև արդել յերկուական ծննդեանն» խօսքին երկգլխի իմաստը պէտք է բառնալ, որուն մանաւանդ կ'օգնէ և շողկապէն առաջ գրուած ստորակէտը: Թարգմանենք. Ինչո՞ւ չկըրցաւ յաղթել յաշտածին ծնունդը, ու արդելք եղաւ տարակուսական ծնունդին: Բայց ա՛յս ճիշդ չէ անշուշտ. եզնիկ կ'ուղէր ըսել. ու արգելք չեղաւ... կամ պէտք է ստորակէտը վերցնել (ինչպէս է Իգմիրեան տպագրութիւնը) և կամ ոչ բայը կըրկնել եղև բային վրայ:

— Նոյն էջին վրայ՝ «իջեալ միմեանց»ը կարգա՝ զիջեալ (հմտ. իջցուք, զիջցուք, էջ 148, 149):

Էջ 135. «անհաշտ թշնամութիւնն պարտ էր ունել».— այլ և թագաւորութիւնն ևս ետ նմա (էջ 124). այս աւելորդ և անբերական և երբ պահուած են Հ. Փէշիկեանի տպագրութեան մէջ:

— Նոյն էջին վրայ «սերմանարկու»ն կարգա՝ «սերմարկու», հմտ. «սերմնընկալ»: Այսպէս ունի նաեւ տպագրութիւնը:

Էջ 143. Երեմասեանն յարութիւն. Հ. Փէշիկեան հաւանական չի գտներ Հ. Նահապետեանի երեմասեանն սրբազրութիւնը: — Առաջարկն ու հերքումն ալ հաւասարապէս զոհացուցիչ չեն թուիր: Ուրիշ կերպով՝ չէ՞ կարելի երեմասեանն կարգաւ այդ բառը, և հասկնալ՝ բռնական, ցառնական և ցանկական մասերով ձեացուած յարութիւն մը որ, ի հարկէ շատ նիւթական ըլլալով պիտի նկատուէր չարութիւն: Մարդկեղէն շունչը, տեսակ մը հոգեփոխական զազափարով, որ Պղատոնով ալ զարգացած էր Մասանեան մազդէական վարդապետութեան մէջ, մարմիններու յարութեան կուտար այդ հանգամանքը:

— Նոյն էջին վրայ միակգաւ բառը պէտք է կարգաւ միակգաւայն:

Էջ 146. «զորս պարտ էր Որմըզդի բարիք արարածոցն... սատակել», և այլն: Ի դէպ է կը կարծենք աւելցնել արաշի բառը. «Որմըզդի բարիք արարածոցն արարչի՝ սատակել», և այլն:

Էջ 149. Աճառեանի սրբազրութիւնը յաջող չերևիր. «իմէ մի»՝ քան մը նշանակութեամբ զստական լեզուին օտար է բոլորովին:

Էջ 154. «առ Աղաւստի» իմաստ չունի. կը թուի թէ ամի կրկնագրութիւնը (dillographie) պատճառ եղած ըլլայ անուան հոլովումը փոխելու՝ սրբազրողի մը կողմէ:

Էջ 155. Իգմիրեան Ձ. ի սկզբումը շատ աւելի տեղն է քան առեղծուածային երեւակը, որ բան մը ըսել չէ:

Էջ 156-7. «անուան» բառը մենք շատ կանուխ «անասուն»ի փոխած ենք: Նոյն բառը հակառակէն ալ Բարսեղի մէջ (էջ 162) անասունք եղած է փոխանակ «անուանք» ի: Մարիէսի գիտողութեան համաձայն ենք: Անասունքն... զիա՞րդ էր՝ զի յերկինս ելանէին և մարդկան ծննդեան պատճառը լինէին (էջ 157-8): Նոյն էջին վրայ տող 3 գալոց է — թերեւս գալոց է. Իգմ. տպ. ունի «լինելոց է»:

Էջ 164. «յաղակատան հասնալ» պահում է անփոփոխ, փոխանակ «յաղակատան հասնալ» ուղիղ ձևին՝ որ առարկութիւն չի վերցնել:

Էջ 169. «Եւ եթէ ի նմին հետու թեան, յետ սպառնալեացն, նոցա չէր աղուացնալ»: Սոյն վերջին բառը նկատարութեան արժանի է: Աղուանալ ճիշդ չեղևի, թերեւս ուղղելի է կրուիլ բային իբրեւ անցեալը (կղուացեալ), և նշանակութիւնը կ'ըլլայ, այդ հետ ու ապստամբ վիճակի մէջ՝ կծկուիլ մնալ:

Էջ 177. «որպէս յորժամ... ի լրջեաց ծուլայցէ» խօսքին մէջ հարկ է աւելցնել ո՛ր մը:

Էջ 179. «խնդրելոյ» աւելի ճիշդ՝ «խնդրելոյ», ինչպէս ունի Իզմ. ապագրութիւնը:

Էջ 186. «լուսաատու լինել ուր ի ներքոյ երկնից», ուղղելի՝ այնոցիկ ուր: — Անմիջապէս յետոյ. զնշանս սաստաճիստքեան՝ թէ սաստաճիստքեան ցոյցանել:

Էջ 190. Քանզի ոչ կարէ ակնբաց ի ցամաք գործել. — ուղղութեան կարօտ կ'երևի: Ոչ կարէ ակն բաւ ի ցամաք գործել, բաւ բառը իբրեւ գոյական կը նշանակէ, նաանկաւ ծայր: Ակնբաց չունի Առձեռնը, այլ ակնբացել, ուրիշ առումով: Բայց կարելի է օգտուիլ այդ նշանակութենէն, և թարգմանել. որովհետեւ չեն կրնար դէպի ցամաք հասնելու ծայր մը գտնել. կամ՝ թէ ոչ կարէ ակն բաց ի ցամաք գործել? (Տես նաև ՀԲ.):

Էջ 191. «ոչ ի վեր տայ զալ». կարգա՛ զնալ:

Էջ 197. «Դաւիթ»՝ լաւ ես՝ «Դաւթի», ինչպէս Լուսին Կուգան Յորաւ, Եսայիա:

— Նոյն էջին վրայ, «Եւ ի ներքոյ քան զՅուրս» և ի ներքոյ (ունի) զՅուրս. աւելորդ է քան նախադրութիւնը:

195-229. Էջերուն վրայ Բագրատունիի հրատարակութեան չհամապատասխանող բառերու կամ ոճի փոփոխումները նաւեանի գործ կը համարի Հ. Փէչիկեան. բայց, ինչպէս կանխաւ ըսինք, մենք համակործիք չենք ամբաստանելու նաւեանը. ո՞վ գիտէ ո՞ր հայ ունիթորի մը ձեռքէն ելած էր Աբրահամ Առաջնորդի ներկայացուցած Զեռագիրը:

Էջ 206. Հ. Փէչիկեան կ'ըսէ թէ՝ «կեկրոպեալ»ը ապագրական սխալ է, զի Բագրատունի Զմ.ի վրայ կրուպեալ է գրած:

Քիչ յետոյ կ'աւելցնէ «առ կեկրոպեալ» իբրով (ուղիղ՝ կրուպեալ): Կեկրոպ կամ կեկրոպս ծանօթ անուն է զիցարանական պատմութեան մէջ. բայց ո՞վ է կրովպեալ իբրեւ աւելի քաջածանօթ անձնաւորութիւն մը: Յայտնի կ'երևի որ Բագրատունին իբրեւ նոր բան մը գրած է իր Զեռագրին մէջ, առանց սակայն կարեորութիւն տալու ապագրութեան մէջ: Ուրեմն ապ. սխալ գոյութիւն չունի:

Էջ 206-7. «առաւել աստիք». աստիք յայտնի սխալ մըն է. պէտք է կարգալ «առաւել սաստիկ». այսպէս ունի նաւեան, աւելորդ քով մը. և Ալիշան ալ նոյնպէս կ'ուզէ կարգալ (Հին Հաւստ, էջ 250): Հ. Փէչիկեան աստիք կը պաշտպանէ ուժգին նշանակութիւնը տալով անոր, իբր թէ բառը մակրայ մը եղած ըլլար:

Էջ 208. Վենետիկեանը (1826), զոր ունիմ ի ձեռին, ապ. սխալ չունի. «սնկալ ե» նոյն տեղը. «աւելեալ է սերմանք» կը տեսնեմ իմ օրինակիս մէջ: Հ. Փէչիկեան ո՞ր ապագրութենէն քաղելով՝ այս երկու բառերն ալ ապագրական վրիպակներու կարգ կը դնէ:

Էջ 210. «մի քերիմ, միւս քերիմ». Նորայրի պէտք է իրաւունք տալ, եթէ կ'ուզէ կարգալ «մի թերն, և միւս թերն»: Առարկութեան տեղ չիկայ:

Էջ 211. սուղակսն կամ սուղակսն բառերը ճշգրիտ բացատրութեան կը կարօտին. կամ մին կամ միւսը յոյն համանիշ բառով կրնայ լուսարանուիլ:

Էջ 216. Հոս ծախանայ բայը ծախայ կարգալու սրամտութիւնը Հիւնքեարպէյնեան ունեցած է ուրիշներէ առաջ (Ստգ. Բարն. էջ 34):

Էջ 217. «Իւրի նմանի լուսնի բարբառն ջնն». — Հաւանական կը թուի նմանի բային տեղ ուրիշ յարմար բայ մը դնելէ առաջ թարգմանել խօսքը. — Արդ՝ տրական խնդիր և տրական տէր բայի ունի հոս նմանի բայը, բայց ո՞րն է տէրբային. «զեւր լուսնի նման է» ըսել կ'ուզեն՝ թէ լուսինը զիւր կը նմանի. առաջինն աւելի հաւանական կը գտնենք. վասնզի զեւր լուսաւոր երևելու կամ երկնային լուսաւորներուն նմանութիւնը իր վրայ կ'առնէ:

Էջ 226. «անքանակ»ը «անքակ» կարգալու համար չարժեք գծկամակիլ:

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ
ԵՒ ՀԱՅՈՑ ՎԱՆՔԸ ԲԵՐՂԵՀԷՄԻ ՄԷՋ

Գ.

3. — Ս. ԾՆՆՂԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ԽԱ-
ՀԱԿԻՐԵՆԵՐԷՆ ՄԻՆԿԵԱ ՍԱԽԱՆՏՏԻՆ՝

Խաչակիրներուն գալէն առաջ Պաղես-
տինի զրեթէ բոլոր եկեղեցիները արար-
ներուն ձեռքով կործանուեցան, միայն
Բեթղեհէմի Ս. Կուսի եկեղեցին ազատ մնաց
կործանումէ։ Բեթղեհէմցիները Ս. Ծննդե-
ական տաճարին պահպանումին համար,
երբ լսեցին թէ Խաչակիրները Էմմաուս
հասած են ու պիտի յարձակին Երուսաղէ-
մի վրայ, խաչակիր բանակին ընդառաջե-
լով զիմեցին դուքս Կոտրֆրուայի որ փու-
թայ օգնութիւն զրկելու. նկատի առնուե-
ցաւ Բեթղեհէմցիներու խնդրանքը և Դուք-
սը՝ Թանկրէտի և Պուրկի Պաղտինի ա-
ռաջնորդութեամբ Բեթղեհէմ փութացուց
հարիւր ընտիր ասպետներու գունդ մը, որ
առաւօտուն կանուխ Բեթղեհէմ հասնելով
յնժու թեան աղաղակներով ընդունուեցաւ
և առաջնորդուեցաւ զէպի Ս. Ծննդեան ե-
կեղեցին։ Տեղացի կղերը մասնակցեցաւ
այս խանդավառ թափօրին, որուն երաժը-
տական երգերուն խառնուեցան ուրախու-
թեան արցունքներ։ Գոհաբանութեան եր-
գերէն ու Ս. Այլրին այցելութենէն յետոյ
Թանկրէտ ի նշան յաղթութեան զրօշակ մը
բարձրացուց Ս. Ծննդեան եկեղեցիին վրայ,
յետոյ զնաց ասպետներու գունդը՝ միանա-
լու բանակին՝ մասնակցելու համար Երու-
սաղէմի գրաւման։

Ս. Տեղերու յաղթութեան հետեանքով
Կոտրֆրուայի կողմէն հիմնուած Լատին
Թագաւորութիւնը յանձնուեցաւ անոր եղ-
բորը՝ Պաղտինի, որ փառասէր մրցակիցնե-
րու զէմ իր վեհապետական իրաւունքները
ապահովելու համար պարտք համարեց թա-
գաւոր պսակուիլ։ Յայտնի է ա՛յն կրօնա-
կան զգացումը՝ որ ստիպած էր Կոտրֆրուա
Դուքսը հրաժարելու թագաւորական տիտ-
ղոսէն։ Պաղտին նոյնանման մտածումով մը

առաջնորդուեցաւ թագադրութեան համար
նախամեծար համարիլ Բեթղեհէմը Երու-
սաղէմէն։ Պատմիչ մը կ'ըսէ թէ «ան յա-
ւակնութիւն չունեցաւ թագ զնելու, ոսկի-
ով և պատուական քարերով զարդարուե-
լու և թագաւոր հռչակուելու Երուսաղէմի
մէջ, ուր մեր Փրկիչը, թագաւորաց թագա-
ւորը մինչև ի մահ խոնարհած է աշխարհի
փրկութեան համար կրելով փշեղէն պսակը»։
Այս ընտրութեան պատճառներուն մէջ
պէտք է նկատել նաև Դաւթի օծման յի-
շատակն ի Բեթղեհէմ, որ անոր հայրենա-
կան գիւղն էր։ Պաղտին Ա. ի թագադրու-
թիւնը հանդիսաւորապէս տեղի ունեցաւ
1101 Մենդեան տօնին օրը։ Քսան տարի
վերջը դարձեալ Ս. Ծննդեան եկեղեցիին
մէջ Պաղտին Բ. և իր կիներ ընդունեցին
թագաւորական օծումը։ Այդպիսի առանձ-
նաշնորհում մը պիտի բարձրացնէր Բեթ-
ղեհէմի եկեղեցիին գերընտրութիւնը և իր
վրայ պիտի հրաւիրէր իշխաններու նպաս-
տը։ Բեթղեհէմի եկեղեցին 1101-ին ժողո-
վրդապետութիւն էր, 1101—1110-ին վա-
նահայրութիւն, այս վերջին թուականին,
Պաղտին Ա. ի խնդրանքին վրայ՝ եպիսկոպո-
սութեան բարձրացաւ։ Ասկաղոն, որուն
ի վնաս հաստատուեցաւ եպիսկոպոսական
նոր աթոռը, իբր սովորական ժողովրդա-
պետութիւն հպատակեցաւ Բեթղեհէմի։
Այսպէս էր նաև Նազարէթը, որ ի վնաս
Սկիւթապոլի, եպիսկոպոսութեան բար-
ձրացաւ։ Իբր մայրաքաղաք՝ շատ հին ա-
ւանդութիւններուն և մերձաւորութեանը
պատճառաւ Երուսաղէմի կատարած ու-
տընձգութիւններէն Բեթղեհէմի եկեղեցին
պաշտպանելու համար, վեհապետները մե-
ծամեծ նպաստներ հաստատեցին հոգալու
համար ո՛չ միայն կղերին տպրուստը, այլ
նաև, զոնէ մասամբ, այն նորոգութիւն-
ները զոր կը պահանջէր հնամենի եկեղե-
ցին։ Ազնուականներն ալ առատօրէն մաս-
նակցեցան թագաւորներուն հետ։

Առոյգ է որ ԺԲ. դարուն սկիզբը Ս.
Ծննդեան եկեղեցին իր նախնական գեղեց-
կութիւնը կորսնցուցած էր։ Կոստանդիա-
նոսէն իվեր անցնող ութ դարերը Ս.
Այլը բերած էին միլիոնաւոր ուխտաւոր-
ներ, և շատ անգամ ալ բարբարոս հրո-
սակներ։ Ամենէն հաստատուն և լաւագոյն
կերպով շինուած սալայատակ մը կրնա՞ր

այնքան երկար ժամանակամիջոցի մը մէջ անժամ մնալ ուխտաւորներու խնդր ու կոչաւ կօշիկներուն անդադրում չփումներէն: Պէտք է նաեւ նկատի առնել հետեւէն եկող այնքան հաւատացեալներուն այն բարեպաշտիկ վանտալականութիւնը՝ որով կ'ուզէին իրենց մօտ ունենալ ս'եւ Ս. Տեղի մը մասունքը, ժայռի մը կամ մողայիքի մը բեկորը, մարմարի կամ ձեփի կտոր մը, այն ալ ընդհանրապէս շատ գէշ կերպով ձեռք բերուած: Մոմերու եւ խուռկերու ծուխը, ինչպէս նաեւ դարաւոր փռչիներու համարարգոթիւնը աղօտացուցած էին մօղայիքներու պայծառութիւնը: Եթէ Ժ. Ղարու մողայիքները սեցած կ'երենային 1461-ին ուխտաւորի մը, ինչ վիճակի մէջ կրնային գտնուիլ 1100-ին, Դ. կամ Զ. Ղարու մողայիքները: Այդ պատճառաւ է որ Սաչակիրները ջանացին հաստատել եւ կեղեցիին վաղեմի բարեկարգութիւնը: Իրենց աշխատանքները մէկ օրէն միւսը շաւարտեցան, ամենէն կարեւորներէն սկսան, այսինքն՝ չէնքին, տանիքին կամ յատակին վերաբերեալ մասերէն սկսելով աւարտեցին պատերուն զարդարանքովը:

Սաչակրաց տիրապետութիւնէն յետոյ Ս. Մննդեան եկեղեցիին այլ եւ այլ փոփոխութեանց ծանօթութեամբ կարող կ'ըլլանք բնութեւնէ թէ Սաչակիրք ինչպիսի բաղամթիւ անհրաժեշտութիւններով յարգարեցին եկեղեցին, չորս Ղարու արտաբան գրաւումէն յետոյ:

Ուղեգիր ուխտաւորներ այս շրջանին մէջ բաւական ծանօթութիւններ տուած են այս եկեղեցւոյ մասին, անոնց նկարագրութիւններէն կը քաղենք, ինչ որ պիտի գրենք: Մասնագէտները իրաւամբ կը նմանցընեն այս եկեղեցին հոգովեական պապիլիքաներուն եւ կը սահմանեն գաւթը իրր կամարակապ սրահ մը՝ որ իր առջեւ ունի չէնքին դուռները: Այս դուռները, որ երեք են, կը բացուին ընդարձակ եւ երկար միջավայրի մը մէջ, ուր կան խրաքանչիւրը տասնըմէկ սիւններով չորս կորգեր, «սիւներ շատ գեղեցիկ, չորս ձողափ բարձր, միակտուր եւ հաստ, տեսնելու արժանի»: Զերմակով երակաւոր այս կարմիր միապագադ սիւնաբունները իւզով այնքան չփում եւ յիշուած են որ մարդ հայելին նայածի պէս կրնայ իր գէմքը տես-

նել անոնց մէջ: Պատերուն ստորին կողմերը ծածկուած են ձերմակ մարմարի տախտակներով, որ կը ցուցնեն ինչ որ կը գտնուի եւ կ'անցնի եկեղեցիին մէջ: Սրբափայլին խաչածե յատակադիծը եւ երեք կողակներու մասնալատկութիւնը շատ ուղեւորներ նօթագրած են. տեղեկութիւններ տուած են նաեւ դասին, սիւներուն եւ յատակի ու տանիքի մասին: Տանիքը տնփուտ փայտէ շինուած էր եւ կը տեսնուէր ներսէն, եւ ծածկուած էր կապարով: Եկեղեցիին կատարին վրայ երկաթէ ձողով մը հաստատուած էր ռսկեղծ պղնձէ աստղ մը ի յիշատակ Մոգերու առաջնորդող աստղին:

Ս. Մննդեան եկեղեցիին ճոխ զարդարանքի նկարագրութիւնը աւելի շահագրգրական է, վասն զի նոյն զարդարանքներու տակ կը չողային մեծ գաւթի շինարարը: Ներկայիս գրեթէ անհետացած այս արտահոսին նկարագրութիւնը իր յատուկ տեղը ունի մենագրութեան մը մէջ, որուն նպատակն է ո՛չ թէ միայն անցելոյն մէջ գտնել ինչ որ այսօր կայ, այլ նաեւ ընթերցողին ներկայացնել այն վիճակները զոր կը պարզէր Ս. Մննդեան եկեղեցին իր փառքի հին օրերուն: Եթէ եկեղեցւոյ զարդարանքին ու մօղայիքներուն նկարագրութիւնը աւելի հին եւ կամ միջին դարու ուղեւորներու յիշատակարանաց վրայ յենլով պիտի գրենք, շատ քիչ բանով մը միայն կարելի է գոհանալ. վասն զի նոյն ծանօթագրութիւնները շատ կցկտուր են եւ շատ համառօտ, նոյն իսկ հակասական եւ անճիշդ. նոյն զարդարանքներուն ամբողջական նկարագրութիւն մը ընելու համար պէտք կ'ըլլայ իջնել մինչեւ 1626 թուականը, ուր Գուարէզմիս ֆրանչիսկեան մեծաւոր գիտնականը, իբր ականատես վկայ եւ տեսականագէտ, կրնայ տալ մեզ այն տեղեկութիւնները որք կարեւոր են մեզ, թէեւ անկատար այն մեծ ընդհատներուն (lacunes) համար, զոր կրժող ժամանակը եւ արշաւողները պատճառած են: Գուարէզմիսի տուած տեղեկութիւններուն կցելով Մարքիզ Տը Վոկէի դասական դարձած մեկնութիւնները, պիտի կրնանք ակնարկ մը նետել Ս. Մննդեան եկեղեցիին կեդրոնական դաւիթին եւ դասին այսօրուան ճերմեղցած պատերուն վրայ պատմութեան աչ-

քերով գիտելու համար այն հրաշալիքները որ անյայտացած են: Այժմ գոյութիւն ունեցող բեկորներուն հասնելով պիտի կըրնանք հաստատել հնաթսաներու կողմէն տրուած տեղեկութիւններուն ճշգրտութիւնը:

Ս. Ծննդեան եկեղեցիին ներքին զարդարանքները ճոխագոյն եղանակով մը կատարուած են խաչակրաց ժամանակ: Այդ զարդարանքները երկու տեսակ են, մոզայիք և նկար, որ չքեղագոյն փայլ մը կուտային եկեղեցւոյն: Մոզայիքներէն ամենէն խորհրդաւորն էր արեւմտեան կողմը ճակատի ներքին դրան վրայ Յեսսիի ծառը, քնացող Յէսսէի կողերէն երեք շառաւիղներ կը բուսնէին և կը բաժնուէին ճիւղերու, որոնց իւրաքանչիւրը կը կրէր Քրիստոսի նախնիքներէն մին: Նոյն ծառին վրայ ժէ. զարուսն տակաւին կ'երեւնային Յովն, Անովս, Միխա, Եզեկիէլ, Եսայի և Բաղդասար՝ Մեսայի նկատմամբ իրենց մարգարէական լատիներէն գրուածքներով: Տաճարին արեւելքը կը զանուէին հետեւեալ մոզայիքները, որոնց համառոտութիւնը կուտանք հոս 1. Նիկիոյ Ժողովը (325), նոյն մոզայիքին մէկ կտորը տակաւին գոյութիւն ունի, 2. Կոստանդնուպոլսի Ա. Ժողովը (381), որ մինչ ցայժմ ամբողջութեամբ կը գտնուի, 3. Եփեսոսի Ժողովը (431), որուն երկրորդ մասը միայն կայ այժմ, բնագործին առաջին մասին բովանդակութիւնը պահած է Դուարէզմիոս, 4. Բաղիկեղոսի Ժողովը (451) որ, բացի կամարաչէն և գրականներու ստորին մասէն, գոյութիւն ունի այժմ, 5. Բ. Ժողով Կ. Պոլսի (553), ամբողջովին ջնջուած, 6. Գ. Ժողով Կ. Պոլսի (680), որմէ կը մնայ միայն կրկնակ աղեղնակամարը և արձանագրութեան վերի մասը, գրեթէ եօթը տող, չորսը մէկ կողմը և երեքը միւս կողմը, 7. Բ. Ժողով Նիկիոյ (787), ամբողջապէս ջնջուած: Մինչ միւս Ժողովներուն բովանդակութիւնները յունարէն արձանագրութիւնը լատիներէն է. Դուարէզմիոս ընդհանրեցող ընդօրինակած է և Տը Վոկէի կողմէն գիտնօրէն վերահաստատած: Ժողովներու շարքին զուխը պատկող ծոփորները (frises), ինչպէս նաեւ պատուհաններուն անջրպետը բոնող հրեշտակները ամբողջովին քանդուած են:

Տաճարին հիւսիսային պատին վրայ ժէ. զարուսն կը տեսնուէին հետեւեալ ծովերը իրենց բովանդակութեամբ. 1. Անիլիւրոյ Ժողովը (314), այժմ բոլորովին ջնջուած, 2. Անիլիւրոյ Ժողովը (272) այժմ գոյութիւն ունի, բացի վարի մասէն ուր քանի մը գիրք ջնջուած են, 3. Սարղիկի Ժողովը (347), տակաւին այժմ տեսնելի, բացի վարի կողմէն ինկած քանի մը գիրքէն, 4. Գաւգայ Ժողովը (Դ. դար), բոլորովին ջնջուած, բովանդակութիւնը պահած է Դուարէզմիոս, 5. Լառիկի Ժողովը (Դ. դար), բոլորովին ջնջուած, 6. Կարդաղիկի Ժողովը (254) բոլորովին անյայտ: Իւրաքանչիւր արեւելեական և մասնաւոր ծովերուն համառոտութիւնը նշանակուած էր մոզայիքներուն մէջ:

Այցելուն որչափ կը մօտենայ Ս. Այրին՝ կրօնական ծանօթութեանց չըջնալը կը կատարելագործուի: Հարաւային կողմէն մէջ այցելուն կը տեսնէր Փրիկի ծնունդեան մոզայիքը որ շինուած էր բիւզանդական ոճով: Դուարէզմիոս զիւ իր օրով կը տեսնէր այս պատկերին մէկ կտորը, որուն վրայ շինուած էր նորածինը լուացող մանկաբարձին պատկերը ու անոր ամբողջ արձանագրութիւնը: Նոյնին մէկ կողմը կը գտնուէին Մոգերու երկրպագութիւնը և Մոգերուն վերադարձը հրեշտակին առաջնորդութեամբ: Հարաւային կողմը կային նաեւ Յիսուսի չարաբանաց, Յարութեան և Համարձման մոզայիք պատկերները: Դասին կեդրոնական մասին հարաւը կար Ընծայումն ի Տաճար, հիւսիսը՝ Պենտեկոստէն և Ս. Կոսմի թաղումը, արեւելեան կողմէն մէջ Անտունը, Մարիամը ձախին և հրեշտակապետը աջին՝ Ս. Գաբրիէլ անուանով: Մեծ կամարին կեդրոնը կը գտնուէր Տիրամօր մէկ պատկերը, և անկիւնակապիւններուն մէջ՝ Աքրահամու և Դաիթ Մարգարէի պատկերները: Միւսային տեղոյն մէջ պատմական այս մոզայիքներուն տակը կան մին լատիներէն և միւսը յունարէն երկու արձանագրութիւններ, որոնք կը հաստատեն թէ այս մոզայիքներ և նկարներ ե՞րբ շինուած են և որո՞նք շինած են: Հոս կը գընենք անոնց թարգմանութիւնը:

Ամբարի թագաւոր, պահապան տաքինութեան, բարեկամ առատաձեռն, ընկեր համեստութեան և թշնամի ամբարընչ-

տուժեան, սիրող արդարութեան և բարեպաշտութեան, վրէժխնդիր մեղաց, կ'ընդունէր իբրեւ հինգերորդ թագաւոր. էմմանուէլ՝ վեհանաճն նախարար և կայսր բարեպաշտ, հրամանատար Յունաց. հոս կ'ապրէր և եկեղեցին կը կառավարէր բարեպաշտն Ռաուլ՝ արժանաւոր եպիսկոպոս, երբ եփրեմի ձեռքը կը շինէր այս գեղեցիկ (նկարը)...

Յունական արձանագրութիւնը, որ մեծ մասով տակաւին կը տեսնուի, ամբողջութեամբ կարելի է վերահաստատել շնորհիւ Ժ. Գարու յոյն ուխտաւորի մը և Տը Վոկէի կողմէն ամբողջացած և ուղղուած Գուսթէֆօսի օրինակներուն: Տարբեր բառերով այս արձանագրութիւնը կը հաստատուի լատիներէն տեղեկութիւններով, որ է հետեւեալը. «Ներկայ գործը աւարտած է նկարիչ և մողայիք շինող վանական եփրեմին ձեռքով, Մանուէլ Կոմնենոս մեծ կայսեր և Երուսաղէմի մեծ թագաւոր Ամորիի և Բեթղեհէմի եպիսկոպոս Ռաուլի օրով, 6677 տարւոյն, Ընդիկտիոն Բ. կամ աւելի ըստ 6673, Ընդիկտիոն ԺԲ.: Առաջին թուականը ըստ Պոլսի տուժարահաշուին, որ ժամանակ Մարմնառութեան առաջին տարին կ'ընշայ աշխարհի ստեղծագործութեան 5509 ին և կը համապատասխանէ 1169 քրիստոնէական թուականին: Այս ժամանակ կը թագաւորէր Մանուէլ Կոմնենոս Բիւզանդիոնի մէջ (1143-1180), Երուսաղէմի մէջ Ամորի (18 Փետր. 1162-11 Յուլիս 1173), և Ռաուլ եպ. Բեթղեհէմի եպիսկոպոսական աթոռը կը զբաւէր: Երկրորդ թուականը Ժ. Գարու յոյն անանուէնէ մը ընդունուած՝ կը համապատասխանէ 1165 փրկչական թուականին:

Այժմ ներկայացնենք մեծ գաւիթին հիւսիսային սինաշարքի սրբոց նկարները. 1. Ս. Մակար, որ կը բռնէ խաչ մը և հագած է արմաւենիէ հիւսուած վերարկու. 2. Ս. Անտոն, դէմքին վարի մասը կը մնայ, հագած է կնգղաւոր երկայն վերարկու մը. 3. Ս. Երթմա, հագած է յունական շուրջաւ մը, աջ ձեռքովը կ'օրհնէ և ձախովը բռնած է գրուածք մը. 4. Ս. Գեորգ, աջը կը գտնուի գեղարդ մը և առջեւ սուր մը՝ որուն կոթը խաչաձեւ է: Աջ կողմն է վահանը. 5. Ս. Լեոնարդոս, հագած է սեւ վերարկու մը և կոթնած է գաւազանի մը վրայ. 6. Ս. Կոզմա, հագած է կարմիր վե-

րարկու. 7. Ս. Դամիանոս, կարմիր վերարկու հագած է. 8. Ս. Կարպոս, հաւանաբար Իրլանտացի, Երուսաղէմ այցելած է. 9. Ս. Յովնանիկ Անեսարանիչ, սուրբը իր ձեռաց մէջ ունի իր աւետարանը:

Մեծ գաւիթին հարաւային սինաշարքին վրայ 1. Ս. Թեոդոսիոս, հագած է ճերմակ վերարկու մը. 2. Ս. Սարա, հագած է գեղին վերարկու մը և բռնած է գրուածք մը. 3. Ս. Սեփանոս, կը կրէ լատին լայն շուրջաւ մը, ձախ բազուկին վրայ կապուած է բազպանը, միւս ձեռքովը բռնած է աւետարան մը. 4. Ս. Կանույ՝ Թագաւոր Տանիմարքայի (+1086), թագը գլխին ներկարուած է, աջ բազուկը յեցած է գեղարդի մը վրայ և ձախովը բռնած է խաչով զարդարուած վահան մը. 5. Ս. Օրաֆ, (1015-1030) թագաւոր Նորվիկիոյ որ կը կրէ կապոյտ վահան մը ոսկեղօծ խաչով, իր մասին շատ մը գրոյցներ չընեն կ'ընեն. 6. Ս. Վենուս, մարտիրոս, լատին սարկաւազի զգեստ հագած է. 7. Ս. Յովնանիկ Մըկրիչ, հագած է իր աւանդական կաշիէ զգեստը, որուն տակ կը տեսնուի արեւէն սեցած սրունքները, ձեռքն ունի գրուածք մը. 8. Ս. Եղիս, որ մտախոհ զիրքով մը նստած է, Միքէլ-Անժի Մովսէսին նման ձեռքը մօրուքին երկարած է: Սուրբին վրայ թռչող երկու ազնւանքներ անոր հաց կը բերեն. 9. Ս. Ոնոփիոս կը կրէ երկար սրածայր մօրուք մը և սփածանելի մը:

Միւս սինաշարքերուն վրայ ցանցառ կերպով կը գտնուին Առաքելոց և այլ սրբոց նկարներ: Ս. Ծննդեան եկեղեցիին այս բազմաթիւ մողայիքներու և նկարներուն շինութիւնը արդիւնք կը նկատուի բիւզանդիոնի և լատին թագաւորութեանց խնամրական կապակցութեանց և մասնաւորապէս ԺԲ. Գարուն յոյն և լատին եկեղեցիաց միութեան գաղափարի ձգտումներուն: Այդ ըմբռնման հետեւանքով է որ այս համազգային քրիստոնէական մեծ եկեղեցիին մէջ այլ և ոչ ազգաց սուրբերը նկարուած են ու արձանագրութիւններուն յոյն յոյն և լատին եկեղեցեաց և ժողովուրդներու ներկայացուցիչները:


1187 ին Սալաէտտին, գրաւելով Պաղեստինը, պահպանեց Ս. Ծննդեան եկեղեցին և յաջորդներն ալ այդ մօտք չարժեցան: ԺԵ. Գարուն եկեղեցոյ մողայիքները

և մարմարները կամաց կամաց սկսան քանդել ու տանիքը մեծապէս փնատուած էր, նոյն իսկ տեղացի քրիստոնէականները իրենց աղքատութիւնը դարմանելու մտքով տաճարին մարմարները հանել տանելու սլորապղծութիւնը գործած են ևւ եղած են մարդեր որ Ս. Այրին մէջ գանձ փնտռելու գիտումով յատակին մարմարները տեղէն հանած ու կտորած են: Ժէ. դարուն տաճարին բոլոր գեղեցկութիւններն այլ ևւ խաթարուած էին, ու մինչև մեր օրերը չէ կատարուած ունէ աչքառու նորոգութիւն մը: Դժբախտութիւն է որ այսօր Ս. Մննն-

դեան եկեղեցին կապտուած է իր աննման զարդերէն, և այցելուն տեսնելով դայն, չկրնար համեմատել կոստանդինեան, Յուստինիանոսեան ևւ Բիւզանդական շրջաններու այն գեղակերտ զարդարանքներուն հետ որ պնծած էին Բիթղիհէմի եկեղեցին: Յառաջիկայ վերջին յօդուածով մը պիտի գրենք Ս. Մննդեան եկեղեցին ևւ Հայոց Վանքի վերաբերութեամբ հայկական յիշատակները: Յօդուածիս խմբագրութեան համար դարձեալ օգտուած ենք միւս նոյն գիրքէն (ՏԵՍՎԵՐԷ Էջ 80):

ՄԿՐՏԻԶ ԵՊՍ. ԱՂԱԽՆՈՒՆԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ



Ամէն օր եւ կ'երբամ մարգերուն մէջերէն:
 Ինձ կը քուի քէ իմ կեանքս հովիւս կը քալէ:
 Տրտում չեմ, ո՛չ ալ զուարթ. կենդանի եմ սակայն,
 Ինչպէս հողն, ինչպէս ջուրն, օդն, երկինքն ու հովերն.
 Ինչպէս ծառն՝ որ կ'անի, գեղ թռչունը թռչսուն:
 Կը քալեմ, լուսեան հետ խօսելով անբարբառ.
 Ու ձայնիս իր կանչն համբ ինձ կուսայ պատասխան,
 Մինչ խոկմամբ կը դիտեմ ձեւերն զորս կը շինեն
 Ամպերն, զորս կը հաւքէ շունչ մ', եւ զորս կը ցրուէ
 Հակառակ մի ուրիշ շունչի փայլը ըստայ:
 Կը խորհիմ բաներուն՝ որք բախտին եմ նրման.
 Իրիկուան, գիշերին եւ առտուան նորածագ:
 Զի մարդն ի՛նչ կարծէ գիւնն, աւա՛ղ, ի՛նչ ալ ընէ,
 Լինելով մահացու, օր մ'է լոկ որ կ'անցնի.
 Մեր այգն, այն ինչ ծընած, կը յանգի իր ցայգին:
 Կը խուսէ մենէ բան մ', ամէն մէկ բոյլէնու.
 Ու ամէն մէկ փայլըն, իր փորձած նամբուն վրայ,
 Կը քանի զմեզ կէտին՝ ում մեր սիրսն է յառած:
 Ա՛խ, պատրաստ պէտք է 'լլաք երկրի վրայ տեսնելու
 Աստղն այն ոյր չը տեսնենք պիտի ծնելը կըրկին:

ՆՈՏԱՐ

ՓԱՐԱՏԱԾ ՄԵՈՒՇԸ

Հելուեսափայ «Խոսնակ», ին ժընեվի

Ոսանն հրակայ, քանձր մէգին սակ անեստ,
 Գառագեղի մէջ շրջապուած փիղի պէս՝
 Զոր չորս կողմէն կըծուահամ ծուխն է պատեր,
 Պառկած, գէտինը, կը հեւայ կիսամեռ:
 Կոյր անչքապէս, անհունն ի վար կախուած լուռ,
 Անյուսութեան սեւ մըղձաւանջն է սըխուր,
 Որ իր նընձող ծանրոցին սակ աներեր
 Կեանքի ամէն ձեւ, գոյն, շարժում է տրտէր:
 Բայց երբ իրիկունն այդ փառսին վրայ մըռայլ՝
 Վերջալոյսէն կ'արձակէ շող մը շառայլ,
 Կը ցընցի մեռեցն, երկինք յանկարծ կը ժըպտի,
 Ու ֆաղաֆն յոյլ նորէն ելած է ոսփի:
 Աստուածայի՛նդ յոյս, ա՛խ, սըրտին մէջ խաւար
 Երբ հըքքումէդ կայծի նընձող մը լոկ վառ,
 Երազներու մեռոտ ու մուր քըմբիրէն
 Հաւասֆն ու Սէրն ի՛նչ ոյժեր դուրս կ'առքերեն:

Լոնսոն, Յունվ. 23 1930

ՆՈՏԱՐ

ԱՆՊԵՆ ԼՐԷՈՒՄԱՆԷԸ

Կապարը կրակ, զոր Յեղին վրէժն էր շանքած
 Ափիլադէմ շրջու մ'հոգւոյն մէջ խիզախ,
 Զաղխելով փոխն աջ՝ պայթեցուց աչիւր ձախ.
 Ու մայրին վրայ սապաս գազանն ինկաւ ցած:
 Պիղծ գոհին վրայ ծըռելով ֆաջն այն ասեն,
 Զըգեց հրազէնն անոր կուրծքին վրայ կործան,
 Ու, — «Ա՛ռ, ֆեզի համար ես լոկ առի գայն»
 Պաղ հառաչանքը սոսկ քըռաւ իր սըրէն:
 Ամբոխն, որով լայն պողոտան կը վըծմար
 Յէտ միջօրեայ եռուզեռի այդ պահուն,
 Կանգ առաւ յա՛նկարծ սոսկումով մը անհուն,
 Դէպի դիակն ակընկառոյց, ապահար:
 Ու մինչ դիւցազներ սալփարին սիղմին հետ
 Խառնըւած գործ ուղեղին՝ աչն էր յառեր,
 Ոչ ոք գիտէր թէ հոգւոյն մէջ անվներ
 Ի՛նչ բոց՝ ի՛նչ խինդ կը հրավառէր բերկրաւէս:
 9 Դեկտ. 1929

ՆՈՏԱՐ

(Պէլկրաս-Թրիէտ շոգեկառփին մէջ)

ԼԵՍԵՐԳ ՏԻՆՆԵՆՆ

Դուն հեռաւոր, շա՛հ հեռաւոր սեղ մը գացիր,
Գիտեմ քէ ո՛ր համբան քեզի կ'առաջնորդէ,
Ո՞վ է զոցեր դուռը ծովին անծայրածիր
Որուն սեմին վրայ կ'այրի չափ մ'արժաքէ . . .

Բայց աւելի մօտեցար դուն ափը արշիս
Ուր ես զրտայ նոր զոհարներ յիշատակի,
Ուռենիի նըման ինծի կը խոնարհիս,
Ու կը զգամ շունչդ ուր իմ հոգիս կը փոքորկի . . .

Տունը որուն պատերն այնքան են ըսպիսակ,
Աւելի քո՛ւկդ է քան մըռա՛յլ իմ օրերուս,
Քեզ կը զսնեմ ամէն վրնիս բաժակի սակ,
Բա՛ն մը քեզմէ նոր գաղտնիքով մ'անըրջայոյզ . . .

Եթէ միայն գիտնայի՛ր ես որ համբուն վրայ
Պիտի հանչնա՛ս քափօրին մէջ ուխտանքէր
Ան որուն սիրքը ցաւագին ու բիւրեղեայ
Քեզմէ բղխած՝ հոգւոյդ ափի՛ն կը ծարաւէր . . .

Տունը քո՛ւկդ է, համբան քո՛ւկդ է, եւ ամէն ինչ
Որուն մասներըս կը հըպին հանապազօր,
Նըւիրումի կախարդանք մ'է սրտում ու ջինջ,
Մեր երկուքին միջեւ ձգուած շղթայ մ'հըզօր . . .

Ո՞վ է զոցեր դուռը ծովին անծայրածիր
Լուսընկայի արծարակուռ բանալիով,
Դուն հեռաւոր, շա՛հ հեռաւոր սեղ մը գացիր
Ամէն ուղի տունիս նրազի՛ն դարձնելով . . . :

Գանիքէ

ԱՐՄԷՆ ԵՐԿԱՍԻ



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ

ՅԵՄԵՐՈՒՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ԵՒՐՈՊԱՆԵՐ ՄԷՋ

Եւրոպայի Հայոց Կարողիկոսական Պատարակ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Գուշակեան, ինչպիսի Բարիկի հայ մանուշին մէջ իր ստորագրած յայտարարութեանն եւս կը հասկըցուի, աւարտած ըլլալով իր պաշտօնին պարտականութեանց առաջին մասը, իր տեղեկագիրը մատուցած էր Ամենայն Հայոց Սրբազան Հայրապետին, Էջմիածին, Ն. Ս. Օծուծութեան վախճանումէն շուրջ մէկ ամիս առաջ:

Եւրոպական կազմակերպութեան հարցը, ազգային եւ եկեղեցական տեսակետով հաստատարակ շահեկան, արժանի էր անշուշտ մանրամասնաւ յիշատարութեան մը՝ ազգային եւ եկեղեցական իր կրկնակ նկարագիրովը շեշտուած հայ պարբերաբերքի մը մէջ, որպիսի է ՍԻՈՆ. այս պատճառաւ պաշտօն եւ պիտանի կը համարինք մեր ընթերցողներուն հարողիկ հետեւեալ տեղեկութիւնները, զորս նոյն ինքն Կարողիկոսական Պատարակին ստացանք, իր վերջին անգամ Եւրոպայից այցելած միջոցին:

Ն. Ս. Օծուծութեան, իր սրբատառ կոնգակով պատուիրած էր Թորգոմ Արքեպիսկոպոսի, իրբն միակ առաջնորդական վիճակ մը եկեղեցականապէս կազմակերպել Եւրոպահայութիւնը, աւելի ճիշդ՝ Եւրոպայի արեւմտեան եւ կեդրոնական եւ հարաւային մասերու մէջ գտնուած այն հայ համայնքները, որոնցմէ ոմանք թէն վաղուց, աւելի կամ նուազ չափով մը, կազմակերպուած էին իրբն հովուական անջատ Շրջանակներ, բայց ամենամեծ մասը, աւելի մեծ պատերազմի հետեանք գաղթականութենէն գոյացած կամ ստուարացած, ընդհանուր առմամբ կը մնային գեւ անկազմակերպ գրութեան մէջ: Ըստ այսմ, Կաթողիկոսական Պատուիրակութեան Շրջանակը իր մէջ կը պարագրէր, բացի Ռուսիայէ, Ռումանիայէ, Պուլկարիայէ եւ Յունաստանէ, որոնց մէջ գոյութիւն ունէին արգէն առաջնորդական կազմակերպուած վիճակներ, Ֆռանսա, Անգղիա, Պելճիգա, Իտալիա, Գերմանիա, Զուիցերիա, Աւս-

տրիա, Հունգարիա, Զէլսուաւաքիա, Եւրպուալիա, Հոլանտա եւ Լեհաստան:

Որովհետեւ, սակայն Ն. Ս. Օծուծութեան միեւնոյն ատեն պատուիրած էր իր Պատուիրակին որ, նախորդ կազմակերպական ջանադրութեանց առթիւ պատահած անսխորժութիւնները չկրկնուելու համար, նախապէս մանրամասնօրէն քննուի կացութիւնը եւ յետոյ տնօրինութի պատշաճը, Թորգոմ Արքեպիսկոպոս կարեւոր դատեց անձամբ շրջիլ նախ բոլոր գաղութները, հանգամանօրէն քննել եւ ուսումնասիրել ամէն ինչ. այս մտածումով անկեալ, Բարիկի մէջ, ամէնէն առաջ, հարկաւոր զընտելութիւնները կատարելէ վերջ, մի առ մի այցելեց վերոյիշեալ Եւրոպական երկիրներու հայաբնակ քաղաքները, բացի Հոլանտայէն եւ Լեհաստանէն, որոնց մէջ ազգայիններու յոյժ աննշան թիւ մը միայն կար:

Իր այս պտոյտի ընթացքին եւ յետոյ ունեցած տեսակցութիւններէ եւ կատարած հետազոտութիւններէ վերջ աւելի եւս ամրապնդուեցաւ նախապէս եւ ունեցած իր համոզումին մէջ թէ անկարելի է անօգուտ է ամբողջ Եւրոպահայութիւնը միակ առաջնորդական վիճակի մը մէջ պարագրելու ծրագրելը, եւ թէ աւելի գործնական է եւ եկեղեցական կազմակերպութեան տեսակէտով աւելի բանաւոր եւ արդիւնաւոր՝ Եւրոպահայ համայնքները խմբել մէկէ աւելի առաջնորդական վիճակներու մէջ:

Ըստ մարդահամարին, զոր մասամբ գտած եւ մասամբ ինք կատարած է Կաթողիկոսական Պատուիրակը, Եւրոպայի վերոյիշեալ երկիրներուն մէջ ապրող Հայոց թիւն է մերձաւորաբար 67000, որոնց 64000ը Ֆռանսայի մէջ են, իսկ մնացեալ իրբ 3000ը՝ Ֆռանսայէ արտաքոյ եղած Եւրոպական միւս երկրամասերուն մէջ: Հետեւաբար, Եւրոպահայ թեմական կազմակերպական ձեռնարկը, իրապէս կամ ամենամեծ մասամբ, Ֆռանսահայ եկեղեցական կազմակերպութեան զործ է ինքնին:

Արդ, Թորգոմ Արքեպիսկոպոսի տեսութիւնն այն է եղած թէ Ֆռանսահայ գաղութը ինքնին, ի նկատի ունենալով խմբաւորեալ հայաբնակութեան տեսակէտը, պէտք է վերածուի երեք առաջնորդական վիճակներու, որոնք պէտք է լինին. 1. Բարիկի շրջանակը. 2. Կիոնի շրջ-

ջանակը, և 3. Մարտէլլի չըջանակը. Հիւսիսային՝ Միջին և Հարաւային Ֆուանսայի երբեակ տրոհումներով, Ասոնցմէ առաջինը ունի շուրջ 2500, երկրորդը՝ 1500, երրորդը՝ 2400 հայեր:

Կաթողիկոսական Պատուիրակը անկարելի կը նկատէ նոյնիսկ Ֆուանսայ միակ թիւի մը գաղափարը, որովհետեւ ոչ միայն միակ առաջնորդ մը պիտի չկրնար տարւոյն մէջ քանի մը անգամ այցելել ընդարձակ տարածութեան վրայ սփռուած այդ բոլոր համայնքներուն, որոնց սակայն անհրաժեշտ է զէթ երեք ամիսն անգամ մը այցելել՝ մանաւանդ կազմակերպական առաջին տարիներուն, այլ մանաւանդ որովհետեւ նիւթական և այլ պատճառներով բացարձակապէս անհնար պիտի ըլլար կազմել թեմական ընդհանուր ժողով մը, որուն մասնակցէին բոլոր համայնքերը ներկայացնող անդամներ, ընտրուած զանազան հեռուոր քաղաքներէ, որոնց հաւաքումովը հնար ըլլար տարին քանի մը անգամ գումարել երեսփոխանական ժողով, եւայլն:

Այս բանին արգելք պիտի լինէր ոչ միայն զանազան հեռուոր քաղաքներէ դալիք պատգամաւորներու երթուղարձի և բնակութեան ծախսաց զժուարութիւնը, այլ նաև և մանաւանդ ապակեղորոնացումի բնողդական նկատուելու չափ խոր իզձը, որուն երբեմն կարելի չէ եղած զիմադրել թիւրքահայ քանի մը վիճակներու մէջ իսկ, և որ, հիմակ, կարգ մը տուեալ պայմաններու ճեղքումով մանաւանդ, աւելի բուռն կը թուի Եւրոպահայ չըջանակներու մէջ: Մէկէ աւելի առաջնորդական վիճակներու գոյութեան մէջ թորգոմ Արքեպիսկոպոս ի մէջ այլոց այն օգուտը կը տեսնէ որ մէն մի չըջանակ, ինքն իր մէջ ամփոփուած, աւելի ուշադիր լրջութեամբ և նուիրումով կը հոգայ իր եկեղեցական և ազգային պարտականութիւնները, տեսակ մը մրցումի նախանձախնդրութիւն ալ զնկոյզ գործին մէջ: Բաց աստի, մէն մի առաջնորդական վիճակ կրնայ ունենալ իր եպիսկոպոսը. և Եւրոպահայութեան մէջ քանի մը եպիսկոպոսներու միանգամայն ներկայութիւնը առաւելութիւն մըն է, ոչ միայն իրրեւ նուիրապետական ազդուութիւն մը այլոց առջև, այլ նաև եկեղեցական հեղի-

նակութեան իրական ոյժ մը հոգեւոր ներքին կեանքի տեսակէտով, քանի որ անոնք տարւոյն մէջ քանի մը անգամ գումարուելով Եւրոպահայութեան կրօնական և եկեղեցական կարեւոր հարցերու շուրջ կրնան օգտակար խորհրդակցութիւններ ունենալ:

Գալով Հայրապետական Պատուիրակի պաշտօնին, զայն կը թողու Ամենայն Հայոց Կաթողիկոսի կամքին և բարեհաճութեան միայն: Ֆուանսայ երեք վիճակները կազմակերպուելէն վերջ ալ, եթէ Ն. Ս. Օծութիւնը կ'ուզէ իր ներկայացուցիչը ունենալ ամբողջ Եւրոպայի հայութեան մօտ, կարող է կամ այս երեք վիճակներու առաջնորդներէն մին նշանակել այդ պաշտօնին, և կամ անոնցմէ վեր բարձրաստիճան հոգեւորականի մը յանձնել անոր պարտականութիւնը:

Թորգոմ Արքեպիսկոպոս լաւագոյն կը գտնէ սակայն որ Կաթողիկոսական Պատուիրակը, եթէ պիտի լինի, առաջնորդներէն տարրեր մէկը լինի, որ, իրրեւ ներկայացուցիչ Ամենայն Հայոց Հայրապետին, եկեղեցական և կրօնական հարցերու մէջ, իրաւական՝ վարչական և կարգապահական տեսակէտով վերադաս զիրք մը ունենայ միւս առաջնորդներուն վրայ, միջնորդ կապը լինի այս վերջիններուն և Մայր Աթոռոյ միջև, ի հարկին իր նախադասութեան ներքե կազմէ Եւրոպահայ թեմերու եպիսկոպոսական ժողով և երեք վիճակներու թեմական ժողովներու ղեկաւորներէն կազմուած ժողով մը, ընդհանրական բնոյթ ունեցող հարցերու մասին խորհրդակցութիւն կատարելու համար:

Արտաքոյ Ֆուանսայի Եւրոպական միւս երկիրներու մէջ եղած համայնքները, որոնք հազիւ 3000 Հայեր կը պարունակեն, պէտք է կազմեն ուրոյն Հովուական Շրջանակներ՝ հետեալ կերպով. 1. Իտալիա, 2. Պելճիգա և Հոլանտա, 3. Գերմանիա և Լեհաստան, 4. Աւստրիա և Հունգարիա և Չեխոսլուաքիա և Եսլոնաւիա, 5. Անգղիա, 6. Չեխոսլուաքիա: Այս չըջանակներէն իւրաքանչիւրը կ'ունենայ իր հոգեւոր Հովիւը, ուղղակի վերահսկողութեանը ներքե կաթող. Պատուիրակին, որ անոնց նկատմամբ Առաջնորդի հանգամանք կ'ունենայ, և Շրջանակները ուղղակի իր թեմերը կը

նկատուին, իրբե Տէրունի վիճակներ, ինչպէս էին ի հետմն ուղղակի Մայր Աթոռին կապուած և Նուիրակներէ կառավարուած Տէրունի վիճակները:

Իւրաքանչիւր Առաջնորդական վիճակ և մէն մի Հոգեւական Շրջանակ կ'ունենայ իր Ժողովական կազմը, որ կը բաղկանայ իր օրինական եկեղեցական տուրքը վճարող ազգայիններէ ընտրուած ներկայացուցչական ժողովէ մը, և այս վերջինէն ընտրուած Վարչական Մարմինէ մը՝ որ կեդրոնին մէջ կը գործէ, և Հոգաբարձութիւններէ, որոնք վիճակին կամ Շրջանակին միւս հայաշատ վայրերուն մէջ կը գործեն:

Կազմակերպութեան ընդհանուր նկարագիրը պիտի լինի եկեղեցական. Հայ Եկեղեցին է որ, իրբե ազգային գոյութեան ամէնէն ապահով և պատմական կոռուսը օտարութեան մէջ, պիտի լինի առանցքը հասարակութեան ազգային կեանքին. ունոր շուրջը պիտի խմբուին կրթական և բարեգործական ուրիշ ձեւնարկները, որքան որ միջոցները և հանգամանքները կը պահանջեն կամ կը թոյլատրեն: Հետեալոր Հայ Եկեղեցոյ պատկանեալ ազգայինները միայն պէտք է լինին ընտրող և ընտրելի: Վասնզի Ամենայն Հայոց Կաթողիկոսական Պատուիրակութեան կողմէ կատարուած կամ կատարուելիք գործը գործըն է Հայ Լուսաւորչական Եկեղեցոյ Եւրպական համայնքին կամ Հասարակութեան:

Ըստ Կաթողիկոսական Պատուիրակին, կազմակերպութեան գործին մէջ ամէնէն գծուարին կէտն է ազգ. կրթական հորը: Եւրոպայի ամենազարգացած այս երկիրներուն մէջ, ամէն կերպով կազմակերպուած և մանկավարժական ամենանորագոյն մեթոտներով գորացած վարժարաններու — որոնք յաճախ ձրի ալ են — խայծը այնքան հրապուրիչ է և հզօր, որ գրեթէ անկարելի պիտի ըլլայ, տասնեակ մը տարիներ ևտքը մանաւանդ, զիմադրել անոնց համատարած ազգեցութեան, եւրոպահայ ապագայ սերունդին տալ կարենալու համար գէթ ազգայիննախակրթութեան մը բարիքները: Իրաւ է թէ այսօր Մարսելի շրջանին մէջ մասնատրարար, որ հայ գաղթականները տակաւին բնակաւո-

րուած են համախումբ կենակցութեան մը մէջ, և զեւ կը պահեն հայեցի դաւառականութեան բարքն ու կենցաղը, իրբ տան զպրատուններու մէջ օրն ի րուն հայերէն կ'ուսանին հաղարի մօտ երկու սեռէ մանուկներ, ինչ որ արդարեւ պատիւ կը բերէ տեղւոյն անցեալ և ներկայ Ազգ. Իշխանութեան, բայց դժուար է երկար ժամանակի համար լաւատես լինել այս մասին: Այնպէս որ եկեղեցիին միջոցաւ է դարձեալ որ փոքր ի շատէ հնար պիտի լինի լուծել այս կնճիւղը, իթէ լինին բանիրուն և ուսեալ քահանաներ կամ վարդապետներ, որոնք եկեղեցոյ հովանիին տակ շարաթը քանի մը անգամ կարենան հաւաքել ազգին օտար վարժարան յաճախող մանուկները, և սորվեցնել անոնց մայրենի լեզու. Ազգ. Պատմութեան նախատարերք և կրօնական և եկեղեցական զիտելիքներ:

Խնդիրը կը տարբերի անշուշտ, իթէ քանի մը կարեոր կեդրոններու մէջ հնար լինի ազգային բարեբարներու ջանքով հաստատել երկրորդական վարժարաններ, ինչպէս Վենետիկի Միսիթարեանց Մուրատեան ի Բարիզ, որոնց մէջ հայ սերունդը հաւասար յաջողութեամբ կրնայ ուսանիլ օտար և ազգային լեզուները և զոհացուցիչ աստիճանով մը ստանալ նաեւ ազգ. դաստիարակութիւն, օտար կրթութեան հետ:

Թորգոմ Արքեպիսկոպոս իր տեղեկագրին մէջ զովեստով խօսած է զաղութահայութեան աշխատասէր և պարկեշտ բարքին և զործնական յաջողութեանց մասին, որոնց համար մեր ազգակիցները ամէն տեղ կը վայելեն յարգանք և համարում, և յոյս ունի թէ կուսակցական վէճերն ալ, որոնք ընդհանուր առմամբ քաղաքական ձախողանքի պատճառած շուարումներուն և ազգային ապագայի մը յոյսէն հրաժարիլ չը կարենալու հոգեբանական դրութենէ յառաջացող վիճակներ են յաճախ, պիտի հանդարտին հետզհետէ, որքան աւելի հոգեկան խաղաղութիւնը արիւն սիրտերուն վրայ: Բայց շատ աւելի գովելի և սրտապնդիչ գտած է Մայրենի եկեղեցոյ հանգէպ ամէն տեղ տեսած սէրը և անհուն խանդավառութիւնը: Ամէն տեղ, առանց բացառութեան, առանց խտրութեան հոսանքներու և նոյն իսկ դաւանանքի, Մայր Ա-

Թոռոյ ներկայացուցիչը հանդիպած է գործովալից ընդունելութեան. Հայ Եկեղեցւոյ պաշտամունքը, Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ աւանդուած ողջոյնը և կրօնական միութեամբեան խօսքերը հոգեպարար ներգործութիւն ըրած են ամէնուն սրտին վրայ. ու ամէնքը սրտանց և սիրով կը փափաքին եկեղեցական Թեմական կազմակերպութեան ձեռնարկին օր առաջ աւարտումին, հաւատալով թէ ո՛չ միայն հոգեւորապէս այլ նաեւ ազգային տեսակէտով մեծապէս օգտակար արդիւնք մը պիտի ունենայ ան:

Այս և յարակից բոլոր խնդրոց մասին ընդարձակ մանրամասնութեամբ խօսելէ և ծրագիր և առաջարկներ ներկայացնելէ վերջ, Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս իր տեղեկագրին կը կցէ վիճակագրական համացուցակ մը, որմէ կը քաղենք հետեւեալ ամփոփումը:

1. — Հիւսիսային և Արեւմտեան Ֆրոնտոնայի, աւելի ճիշդ, Բարիզի եւ շրջակայից մէջ կը գտնուին շուրջ 25,000 հայեր, որոնց ամենափոքր մասը միայն հին գաղթականներ են, առ առաւելն կէս դար առաջ հաստատուած. իսկ մնացեալ ամէնքը պատերազմէն յետոյ եկած են: Բարիզի մէջ կայ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցի մը, հանդ. Յովհաննէս Մանթաշեանի ծախքով կառուցուած, հայկական ճարտարապետութեամբ, գեղակերտ: 1929ին, Բարիզի Ալֆօրփիլ կոչուած արուարձանին մէջ, քանի մը բարեկէր ազգայնոց ծախքով շինուեցաւ պարզ ոճով բայց սիրուն Եկեղեցի մը, Ս. Պօղոս-Պետրոս անուն: Գաղութին եկեղեցական և ազգային պէտքերը կը յանձնաձումին հսկողութեանը տակ Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցւոյ հովանւոյն տակ գործող Վարչութեան մը, զոր կ'ընտրեն իրենց եկեղեցական տուրքը վճարող ազգայնիներ, ֆռանսական կառավարութենէն ճանչցուած կանոնագրի մը համեմատ: Այս Վարչութիւնը, որ կը բաղկանայ 20 ազգայնիներէ, որոնք երկու տարին անգամ մը կը փոփոխուին վիճակաւ և նոր ընտրութեամբ, իր ծոցէն կ'ընտրէ Հոգարարձութիւն մը, որ կը հսկէ Եկեղեցւոյ նիւթական և բարոյական պայծառութեան, և Դատաստանական Խորհուրդ մը, որ կ'զբաղի ամուս-

նական խնդիրներով: Սոյն վարչութեան կողքին կազմուած են նաեւ Աղքատախնամ Մարմին մը, որ կը հոգայ տեղական և անցորդ աղքատաց պէտքերը ըստ կարեւորին, և Տիկնանց Միութիւն մը, որ կը բաղկանայ Որբախնամ Մարմինէ մը և Հայ Կարմիր Խաչէ մը. Որբախնամը կը հոգայ որոշ թուով որբեր, երկու սեռէ, զոր տեղաւորած է օտար դպրոցներու և պատըսպարաններու մէջ. իսկ Կարմիր Խաչը, իւրեւ մասնաճիւղ Հայաստանի Կարմիր Խաչին, տարեկան նպաստ մը կը զրկէ անոր, և միեւնոյն ժամանակ կը հոգայ այս շրջանակի հայ կարօտ հիւանդներու պէտքերը. բժիշկ, դեղ ու դարման մատուցանելով: Եկեղեցւոյ Դիւանատան մէջ ունի Բուժարան մը, որ չարաթը երկու անգամ բազմութեամբ կը զվմեն հիւանդներ, և կը խնամուին:

Դպրոց չկայ երբեք, այս ուղղութեամբ քանիցս կատարուած ձեռնարկներ չեն չափուենակուած: Ալֆօրփիլի նորաշէն մատուոն մէջ շարաթը երկու անգամ, քանի մը ժամ, ուսուցչուհի մը հայերէն կը դասախօսէ թաղին հայ մանուկներուն: Նոյնպէս, Բարեգործականի կարգադրութեամբ 5-6 արուարձաններու մէջ, միեւնոյն կերպով և չափով, հայերէնի և Հայոց պատմութեան դասախօսութիւն կ'ըլլայ փափաքող ծնողաց զուակներուն: Իրբեւ մասնաւոր կըթական ձեռնարկ ստկայն պէտք է յիշել Դպրոցասիրաց որբանոցը, Լը Ռանսի մէջ, ուր կը պատսպարուին և կը դաստիարակուին 100է աւելի որբուհիներ, Գարակէօզեան որբանոցը, ուր 100ի չափ որբ տղաքներ նոյնպէս կը պատսպարուին և կը կըթուին, Վանտօմի գաւառին Լա Կօտինիէս գիւղին մօտակայքը, և Վենետիկի Միսիթարեանց Մուրատեան երկրորդական վարժարանը՝ Սէվրի մէջ:

Հոգեւորականներն են Տ. Վառաձապուհ Եպիսկոպոս Քիպարեան, որ Բարիզի Հոգեւոր Հովիւն է, և 4 ծխատէր և երեք հիւր քահանաներ, որոնք կարգաւ Ալֆօրփիլ ալ կ'երթան, նոյնպէս հարկը ներկայացած տուն կը հասնին մինչեւ Ալգաս Լօրէն և այլուր, ուր ցրուած են Հայեր:

2. — Լիոնի շրջանակին մէջ, զոր կը կոչենք Միջերկրեայ Ֆրոնտա, հայաբնակ

են հետեւեալ վայրերը, որոնք կը պարու-
նակեն իր 15,600 գաղթականներ, փակա-
գծուած թիւերու համեմատ: Լիոն (5000),
Տէսին (1000), Բօնէլէրի (500), Վիէն (1500),
Վալանս (3500), Կրէնօպլ (700), Սէն Շա-
մոն (800), Սէնդ Էթիէն (1000), Վիլֆրանզ
(50), Ռոման (100), Ռիվոլաթ (50), Պուր-
կօն (50), Բօն տ'Օպնա (500), Բուզիւն (200):
Այս շրջանակի վարչական կազմը ամէնէն
խառնակն է գծարտարար: Լիոնի մէջ,
իրեւ կեդրոնի մէջ, միաժամանակ գոյու-
թիւն առած են երկու հակընդդէմ վար-
չութիւններ, որոնք ինքզինքնին ամբողջ
շրջանակին ներկայացուցիչ ժողովները կը
համարեն, և ըստ այդմ շրջակայ միւս
վայրերէն ոմանք մէկ կողմ ոմանք միւս
կողմին հակած էին երբեմն: Բայց կեդրոնի
տղեկ վիճերէն տաղտկացած՝ ամէնքն ալ
գրեթէ չեն ճանչնար այլեւս կեդրոնը, և
իւրաքանչիւրը ինքզինքը կը հոգայ կարե-
ւութեան սահմանին մէջ: Այսպէս, բացի
կեդրոնէն, ուր գոյգ վարչութիւնները ու-
նին մէյ մէկ հոգարարութիւն, իրենց ծո-
ցէն կամ ձեռքով ընտրուած, և որոնք կը
նային եկեղեցւոյ պայծառութեան և ժո-
ղովրդեան պատկանեալ գործերուն, միւս
վայրերուն մէջ ալ կան աւելի կամ նուազ
կանոնաւոր կերպով ժողովուրդէն ընտըր-
ուած մարմիններ, տեղ մը Ազգ. Միութիւն,
ուրիշ տեղ Հոգարարութիւն անուան տակ,
միեւնոյն պաշտօնով: Ոչ մէկ տեղ, Լիոնի
շրջանակին մէջ, չկայ ազգային եկեղեցւոյ
սեպհական չէնք: Լիոնի մէջ կան մեծ և
փոքր երկու մատուռներ, նոյնպէս Բօնտ-
շէրի, Վալանսի և Բօնտօպարի մէջ կան
մէյ մէկ փոքրիկ մատուռներ, ամէնքն ալ
վարձովի: Բոլոր միւս վայրերուն մէջ,
պարբերաբար կամ անմիջապէս կը դառնն,
կամ կը վարձեն, եկեղեցական պաշտամուն-
քի համար յարմար սրահ մը, որ երբեմն
բողոքականաց մատուռն է, և յաճախ,
պատշաճ նկատուած սրահ մը: Ամբողջ այս
շրջանին մէջ ութ հոգեւորականներ կան,
Տ. Անանիա Ծ. Վրդ. Հարէրեան և չորս
քահանաներ Լիոնի և մէյ մէկ քահանաներ
Բօնտշէրի, Վալանսի և Բօն տ'Օպարի
մէջ: Քահանայ չկեցած միւս վայրերը հեր-
թով կ'այցելին Լիոնի չորս քահանաները:
Կրթական ձեռնարկ, բառին բուն իմաս-
տովը՝ գոյութիւն չունի: Ի սկզբան գրեթէ

ամէն տեղ մանկական ուսուցման կամ
նախնական կրթութեան համար չարժու
մը կատարուած է, բայց շատ կարճատեւ
եղած է, մարդու և մանուաւնդ դրամի չը
գոյութեան պատճառաւ: Լաւ կազմակեր-
պուած վարչութիւն մը պիտի կարենայ
ազգայնապէս փրկել աստեղի Հայութիւնը:
զի ամէնքն ալ դաւառացի և իրենց ազ-
գային և եկեղեցական աւանդութեանց
փարած են: Ամէնքն ալ, բացի Լիոնի քա-
նի մը առեւտրականներէն, գործաւոր են,
կամ, շատ քիչ թուով նաեւ խանութպան,
և կ'ապրին օրը օրին: Բայց շատ տեղեր,
ուր ֆապրիքաները տեւական ձեւ մը ու-
նին, այս գործաւորներն ալ սկսած են բը-
նակաւորուիլ և նոյն իսկ սեպհական տուն
տեղ կազմաւորել:

3.— Մարսէյի քաղաքը կը պարունակէ
չուրջ 23,000 Հայեր, և կը բաղկանայ հե-
տեւեալ վայրերէն: Մարսէյ և արուարձանք
(20,000), Կարտան (80), Նիս (1000), Լա
Սիօզա (560), Պօրտօ (700), Թուլօն (250),
Մարտիկ (200), Պօլէն (400): Մարսէյի
քաղաքին մէջ, բացի Վահան Ռորասան-
ձեանի բարերարութեամբ շինուած հոյա-
կապ և հայարուեստ եկեղեցիէն, որուն
նաւակաւիքը չէ կատարուած տակաւին,
կայ Ս. Յարութիւն անուանով մատուռ մը,
որ հին զաղութին օրով, չուրջ կէս դարէ
ի վեր կապուած, աղօթատեղի մըն է,
վարձովի: Արուարձաններուն մէջ կան ութ
մատուռներ, որոնք նոր գաղթականութեան
հաստատուելէն վերջ կազմուած են, գրե-
թէ ամէնքն ալ աղքատապաւան, և ամէնքն
միեւնոյն առեն կը ծառային իրր գաղա-
տուն փոքրիկներու ազգային կրթութեան:
Այնպէս որ, բացառիկ երեւոյթ եւրոպահայ
կեանքին մէջ, և զոր պէտք է յայտարա-
րել հոս, ի պատիւ նոյն իսկ Պալաքեան
Սրբազանի և իրեն աջակից անցեալ և
ներկայ վարչութեանց, Մարսէյի այս ութ
կամ ինը դպրատանց մէջ այսօր կ'ուսա-
նին երկու սեռէ չուրջ 1000 հայ մանուկ-
ներ, որոնք կը կարդան՝ կը գրեն և կը
խօսին իրենց մայրենի լեզուն, և կ'ուսա-
նին ազգ. եկեղեցւոյ կրօնը, ազգին պատ-
մութիւնը և ֆռանսերէն և պատշաճ ուրիշ
ուսումները: Իրաւ է թէ, գծարտարար,
որքան միջավայրին ազդեցութիւնը ներ-

գործէ գաղթականներուն վրայ, այնքան պիտի թունայ ազգ. կրթութեան այս ձեռնարկը: Բայց ամէն պարագայի մէջ գովելի միայն կրնայ ըլլալ այն ոգին, որով, առանց այլևայլի, պատկանեալ Մարմինները կը խորհին ներկայ մատաղ հայութեան ազգ. դաստիարակութեան հարկին վրայ: Մարտէյլի մէջ ազգ. վարչութեան կազմը յարգարուած է գրեթէ Պոլսոյ Սահմանադրութեան համանման ձևով, թէեւ տակաւին իւր առաջնորդութիւն և առաջնորդական թեմ չէ ճանչցուած Մայր Աթոռէն: Տասնեմէկ հոգեւորականներ կան Մարտէյլի շրջանին մէջ՝ Տ. Գրիգորիս Եպս. Պալաքեան, Յովհաննէս Վրդ. Ֆէրհատեան, Էրեք քահանաներ քաղաքին, և արուարձաններուն մէջ վեց քահանաներ, որոնք հերթով կը հովուեն քահանայ չկեցած միւս վայրերն ալ: Նիսի մէջ ևս կայ Տիգրան Չամբէրթէնեան իրարեւարութեամբ կառուցուած ազգապատկան մատուռ մը, որ զպրատուն է նոյն ատեն, և քահանայ մը:

Ֆոանսայէ գուրս.

1. — Պելիզալի շրջանին մէջ կան չուրջ 1000 Հայեր, որոնք կը բնակին Պրիքսէլ (700), Անվէրս (300) և Լիէժ (50): Եկեղեցի չունին. երկու առաջին քաղաքներուն մէջ եկեղեցական պաշտամունք կը կատարուի անկլիքաներու եկեղեցիներուն յարակից սրահներուն մէջ: Բանի մը տարի միայն ունեցած են սեպհական քահանայ մը, որուն մահէն ի վեր սեպհայն չկրցին ունենալ ուրիշ մը, և տօնական կամ ուրիշ առիթներով Բարիդէն զրկուած քահանաներ միայն կը հոգան ժողովուրդին եկեղեցական պէտքերը: Կարճատեւ եղած է կրթական ձեռնարկը, որմէ կը փնայ այժմ անձնուէր և ձեռնհաս ուսուցչուհի մը միայն, Օր. Ստեփանեան, որ Պրիքսէլի և Անվէրսի մէջ այցելարար կը դասախօսէ քանի մը տուններ: Պրիքսէլի մէջ Ազգ. վարչութիւն մը կայ Ազգ. Միութիւն անուան տակ, բայց գործօն կեանք մը չունի այժմ զժախտաբար. Անվէրսի մէջ ևս կայ առանձին վարչութիւն մը: Երկու քաղաքներուն մէջ ևս կան ազգատոց և որբերու հոգածու մարմիններ, որոնք իրենց գոյութիւնը և պահպանութիւնը կը պարտին բարեսէր Տիկիներու անձնուէր ջանադրութեանց:

2. — Զուլցերիոյ մէջ կ'ապրին չուրջ 400 Հայեր, այսպէս ժընէլ (250), Պընիան (100 որբեր), Լոգան և շրջակայքը (56): Զունին ոչ եկեղեցի և ոչ քահանայ. Զատիկի, Ծնունդի և ուրիշ տօնական առիթներով Բարիդէն կ'այցելեն քահանաներ: Զուտ ազգային կրթական ձեռնարկ չկայ. բայց Պընիանի մէջ կայ որբանոց մը, ուր կը պատսպարուին և կ'ուսանին 100 հայ որբեր, երկու սեռէ, և ժընէլի մէջ պատսպարան տուն մը, «Հայաստան» անունով, ուր կը պատսպարուին նոյնքան մանչ և աղջիկներ, որոնք Զուլցերիական բարձրագոյն վարժարաններ կամ համալսարան կը յաճախեն: Այս երկու հաստատութիւններն ալ հոգածութեանը ներքեւ են հայասէր Զուլցերիացիներու, որոնց ամէնէն ծանօթ գէմբերէն էր Լէոփոլտ Ֆալս Հելուեիացին, և որոնց այժմու ներկայացուցիչն է և գործին վարիչը հանրածանօթ Գրաֆթ Պօնար Զուլցերիացին: Ժընէլի մէջ կայ անձնուէր Հոգաբարձութիւն մը, որ կը գործէ օգտակարապէս, կրօնական զգացումը վառ պահելու ջանքով:

3. — Իսալիոյ մէջ ունինք չուրջ 500 Հայեր, որոնք կը բնակին Միլան (300), Թօրինօ (30), Վենետիկ (50), Թրիէստ (60), Պառի (70): Միայն Միլանի մէջ ունինք քահանայ մը և եկեղեցական Հոգաբարձութիւն մը, որ ազգասէր և լուրջ անձերէ կը բաղկանայ. եկեղեցական պաշտամունք կը կատարուի անկլիքան եկեղեցիին մէջ: Կրթական ձեռնարկ գոյութիւն չունի: Այդ մասին ժողովուրդին զգացումը չափով մը կը գոհացնէ թերեւս Վենետիկի Միսիթարեանց կողմէ նախապէս իւր որբանոց զընուած բայց այժմ համալսարան յաճախող իրենց սաներուն իւր ուսանողաց տուն գործածուած այն յարկը, ուր մերթ րնդ մերթ տեղի կ'ունենան զրակաւ և կրթական հանդէսներ և ազգային համախմբումներ: Թօրինօյի մէջ կայ հայ կաթողիկ կղերին հսկողութեան տակ որբանոց մը, ուր մայրապետներու խնամքը կը վայելեն 100ի չափ որբուհիներ, որոնք ուսում և գործնական կրթութիւն կ'ստանան գոհացուցիչ չափով: Իսկ Պառիի մէջ կայ «Նոր Արաքս» կոչուած թաղ մը, ուր կը բնակին 70ի չափ նորեկ գաղթականներ, գոր-

զագործութեամբ զբաղող: Ասոնք կը վաճելն իտալական Բարեգործական Ընկերութեան հոգածութիւնը, որ իրենց թաղին մէջ մատուց մը, զպրատուն մը եւ զարմանատուն մըն ալ կատուցած է անոնց համար: Բայց, առ ի չգոյէ հայ քահանայի, անոնք կը գտնուին Մխիթարեան Հայ Կոթիւի վարդապետի մը հսկողութեան տակ:

4. — Գերմանիոյ հայտնակ քաղաքներն են Պէլրլին (380), Լայբցիկ (40), Համպուրկ (57), եւ Միւնխէն-Տրէգտա (32): Գերմանահայոց ընդհանուր թիւն է ուրիմն իբր 500: Պէլրլինի մէջ ունինք Ազգ. Միութիւն անուան տակ վարչութիւն մը, որ կը ջանայ հոգալ ժողովուրդին եկեղեցական եւ հասարակական պէտքերը: Չունինք եկեղեցի, կրօնական պաշտամունք կը կատարուի Բրուսիական բողոքականներէ արքամագրուած մատուռի մը մէջ: Հոգևոր Հովիւն է Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Շահլամեան, որ շարթական քանի մը ժամ հայերէնի դաս կ'աւանդէ որոշ թուով հայ մանկանց: Ինքն է որ այցելաբար կը հովուէ նաեւ Լայբցիկ եւ Համպուրկ:

5. — Աւստրիոյ միայն մայրաքաղաքին, Վիեննայի, մէջ է որ կան Հայեր, թուով իբր 200. ունին եկեղեցւոյ Հոգաբարձութիւն մը, որ Միւնիխ Հոգաբարձութեան հետ, արտաքոյ Ֆրանսայի եղած մեր համայնքներուն ամէնէն ընտիր Հոգաբարձութիւններէն մին է, կազմուած պատուական եւ ազգասէր անձերէ: Չունին յատուկ եկեղեցի, բայց ունին քահանայ մը, որ տարիներէ ի վեր վարձուած յատուկ շէնքի մը մատուռի վերածուած մեծ սրահին մէջ ամէն Կիրակի կը կատարէ պաշտամունք եւ կը մատուցանէ Պատարագ: Անցորդ ազգասէրներու եւ հասարակութեան զանազան պէտքերը կը տեսնուին խղճամիտ հոգածութեամբ: Կրթական ուրոյն ձևնարի չը կայ. Մխիթարեան Հայերը փափաքողներու տուններուն մէջ կ'ուսուցանեն մայրենի լեզուն:

6. — Հունգարիոյ օստանին, Պուտաբէշտի մէջ, ի հնոյն նշանաւոր բայց այժմ չիջած եւ գրեթէ օտարասոյզ անհետացած գաղութին ստուերներուն մօտիկ կազմուած

է պատերազմէն քիչ առաջ եւ աւելի վերջ գոյացած գաղութ մը, որ կը բաղկանայ 70 անձերէ: Ասոնք վերջին անգամ ունեցան Հոգաբարձութիւն մը, որ կը հոգայ փոքրիկ հասարակութեան ազգային եւ կրօնական պէտքերը: Վիեննայի քահանան կ'այցելէ Զատիկ եւ Ծնունդի առթիւներով: Ապագայ կը խոստանայ այս գաղութը, զի կը պարունակէ լուրջ ու ազգասէր անհատներ: Վենետիկի Մխիթարեանք պատերազմէն վերջ մտածումն ունեցած են եկեղեցի եւ վարժարան հաստատելու հոն, հին գաղութը վերակենդանացնելու նպատակով, բայց յաջողութիւն չեն գտած:

7. — Չեխոսլաւիոյ նորակազմ պետութեան մայրաքաղաքին, Բրահայի, մէջ կան շուրջ 100 Հայեր, որոնց փոքրիկ մէկ մասը միայն աւետարականներ, միւսները ամէնքն ալ ուսանողներ են Չեխ համալսարաններու մէջ, բժշկութեան, իրաւաբանութեան, փիլիսոփայութեան, ճարտարարուեստից, եւ այլն:

Եկեղեցական եւ վարչական որեւէ կազմ գոյութիւն չունի դժբախտաբար. բայց կայ Ուսանողական Միութիւն մը, որ զբաղան երեկոյթներով եւ հայրենասիրական գումարումներով կենդանի կը պահէ ազգային ոգին:

8. — Եսլոսլաւիոյ գլխաւոր հայտնակ վայրերն են մայրաքաղաքը Պէլկրատ եւ Իւսկիւպ. բայց այս երկու քաղաքները միայնոզ երկաթուղագծին շուրջը եղած 38 կայարան քաղաքներուն մէջ կան 200ի չափ Հայեր: Այնպէս որ Պէլկրատի 200ը եւ Իւսկիւպի 100ը եւս աւելցնելով անոնց վրայ, ընդհանուր Եսլոսլաւիոյ Հայոց թիւը կը յանդի իբր 500ի: Բացի Իւսկիւպի ազգայնոց կէսէն եւ Պէլկրատիներու մէկ փոքր մասէն, միւս ամէնքը նոր գաղթականներ են, զրեթէ ամէնը Երզնկայի Կեմալի գաւառին զիւղերէն: Արթուն եւ ազգասէր Հայեր, որոնք սակայն Հայաստանի Ա. Հանրապետութեան օրով միայն, երբ հայկական Հիւպատոսութիւն կար, ազգային վարչութեան ձեով մարմին մը ունեցած են, եւ անկէջ ի վեր ո՛չ եկեղեցական ո՛չ կրթական որեւէ վարչութեան կազմ չեն ունեցած: Այնպէս որ, բացի Իւսկիւ-

պէ, որ ծերունի քահանայ մը կայ իր զաւկին մօտ հիւրարար, ամբողջ եռօր-սլաւիոյ մէջ ոչ մէկ քահանայ կամ ազգա-յին պաշտօնեայ կայ:

9.— Անգղիոյ հայաբնակ քաղաքներն են Լոնտօն, Մանչէսթըր, Սաութ Բօրթ եւ Լիվըրքուլ: Առաջինին մէջ կան իբր 800, իսկ միւսներուն մէջ շուրջ 500 Հայեր: Լոնտօնի մէջ ունինք հայաբնակս գեղեցիկ եկեղեցի մը, յարակից երկրամասնով միասին: Թէեւ Պ. Գալուստ Կիւլպէնկեանի կողմէ կատարուած է ան և կը մատակարարուի իր կողմէ, բայց ամբողջովին յատկացուած է ժողովուրդին հոգեօր պէտքին: Իբրեւ ազգային վարչութիւն, տակաւին չը կայ ոչ մէկ մարմին. գոյութիւն ունին միայն Տիկնանց Միութիւն մը և աղքատախնամ մը: Եկեղեցին ունի իր քահանան, որ եկեղեցւոյ Բարեբարէն կ'ընդունի իր ապրուստը, բայց կը ծառայէ ամբողջ ժողովուրդին: Մանչէսթըրի մէջ, որ մեր Եւրոպահայ ամենէն հին և կազմակերպեալ գաղութներէն մին է, ունինք ազգապատկան եկեղեցի, ազգային վարչութիւն, եւրեփոխանական դրութեամբ, որուն կանգամակցին կրննր ևս, աղքատախնամ են: Հոգեօր Հովիւն է Տ. Ղեւոնդ Եպս.: Կլըթսիան որեւէ ձեռնարկ չկայ ոչ Լոնտօն և ոչ Մանչէսթըր: Սաութ Բօրթ եւ Լիվըրքուլ կը հովուութիւն Մանչէսթըրի եկեղեցիէն:

ԱՆՎԵՂՄԸ

Մի' վախճաւ դուն մաղէն անկեղծ.
Ուրբեներ ի՛նչ ալ խօսին,
Դուն զայն յարգէ սիրով մ'անեղծ.
Շուտ կը բռնին խօսքեր սին:

Տէր եղիւ խօսիլ շիտակ,
Հեզ է Տէր ո՛ր որ դառնաւ.
Չար չունի շեշտ ցրպատակ,
Շուտ կ'անցնի ան եւ իր վընաս:

Թէ խիտ է ան եւ մեր խոստ,
Բարի է բայց, չի պահէր ղէն.
Ան կը խոսի արձակ բոլոր
Չարէն, սուսէն եւ կեղծիքն:

ԲԱԿ



ՊԵՂԱՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐ

Հանոյթով կը զարդարեմք ՍԻՌԻՈՒՍ սիւնակները պատմական և հոգեբանական այն վերածումներով, որոնց մէջ եզրափակուի Հայոց Դրացի Առաջնորդը, Դեր. Տ. Թորգոմ Սըրբազան, պատկերացուցած և հայ ժողովուրդի Մեծ Զակին, որպէս Վսեմ. Պօղոս Փաշա Նուպարին նկարագրելով, 1930 Յուլիս 1, կիրակի օր, Դանիթի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ նորշին Առաջնորդարանին մէջ, Հ. Բ. Ը. Միութեան նախաձեռնութեամբ կարգադրուած համագային Յիշատակի հանդիսին տօնիւ:

Խմբք.

Ականաւոր Հայը, որուն մահը կ'ողբայ այսօր ամբողջ ազգը, մեր ժողովուրդին ժամանակակից ամենէն պատկանելի և բացառիկ արժէք ներկայացնող գէմքերէն մինն էր:

Մեծ էր ան իր ծագումով, իր ծնունդով, իր կեանքով և իր գործերով:

Ծագումովը. որովհետեւ տոհմիկ շատաւիզն էր իշխանական տունի մը, զոր բախտը Սիւնեաց խրոխտ լեռներէն փոխադրել էր յոնիական ափերուն վրայ, Զմիւռնիոյ նորակազմ հայ գաղութին մէջ փայլեցնելու համար իր ցեղական ձիրքերը:

Ծնունդովը. որովհետեւ զաւակն էր պետական մեծ վերանորոգիչի մը, որ, ԺԱ. դարուն, Բագրատունեաց փուլումէն ետքը, եզրափակուեալ և հին հայ նախարարական տուներու պատկանող քաղաքական և ղեկավարական գործիչներուն նման, անոնցմէ ութը դար յետոյ, նորէն աւելի բարձր աստիճանի մը վրայ թերեւս պանծածացուցեր էր իր ցեղը, միջազգային ուշադրութեան ու պատմութեան յանձնելով Հայ անունը:

Կեանքովը. որովհետեւ անհատներու կենսագրութեան մէջ դուն ուրիշ կարելի է տեսնել որ պատուոյ մէջ և ղիրքերու վերայ յառաջդիմութիւնը զուգընթաց եղած ըլլայ զուտ անձնական արժանիքի և աշխատութեան, այնպէս՝ ինչպէս կը հաստատուի իրենին մէջ: Իր դէմքը կը կնճռուտէր, կ'ըսեն, երբ կ'ուզէին պատուել զինքը իբրեւ նախարարապետի որդի: Վասնզի կը խորհէր, անշուշտ իրաւամբ մի-

այն, թէ ճշմարիտ մեծութիւնը այն է, որուն ատաղձը իր անձին մէջ կրնայ զլտնել մարդ:

Գործերով. որովհետեւ, ո՞վ չգիտեր այսօր զայն, մին հզաւ նա այն գործիչներէն, զգացումի և սկզբունքի տենդէն մարաւում, զազաւարի և իտէալի լոյսէն առաջնորդուած այն գործիչներէն, որոնք, մերթ րնազգարար, բայց ստէպ խորհրդածուած ծրագրերներով, իրենց կեանքի այն շրջանին մէջ մանաւանդ, ուր սիրտն ու բանականութիւնը իրենց լիալի կազմութեան մէջ են ա՛լ, կ'ուզեն որ սէրը մեծագործութիւններ գործել տայ կամբին:

* * *

Իր կեանքը, տեսարան մ'ըլլալէ աւելի, զիրք մըն է մանաւանդ: Զայն զլիտելով, վայելիլէ աւելի կը սովորէ մարդ, այսինքն կ'աճի փորձառութեամբ և հոգով միանգամայն:

Զեմ ուզեր կանգ տունել իր կեանքի այն մանրամասնութիւններուն առջև, որոնցմէ աւելին թերեւ մարդերէն շատեր պիտի ուզէին ու նոյն իսկ պիտի կարենային ցոյց տալ իրրե տարր իրենց կենսագրութեան: Պիտի չհազարգուէինք արգարե թէ ինչպէս, Ֆրանսայի և Զուլիցերիոյ մէջ իր երկրորդական ուսումնաւարտելէ, Բարիլի Ecole Centrale-ին աշակերտելէ, ճարտարագէտ-երկրաչափի վիպական ստանալէ վերջ, իր ուսումը գործնական արժէքներու ընդունակ ընելու համար՝ գործաւորի պէս աշխատեցաւ Ֆրանսայի հանքերուն մէջ և երկաթուղիի գիծերուն վրայ, եթէ համոզուած չըլլայինք թէ այդ ամէնը ըրաւ, որպէսզի, ոչ թէ բան մը ըլլայ, այլ բան մը ընէ: Պիտի չուզէինք երբեք յիշել իսկ հոս թէ ինչպէս եւ ո՞րքան պատուանշաններ— զորս իր գլորցին մէջ զրա՞ծ լինելը հաւանաբար ինքն ալ մոռցած էր յետոյ— զարդարեցին իր կուրծքը, և զորս ստացած էր Բարիլի և Միլանի ցուցահանդէսներէն, Ֆրանսայի երկրագործական ընկերութիւնէն, պատուոյ Լէգէոնի ասպետութիւնէն և սպայութիւնէն, և զանազան կառավարութիւններէ, եթէ վստահ չըլլայինք թէ անոնք ամէնքը, իրական և արգար մըջանակներ միայն, իրեն համար կ'զան աւելի խթաններ կարծես աւելի աշ-

խատութեանց և արդիւնագործութեան:

Բան մ'ըլլալէ աւելի բան մ'ընելու կամ բան մ'ընել կարենալու համար միայն բան մ'ըլլալու իղձը ապահովարար ամէնէն մաքուր՝ ճիշդ եղաւ իր խիղճին: Ուրիշներ, հարուստի զաւակներ, հեշտութեան մէջ պիտի փնտռէին, ինքը աշխատութեան մէջ միայն դաւա կեանքի նպատակը: Ու, ինչ որ իր զմայլելի նկարագրին ամէնէն յատկանշական զիծը կը ցոլացնէ, այն է թէ, սկիզբէն, այսինքն զլիտելութեան և ճարտարարուեստին մարդը իր մէջ կազմուելուն առաջին օրէն, իր հակումները կ'ուզուին զէպի ժողովուրդին օգուտը: Որդի անոր, զոր Եգիպտացոց հասարակաց զգացումը «ֆիլլանին», այսինքն երկրագործ ժողովուրդին, հայրը» պիտի կոչէր յետոյ, կ'ուզէ որ իր տաղանդին երախայրիքը անոր նուիրուած զիւտ մ'ըլլայ. ու կը հնարէ «ինքնաշարժ արօրը», որով կարելի պիտի ըլլար զլիւրութեամբ ճեղքել հողի ամէնէն կարծր գուղձերը: Նոյն հակումէն մղուելով է անշուշտ նաեւ որ յետոյ, 1905 ին, կ'ընդունի Եգիպտական Կառավարութիւնը Հոգովի երկրագործական համաժողովին մէջ ներկայացնելու պաշտօնը, եւ տիրական հեղինակութեամբ կը սատարէ հիմնարկութեանը «երկրագործական միջազգային կաճառ»ին, որ այնուհետեւ ամենամեծ ծառայութիւնները մատոյց աշխարհի երկրագործութեան: Նոյնպէս, յետոյ, կը ստանձնէ վարչի պաշտօն Պէհէրայի անդղիական երկրագործական ընկերութեան մէջ ու վերջապէս, անմշակ եւ աղային հողերը նորագոյն մեթոտներով զարմանելու և բարեօքելու առաջին օրինակը կուտայ Եգիպտացիներուն:

Միևնոյն այդ ժողովրդանուէր հակումին աւելի կամ նուազ հանդիսաւոր արտայայտութիւնը կարելի է նկատել իր մէջ Եգիպտոսի երկաթուղիներուն վերակադմութեան, Սուտանի ջրաբաշխական ձեռնարկներուն մշակման, Աղեքսանդրիոյ հանրակառքերու և Մէնզալէի հողերու շահագործման և Գահրէի ջուրի ընկերութեանց կազմակերպումին, բազմաթիւ ուրիշ ձեռնարկներու, զրամատանց և միութեանց պատուիրակի և վարչի, նախագահի իր գործունէութեան, և մանաւանդ անմոռանալի այն մեծագործութեան մէջ,

որ իր հանճարը մեծագոյն նպաստ մը բերաւ դարազրուի կազմող ելեմտական՝ ճարտարարուեստական և երկրաշինական այն հսկայ և զեղեցիկ ձեռնարկին մէջ, որ անապատի արեւակէզ ամայութեան մէջէն օր մը յանկարծ բողբոջեցուց Հելլոպոլիսի գիւթական քաղաքը:

Եւ այս ամէնքը՝ երբ իր ազգակիցներէն շատ քիչեր կը ճանչնային զեռ զինքը, մինչ բոլոր օտարները իր մէջ ճանչցած ու յարգանքով մատնանիչ ընել սկսած էին արդէն ուշիմ, զիտուն, զործնամիտ և պարկեշտ Հայը:

* * *

Հասարակ տեղիքի մը չափ սովորական դարձած ասութիւն մը եղած է մեր մէջ ըսել թէ Պօղոս Նուպարի մէջ շատ ուշ յայտնուած է Հայը: Կարելի չէ թերեւս զիտնալ թէ ո՛րչափ ճիշդ դատում մը կայ այս խօսքին մէջ: Ինչ որ կը կարծեմ սակայն թէ ճշմարիտ կրնայ լինիլ, այն է թէ Մեծն Նուպարի դաւակը երբ մօտեցաւ իր ազգին, անոր ընծայելու համար ինքզինքը, կազմուած՝ իր լրացեալ կատարելութեանը հասած և օգտակար միայն լինելու աստիճանին վերածած էր միայն իր անձը, իրբի իմացականութիւն, իրբեւ սիրտ և իրբեւ նկարագիր միանգամայն:

Որքան իրապէս օգտուած պիտի ըլլար միշտ այս ազգը, եթէ անձնութիւնները այդ կերպով և այդպիսի պայմաններով կատարուած ըլլային միշտ իրեն: Լոկ զգացումներով չէ որ կուգար նուիրուիլ իր ժողովուրդին, այլ մանաւանդ սկըզբունքներով: Ազմուկ, ազազակ, պատրանք չէր բերեր անոր, այլ արժանիք, այս բառին ամէնէն բարձր և շօշափելի ասումով:

Աղեքսանդրիա, ուր կը բնակէր ան այն միջոցին, իրբեւ Թաղական Խորհուրդի ատենապետ՝ ազգային կեանքի մէջ առաջին մօտքին անդրանիկ արդիւնքը եղաւ ճշ յարկարաժիններէ բողբոջած հասութեանը այն հսկայ շէնքը, որ խարխիսն է այդ քաղաքի մեր ազգային կեանքի տնտեսական ապահովութեան: Իր ներկայութիւնը նոյն բարիքը յառաջ բերաւ Փահլիքէի մէջ, երբ յետոյ հոս փոխադրեց իր բնակութիւնը: Տեղն է ըսել, մեր Առաջ-

նորդարանը, եթէ արժէք մը կը ներկայացնէ իրբեւ զիտնական, երմտական, վարչական և կալուածական կազմակերպութիւն, անկիա զայդ կը պարտի ազգին գործերուն մէջ մասնակցութեանը՝ եզիպատահայ պետական մարդոց, որոնց տաղները եղած էր աղա Կարապետ Փալուստ մեծ բարերարը, և վերջինները Տիգրան փաշա, Գրիգոր Եղիաեան և մանաւանդ ինքը Պօղոս Նուպար, որ մինչև իր վերջնական մեկնումը Եւրոպա, և զեռ երկու տարի աւելի ետքը, իրբեւ ատենապետ Թեմականին, այնքան մօտէն հետեւեցաւ և հսկեց գործոց ընթացքին:

* * *

Ամէն ոք հասկցած էր թէ իր հօրը մահէն վերջ իր ազգին հոգին աւելի բազմած և բարձրացած էր իր զիտակցութեանը մէջ: Նուպար, անհաւաստելի հանճար զիտանազիտական և պետական կազմակերպութեան մարդին մէջ, պատմական մեծութիւն մը՝ Թանգարանական արժէք մը, փառք մը, միայն եղած էր իր ցեղին համար, որուն՝ իր կարողութեան համապատասխան չափով օգտակար ըլլալու պատեհութիւն չէին տուած ո՛չ պարագաները թերեւ և ո՛չ ալ ազգային կոսկածամտութիւնը, Պէրլինի վեհաժողովին տուն մանաւանդ: Իր որդին, Պօղոս, կարճեւ կը փափաքի իսկոյն այդ թերին լեցնել, երբ անոր Թաղման վաղորդայնին իսկ, իրբեւ պսակ իր հօրը հողակոյտին վրայ, կը մտածէ ազգին մէկ միլիոն ֆրանք գումարի ընծայարբութեան մը վրայ: Այդ գաղափարը, զոր իսկոյն կ'ուզէր զործադրել առեւտրական վարժարանի մը հիմնարկութեամբ և Եւրոպայի մէջ թռչակաւոր սաներու գետեղումով, յետոյ կ'իրազորէ կառուցումովը Փալուստեան Ազգային Վարժարանի շէնքին, որուն համար զիտում եղած էր իրեն, և որ Փահլիքէի ազգային կրթութեան գործին վրայ պիտի զրուէր վերջին ու վրճաւական կնիք մը, Պուրսիկեան հաստատմամբ՝ որուն արդիւնքը սակայն կարճ մամանակէ վերջ յուսախար կ'ընէր զինքը:

Այդ շրջանին մէջ իր կատարած ազգային մեծագործութեանց լրումն ու պսակը պիտի ըլլար սակայն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, զոր հիմ-

նեց 1906-ի զատկի առաւօտուն. կոթողա-
կան գործ, որ իր անունը սերտիւ կապեց
ազգին սիրտին հետ, եւ որ պիտի մնայ
յաւերժական փառքի պսակ մը իր յիշա-
տակին պատուանդանին առջև: Բարեկոր-
ծականին — թող ներուի ինծի չեղտել այ-
սօր անգամ զէթ այդ կէտին վրայ, երբ
իր յուղարկութեան յաջորդ օրը խըմ-
բուած ենք այժմ այս տեղ՝ տակաւին կեն-
դանի իր ստուերին առջև — կրկին է ար-
ժէքը մեր ազգային իրականութեան մէջ,
բարոյական եւ նիւթական: Իրեն բարոյական
ձեռնարկ, ըստ իս մեծագոյն է անոր նշա-
նակութիւնը, վասնզի կը ներկայացնէ ազ-
գին ունեւոր դասակարգին ո՛չ թէ իրրեւ-
քմահաճոյքով այլ ի պարտաւորութենէ խո-
նարհումը՝ մերձեցումը ազգին վերքերուն
եւ կարիքներուն. տեսակ մը գործ կամ ա-
բարք վստահութեան, որ կը հիմնուի Պօ-
ղոս Նուպարի անուան կամ բարոյական
արժանիքին վրայ. իսկ իրեն նիւթական
ձեռնարկ, օգնութեան կամ նպաստի ան-
նախընթաց կապակերպութիւնն է ան մեր
մէջ, երեսուն տարիներէ ի վեր միշտ ա-
ւելի արդիւնաւորուած, որուն նախախնո-
մական գերին մասին որեւէ վարանք նե-
րկի պիտի չըլլար որեւէ Հայու, որ ունի
իր ազգին զգացումը:

Պօղոս փայլա — արեւելեան շուայա եւ
պանդոյր կենցաղի միայն յաճախ հոմանիշ
նկատուած այս տիտղոսը ո՛րչափ թոյլ կը
փակէր սկիզբէն իսկ իր անունին, Պօղոս
Նուպար այլեւս արեւցած՝ գրեթէ զգլխած
էր իր ժողովուրդին ծառայելու ըզմանքո-
վը. այդ պատճառաւ, 1912-ին, երբ ազգին
հոգեւոր գլուխը պաշտօն կը յանձնէր ի-
րեն թուրքիոյ հայկական վեց նահանգնե-
րու առանձնաշնորհումին համար գիւմել
մեծ պետութիւններուն, տեսնել պէտք էր
թէ ճշմարիտ հայրենասէրը, ձմրան եղա-
նակին, թողլով իր հանգիստը՝ որուն պէտք
ունէր իր զաղփաղփուն առողջութիւնը,
ի՛նչպէս զոռնէ զուռ կը թափուէր Եւրո-
պայի արքունիքներուն եւ նախարարատանց
առջև, մինչև որ վերջապէս գրաւելով ընդ-
դիմութեան վերջին ամրոցը, զոր Գերմա-
նիոյ արտաքին գործոց խորհրդականը՝
Յիւմէրման կանգնած էր միւս մեծ պետու-
թեանց հայանպաստ միտումներուն առջև,
կը յաջողէր ամենուն ընդունիլ եւ թուր-

քիոյ զորագրել տալ երկու Մարզպաննե-
րուն, Հօֆի եւ Վէսթնէնկի, առաքումը ի
Հայաստան:

Իսրայէլ Օրիի, Շահամիրի, Յովսէփ
Էմինի առաքելութիւնն էր զոր կը վերա-
կրկնէր այդ միջոցին Պօղոս Նուպար ազ-
գին հասարակաց զգացումին եւ համոզու-
մին մէջ, եւ որ անոնցինէն աւելի բարե-
յաջող եւ իրական արդիւնք ձեռք բերած
պիտի ըլլար ազգին համար, եթէ, ճակա-
տագրական աղէտք, մեծ պատերազմին
առաջին բոմբիւնը պայթած չըլլար այս
ազգին յոյսին ճամբուն վրայ, անգամ մը
ալ խափանելու համար, արիւնի եւ արհա-
ւիրքի սարսափներու մէջ, իր վերելքը զէ-
պի իր կոշումին բարձրակէտը:

* * *

Տարիմը ետքը, 1915-ին, երբ պատե-
րագմը շղթայազերծուած էր ամէն կողմ,
Պօղոս Նուպար դարձեալ հրաման կ'ըն-
դունէր Ազգին Վեհէն՝ կրկին ստանձնելու
ազգային զատին պաշտպանութեան նսւի-
րական պաշտօնը, այս անգամ Հայաս-
տանի ազատութեան հիման վրայ. ու ծե-
րունին, մերստին, կը նետուէր ազգային
ծառայութեան փշուա դաշտին մէջ, գի-
տենք ամենքս ալ թէ նսւիրումի ի՛նչ հո-
յակապ ջանադրութեամբ, անընդհատ վեց
տարիներ, այսինքն մինչև 1921, իր բո-
վանդակ ժամանակն ու կորովը, իր անու-
նը, գիրքը, միաքիւ եւ հողին կարողութիւն-
ները եւ իր նիւթական միջոցները լայնօ-
րէն ի սպաս գնելով այդ կենսական գործին:

Ծանօթ է ամենուս թէ այնուհետեւ,
Սէվրի զաշնագրէն ետքը, յոյսի եւ ոգեւ-
րութեան կարճ շրջանէ մը յետոյ, որ մեր
դարաւոր անցեալի բոլոր երազներուն ա-
մէնէն անուշ պատրանքով զգուեց պահ մը
հայութեան սիրտը, ի՛նչպէս նորէն իջաւ
վարագոյրը մեր հայրենիքին հազիւ առա-
ւօտուած բախտին վրայ, տիեզերական ա-
նակնկալներու եղբրական ողբերգութեան
մը մէջէն:

Պօղոս Նուպար, որ պարագաներու
հարկադրիչ դասաւորումով այդ միջոցին
քաշուած էր արդէն իր գործօն գերերէն,
իմ տեսութեամբս՝ երեան եկաւ մեծու-
թեան աւելի շքեղ եւ լուրջ գեղեցկութեամբ
մը: Հակառակ որ ներքին եւ մանաւանդ

արտաքին դաւանութիւններ մղծկած էին մէկէ շատ աւելի անգամներ իր հողին, անիկա չարանջաց իր ազգին դէմ. զայն իր համարումին մէջ միշտ նկատեց իրբեւ ծառայութեան և նուիրումի արժանի հաւաքականութիւն մը: Պատմութեան փիլիսոփայութեան խոր ըմբռնումով մը, որուն այնքան ընդունակ էր իր բարձր բնացականութիւնը, ջանաց բացատրել դէպքերու օղակաւորումը: Ինչ ինչ պարագաներու առջև Որատիոսի հետ խորհրդածելով տնչուշտ թէ «սակայն յերկար ի վաստակ մարթի թէ քուն սպրդիցի»:

Առանց երբեք փակելու սիրտը իր ազգին հանդէպ, լայնօրէն բացաւ իր քսակն ալ, ու բացի անձանօթ բարերարութիւններէ, զորս աննախանձօրէն և լիարուն առատաձեռնութեամբ անհաշիւ տուաւ ամէն կողմ, նախամտածուած ծրագրի մը համեմատ կարծես տուաւ միշտ սիրով և հաւատքով:

Բարձր մտաւորական, որ վարժուած էր ընդմիշտ մտածելու թէ այս ժողովուրդին վերականգնումին ամէնէն կենսական լծակը կրթութիւնը կրնայ ըլլալ, իր ամէնէն զօրովաղել ուշադրութեան առարկայ ըրաւ ազգին կրթութեան գործը:

* * *

Բայց լսենք թիւերուն պերճախօսութիւնը:

Գահիրէի Գալուստեան Ազգ. Վարժարանի շէնքէն յետոյ, զոր կառուցած էր վաղուց, ծախսելով աւելի քան 20,000 ոսկի, կառոյց յետոյ նաև Հելիոպոլիսի Նուպարեանը, նուիրելով 4,500 ոսկի:

Գահիրէի մէջ իր հօրը մահէն վերջ հիմնած ուսանողական «վաքֆ»ը, որուն արդիւնքէն ըսի թէ յուսախաբ եղած էր պահ մը, 1924ին վերածեց հայ ուսանողական հիմնարկութեան մը, Պրիւսէի համալսարանական ոստանին մէջ, 26,000 ոսկւոյ հիմնադրամով մը, գլխաւորաբար Հայաստանի համար մասնագէտներ պատրաստելու կանխահոգութեամբ:

Կրկին մրցանակներ սահմանեց, 4000 ոսկւոյ արժողութեամբ, մին՝ Երեւանի Համալսարանին յաջողագոյն շրջանաւարտներուն համար, և միւսը, իր հօրը յիշատակին, Օքսֆորտի Համալսարանին մէջ Հա-

յաստանի պատմութեան և գրականութեան ճիւղերուն համար:

Բարիդի մէջ, Համալսարանական ոստանի (Cité universitaire) թաղին մէջ կանգնել տուաւ հոյակապ շէնք մը, Հայ ուսանողական Տունը, անոր համար յատկացնելով 24,000 ոսկւոյ գումար մը:

Բարիդի մէջ, Բարեգործականի ծոցին մէջ կազմակերպեց Մատենադարան մը, իր և իր հօրը գրադարաններուն պարունակութեան մեծագոյն մասն ալ յատկացնելով անոր, բայց միայն շէնքին և հիմնադրամին համար նուիրելով 8,500 ոսկի:

Երեւանի մէջ կառուցանել տուաւ Մասի Նուպար ակնարութարանը, ծախսելով 13,200 ոսկի: Միութեան վերջնականապէս նուիրեց 100,000 տոլար մասնակցած ըլլալու համար Միութեան Քսանհրկամակին առթիւ «Նուպարաշէն» համար Ամերիկայի մէջ հանգանակել ծրագրուած 250,000 տոլարին. ու յետոյ այդ 100,000 տոլարի արժէթուղիներու արժէքը երբ յանկարծ կըրկնապատկուեցաւ սակարանական վերելքով մը, այն ևս, երկրորդ 100,000 տոլար մը ևս նուիրեց, Պուրսիէներու, Մատենադարանի, և Նուպարեան վարժարանի համար նախապէս տուածներուն վրայ բաշխելով զայն:

Չյիշեցինք տակաւին նորակերտ Առաջնորդարանիս համար տուած 2000 ոսկին և Հելիոպոլսոյ Նուպարեան վարժարանին յատկացուցած գումարը. իսկ շէնք կրնար յիշել բազմաթիւ մեծ ու փոքր ուրիշ գումարներ, զորս տուաւ ամէն օր, մինչև իր յետին շունչը:

* * *

Ահաւասիկ, իր կեանքի ամբողջ գործերուն մէջ, գիտունը կամ ճարտարագէտը, բարեգործը, հայրենասէրը և գործիչը, որ Պօղոս Նուպար Փաշան եղաւ. խորին յարգանքի և սքանչացման միայն արժանի ամէն տեսակէտով:

Բայց իմ միտքս, իրեն համար ընտելական դարձած ծալքով մը թրեւս, պիտի ձկեւր այս ամէնուն ներքև փնտռել մարդը ամէնէն աւելի. մարդը՝ առանց որուն խաբուսիկ կամ փախուսիկ առաւելութիւններ պիտի լինէին միւս ամէնքը: — Ո՞վ պիտի կրնար համամիտ չըլլալ ինծի, որ

գիրքը եթէ ոչ ամէնէն չատ՝ բայց ամէնէն մօտէն ճանչցողներէն մին եղայ իմ պաշտօնիս բերմամբը հոս և Բարիկ, եթէ բէի պարզապէս թէ Պօղոս Նուպար ամէնէն աւելի ազնիւ և բարի մարդը եղաւ միշտ:

Փառասիրութիւնը, այն զգացումը որ կրնայ լիկել տխրոյժ հոգիները միայն, իր սրտին անծանօթ մնացած հրաշքներէն մին եղաւ յաւէտ. գործեց, տուաւ, աքքնեցաւ և նուիրուեցաւ ան միշտ, ո՛չ թէ ի խնդիր անուան կամ համբաւի, այլ պարտականութիւն մը կատարած ըլլալու գիտակցութեամբ միայն: Աւետարանի այն ծառան էր ան որ իր Տիրոջմէն, այսինքն Աստուծոյմէն իրեն յանձնուած քանքարը չէր կրնար չհահաւորել յօղուտ ուրիշին: Այդ մարդը, որուն քերականութեան մէջ դոյութիւն չունէր անական և մակբայ, որ կը գրէր այնպէս ինչպէս կը կատարեն թուաբանական գործողութիւնները, մուծկալ գրեթէ չոր բայց ջղուտ ռոճով մը. գեղեցիկին գիտութիւնը ունէր, ու գեղեցիկը իրեն համար բարին էր միայն: Չօրեց անտափ փառքը: Երբ քսանեակ մը տարիներ առաջ Գալուստեան Ազգ. Վարժարանի շէնքը կոնդնեց, առաջին պայման դրաւ որ վարժարանը կոչուի անունովը ազա Գալուստի միայն, որ առաջին անգամ կառուցած էր հոս ազգային դպրատունը, Պէնի Սուրենի հանգիստակաց թաղին մէջ: Գրով պատուէր աւանդեց որ Բարիկի կամ Երեանի մէջ և այլուր իր կանգնած հաստատութիւններէն և ո՛չ մէկին վրայ դրուի իր անուան արձանագրութիւնը: Վերջին անգամ ի Բարիկ իրեն այցելութեանս միջոցին, երբ, առարկելով իր մէկ գիտողութեանը, կ'ուզէի ըսել պարզապէս թէ արդարութիւն է որ իր անունը ևս գրուի Առաջնորդարանի դրան ճակատին վրայ, քանի որ ինքն ալ տուած էր անոր ծախուց համար այնքան, որքան կտակած էր Տիգրան փաշա, «ո՛չ, չեշտեց մեծ ծերունին, ևս տուի որպէսզի կարելի ըլլայ իրագործել կամքը Տիգրան փաշայի, որ միայն մտադրած էր շինել այդ շէնքը, ևս տուած եղայ ոչ թէ ազգին, այլ Տիգրան փաշայի»: Ինչ շքեղ քարոյժ մարդկային ունայնութեան դէմ, որ օձի պէս կ'սողոսկի յաճախ ամենուս սիրտերէններս: Չէր ուզած, տասը տարի առաջ, որ տօնուի իր եօթանասամեակը, երբ ազգային

յոյսերու ամէնէն վարդազոյն օրերուն, իր տնունը միայն կը թրթռար հայ շրթունքներուն վրայ. «Պէտք է որ ամէն ցոյց եւ հանգիստակատարութիւն յետաձգուի յաւագոյն օրերու, երբ մեր հիւծիչ մտահոգութիւնները փարատած ըլլան և մեր բաղձանքները իրականացած»: Ու, կ'ըսէր երկու օր առաջ ստացուած հետազիր մը, պատուիրած էր գրով որ յուզարկաւորութիւնը կատարուի բոլորովին պարզ կերպով, en stricte intimité, ամենասեղմ մտերմութեան մը մէջ: Ընթարկաւ մեծութիւնները կը խորշին սուտ ու գոհնիկ փառքերէն. բայց ճշմարիտ փառքը, ժամադիր կ'ըլլայ իրենց անհրաժեշտօրէն, զանկու համար գիրենք օր մը, ուչ կամ կանուխ, արդարութեան լոյսին տակ, խիղճերուն խորը, կամ պատմութեան ստուերին մէջ:

Իր նկարագրին մէկ ուրիշ ցայտուն գիծն էր իմաստութիւնը, կամ, այս բառին աւելի գործնական առումով, ողջմտութիւնը: Իր բարեբարեկու կերպին մէջ բարիքի իմաստասիրութիւնը կար կարծես: Ազնիւ գործ է խղճալ աղքատի մը կամ արգասատիլ տղէտի մը վրայ. բայց աղքատութեան և տղիտութեան դէմ պայքարիլ՝ առաքինութիւն է ինքնին: Պօղոս Նուպար չմերժեց բնաւ առաջինը, բայց տիրականօրէն կատարեց երկրորդը: Ու այդ ամէնը ըրաւ վեհ հոգիի մը վճռականութեամբ, բայց նոյն տառն իր բարեգործութիւններէն պատկառող խոնարհ մարդուն այն համեստութեամբը, որ հարուստներուն ալ երբեմն այրիին չիկնուեով ձգել կուտայ իրենց դուստրները հանրութեան, այսինքն Աստուծոյ գանձանակին մէջ:

Ասոր համար է որ իր ձայնին չեշտը, որուն մէջ հեղինակութեան մը սաստը կար, ոչինչ ունէր սակայն պակուցիչ. և ընդհանրապէս խրախոյսի ներշնչում միայն կ'ազդէր տարտամ մտայնութիւններուն կամ կարկամ կամէութիւններուն, որոնք, անծանօթ ներքին մարդուն հեղութեանը իր մէջ, վարանքի կը մատնուէին յաճախ ի տես կամ ի լուր իրեն: — Համակ հեղ, համակ կորով ու շարժում, որ արեւելքի թէ և արեւելեան ամէնէն հեշտ երկրին մէջ ծնած ու սնած, չճանչցաւ երեք բաղմոցն ու համրիչը, ևս զօր կը տեսնէիր իր աշխատութեան սեղանին առջև, «միտքը

անդադրում հետապնդումի մը վաղքին մէջ» միշտ կարծես: Իսկ իր հոգին, ո՛հ, խիստ արտաքինի մը ներքե թուն քաղցրութիւնն էր ան. կարծրակէտք եւ փռատ միջոց, որուն մէջ կար սակայն, անուշահամ հոյզը. իր բարքը, ազնուական եւ խորապէս հեղ սրտի այն վեհութիւնը, որ կնիքն էր իր նկարագրին:

Բնախօսական կարգին մէջ, որպէսզի առողջ եւ մաքուր լինի՝ պէտք է որ ներսէն սկսի եւ ներքնապէս կատարուի աճումը: Օրէնքը նոյն է նաեւ հոգեկան աշխարհի համար. մեծութիւնը այն ատեն միայն ազնիւ է եւ իրական, երբ սիրան է անոր ազդեցութիւնը: Հոգեբանական այն երեւոյթը իրողութիւն մըն էր մեծանուն հանդուցեալին վրայ: Իր մտքը նստած, երբ կը նայէիր իրեն, կամ կը լսէիր զինքը, կ'զգայիր թէ առջեւն եւ անառիկ կամ անառարկելի մեծութեան մը, որ զրաւիչ էր բայց ոչ ճնշող, եւ որ բոլոր սիրուելիք բաներուն, պիտի կրնայի ըսել ամէնէն մեծարժէք զազափաբներուն, հմայքն ունէր:

Իր կեանքի հուսկ յետին իր օրերուն, երբ ոյժի, զօրութեան եւ ազդեցութեան ամէն մարմնական ձեւ կամ ձայն անցած հեռացած էին այլեւ իրմէ, դեռ կը մնար, մեծութեան այդ շուքը միայն, շնորհքը իր հոգիին, որ հզօր մնացած էր միշտ իր զգացողութեան եւ մտածումին մէջ: Անոնց, դեռ չխորտակուած իր սրտին եւ խորհուրդին, բարի եւ լուսաւոր ազդեցումը էր որ իր մահուան մահիճին մէջէն ալ, ողևարքէն դեռ ամիս մ'առաջ իր սէրը կ'ուզէր ազգին:

Իմ ամենազերջին այցելութեանս միջոցին, երբ եւրոպահայ սփիւռքին յարգանքը կը հաղորդէի իրեն, ու կը փափաքէի ընդունիլ իր ողջոյնը՝ եղիպտոսի իր հայրենակիցներուն, «Համոզուած եմ, չըննչաց, հայրենասէր ժողովուրդ ենք մենք. մեր թերութիւնները բացատրելի թերութիւններ են ընդհանրապէս. մեղք որ խաբեր են մեզ...»: Ու երբ, «Թող հանգարտ լինի Ձեր խիղճը Վսեմ. Տէր, յարեցի իսկոյն, դուք լրիւ կատարեցիք Ձեր պարտականութիւնը. Ձեր ըրածը պիտի չկորսուի ազգին կեանքին մէջ», սեղմուած հեքով մը հաղիւ բռնելով արցունքը, որ արդէն փայլեցուցեր էր իր նայուածքը, «Իմ

սէրս ամէնուն, ամբողջ ազգին», եղաւ իր վերջին բառը:

Երջանիկ ձերունի, որուն կեանքն համբուն՝ կեանքը եղաւ իր ազգին:

* * *

Ձեմ կրնար մոռնալ տպաւորութիւնը զոր ընդունած էի իրմէ, երբ, իբրեւ ուխտատեղիէ մը, դուրս կ'ելնէի մահամերձ Հայրենասէրին սենեակէն:

Ու հիմա, մինչ կը խորհիմ արցունքներէ դեռ թաց իր գերեզմանին վրայ, ուր հանգչեցուցին իր մարմինը, եւ մինչ կը նայիմ այս պատկերին, ուսկից, իբրեւ յատկանշականութեան մը խորէն կարծես կը դիտէ զմեզ, ինձ կը թուի լսել հետեւէն եկող խոր բայց ջինջ ձայն մը որ կ'ըսէ. «Ո՛հ, հոս եւ հոն չէ իր տեղը, ո՛չ այն ափ մը հողին տակ, զոր թռչնիկ մը երկու ոտով մով պիտի չափէր, եւ ո՛չ այս չըջանալին թառը, ուր իր գէմքին քարացած զիծերը կ'անշարժանան. Հայութեան սիրտն է միայն իր հոգւոյն վերջին հանգստարանը, ու անոր պատմութիւնը՝ այն չըջանալը, որ միայն պիտի կարենայ ընդգրկել իր պատկերը»:

Խաղաղութիւն իր հոգւոյն, եւ փառք իր յիշատակին:

ՊՕՂԱՍ ՆՈՒՊԱՐ

Մեծ մարդ էր, Պօղոս Նուպար.

Պէտք էր ապրէ իրեն իսպար

Ազնիւ, վեհանձն համեստութեան,

Իրեն արձէք, իբր զազափառ:

Մեծ էր մքսով, իբր վրսեմ

Շուք մը ունէր. սակայն նրսեմ

Չունէր մէք իր խօսեցում.

Նըրքներ իրեն օրհներգ հիւսնէ:

Ան տպեցաւ հայտ համար.

Ինչ որ ունէր Ան՝ ամենամար

Տուաւ Ազգին արձով, խելով.

Հարուսեցեալ եղաւ իսպար:

ԲԱԿ

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

Ամիրտովլարի Ամասիացոյ ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԵՏ կամ **ԲԱՌԱՐԱՆ, ԲԱՇԱՍԱԿԱՆ ՆԻՒԹՈՑ**, ի յոյս էած հանդերձ ծանօթագրութեամբ է. **Ե. Բասմաչեան**, Փախ-Ասենապէս Պարսի Հայ Բճ. կական Միութեան: Վիեննա, Միսիստեան՝ Տպարան 1927. մեծ 8^o էջ XLIV + 1Ա + 766 + 2. Տոխ. Գինն է՝ **150** Ֆրանս. Ֆր.: Առաջին զիւր Կ. Ե. Բասմաչեան Մատենադարան:

Իր տեսակին մէջ հոյակապ գործ մըն է որ Բանասէր Կ. Ե. Բասմաչեանի երկար-ողի պրպտումներուն և խնամոտ աշխատութեան շնորհիւ լոյս տեսած է Վիեննայի Միսիստեան Հարց գեղարուեստական Տպարանէն:

Այս հրատարակութիւնը հետաքրքրական է հետեւեալ զիտակէտներէ. Հեղինակը, Անոր գործը և Հրատարակութեան նպատակը:

Ամիրտովլար բնիկ Ամասիացի է, ծընընդեան թուականը չէ՝ ճշգրտած, բայց կը կարծուի թէ ծնած ըլլայ «ԺԵ. դարու առաջին քառորդին մէջտեղերը. իսկ մեռած է 1496 Դեկտմ. Տին» (էջ ԻԱ.):

Հետաքրքիր և զիտական խառնուածք ունեցող բժիշկ մըն է Ամիրտովլար, որ իր բժշկական ուսումն ու արուեստը կատարելագործելու համար ո՛չ միայն կ'ուսումնասիրէ հին բժիշկներու գործերը, արարելէնով, այլ նաեւ շատ երկիրներ կը պտտի՝ անձամբ ծանօթանալու համար իրեն ժամանակակից բժիշկներու, և հետագոտելու բոյսերն ու զեղերը և վերջապէս կը հաստատուի Օսմանցիներու նոր մայրաքաղաքը Կ. Պոլիս, և իրեն բժիշկ և վիրահատ համբաւ կը շինէ, և կ'արժանանայ «ճառահ պաշի» (= վիրաբու ժապետ) և «պօստանճի պաշի» (= անձնապահապետ), հաւանաբար կ'ըլլայ նաեւ Յաթիհի պալատական բժիշկներէն մէկը (էջ ԻԴ — ԻԵ):

Ամիրտովլար գրած է բժշկական չորս գիրքեր.

1. ՕԳՈՒՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ, Փիլիպպոսոյ մէջ 1466 — 1469:
2. ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԵՏ, Կ. Պոլսոյ մէջ, 1478 — 1482:
3. ԱԽՐԱՊԱՏԻՆ, Կ. Պոլսոյ մէջ, 1481:

4. ԳԻՐԳ ԹԱՄԿԱԿԱՆ, Կ. Պոլսոյ մէջ 1474 ին.

Ամիրտովլար կը ձեռնարկէ բժշկական գիրքեր գրելու՝ ուղղակի հայ ժողովուրդին տալու նպատակով լաւագոյն գործերը: Բժշկական շատ գիրքեր կան, որ արարել են և հետեւաբար՝ անմատչելի Հայոց, իսկ իրմէ յառաջ եղող հայ բժիշկներ գրած են բժշկական գիրքեր, որոնք սակայն համառոտ են և չեն դոհացներ հետաքրքիրները: Առաջին անգամ ինքն Ամիրտովլարն է որ հետեւելով նշանաւոր բժիշկներու և աշքի առջեւ ունենալով նաեւ զիտութեն գրուած գործեր, կը ձեռնարկէ գործի, նախընտրելով իր ժամանակին խօսուած ժողովրդական հայերէնը:

Այս մասին սա՛ բացատրութիւնը կուտայ.

— «Եւ այլ ասենք թէ է՛ր եղաւ այս գիրքս աշխարհարառ: Եւ այս երեք պատճառի. Ա. այն է որ ամենայն մարդ չկարէ քերական կարգալ և կամ արտաքին գըր-հանք, որ զայս խրթին բաներն յիմանայ, այնոր համար եղաւ աշխարհարառ: Եւ Բ. պատճառ այն է աշխարհարառ լինալուն, որ ա՛յլ բառեր խառնեցաք, որ մեք ի տաճկաց (= յԱրարացոց) բառն գտաք, և պիտուան էր այս բառերս մեղի, վասն տաճկանց ստածումն առնելուն համար: Եւ Գ. պատճառ այն է որ կայ ի յայս գիրքս Յունարէն, Պարսկերէն, Հոռոմերէն, Թիւրքերէն, անոր համար որ այս գիրքս ի ա՛յլ լեզուէ փոխել է. անոր համար շատ բառեր կայ ի այս գիրքս, և է աշխարհարառ: Եւ թէ Աստուած աջողէ, գրոցս ի վերջքն յիշեմ մէկ ազէկ բառգիրք մըն, որ զի՛նչ որ դժար բառ կայ հայ լեզուաւ՝ պատմէ. զի որ կարգացողն զիւրութեամբ հասկնայ, և ուսնողն զիւրութեամբ ուսանի, և իսկի ծածուկ իրք չմնայ, և յայտնի» (էջ 25):

Իսկ զգիրքի անունին և նպատակին համար կ'ըսէ.

— «Եւ զայս գիրքս շինեցաք և ստուգեցաք շատ բառերով և պատմութիւններով. զի որք կարգան՝ հեշտութեամբ յիմանան, և անգէտն ո՛չ աւգտի ի սմանէ. և անուանեցաք զայս գրոցս անուն՝ ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԵՏ. և պարտական եմ զիտանականն, և ծառայ՝ ամենայն փիլիսոփայիցն:

եղիր հետեող խմատութեան հետ.
եթէ չուսանիս՝ բժիշկ եւ անգէտ.
Լինիս դու գիտուն, արա՛ւ բանիս պէտ.
Գրոցս անունն է՝ ԱՆԳԻՏԻ ԱՆՊԷՏ:
(էջ 2):

Ստուգիւ Ամիրտովլաթի բժշկական գիրքերը կը բովանդակեն հարուստ դանձ մը՝ զեղարանական նիւթերու և աշխարհարար լեզուի բառամթերքի կողմէն:

Նիւթի կողմէն, որովհետեւ Ամիրտովլաթ տուած է զեղարոյսերու ո՛չ միայն օտարալեզու անունները, այլ նաեւ հայերէնները: Իսկ աշխարհարարի պատմութեան համար շատ հետաքրքրական է հայ բժշկական արտիստները: Այնչափ ուսմանցուցած կամ ժողովրդականացուցած է Ամիրտովլաթ իր հայերէնը՝ ո՛րչափ կը ներէ իր նիւթը. որովհետեւ քերականօրէն զրարոր ձևեր ալ կիրարկած է իր ուսմանքին մէջ:

Երբ ուշիմ ընթերցողը խնամքով աչքէ անցնէ Ամիրտովլաթին այս գործը, կը գիտէ որ բուսական թագաւորութիւնը ի՛նչ պիտի բուծի և դարմանի՞ զօրութիւններով օժտուած է: Առասպելական ըլլալու չափ բուծի՞ յատկութիւններ կը վերագրուին բոյսերու. զոր օրինակ Վայրի սիստրիս (Teucrium Scordium) համար կը հաւատնէ «թէ մեռելին յանձն աւժն կամ ի փորն ընուն՝ իսկի չի փտի»: զարձակ մեղ պատմեցին հին բժշկականքն թէ յանկարծակի պատերազմունք եղև ի Հելլենացոց յերկիրն. եւ շատ մարդիք ջարդեցան ի դաշտին մէջն. և այն դաշտն այս խոտէս շատ էր բուսեր. և մեռելին այս խոտիս վերայ պառկել է. և կային այլ մեռածներ՝ որ այս խոտս չկար տակն նա, կամուն Աստուծոյ, այն մարդիք որ այս խոտիս վերայ պառկեր էին՝ նոցա մարմինքն չի փտեցան. և այն պատճառով իմացան որ քան դառաջի սկուրտիսն լաւ է և պատուական, և ի բան տարան», (էջ ԺԸ—ԺԹ և 435):

Բոլոր հին ժողովուրդներ, մա՛նաւանդ կանանց դասը, ինչպէս նաեւ մեր հայ մամիկներ, շատ լաւ գիտէին օգտագործել բնական կամ բուսական զեղերը: Զօրավար Անդրանիկ օր մը կը պատմէր ինծի թէ Սասնոյ լեռներուն վրայ, երբ իր զինւորները վերաւորուէին, արիւնհոսութիւնը

զաղրեցնելու համար իրենց առաջին և անմիջական դարմանն էր տեղւոյն վրայ կանաչ խոտ մը ժողվել, ձեռնել զայն և խմորի պէս զնել վէրքին վրայ և կապել. իսկ իրենց բնականօրէն վերադառնալէ հաջորդապէս տեղ կը զնէին բուսային սպեղանի մը, որ 24 ժամուան մէջ, կ'ըսէր, կ'սպիւնցնէ վէրքը:

Զօրավար, հարցուցի, ո՞ւրկէ կը ճարէիք այդ սպեղանին:— Սասնոցի մամիկ մը կար, լերան խոտերէն կը շինէր և եղջիւրի մը մէջ կը լեցնէր կը զրկէր մեզի, եղաւ պատասխանը:

Այսօր կարելի չէ քիչ շատ խորունկ ունէ վէրք սպիւնցնել 24 ժամուան մէջ՝ արդի գիտութեան կտրուկ հականեխականներու շնորհիւ:

Ամիրտովլաթի այս ԱՆԳԻՏԱՆ ԱՆՊԷՏ սքանչելի գիրքին մէջ կը տեսնենք բոյսերու հրաշագործ նկարագրութիւնը, կարծես մոգական աշխարհի մը մէջ գտնուած ըլլար ընթերցողը, եւ կը զարմանաս թէ ինչո՞ւ համար մոռցուած է բուսական գիտութիւնը և հիմա քիմիական զեղերու գերի եղած է մարդկութիւնը, առանց կարենալ ձեռք բերելու անկէ պէտք եղած արագ և կտրուկ դարմանումը:

Կ. Յ. Բասմաջեան այսպիսի հետաքրքրական գիրք մը հրատարակած է, գիրք մը, որ եթէ Ամիրտովլաթի ատեն անպիտան անգիտելու, իսկ այսօր պիտանի կրնայ ըլլալ թէ՛ բժիշկներու, թէ՛ զեղագործներու և թէ՛ բանասէրներու:

Գործը իր նպատակին ծառայեցնելու համար հմուտ Հրատարակիչը իր կողմէն կատարած է այն բոլոր աշխատութիւնը, որ գիտական արժէք ունին և առանց ատոր կարելի պիտի չըլլար հաճելի և հետաքրքրական դարձնել Ամիրտովլաթը հայ ընթերցողներու:

Հատորս կը բացուի Բասմաջեանի և իր հայանուէր Տիկնոջ լուսանկարով, և նուիրուած է ներա յիշատակին. որովհետեւ Տիկին Բասմաջեան աշխատութեան յիշատակիլ բաժին մը ունեցած է այս հատորին պատրաստութեան մէջ և հոգացած է նաեւ ատոր հրատարակութեան ծախքը:

Բասմաջեան իր հրատարակութիւնը ծանօթացնելու համար գիտական աշխարհին, ֆոանսերէն ներածութեան մը մէջ ակնարկ

մը նետած է հայ բժշկութեան և Ամիրտով-
լաթի գործերուն վրայ. ասոր կը յաջորդէ
Այբուբենական ցանկ մը այն հիւանդու-
թեանց ևւ ատոնց դարմանումին համար
գործածուած նիւթերուն, որոնք կը յիշ-
ուին Ամիրտովլաթի այս հատորին մէջ.
դարձեալ ֆոանսերէն ուրիշ ցանկ մը բժշ-
կական Հիւթերու (Substance), ասկէ ետքը
«Յառաջարան Հրատարակչին» (էջ Ա—ԼԱ)
և զբարար «Յիշատակարան դժողին» (հե-
տեկով հին Ձեռագիրներու յիշատակա-
րաններու ոճին), Վերջապէս, ընդարձակ
«Նախարան»ով մը կը մտնենք Ամիրտով-
լաթի բուն գործին մէջ, (էջ 1—25), որ կը
բռնէ 26—624 էջերը:

Բասմաջեան Ամիրտովլաթի բնագիրին
վրայ աւելցուցած է

ա) «Յուցակ դեղաբանական բառերու»,
ատոնց առջև դնելով հատուածներու թուա-
համարները (էջ 624—691),

բ) «Յուցակ Ախտաբանական բառերու,
և բացատրութիւններու», որոնց առջև
փակագրիծներու մէջ, դրուած են ֆոան-
սերէն համանիշները (էջ 692—753), Բաս-
մաջեան այս ցուցակը պատրաստած է ա-
ջակցութեամբ Դոկտ. Ս. Սօլաքեանի:

գ) «Յուցակ յատուկ անուանց» (էջ 754
—759),

դ) «Յուցակ անձանօթ բառերու» (էջ
760—762),

ե) «Ուղղելիք և յաւելիլք» (էջ 763),

զ) «Պայմանագրութիւն Կ. Յ. Բասմաջ-
եան հիմնարկութեան» (էջ 765—766):

է) «Լուսանկարուած Զ. Տախտակներ»,
(Պօրանեան Ձեռագրին մագաղաթեայ պաշ-
պանակներէն մին, Տխտ. Ա., Պօրանեան
Ձեռագրին առաջին էջը, Տխտ. Բ., Լոն-
դոնի Ձեռագրին վերջին էջը, Տխտ. Դ.,
Վիեննայի Մխիթ. Մատենադարանի Թիւ
624 Ձեռագրէն էջ մը, Տխտ. Դ., Պարխի
Ազգ. Մատենադարանի Թիւ 244 Ձեռագրէն
էջ 3 ա, Տխտ. Ե., Պարխի Ազգ. Մատե-
նադարանի Թիւ 249 Ձեռագրէն էջ 7 ա:

Կարժէ որ այս հատոր գտնուի իւրա-
քանչիւր գրասէր հայու գիրքերուն մէջ:

Թերեւս զինք, 150 ֆոանսական ֆր.,
անմատչելի դարձնէ այս ճոխ հատորը նոյն
խոկ գիրքի ամէնէն ջերմ սիրահարներուն.
բայց պէտք է խոստովանիլ միանգամայն

որ ծախքոտ հրատարակութիւն մըն է ա-
սիկա, որուն զուտ հասոյթը դարձեալ պի-
տի յատկացուի նմանօրինակ գիրքերու
տպագրութեան, որոնք պատրաստ են Բա-
նասէր Բասմաջեանի ձեռքին տակ:

Անգուգական նպատակ մը կ'աւելնայ հայ
մատենագրութեան վրայ Բժշկագետ Ամիր-
տովլաթի այս գործին շքեղ հրատարա-
կութեամբը, որ արժանի է անկեղծ շը-
նորհաւորութեանք բոլոր անոնց, որ գիտեն
գնահատել հայ մտքին գործունէութիւնը:

Բ. Ե.

Հայկ ԱճԷԼՄԱՆ, ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ «Եր-
ւագող վճից հայրենեաց Հայոց». Առաջին Հասո-
րէնագրութիւն, Հայր Սիմոն Եւսեփեան—Աստու-
նի Յառաջարկով. Թատրիկ Աստուսականի Հայոց
Թեմական Տպարան, 1929. 8^օ էջ լայն 856. զին 9
շիլին:

Մեծ եղած է Խրիմեանի ժողովրդա-
կանութիւնը, շնորհիւ իր հայրենասիրա-
կան ինքնայատուկ գործունէութեան: Անոր
խօսքն ու գրիչը նուիրուած է իր ազգային
երկու պատմական հաստատութիւններուն,
Հայրենիքի և Եկեղեցւոյ փառաբանու-
թեան: Ան նուազեց հայ հայրենիքին վիշ-
տը, ան քարոզեց իր Մայրենի Եկեղեցւոյ
ոգին:

Հայրենիքը՝ հո՛ղն է Խրիմեանի համար,
սուրբ և անբռնարարելի իրաւունքը հայ
մշակին: Ամբողջ Հայաստան մշակ մըն է,
որու երկունքին և քրտինքին արդիւնքը
բռնաւորներ կ'ուտեն: Հայ մշակը պէտք է
տէրը ըլլայ իր իրաւունքին, պէտք է ազ-
նըւացնէ հողագործութեան կերպերը և վե-
րաշինէ իր տունը:

Եկեղեցին հայկական սուրբ և մեծ
ընտանիքն է Խրիմեանի համար: Աւետա-
րանի պարզ և կենսագործող ճշմարտու-
թիւնները միայն պէտք է քարոզուին հոն,
հայ ժողովուրդը իր երգիքին տակ և իր
արտերուն մէջ պէտք է ոգեւորուի Աւե-
տարանով:

Կարելի է այսպէս երկու որոշ խումբի
վերածել Խրիմեանի հայրենասիրական և
կրօնական գրականութիւնը և գործունէու-
թիւնը:

Նիւ Եօրքի Հ. Կ. Հիմնարկութեան կողմէ, ողբացեալ Պատրիկ Էֆ. Կիւլպէնկեանի ծախքով հրատարակուած Ամբողջական Երկերը Խորմեանին, շատ մեծ զիւրու-թիւն կ'ընծայէ քննադիրելու և վերլուծելու համար Խորմեանի գրականութեան այս երևոյթը:

Թորգոմ Սրբազան իր Խորմեան Հայրիկ հատորով, գրական, խմատասիրական և պատմական վերլուծումի մէջ պատկերացուցուց Հայ Եկեղեցւոյ այս Հայրապետը, անվերապահ համակրանքով, ինչ որ մեծապէս կը նպաստէ Խորմեանը հասկնալու համար իրրե քարոզիչ, իրրե մատենադիր և իրրե հայկական դատի նուիրուած հայրենասէր:

Հայկ Աճէմեանի այս հատորը կուգայ վաւերագրութեան պարտութեայ մը աւելցնել Խորմեանի կեանքին և գործքին ուսումնասիրութեան վրայ:

Հ. Աճէմեանի գործը պիտի բաղկանայ երեք հատորներէ: Միւս երկու հատորներ պատրաստ են տպագրութեան համար:

Ամբողջ գործը պատրաստուած է ժամանակագրական կամ պատմական ծրագրի մը վրայ. շատ փափաքելի է որ լոյս տեսնեն տոտնք ալ և ամբողջանայ այսքան յոգնութեամբ և զոհողութեամբ խմբագրուած մեծածաւալ գործ մը:

Արժէքաւոր է Հ. Աճէմեանի Խորմեան Հայրիկը, իր բովանդակած վաւերագրութեան, որոնց մէջ ուշագրաւ են մա'նաւանդ հազուագիւտ լուսանկարներ. վասն զի անոնք են որ կ'ազնորեն պատմութիւնը և շատ բան կը լուսարանեն, և կը լրացնեն պատմութեան թերիները:

Շատ փափաքելի էր որ այս գործը տպագրուէր այնպիսի տպարանի մը մէջ որ կարելի եղած դիւրութիւնները ունի արուեստին գեղեցկութեամբ աւելցնելու համար գիրքին հրապոյրը: Ի՞նչ գործը տպագրուած է Թաւրիզ՝ Հայոց թեմական տպարանին մէջ, — իսկ աղուոր կողքը Վենետիկ Ս. Ղազարու տպարանին մէջ — անհարթ թուղթի վրայ և այնպիսի խոշոր գիրերով, որոնք գիրքին ծաւալը մեծցնելու միայն կը ծառայեն:

Հ. Ա. Երամեան, գեղազէտ խառնուածք մը, թիթեռնիկի պէս զուարթ և փաղկուն տղերով պատկերացուցած է

Հայոց Հայրիկը իր կեանքին բոլոր հանգրուաններուն վրայ:

Իսկ ինքն Հ. Աճէմեան, բնիկ Վանեցի, հետաքրքիր հաւաքող մը և հիացող մը իրեն հայրենակից Հայրիկին, կը նկարագրէ Վանը և ա'յն միջավայրը, ուր ծնաւ ուճացաւ Հայրիկ, և պատմական տատնաւորութեամբ կը ներկայացնէ Հայրիկին աճումն ու յառաջացումը հասակի և գործունէութեան փուլերուն մէջ:

Գործը հետաքրքրական է ըստ ինքեան, և արժանի քաջալերութեան:

Միայն երկու դիտողութիւն:

(ա) Այս գիրքին մէջ Խորմեանի վերագրուած նամակի մը վաւերականութիւնը տեղի տուաւ գիտողութիւններու հայ մամուլի մէջ: Որպէս զի փարատի ամէն կտակած, կ'արժէ որ այդ նամակին նմանահանութիւնը հրատարակուի յաջորդ անտիպ հատորներէն մէկուն մէջ:

բ) Մեր մէջ շատ սխալ մտայնութիւն մը կայ: Երբ անձ մը, ողջ կամ մեռած, առարկայ ըլլայ ուսումնասիրութեան, ուսումնասիրողներ կ'իյնան երկու ծայրայեղութիւններու մէջ: Կամ կը փառաւորեն անվերապահօրէն և կամ վար կը զարնեն անխղճօրէն: Մարդիկ, ո'ր տատնանի և գիրքի ալ պատկանին, մա'րդ են, և ունին իրենց յատուկ թերութիւնները, որոնք առարկայ չեն ըլլար ուսումնասիրութեան: Եթէ մարդուն առաւելութիւնները արժանի' են զովեստի, որովհետեւ օրինակելի արժէքներ են տոտնք, ինչո՞ւ համար չներկայացուին նաև անոնց թերութիւնները, որոնց ուսումնասիրութիւնը մեծապէս կ'օգնէ ուրիշներուն որ զգուշանան այդպիսի թերութիւններէ:

Մենք ա'յնպիսի վաւերագրութեան հանդիպած ենք, զոր օրինակ, Խորմեանի ներքին կեանքի մասին, որոնք չափեկան են. լսած ենք այնպիսի պատմութիւններ, որոնք բուն Խորմեանը կը պատկերացնեն, իրրե մարդ, իրրե եկեղեցական, իրրե աշխարհի բաները լաւ գիտցող փիլիսոփայ դիտող մը:

Ըստ մեզ ունէ կենսագրութիւն միշտ թերի է և կողմնակի հանգամանք մը կ'ունենայ՝ երբ չի կրնար կամ չի համարձակիր մարդը ներկայացնել իր նկարագրին ամբողջ գիծերովը:

Պատմութեան անրոնարարելի իրաւունքն է գիտնալ և արձանագրել մարդկային կեանքի թատերաբեմին վրայ քաւող մեծ դէմքերուն ֆիզիքական, հոգեկան և մտաւորական բոլոր արժէքները:

Բ. Ե.

Հ. Ա. Ղազիկեան, ՄԻՒ ԴՐԷՔ . . . , ԱՅԼ ՊԵՐՅԷՔ . . . , Հայ լեզուի համար ուղղագրական դասեր. Երկրորդ Տպագրութիւն բոլորովին փոխուած. Վենետիկ Մխիթարեան Տպագրութիւն. 1930. 80 էջ 310:

Ղազիկեան մեր նոր հայերէնի վարպետներէն է, և միանգամայն լաւ ուսուցիչը անոր: Այս դասագիրքը կը պատկերացնէ ուղղագրական այնպիսի սխալներ, որոնք անդամանելի կերպով տարածուելու վրայ են մեր արդի գրականութեան մէջ: Մենք այնպիսի լաւ աշխարհարար գրողներ ունինք որ չեն անդրադառնար իրենց ուղղագրական և երբեմն ալ քերականական սխալներուն վրայ. զոր օրինակ, ամէնէն շատ քուած քերականական սխալներէն մէկն է Յեւ այսու: Քերականութեան քիչ շատ հմուտ մէկը զիտէ որ յեւնախաղորդութիւնը սեռական խնդիր կ'առնէ, յետ այսորիկ. յետ գրութեան և ո՛չ թէ զործիական յետ այսու, յետ գրութեան: Բացի մեկ, բացի անոնք. ահա՛ սխալ մըն ալ: Ռամիկն իսկ չ'ընէր այս սխալը: Ան կ'ըսէ. բացի մեզմէ, անոնցմէ, որովհետեւ քաջառական խնդիր կ'ուզէ քացի նախադրութիւնը: Երբեմն անուշադրութեամբ, երբեմն ալ տգիտութեամբ ընդհանրացող սխալներ կը տեսնենք նոյն իսկ լաւ գրողներու գրուածքին մէջ և լաւ խօսողներու բերանը:

Հիմայ Զուարթնոց անուն թերթ մը կը հրատարակուի: Այս բառին տուած են այնպիսի խմատ մը որ բոլորովին հակաքերական է. զոր օրինակ կ'ըսեն. Զուարթնոցի բնակիչներէն:

Զուարթնոց յատկացուցիչ մըն է, որուն յատկացեալը՝ եկեղեցի, զեղջուած է: Իր լման ձեռով եկեղեցի Զուարթնոց, որ է հրեշտակներու, զուարթուններու եկեղեցի: Ուղղականը Զուարթնոց է, իսկ սեռականը՝ Զուարթնոց, Հետեւորար սեռական մը

(Զուարթնոց) կրկին սեռական չ'ըլլար (Զուարթնոցի)(*)։ Մինչ «Գրականութեան և Գեղարուեստական պարբերաթերթին» հիմնադիրները կարծեր են որ Զուարթ ստորագրիւն վրայ նոց մասնիկը աւելցուած է և եղած է Զուարթ+նոց, ճիշդ հիւրա+նոց, յիմար+նոց, ձմեռ+նոց, ամառ+նոց, հիւանդ+նոց, խոհ+նոց, ամբար+նոց, արհեստ+նոց, ևայլն, ևայլն բառերուն պէս, իբրեւ թէ ըսած ըլլային Զուարթներու տեղ կամ բնակարան, մինչ թերթին անունը առնուած է Զուարթնոց եկեղեցիին:

Ինչ և իցէ, գրական հրապարակը ողջուած է այսպիսի տարօրինակութիւններով որոնց կարգին է մեծեղակերպ, խորհեղակերպ ևայլն, թէեւ, փափք Աստուծոյ չեն ըսեր կոռեղակերպ, խօսեղակերպ, քֆեղակերպ, խնցեղակերպ, երբայակերպ, ևայլն: Հ. Ա. Ղազիկեան կ'ուզէ մաքրագործել տիրող սխալները, մօռնեակիկ պէս կը պոռայ ամէն օր, կը խօսի, կը բացատրէ, կ'ստուգարանէ, բայց որո՞ւ կ'ըսեն. . . :

Գրական, բանասիրական արժէք ունեցող աշխատութիւն մըն է Ա. Ղազիկեանի Մի՛ գրեք . . . , Այլ գրեցի՛ք, և մեր հայերէնի սիրահարներուն պարտքն է կարգաւ այդ քերականական, բանասիրական և ուղղագրական դասագիրքը:

Հ. Արսէնի ոճը զուարթ է և հաճելի. սուր երգիծանքներ ունի, մեղմ խայթոցներ, պիտի ըսէի նաեւ անմեղ հայհոյանքներ, որոնք չեն ցուցներ, այլ կը մտրակեն:

Հեռագայ և փառահեղ բառերուն ուղղագրութեան մասին իր տուած բացատրութիւնները չիտակ են: Յեռագայ, թէեւ յեռոյ կամ ետեւէն կուգայ, բայց ընդհանրացած սխալ մըն է (դաւարը մեղհուրեւ, ինչպէս կ'ըսուէր թիւրքերէնի մէջ) ապրելու իրաւունք ստացած է: Սխալ է փառահեղը յով գրել, հետեւելով ծայրայեղին: Ինքզինք բոլոր իբրեւ ուղղական հոլովիլը գաւառաբարբառային երեւոյթ մըն է. չ'արժեր պաշտպանել անոր գոյութիւնը գրականութեան մէջ:

Կ'ստուգեմ, կ'սխալուիմ, ևայլն նոյնչափ

(*) Թէեւ քիչ չեն անոնք որ կ'ըսեն և կը գրեն վարդանանցի տուն, հանգէս. փառանգաւորացի աշակերտ. կրկնակի սեռական հոլովներ:

շիտակ է որչափ կը ստուգեմ, կը ստացուիմ: Գուրեան Սրբազան այս բառերուն հնչիւնին կը նայէր. այսինքն՝ ականջով կը դատէր և ոչ թէ աչքով:

Օգտունք ասիւթէն մատնանիւ ընելու համար Սուրիա սխալագրութիւնը: Վստահ եմ որ Հ. Արսէն ուրախ պիտի ըլլայ որ կ'օգնեմ իրեն: Ուղիղը Սիւրիա է, եթէ չէք հաւատար բացէ՛ք Գործք Առաքելոցը (Ժե, 23) և տեսէք. «Առաքեալք և երկնցոնք և եղբարք, յԱնտիոք և ի Սիւրիա և ի Կիլիկիա»: Յունարէնը Συρία է և նախնիք տառադարձուցեր են Սիւրիա. ուրիշ տեղեր ալ ուղղակի Ասորի՛ գրեր են նոյն յունարէն բառին տեղ (Անդ. 41. Մտթ. Ժե. 25. Գղտ. Ա, 21 ևն.) իսկ Ֆոանսերէն՝ Syrie. Անդ. Syria:

Հ. Արսէնին ուղղագրութիւն սորվեցնելու մեթոտը շատ հրահանգիչ է: Երանի՛թէ բոլոր գրողներ խնամքով կարգային այս հմտացուցիչ գրքոյկը:

Բ. Ե.

ՅՈՒՇԱԳԻՐՔ

ԹՐԱԿՆՈՅ ԵՒ ՄԱԿԵՒՈՆԻՈՅ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐ.— Հեղինակ Ա. Ե. Մակարեան Տպագրութիւն «Հոբիոն» օրաթերթի—Սեւանիկ:

Այս գործը որ հրապարակ ելաւ ներկայ տարւոյ սկիզբները, կը կազմէ սառսար հատոր մը, 640 մեծադիր էջերով: Գիրքը պատկերազարդ է, կը պարունակէ 160էն աւելի պատկերներ, կենդանադրերներ, ազարող անձերու և պատմական դէմքերու, հին դրամներու պատկերներ, խմբանկարներ և տեսարաններ:

Այս աշխատութեան մէջ հեղինակին նպատակը եղած է, ինչպէս գիրքին ախաղսէն յայտնի կը տեսնենք, պատկերացնել Թրակիոյ և Մակեդոնիոյ Հայ գաղութներու կեանքը, ներկային և անցեալին մէջ. որչափ կարելի է, հաւատարիմ մնալով իրականութեան և պատմական հարադատութեան:

Հեղինակը իր այս զիտումով ծանր աշխատանքի մը լծուած է, որ իրմէ պիտի պահանջէր հմտութեան մեծ պաշար, պատմական բազմակողմանի ծանօթութիւն, համ-

բերութիւն, յարատեւութիւն, ժամանակի և դրամի ահագին զոհողութիւն: Եւ եթէ այս հսկայական ձեռնարկին մէջ նեղուելու քաջութիւնը պակասած չէ իրեն, այս իսկ, այդ տեսակ գործի մը պատրաստութենէն անխուսափելի եղող շատ մը թերութիւնները և մոռացումները անտեսելով հանդերձ, գնահատութեան լաւ նօթ մը կը կազմէ իրեն համար:

Մեր ազգային ներկայ իրականութեան մէջ, ուսուցչի մը համար (հեղինակը համեստ ուսուցիչ մըն է ազգ. վարժարանին մէջ, Սեւանիկ), որ չոր հաց մը ծամելու համար, ստիպուած է, ամէն օր, օրական 5-6 պահ դասախօսութիւն ընել, իր աշխատութեան պահերէն զուրս, գրադիլ դարձեալ դասերու պատրաստութեամբ և յաճախ սրբագրութիւններով, ներքին կրակէ մը մղուած իր հանգիստի շունչը ըստ պառել առանկ գործի մը պատրաստութեան համար, սեղանի մը վրայ կ'ըսէ, հիանալի է պարզապէս և ծափահարելի: Ես կը հիանամ Ե. Մակարեանի հոգեկան արիւթեան վրայ, նուիրուած՝ գործ մը արտագրելու գոր գրելին անգամ հերոսութիւն մը պէտք էր նկատուիլ:

Մակեդոնիան, սովորաբար ընդունուած կարծիքի մը համաձայն՝ եղած է հայ ցեղին սկիզբնական բնավայրը, անոր Ասիական մերձագոյն արեւելքին մէջ հաստատուելէն առաջ, և հեղինակը այդ պատմական վարկածին իրր ապացոյցներ կամ նշաններ կը կարծէ տեսնել, Մակեդոնիոյ սահմանին մէջ, հոս կամ հոն, տեղերու հին անուններ որոնք հայը, Արմենը, կը յիշեցնեն. մինչ հոն հայկական բնակութեան ունէ հետք չկայ ներկայիս:

Հեղինակը ամառնային արձակուրդներու ասիւթով իր պտոյտներուն մէջ, Մակեդոնիոյ և Թրակիոյ այլևայլ կողմերը, ցաւով տեսած է որ հայ գաղութներու կեանքը ստուգող արձանագրութիւններ կը պակսին բացարձակապէս, և ինք ուզած է ներկային մէջ գտնուածները, հին կամ նոր, շրթունքներէ կամ գրոյցներէ քաղուած, եկեղեցիներու արձանագրութիւններէ կամ գամբանադրերներէ առնուած, գիրք տակ արձանացնելով կորուստէ փրկել գանոնք. և իր գործին բովանդակ արժանիքը այս համեստ մտահոգութեան մէջ կ'ուզէ ամ-

փոփել. իր իսկ բառերով սա առաւելութիւնը կը վերապահէ իր աշխատութեան. «եթէ կրցի կարգ մը աստղծնէր կորուստէ փրկել և մեր գաղութին ճանչցնել իր պատմութիւնը, առիկա բաւական է կարծեմ» (Յասաջարան). Գործը իր բովանդակութեան մէջ կը պարունակէ Մակեդոնիոյ և Թրակիոյ արդի աշխարհագրութիւնը, Մակեդոնիոյ և Թրակիոյ պատմական անցեալը, քաղաւած այդ նիւթով զբաղող հեղինակներուն աշխատութիւններէն. ունի նաև Գրքին վերջին մասին մէջ, Բիւզանդիոնի Հայ կայսրերու պատմութեան նուիրուած ընդարձակ գլուխ մը: Գործին պատմական մասն է աս, որ ինչպէս կը տեսնենք, պատրաստուած է հետեոյութեամբ ձեռնհաս և մասնագէտ հեղինակներու:

Այս գործին ամէնէն ինքնատիպ, եթէ կարելի է այսպէս ըսել, հայ գաղթականութեանց — որոնց անցեալի պատմութիւնը շատ համեստ և անբաւական տեղ մը կը բռնէ — պատմութիւնը, իր արդի վիճակին և կեանքին մէջ, այդ կեանքին բոլոր երևաներն ալ պարզելով, եկեղեցի, դպրոց, աղբ. կաղմակերպութիւն, որբանոց, մասնաւոր հաստատութիւններ, յարանուանութիւններ, արուեստներ, վաճառականութիւն, ճարտարութիւն, երկրագործութիւն, Միութիւններ, քաղաքական կաղմակերպութիւններ, տիրող պետութեան հետ յարաբերութիւններ, և այլն, ներկայ հայ կեանքը իր բովանդակութեան մէջ, գործին ամէնէն հետաքրքրական և արժէքաւոր մասը: Այնպէս որ այդ կողմերու հայ կեանքի ամբողջական մէկ պատկերը ունինք առջևինս. «guide» ի մը մանրամասնութեամբ և օգտակարութեամբ:

Գիրքին թուղթը լաւ է, բայց տպագրութիւնը և պատկերներու արտաապուստը շատ խնամով չեն եղած: Ասկէ զատ կ'երևան նիւթերու դասաւորութեան և կարգի թերութիւններ, որոնք աճապարանք մը կը մատնեն: Մուտք գտած են հոն նաև նիւթին հետ կապ չունեցող մասեր, ինչպէս կարդ մը կենսագրութիւններ որոնք տեղ չպիտի ունենային այդ գործին մէջ: Փափաքելի էր որ կենսագրութիւնները այնքան չընդարձակէին գիրքը, եթէ կարելի էր, ամփոփելով զանոնք սեղմ տողերու մէջ:

Հեղինակը, Յ. Մակարեան, հանրածանօթ դէմք մը չէ մեր մէջ. ծնած է Պարտիզակ, աւարտած է տեղւոյն Ազգ. և Ամերիկեան վարժարաններու ընթացքը և եղած է մինչև հիմա ուսուցիչ զանազան Ազգ. վարժարաններու մէջ:

Մեր մէջ, ցաւալի տկարութեամբ մը, շատ անգամ գործերու և աշխատութիւններու արժէքը կը չափուին անունի մը հըմայքովը և անոր տարածուածովը. և շատ անգամ կ'անտեսուին անոր ներքին արժէքը և օգտակարութիւնը:

Փափաքելի էր որ գէթ զրչի արտագրութիւններու զնահատուծը ազատ ըլլար այդ տկարութիւնէն:

Յ. Մակարեան կրնայ հաւատալ որ օգտակար աշխատութիւն մը կատարած է՝ հայ կեանքով հետաքրքրուողներու համար, և արժանի է ամէն համակրանքի և գնահատութեան. և պէտք է որ ամէն կարգացող հայ հատ մը ունենայ այդ հատորէն, հայ արդի կեանքին մէկ կարևոր էջը իր աչքերուն զիմացը ունենալու համար, որ պատուարեր է իր աղբ. զգացումներուն:

Գ. Մ.

Պ. Ա. Ր. Գ. Ա. Պ. Ա.

Հոգիիս վրայ իրեք է խաւար,
Ամպեր մեղին. փայտակ լոյսի,
Մինչ պէտք ունիմ ես, Տէր, խախտյալ
Որ չըսամ անոր ճնշման իր տաւ:

Թարբի ամպին հոգիս կը ցանկայ,
Եւ Հօր ձայնին բազր ու հետապուր,
Պատմանքին ձիւն, իրեւ գրան կուռ,
Որ տպւիմ մէջ սիրոյ մրցակայ:

Կ'ուզեմ կոչուիլ ես «դո» է իմ որդիս,
Կ'ուզեմ որ մաշկի լրան այդ ձայն յուր,
Ըլլան սրբով սուր եւ կեղծով՝ պայծառ,
Ի՞նչ ամէնուն աչքէն սիրոյ լոյսն յողի:

Իմանալի սուր լեռն հրաշափառ
Լոյսն ու ամպեր, յայտարարւիմ Հօր,
Կր սիրեմ ես այժմ հոգիովս բոլոր.
— Խաչ ճեղնալն է այս, աղուր Վարդապա:

մէջ, Ձեր պարտականութիւնները կատարելու:

Քաղաքիւս Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, ի ներկայութեան խումբ ղազմութեան, այս առաջատ մասնաւոր Ս. Պատարազ մատուցի ի հանգիստ հոգւոյն յաւէտ ողբացեալ Դուրեան Ս. Պատրիարքին: Պաշտօնական մարմիններ, զանազան միութիւններ ու խմբակցութիւններ 16է աւելի ծաղկեպսակներ բերած էին Հոգեհանգստի միջոցին: Դամբանական խօսած ժամանակ շատեր կ'արտասուէին: Մեր զազութին մէջ կսկիծը խոր է և համազգային: Ժողովուրդը, Դուրեանի մահով զ'Դուրեան ողբալէ աւելի, կ'ողբայ Ազգն ու եկեղեցին՝ որոնց զոյութեան ու ժեղ յենարաններէն մէկն էր հանգուցեալ Սրբազանը: Վիշաղ լայն է այն զիտակցութիւնով որ Ազգին ուրախութեան, երջանկութեան, փառքին բաժակը յանկարծ կը փշրուի իր ձեռքերուն մէջ:

Մաղթենք որ Աստուած նոր Դուրեաններ հանէ այս Ազգին ու եկեղեցիին ծոցէն մեր տարաբախտ ժողովուրդը առաջնորդելու և մխթաբելու համար:

Սիրոյ ջերմ ողջոյններով՝ ազօթակից
Երուանդ Եպիսկոպոս

Ողղում Տեղապան Մերազանին

Աթէնք, 14 Մայիս 1930

Բազմավաստակ ուսուցչին Երուսաղէմայ արժանաւոր Պատրիարք Ամեն. Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Դուրեանի դառնաղէտ մահը բովանդակ հայ ժողովուրդին հետ զմեզ և տեղւոյն հայ զազութիւն բոլոր ժողովներով ի խոր խոցեց և տրոժութեամբ համակեց:

Ամսոյս 4ին Կիրակի առաջատ անձամբ Ս. Պատարազ մատուցի Նորին Ամենապատուութեան հոգւոյն հանգստեան համար և յաւարտ Ս. Պատարազի հանգիստաւոր հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ:

Բացի Ազգ. պաշտօնական Կեդրոնին և Արտարձաններու բոլոր Մարմիններէն, յատուկ հրաւերով ներկայ էին նաև տեղւոյն Հայ Աւետարանական եկեղեցւոյ զըխաւոր հոգեւոր հովիւր Վեր. Կ. Սթամպուլեան, Ն. Ի. Ռըլիֆի Տնօրէնը Մր. Թըրպըր, Ամերիկեան Աստուածաբանական

Վարժարանի տնօրէնը, Ամերիկեան Աւետարանական Միութեան նախագահ Տքթ. Մարտին և ուրիշ շատեր:

Հոգեհանգստեան պաշտօնի կատարումէն յետոյ երջանկայիշատակ մեծ Պատրիարքին յիշատակը պանծացուցի պատշաճ դամբանական-քարոզով մը:

Թէ հրաւիրեալ հիւրերը և թէ Ազգ. Պաշտօն. Մարմինները, ինչպէս և ժողովուրդը իր ցաւակցութիւնները յայտնեց մեզ, յետ եկեղեցւոյ աւարտման՝ խնդրելով որ իրենց ցաւակից զգացումներուն թարգման ըլլամ Ձեր Բարձր Սրբազնութեան և Պատ. Միաբանութեան մօտ:

Ըստ այնմ պատիւ ունիմ ներկայիս մատուցանելու Ձեզ և Պատ. Միաբանութեան Կրօնական և վարչական ժողովներու, Թաղ. Խորհրդոց և բոլոր ազգային իշխանութիւնը ներկայացնող Մարմիններու որդիական խորին ցաւակցութիւնները և վշտակից զգացումները, ինչպէս Վեր. Կ. Սթամպուլեանի և միւս հիւրերուն ցաւակցութիւնները, զորս իրենց խնդրանքին վրայ կը ներկայացնեմ Ձեզ:

Մեծանուն ուսուցչին, երանեալ Հայրապետին հոգւոյն հանգիստ և Ձեր Սըրբազան եղբայրութեան Հոգւոյն Սրբոյ մխթաբութիւնը հայցելով

Եղբայրական ցաւակից զգացումներով
և յարգանք

Մնամ Ազօթակից

Առաջնորդ Հայոց Յունաստանի
Կարապետ Եպս. Մազլումեան

Մայիս 15, 1930, Ֆրէզնօ,

Ողղում Միաբանութեան

Գեր. Տեաքք.

Հ. Բ. Ը. Միութեան Քաղիֆօրնիոյ շրջանակի 14րդ Համաժողովը՝ որ գումարուեցաւ ամսոյս 3ին և 4ին Բիտլիի մէջ, յոտնկայս իր յարգանքը մատոյց Նորին Ամենապատուութեան, Տ. Եղիշէ Արքեպ. Դուրեանի վախճանման ի յիշատակ, իբրեւ Պատրիարք Սրբոյ Երուսաղէմի Առաքելական Աթոռոյն, Արժանընտիր անդամ Գեր. Միաբանութեանդ և Բարեբար Անդամ Միութեանս:

Յիշեալ ժողովը որոշեց նաև հաղորդել Ձեզ իր ցաւակցութիւնները Ձեր անփոխա-

րինելի կորստեան համար: Գտնողէս կորստա մը Մխութեանս և ամբողջ ազգին համար միանգամայն:

Մնաժք վշտակից և խորին յարգանքներով
Ի ղիմաց Հ. Բ. Ը. Մխութեան

Քալիֆ. Շրջ. 1-րդ Համաժողովին

Ատենադպիր

Ատենապետ

Խոսքով Էլմասեան

Կ. Մ. Մանավեան

Ուղղում Տեղապահ Սրբազանին

Յունիս 10, 1930, Նիւ Եորք

Սրբազան Հայր,

Հաշկական Բարեկործական Ընդհանուր Մխութեան Ամերիկայի շրջանակին Տասն-և-ութերորդ Համաժողովն այս տարի դու-մարուած էր Իմիլատէիլիս, Մայիս ամսոյ 30 ին և 31 ին

Նխաերու բացումէն առաջ Համաժողովը փութաց յոտնկայս իր յարգանքը մատուցանել Առաքելական Աթոռոյ նորոգ հանգուցեալ Պատրիարք Տ. Տ. Եղիշէ Դուրեան Արքեպիսկոպոսի յիշատակին, և որոշեց Ս. Յակոբեանց Մխարանութեան մատուցանել իր խորին ցաւակցութիւնը, ինչպէս և իր ջերմ բարեմաղթութիւնները յաջորդ Գահակալի բարեյաջող ընտրութեան համար:

Ի ղիմաց Ժ.Ը. Համաժողովին

Հ. Բ. Ը. Մխութեան Ամերիկայի շրջանակին,
Ատենադպիր

Ատենապետ

Գ. Ա. Թաքաբեան

Պ. Կ. Թեքեան

Ուղղում Բարգին Սրբազանին

25 Յունիս 1930

Սիրելի և սղալից Սրբազան,

Ամենապատիւ Ս. Պատրիարք Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Դուրեանի դառնողէս մահուան լուրը ինձ հասաւ Յարութեան տօնի յաջորդ նոր կիրակէի առաւօտուն Օղլնետ հասնելէս ժամ մը յետոյ, ուր գընացած էի պատարագելու և քարոզելու: Գոյժը այնքան ցնցող էր որ չփոթութեան մասնուեցայ. ինչպէ՞ս պիտի կատարէի օրուան հոգեոր խորհուրդը, և մանաւանդ ինչպէ՞ս պիտի հաղորդէի ժողովուրդին այդ լուրը շանթահարող, և ինչպէ՞ս պիտի խօսէի օրուան քարոզը:

Մեծ դժուարութեամբ և մերթ փոշկե-

լով կատարեցի երեքն ալ, և ժողովուրդն ալ յուզուեցաւ խորապէս և արատուեց:

Ի վաղուց անտի վանքի բարեկարգութեան և ժառանգաւորաց վարժարանի մա-կարգակին բարձրացման բուռն ըզմանքով մարանչոյնեկն ըլլալով անհունապէս հրճուողներէն մին էի եղած՝ այն օրէն որ Ս. Յակոբի աթոռին վրայ ունեցանք մեծն և շնորհալին Եղիշէ Դուրեան:

Բայց աւա՜ղ, որքա՛ն կորձ ժամանակ տեւց ինձ հետ շատերուն ունեցած այս երջանկաբեր ուրախութիւնը: Ինչքա՛ն շուտ չիջաւ Դուրեան ջահը, որուն ճոռապայթ-նեղէն այնքան հոգիներ լուսադարձուած, սրտեր մաքրուած ու միաքեր ճոխացած էին, ու տակաւին շատեր ալ անոր հոգա-նիին ներքե կը շարունակէին ստանալ նոյն այդ շնորհները:

Այս անդամանելի կսկիծին կոտտանքը դեռ չի մեղմացած հասաւ նաեւ զոյժը մահուան Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Այս ի՛նչ զժրատ տարի մը եղաւ ազգին հա-մար, Եկեղեցիին համար:

Սուգի տարի, սե տարի:

Իբրեւ քրիստոնեայ, մանաւանդ իբրեւ քարոզիչ և մխիթարող վշտացեալներու՝ կը խորհրդածենք, թէ մահը բնական է, և մեր հանգուցեալ սրբազանները երկուքն ալ զրէթէ հասաւ էին ի կէտ ժամանակին. ու կը հաւատանք թէ բարի պատերազմը պատերազմեցան. ընթացքը կատարեցին, հաւաքը պահեցին ու գնացին ստանալու պսակն արդարութեան:

Սակայն որո՞նք պիտի լեցնեն անոնց թողած սրտապոթիւնը... Ահա իրական ու զգալի ցաւ պատճառող կսկիծը: Ահա թէ ինչո՞ւ համար մեր անարդ թշնամին տ-մէնէն առաջ անխնայարար ջանաց փճո-ցնել մեր մտաւորականութիւնը, և՛ կեկեղեցական և՛ աշխարհական:

Մենք այս հեռուոր օտարութեան մէջ հոգւով ու սրտով կապուած մեր մեծ կեդ-րոններուն երեսուղէմի և Էջմիածնի հետ, յարգեցինք երկու Հայրապետներու յիշա-տակը պատարագով և հոգեհանգստեան պաշտօնով, և ապա Յունիս 22 ին կիրակի երեկոյ քաղաքային մեծ սրահին մէջ հա-մադադութային հանգամանքով յիշատակի պաշտամունք կատարելով, մասնակցու-թեամբ Հայ Աւետ. Եկեղեցիներու, միշտ

նախագահութեամբ թեմիս առաջնորդ Արքեպիսկոպոսին, որ պատարագից եւ քարոզից նոյն առաւօտուն:

Եւ հիմա ամենալուրջ հետաքրքրութեամբ կ'սպասենք զխնալու համար թէ ո՞վ պիտի բազմի Լուսաւորչի աթոռին վրայ էջմիածին, եւ ո՞վ պիտի յաջորդէ Դուրեանի նման անբասիր, բազմահմուտ եւ բազմաբղիւն անձնաւորութեան մը Ս. Յակոբի աթոռին վրայ Երուսաղէմ:

Զեզ եւ բոլոր միաբանակից եղբայրներուս Հոգւոյն Արքայ միսթարութեան հետ կը մագթեմ անվերապահ անկեղծութիւն, որով կարենան յառաջիկայ ընտրութեան մէջ նոյն Ս. Հոգիէն առաջնորդուելով, բռնենանք հանգուցեալ մեծ պատրիարքին արժանաւոր յաջորդ մը, որով միայն հնարաւոր կ'ըլլայ անոր ազդեցութեաւ եւ եկեղեցւոյն գործը շարունակել նոյն ընթացքով եւ ուղղութեամբ, քաջ զխնալով որ այս ազգը ներկայիս ամէն ժամանակէ աւելի շատ պէտք ունի մեծ թուով մտաւորականներու եւ մանաւանդ պատրաստուած եկեղեցականներու:

Եւ Երուսաղէմ է այն միակ եկեղեցւոյ, ուր կարելի է պատրաստել այդ մտաւորականութիւնը:

Հովիւ Ս. Երր- Եկեղեցւոյ

Վարդան Ծ. Վարդապէս Դասպաբեան

Սիրեցեալ Մեարտիկ Մրքապան

Նիւ Եորք, 18 Յունիս 1930

Դոյժը ապշեցուցիչ, պատուականաց պատուական Տեառն Եղիշէ Արքեպիսկոպոսին անկնկալ, յուզիչ, տխրեցուցիչ, կսկծալի մահուան գոյժը հասաւ մեզի ահաւոր զէպքի յաջորդ օրն իսկ: Յօրէ անտի ցայտօր ոչ մէկ կերպով կրնամ բացատրել, յայտնել յուզումը, ցաւը որ համակց զմեզ դառն սուգով:

Բախտ եւ պատիւ ունեցած եմ ապրած ըլլալու երիցս ողբացեալ Արքեպիսկոպոսին հետ, ի Կ. Պոլիս, եւ վայելած եմ իր սէրը, համարումը եւ անդին բարեկամութիւնը տարիներ յաջորդաբար, երբ հաճեցաւ իմ խնդրանացս համակերպելով ընդունիլ վարժարանիս աշակերաններուն Կրօնագիտութեան, Կրօնից Պատմութեան եւ Հայ լեզուի

գասախօսութիւնները: Անընդհատ հինգ տարիներ յաջորդաբար մեծ սիրով շարունակեց իր դասախօսութիւնները, որոնց կ'ունկնդրէին աշակերտք զմայլած, հմայուած եւ յափշտակուած իր մեղրածորան շրթներէն բղիթով իմաստութեան խորհուրդներէն, մշակուած բարձր գաղափարներէն եւ հոգեպարար ուսուցումներէն:

Բաժնուեցաւ մեզմէ այն ատեն միայն, երբ կոչուեցաւ գահակալելու յԱթոռ Պատրիարքութեանը Ս. Երուսաղէմի:

Ի սիրելուս տիեզերաց Հայութիւնը խոր յարգանքով եւ որդիական սիրոյ ամէնէն անկեղծ զգացումներով կը յիշէր միշտ իր մեծ Անունը, բայց ամէն անոնք որ բախտ ունեցած են նորին Ամենապատուութիւնը անձամբ ճանչնալու եւ լսելու զինքը, պաշտելով կը պաշտեն իր անզուգական Անձնաւորութիւնը: Այսպիսիներուն իր անդարմանելի կորուստին առթիւ զգացած տխրութիւնը շատ աւելի խոր եւ կսկիծը անբացատրելի է եւ պիտի մնայ այնպէս յաւէտ:

Զէր մոռնար իր նամակներուն մէջ քաղցրութեամբ յիշել յիշատակել գասախօսութեանց օրերէն եւ տարիներէն ունեցած տպաւորութիւնները: Միշտ կը քաջալերէր, կը խրախուսէր զմեզ մեր ձեռնորկին մէջ:

Կը ներկայացնեմ Զեզ իմ հրատարակած ՓեթԱկ հանդէսի մէկ թիւը, յորում պիտի գտնէք իր հոյակապ զրէշն ելած գեղեցիկ մէկ նամակը: Թերեւս օր մը ուզուի իր բոլոր գրութիւնները հատորի մը մէջ ամփոփել, այն ատեն այս գրութիւնն ալ թող ունենայ իր արժանաւոր տեղը:

Ստանալով ՍԻՄՆ-ը չկրցայ կարգաւ հիւանդութեան տառապանքին, մահուան եւ յուզարկաւորութեան նկարագրութիւնները, առանց յուզման, առանց յորդանոս արտասուաց:

«Եւաց ժողովուրդն լալիւն մեծ, զի այր մեծ անկաւ յիսրայէլ»: Օրհնութիւն եւ խոր յարգանք իր անմահ յիշատակին:

Կը յայտնեմ սրտազին ցաւակցութիւնս թէ՛ Զեզ եւ թէ՛ անձնուէր Միաբանական Ուխտիդ:

Այս սուգը իբր թէ մեր Եկեղեցւոյն եւ Ազգին համար բաւական չըլլար, եւ ահա՛ կը հասնի Ամենայն Հայոց պատկառելի

Հայրապետին մահուան բռնի ալ և կրկնապէս սուգով և տրտմութեամբ, կը համակէ Հայ Եկեղեցին և Ազգը:

Երկու լծակից, մեծ և պատուական Անձնատրութիւններ, Հայ Եկեղեցւոյ փառահեղ կոթողներ, կը տապալին միևնոյն տաւն, երկու դարաւոր Սուրբ Աթոռներ թափուր թողլով:

Օրհնեալ ըլլայ նաև յիշատակը մեծաշուն Հայրապետին Ամենայն Հայոց Տեան Դէորդ Ե. Ի:

Յ. Գ. Նիկողոսեան

ԳՈՐԷԱՆ ԱՐԲԱՊԱՆԻ ՃԱՄԱԿԸ(*)

29 Յունիս 1913, Պէոյիւքտէրէ

Ազնուամեծար

Տէր և Տիկին Նիկողոսեան

Հիմնադիրք համանուն վարժարանին աղջկանց ի նշան-Թաշ

Ձեր «Փեթակ»ին կը նուիրեմ սա տուգիրս, հետեւած ըլլալով անոր՝ իր առաջին թերթերէն:

Ռորհրդանշական այդ հրատարակութիւնը՝ որ համեստ պատկերացումն է մեծ աշխատանոցիդ՝ սրտի հաճոյք մը կուտայ ինծի, մեղրի մը համը բերելով իր հետ:

Շնորհաւորելի և «Փեթակ»իդ հիւմետեան պետարոյս գործաւորները:

Թարմութիւնը՝ զոր կ'զգայ մարդ մատաղ գիտակցութեան մը գեղեցկատենչ փթթումներէն՝ դժուար է փոխանակել ուրիշ ո՛ւրէ օժութեամբ՝ որ սրտին խորն իջնէ այնքան ճառագայթումով:

Սիրուն գոյափոխութեան մը հանդիսատես կը կարծեմ ըլլալ՝ ամէն անգամ որ անուշահոտ բուսականութեան մը շուրջը գեղերոզ մեղուշ հոգիներ կը հանդերձեն իրենց մտաւոր պարգեւը, զոր՝ շատ աւելի իրաւունքով՝ «երկնաւոր» պիտի կոչէր Վիրգիլ:

Հպարտութիւն մ'է տեսնել որ Ձեր մեղուանոցին համար այնքան թրթռուն խնամքով կը տնկադործէք դուք նոյն բա-

նաստեղծին յանձնարարած նարդոսն ու ծոթրինը, դադափարականին հիւթն ու իրականին հոտը, որոնց ներդաշնակ խառնումին շնորհիւ միայն կ'երաշխաւորուի իմացական խորխոսին ազնուութիւնը. ու նոյնքան ալ զգուշաւորութեամբ կը վանէք ձեր ոլորտէն՝ հիւներու պատուէրին համաձայն ճահիճի մետաթութիւնն ու ցիրդի դառնութիւնը, որոնք հաւասարապէս կը փնտսեն մեղուին ու մեղրին:

Բայց ինչո՞ւ այս ամէնուն փոխարէն՝ տակաւին նուազ է Ձեր տաք ու իմաստուն գուրգուրանքներէն օգտուողներուն թիւը, որը՝ եթէ աճէր աւելի մեծ համամատուցութեամբ պիտի կրնար նպաստել պահպանութեանը այն հայրենի մեծ փեթակին որ՝ անպատասպար՝ ամէն օր կը կապուի իր մեղրէն ու մոմէն անգամ, օտար ձեռքերով:

Ինչ որ ալ ըլլայ սակայն դուք նուիրեալներ էք, արդէն. ու քրտնաջան ճիգերով արգիւնաւորուած Ձեր կրթական Աշխատանոցը անշուշտ պիտի կատարէ իր փրկարար դերը հայ աղջիկներու դաստիարակութեան գործին համար: Այդ ցանկալի իրագործումին գուշակը թող ըլլայ թերթիկ «Փեթակ»ը իրրեւ նշանաբան բզզալով միշտ:

«Աստուծոյ ի փոքր, բայց ոչ փոքր ինչ փառք պարծանաց»:

Ընդունեցէք անկեղծ շնորհաւորութիւններս:

Ողջունիւ և օրհնութեամբ
Եկի՛ք Արքեպիսկոպոս ԳՈՐԷԱՆ

Ողղուած Բաքդէն Արքապանին

1 Յունիս 1930, Թաւրիզ

Արքապան Հայր,

Սոյն տողերը գրողս՝ Դպրեմանքի նախկին սաներիցն եմ. Ձեր ժամանակուայ աշակերտակիցներից, Ձեզնից երկու դասարան վար, Մշեցի Հրանդն եմ, այժմ քահանայ, Տէր Մուշեղ անուամբ: Քաղաքիցս բացակայելի մի առ ժամանակ. ժամանակին տնտեղեակ էի պաշտօնի Սրբազանի մահուան զառնադէտ լուրից. նոր եմ վերադարձել, գրութիւններս ուղարկում եմ ՍԻՌՆԻՆ, Սրբազանի մահուան քառասունօրեա թիւը: 25 հարապատ մանչ դաւակներս եմ կորսնցրել, կորսնցրել եմ եղբայրներ,

(*) Տե՛ս Փեթակ, Ամսօրեայ պատկերազարդ հանգէս զարդաներու յատուկ, Հրատարակութիւն Նիկողոսեան Աղջկանց Բարձր. վարժարանի, Կ. Պոլիս, Տպ. Օ. Արզուման Ա. Տարի—թիւ 9, 1913 Յունիս, էջ 125—126:

քոյրեր, եղբորդիներ, հարկւրաւոր մօտիկ ազգականներ. նրանց բոլորի կորուստեան համար այնքան չեմ լացեր, որչափ լացի ու դեռ լացում եմ Սրբազանի համար: Հոգւոյ և մօքի ծնողը հարազատից էլ բարձր է: Պատանեկական հասակում ուսանողական յիշատակները, յիշատակներին կապուած անձնաւորութիւնները անուայ են միշտ, պաշտելի են: Երուսաղէմ բարեպաշտ հաւատացեալներին համար ուխտաւոր է. յետ այսորիկ ուխտաւորի պիտի դառնայ Դուրեանի աշակերտների համար. դուցէ կարճ ժամանակից յետոյ նրա սուրբ գերեզմանը երկրպագելու բարեբախտութիւնը ունենամ:

Սրբազան Հայր, մխիթարու՛նք այս տեսութեամբ որ Սրբազան մեռաւ թէեւ, բայց յաւիտեանս կենդանացաւ:

Ընդունեցէք, խնդրեմ, Հայր պատուական հնամի սիրոյս և խորին մեծարանացս ջերմագին հաւաստիքն:

Համբուրիւ Ս. Աջոյդ
Վշտակից որդիդ
ՄՈՒՇԵՂ ՔԱՀ. ՅԱԿՈԲԵԱՆ

The Anglo-Palestine Company Ltd.

Jerusalem, April 28th, 1903.

The Armenian Congregation
of St. James, Jerusalem

We beg to convey herebyour sympathy and condolence to the mourning Congregation by the death of His Beatitude Mgr. Elisee Tourian K.B.E. in whom they have lost one of their worthiest patrons.

Very sincerely
EISENSTAD

LA MORT DU PATRIARCHE ARMÉNIEN SÉPARÉ

Le 28 avril dernier s'éteignait à Jérusalem après une longue et douloureuse maladie le Patriarche des Arméniens séparés, Monseigneur Elisée Tourian. Cette mort a causé parmi ses coreligionnaires

orientaux une très pénible impression.

Monseigneur Tourian était une des rares gloires de l'église arménienne. Il était très aimé et très apprécié pour sa très grande modestie, ses qualités ecclésiastiques et sa culture intellectuelle. Il eût une particulière sympathie pour les auteurs rationalistes contemporains et spécialement pour Renan et Loisy(*).

Par sa disparition, l'église arménienne perd un érudit, un littérateur et un poète. La Terre Sainte est heureuse d'ajouter que par son esprit conciliant et ami de la paix, M^{gr} Tourian conserva toujours d'excellentes relations avec la Custodie de Terre Sainte.

(LA TERRE SAINTE, N. 5

14 Mai 1930, p. 118.)

MORT DU PATRIARCHE ARMÉNIEN

S. B. M^{gr} Elisée Tourian, patriarche des Arméniens non unis, est décédée le 27 avril 1930, après cinq jours de maladie seulement. C'était un esprit très cultivé et accommodant. M^{gr} Tourian parlait de nombreuses langues orientales et européennes. Il faisait malheureusement grand cas de l'exégèse si peu scientifique de Renan(*). C'est le premier patriarche arménien dont l'élection ait été confirmée par le roi d'Angleterre.

JERUSALEM, Revue Mensuelle Illustrée.
Mai - Juin, 1930, p. 670.

(*) Դուրեան Սրբազանի վերադրուած այս նախասիրութիւնները, մո'նաւանդ լատին մտայնութիւններու կողմէն, անհիմն են բոլորովին. որովհետեւ Դուրեան Սրբազան, իրիւ մեծ ընթերցող, նոյն բան հետաքրքրութեամբ կը կարդար կաթոլիկ եւ բողոքական արժէքաւոր հեղինակներ կրօնական այլեւայլ նիւթերու շուրջ:



ՄԱՅՐ ԱՔՈՌ

Ամենայն Հայոց Վեհափառ Տ. Տ. Գեորգ Ե. Կաթողիկոսի հիմնադրական և փախճանման արքիւ Մայր Աթոռին Տեղապահ Գեր. Մեսրոպ Սրբազանին ողորմած պաշտօնադրանքուն պատգանները, որոնք ոչ միայն հետաքրքրական են իրենց այժմեական տեղեկութիւններով, այլ նաեւ պատմական արժեք մը կը ներկայացնեն հանգուցեայ Հայրապետի կեանքի վերջապայի և մահուան ու քաղման պատգանքներուն տեսակէտէն ինչպիս նաեւ Մայր Աթոռի և Խորհրդային Հայաստանի յարաբերականը կողմէն:

Թ. ՅԳՅ

6 Մայիսի 1930 ամի

Ս. ԷԶՄԻԱՆԻՆ

Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահ Գերաւանդին

Տ. Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեանին

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը իր պատահականութիւնն է համարում խորունկ վերատու յայտնելու Զերդ Գերաշնորհութեան և Զեր միջոցով Երուսաղէմի պատահական Միաբանութեան, որ Ապրիլ ամսի 21-ից Նորին Սրբութիւնը հիւանդ է: Բժշկական օգնութիւնը, խնամքը և հոգատարութիւնը անպակաս է և զերագանցօրէն կանոնաւոր: Թէև զրութիւնը ծանր է, իր տարիքի և ընդհանուր թուլութեան հետեանքով, բայց այնուամենայնիւ անյուսալի չէ:

Ծանր ազդեց Նորին Սրբութեան վրայ Նորին Ամենապատուութիւն երջանկայիշատակ Տ. Եղիշէ Պատրիարք հօր մահը. և այդ բոթի հետ երբեք չի հաշուում, ամէն օր յիշելով և արտասուելով:

Սորա հետ ուղարկելով թեմերի Առաջնորդներին ուղարկուած չըջաբերականը, Խորհուրդս խնդրում է Զերդ Գերաշնորհութեան և պատահական միաբանութեան ջերմ մաղթանքներ վերադառնալ առ Ամենաբարձրաւը Նորին Սրբութեանը ասողջութիւն և արեւատութիւն պարգեւելու համար:

Եղբայրական սիրոյ ողջոյններով Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի

Մասրէոս Արքեպիսկոպոս

Քարտուղար Յ. Քոչարեան

Շ Բ Զ Ա Բ Ն Բ Ա Կ Ա Ն

ԲՈՒՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ
ԵՒ ԹԵՄԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՆ

Թ. ՅՏԻ

6 Մայիսի 1930 ամի

Ս. ԷԶՄԻԱՆԻՆ

Նորին Սրբութիւն Ազգիս Վեհափառ Հայրապետը տարւոյս Ապրիլի 16ին փոքր ինչ վատ զգաց իրեն, բայց շտապ ձեռք առած միջոցներ ի հետեանքով մի երկու օրից այնքան լաւ զգաց իրեն, որ նոյն ամսի 19ին և 20ին, Ճրագաւայցին և Ս. Գարութեան կիւրակի օրը բարեհաճեց Մայր Տաճար իջնել: Սակայն Ապրիլի 21-ից զբերախտաբար իրեն աւելի վատ զգաց և Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը չըբաւականանալով տեղական բժիշկներ խնամքով, հրաւիրեց Երեւանից յայտնի բժշկապետ Յովհաննէս Յովհաննիսեանին, որը Նորին Սրբութեան այլ հիւանդութիւններ ժամանակ միշտ խնամողն է ու բժշկողն է եղել: Բժշկապետ Յ. Յովհաննիսեանը, մի քանի անգամ Երեւանից այցելելով և յատուկ ուշադրութեամբ քննելով Վեհափառ Հայրապետին, հարկաւոր զեղերն էր նշանակում և անհրաժեշտ հրահանգները տալիս տեղական բժիշկներին: Մայիսի 3ին Վեհափառ Հայրապետի դրութիւնը աւելի ծանրացաւ սրտի թուլութեան և աղիքների ձախ կողմի որոշ բորբոքման հետեանքով, ուստի անմիջապէս բժշկական խորհուրդ հրաւիրուեց Երեւանի յայտնի բժիշկներ Յ. Յովհաննիսեանի, Պրօֆեսոր Արտաշէս Մելիք-Աղամեանի, բժշկապետ Գրիգոր Սաղեանի և տեղական բժիշկ Աղիգեանի մասնակցութեամբ, որոնք Վեհափառ Հայրապետի դրութիւնը գտան լուրջ և համապատասխան միջոցներ ձեռք առան թէ՛ սրտի կանոնաւորման և թէ՛ աղիքների բորբոքման առաջն տունելու համար, միանգամայն ճիշդ գտնելով Բժշկապետ Յովհաննիսեանի որոշած դիագնօզը և ձեռք առած միջոցները և նշանակուած դեղերը:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ամբողջ կազմով աչալըթութեամբ և որդիական հոգատարութեամբ հսկում և հետեւում է բժշկութեան ընթացքին՝ տրամադրելով ամէն միջոց և ջանք չը խնայելով Նորին

Մերութեան ատոյջական վիճակը վերականգնելու համար:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը պարտականութիւն համարելով յայտնել Ձեզ վերադրեալ ցաւալի լուրը ի գիտութիւն և խոստանալով պարբերաբար տեղեկութիւն տալ Նորին Մրրութեան հիւանդութեան զբոսթանի և ընթացքի մասին, խնդրում է ջերմագին մողթանքներ վերադառնալ առ Ամենաբարձրաւոր Նորին Մրրութեան ատոյջական վիճակը վերականգնելու և երկար կեանք պարգեւելու համար:

Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
Մասքեոս Արքեպիսկոպոս
Քարտուղար Յ. Քոչարեան

Թ. 466

30 Մայիսի 1930 ամի

Ս. ԷԶՄԻԱՆԻՆ

Առ Գերապետ Տ. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՆՇԱՆՆԱՆՔ Պատրիարքական Տեղապան Ս.
Արքուդի ԵՐՈՒՍԱԿԷՄԻ

ՆՈՐԻՆ ՎԵՆԱՓԱՌՈՒԹԻՒՆ հանգուցեալ Կաթողիկոսն Ամենայն Հայոց զեռ իւր կենդանութեան ժամանակ կարգադրել էր Կոնդակ պատրաստել ի ցաւակցութիւն և ի մխիթարութիւն սրբազումար միաբանութեանդ՝ Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպիսկոպոսի, Առաքելական Աթոռոյ Պատրիարքի, մահուան առթիւ, բայց հիւանդութեան օրէ ցօր ծանրանալու և մահուան պատճառով մնաց անկատար նորա կամքը: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդն իսկ շփոթուած նախ հանգուցեալ Հայրապետի հիւանդագին ծանր վիճակով և ապա ծանրաբեռնուած մահուան և թաղման հետ կապուած հոգսերով, հազիւ կարողացել էր հեռագրական կարգադրութիւն անել Խորհրդային Միութեան սահմաններում եղած բոլոր եկեղեցիներում հոգեհանգիստ կատարել ի յիշատակ հանգուցեալ Պատրիարքի, առանց հնարաւորութիւն ունենալու Ձեզ ևս, ինչպէս և սրբազումար միաբանութեանդ գրաւոր յայտնելու իր խորին վիշտն ու ցաւակցութիւնը:

Տ. Եղիշէ Պատրիարքի կորուստը Ձեզ հետ և մեր կորուստն է, յանձին որի Հայաստանայց եկեղեցին զրկուած է իւր աւանուոր զեկաւարներէ մէկէ, որ իւր

երկարամեայ, արդիւնաւէտ կեանքով ուսուցչական - վարդապետական, զրական-գիտական, հովուական - վարչական պատասխանատու ռապարէզներում թողել է երախտագիտութեան արժանի հետքեր և իւր անունը կապել անբաժան Հայոց եկեղեցու կէս դարու չափ պատմութեան հետ:

Մեր և Էջմիածնի միաբանութեան վիշտը համեմատաբար տանելի կը լինէր, եթէ Հայոց եկեղեցու կորուստը մէկով միայն սահմանափակուէր. բայց Աստուծոյ կամքն էր որ միանգամից երկու փորձութիւն դար զեկաւոր Աթոռների համար, և մենք հնազանդ Նորա անօրէնութեան, եղբայրական վշտակցութեան մեր խօսքն ենք ուղղում Ձեզ և մխիթարութիւն բարեմաղթում: Օրհնեալ լինի հանգուցեալի յիշատակը և հաճելի պատարագ նորա կեանքը Աստուծոյ սեղանի առջև:

Ազօթեցէք և Դուք հանգուցեալ Սըրբազնագոյն Կաթողիկոսի յիշատակին համար, ազօթեցէք, որ Աստուած զօրավիգ լինի մեր հաւատացեալ ժողովուրդին և մեզ բոլորիս տանելու մեր ծանր կոլուստները, և սղաւոր Աթոռների վրայ նորից բազմած տեսնելու հանգուցեալներին արժանաւոր յաջորդները:

Տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի և
Նախագահող Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
Խորէն Արքեպիսկոպոս

Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամներ
Բագրատ Արքեպիսկոպոս
Մասքեոս Արքեպիսկոպոս
Գարեգին Արքեպիսկոպոս
Գեորգ Արքեպիսկոպոս

Թ. 651

17 Յունիսի 1930 ամի

Ս. ԷԶՄԻԱՆԻՆ

Երուսաղեմի Հայոց Ս. Յակոբեանց վանքի Պատրիարքական Տեղապան Գերաւորհ Տ. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆՇԱՆՆԱՆՔ

Գերագոյն Հոգեւոր Խորհրդի և Մայր Աթոռոյս միաբանութեան կողմից յայտնում ենք Ձեզ և Ս. Յակոբեանց վանուց սրբազումար միաբանութեան զոհուհակութիւն և շնորհալիք երջանկայիշատակ Տ. Տ. ԳԷՈՐԳ Ե. րգ Ամենայն Հայոց Կաթողի-

կոսի մահուան առթիւ արտայայտած ցաւակցութեան համար:

Թէ՛ Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքայան Պատրիարքի և թէ՛ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անսպասելի մահը խորին կսկիծ ևւ անդարմանելի ցաւ պատճառեց մեզ բոլորիս:

Երկու սգակիր և վշտակից եղբայրական միաբանութիւններս մաղթենք և աղօթենք, որ Ս. Հոգին Աստուած մխիթարիչ և զօրավիգ լինի մեզ բոլորիս և Աստուծոյն ողորմութեամբ և հայ հաւատացեալ ժողովրդի խորհրդով և օգնականութեամբ յաջողութիւն մեզ բազմեցնել Ս. Էջմիածնի և Ս. Երուսաղէմի երկու Առաքելական Աթոռների վրայ արժանեալի յաջորդներ, որ մեծ մխիթարութիւն կը լինի ի սփիւռս աշխարհի ցրուած հայ համայնքները:

Եղբայրական սիրոյ ողջոյններով
Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալ
Աղօթակիր
Խորէն Արքեպիսկոպոս

Թ. 756

10 Յուլիսի 1930 ամի

Ս. ԷՋՄԻԱՇՆ

Նորին Դեմետրիոսեան

Երուսաղէմի Պատրիարքական Տեղապան
Տ. Մեսրոպ Սրբազան Եպիսկոպոս

Ներքին ուղարկում ենք Ձերդ Գերաշնորհութեան հանգուցեալ Հօգելոյն Հայրապետի կողմից 1925 թուի Հոկտեմբերի 22 ին հաստատուած Ազգային-Եկեղեցական ժողով զուամարելու Յատուկ Կանոնադրութիւնից մի օրինակ, որպիսին ուղարկուած է Պատրիարքարանիդ 1926 թուի Մայիս 27 թ. 414 Հայրապետական Կոնգակի հետ:

Յայտնում ենք Ձերդ Գերաշնորհութեան, որ առաջիկայ ընտրութեան առթիւ զուամարելիք Ազգային-Եկեղեցական ժողովը կազմակերպուելու, զուամարելու և ղեկավարուելու է այդ կանոնադրութեամբ, որի համաձայն Ձերդ Գերաշնորհութեանը հովուութեանը յանձնուած ժողովուրդը (թիւր) ընտրելու է մի պատգամաւոր և Ձեր տեսչութեան ենթակայ բոլոր եպիսկոպոսները անդամ են Ազգային-Եկեղեցական ժողովի (նաեւ միաբանու-

թեան մի ընտր. ներկայացուցիչ):

Շուտով հնարաւորութիւն կ'ունենանք ուղարկելու Ձերդ Գերաշնորհութեան Հայրապետական ընտրութեան հրովարտանքը: Անչափ ուրախ կը լինինք, եթէ Ձերդ Գերաշնորհութեան զլխաւորութեամբ բոլոր պատգամաւորները նշանակեալ ժամանակին ժամանեն Մայր Աթոռ:

Եղբայրական սիրոյ ողջոյններով՝

Ամենայն Հայոց Կաթողիկոսի

Տեղակալ աղօթակից և սգակից՝

Խորէն Արքեպիսկոպոս

(Պատմեմ)

Հաստատեմ, 22-ն Հոկտ. 1925 ամի, Ս. Էջմիածին: Վեհալի Գեորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց:

ԱԶԳԱՅԻՆ – ԵԿԵԼԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՅԱՏՈՒԿ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա.

1. Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցու Գերազոյն կանոնադիր մարմինը Ազգային-Եկեղեցական ժողովը է:

2. Ազգային-Եկեղեցական ժողովը զուամարում է էջմիածնում:

3. Ազգային-Եկեղեցական ժողովը հրարաւորում է Ամենայն Հայոց Մայրազոյն Պատրիարք Կաթողիկոսը:

4. Ազգային-Եկեղեցական ժողովի նախագահն է Ամենայն Հայոց Մայրազոյն Պատրիարք Կաթողիկոսը:

5. Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքները ժողովի նախաթոռ անդամներն են:

6. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիւանդութեան դէպքում, Ազգային-Եկեղեցական ժողովին նախագահում են Սոյ Կաթողիկոսը կամ Երուսաղէմի պատրիարքը, սոցա բացակայութեան դէպքում նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահը:

7. Ազգային-Եկեղեցական ժողովի իրաւասութեան ենթակայ են հետեւեալ հիմնական խնդիրները.

Ա. Ընտրութիւն Ամենայն Հայոց Մայրազոյն Պատրիարք Կաթողիկոսի (յետմահուան ներկայ գահակալի).

Բ. Ընտրութիւն Ս. Էջմիածնի Գերազոյն

Հոգևոր Խորհրդի անդամների .

Գ. Հաստատութիւն Ազգային-Եկեղեցական Սահմանադրութեան .

Դ. Քննութիւն և վճռահատութիւն Եկեղեցական բարենորոգչական հարցերի .

Ե. Կարգաւորում Եկեղեցական տնտեսական վիճակի .

Ձ. Վճռահատութիւն Եկեղեցուն վերաբերեալ բոլոր հարցերի :

Բ.

9. Ազգային-Եկեղեցական Ժողովի անդամ են .

Ա. Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամները .

Բ. Հայոց Եկեղեցու բոլոր Առաջնորդները .

Գ. Հայոց Եկեղեցու բոլոր Եպիսկոպոսները :

Ծանօթ.— Առաջնորդի անձամբ ժողովին մասնակցելը կարողանալու դէպքում, մասնակցում է թեմի հոգևորականութեան ընտրեալ ներկայացուցիչը :

10. Ազգային - Եկեղեցական Ժողովի անդամ են Ս. Էջմիածնի միաբանութեան, Ս. Երուսաղէմի միաբանութեան և Կ. Պոլսոյ խառն Ժողովի կողմից ընտրուած մի մի ներկայացուցիչներ :

11. Ազգային - Եկեղեցական Ժողովի անդամ կարող են լինել ժողովրդից ընտրուած և երեսուն տարին լրացրած իրաւասու ծխականները :

12. Իւրաքանչիւր թեմի ժողովուրդ մասնակցում է Ազգային-Եկեղեցական Ժողովին իր ընտրած մէկ կամ աւելի պատգամաւորներով :

13. Մինչև քսանհինգ հազար ժողովուրդ ունեցող թեմը ընտրում է մի պատգամաւոր, իւրաքանչիւր թեմը ընտրում է այնքան պատգամաւոր, որքան անգամ քսանհինգ հազար ժողովուրդ է պարունակում իր մէջ: Վերջին 25,600ը կարող է լրիւ չլինել, բայց ոչ պակաս տասն հազարից :

Ծանօթ. Ա.— Իւրաքանչիւր թեմ իր ընտրելի պատգամաւորների թուով ընտրում է անձնափոխանորդներ, որոնք փոխարինում են պատգամաւորներին, եթէ նա որեւէ պատճառով ան-

կարող է անձամբ մասնակցել ժողովին

Ծանօթ Բ.— Իւրաքանչիւր թեմ վիճակագրութեան հիման վրայ բաժանուած է չրջանների այն հաշուով, որ իւրաքանչիւր չրջան բաղկանայ քսան և հինգ հազար ժողովրդից :

14. Ազգային-Եկեղեցական Ժողովի թեմական պատգամաւորների ընտրութեան մասնակցում են հոգևորականները և քաղաքացիական չափահասութիւն ունեցող երկու սեռի իրաւասու ծխականներ :

15. Իւրաքանչիւր հազար շունչ ունեցող համայնքը ընտրում է մի պատուիրակ :

16. Պատուիրակները պատգամաւորին կարող են ընտրել իրենց միջից կամ գրոյց :

17. Ազգային - Եկեղեցական պատգամաւորների, անձնափոխանորդների, պատուիրակների ընտրութիւնը Ս. Խ. Հ. Միութեան սահմաններից դուրս գտնուող թեմերում կատարւում է ըստ տեղական գործող Հայոց Կանոնադրութիւնների, սահմանադրութիւնների և կամ աւանդական կարգերի, հրահանգուելով սոյն կանոնադրութեամբ :

18. Ազգային - Եկեղեցական Ժողովի պատգամաւորների ճանապարհածախսը հոգում է պատգամաւորին ընտրող թեմը, իսկ պատուիրակներինը եկեղեցիները :

19. Ազգային - Եկեղեցական Ժողովի պատգամաւորների ընտրութեան առթիւ ծագած ամենատեսակ տարակուսանքների լուծումը տալիս է Գերագոյն Հոգևոր Խորհուրդը Ս. Էջմիածնի :

20. Կարիք զգացուած դէպքում Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհուրդը տալիս է հարկաւոր բացատրութիւններ և հրահանգներ :

Գ.

21. Ամենայն Հայոց Կաթողիկոսի մահուան դէպքում Կաթողիկոսի ընտրութեան համար Ազգային-Եկեղեցական Ժողով հրաւիրում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահը Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգևոր Խորհրդի հետ :

22. Նոր Կաթողիկոսի ընտրութիւնը տեղի է ունենում Կաթողիկոսի մահուանից ոչ ուշ քան վեց ամիս յետոյ :

23. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութիւնը կատարւում է Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, նախագահութեամբ Ա-

մենայն Հայոց Կաթողիկոսի Տեղապահի:

24. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ընտրութեան կարգը որոշում է Ազգային-Եկեղեցական Ժողովը:

25. Սոյն կանոնադրութիւնը իւր ոյժի մէջ է մինչև տաջիկայ Ազգային-Եկեղեցական Ժողովի գումարումը:

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամներ. Մեսրոպ Արքեպիսկոպոս, Խորէն Արքեպիսկոպոս, Բագրատ Արքեպիսկոպոս, Գարեգին Եպիսկոպոս, Գիւտ Եպիսկոպոս:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը սոյն պատճենի խնդրութիւնը հաստատում է ստորագրութեամբ և Խորհրդի կնքով 3 ն Յուլիսի 1930 ամի Ս. Էջմիածին:

Անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի
(ԿՆԻՔ) Մասքեոս Արքեպիսկոպոս
Քարտուղար Յ. Քոչարեան

ԳԵՐԱՇՆՈՐԻ

Տ. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆՇԱՆՆԵԱՆ
Պատրիարքական Տեղապահի և
Միաբնական Ուխտի Առաքելական
Արքուդ Ս. ՆՈՐԱՍԱՊԷՄԻ

Քրիստոսաւանդ սիրոյ ողջոյն

Ձեր պատուական հեռագիրը, որով նուստիս ներկայացուցիչ էիք կարգում Սրբապետութեանդ և միաբանական Ուխտի կողմից երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Ե. Կաթողիկոսի յուզարկաւորութեան ժամանակ, ստացել եմ ժամանակին:

Ինձ արած պատուի համար խնդրեմ ընդունիլ շնորհակալութիւնս:

Ես համեմատաբար ուշ եմ պատասխանում, որովհետեւ ցանկանում էի մի քանի նորութիւններ ևս հաղորդել, որոնց մասին Գերագոյն Հոգեւոր Խորհրդի պաշտօնական հաղորդագրութիւնը թերեւս ուշ ստանաք:

Նախ՝ աւելորդ չեմ համարում մի քանի մանրամասնութիւններ հաղորդել Վեհափառ Հայրապետի հիւանդութեան, մահուան և թաղման մասին, որոնք սրբազումար հարցդ կարող են հետաքրքրութիւն պատճառել:

Նորին Սրբութիւնը իրեն տկար է ըզ-

գում Ապրիլի 16-ին. բայց չնայելով թախանձանքներին, Նորին Սրբութիւնը թէ ճրագալույցի երեկոյին և թէ Յարութեան պատարագին իջնում է Տաճար: Յաջորդօրը, Ապրիլի 21-ին աւելի վատ է զգում, լուծը սաստկանում է: Անմիջապէս հրաւիրում են հմուտ բժիշկներ, որոնք միջոցներ են ձեռք առնում լուծը կանգնեցնելու ևս արաի զործողութիւնը կանոնաւորելու համար: Մինչև Ապրիլ 28-ը Ն. Սրբութիւնը կարողանում էր վերկենալ իւր կարիքները հոգալու առանց կողմնակի օժանդակութեան, և իւր սովորութեան համեմատ հետաքրքրում էր ընթացիկ զործերով: Այդօրն ստանում է երջանկայիշատակ Եղիշէ արքեպիսկոպոսի մահուան թթարեր հեռագիրը, կանչում է Գ. Խ. անդամներին և մեծ վշտով և արտասուովից աչքերով հաղորդում է հեռագրի բովանդակութիւնը, որ մեզ ևս համակում է անհուն վշտով, քանի որ յանձին Եղիշէ Պատրիարքի մենք փայփայում էինք տպագրոյի հեռանկարներ, իսկ այդ հեռագիրը խորտակում էր մեր փայփայած յոյսերը:

Նորին Սրբութիւնը այդ օրից այլևս անկարող եղաւ անկողնից վեր կենալ և յաճախ տառնէր մեզ. «Եղիշէ Սրբազանը զնաց ինձ համար ճանապարհ հարթելու»:

Հետզհետէ ոյժերը թուլացան և զգալով մօտալուտ վախճանը, Մայիսի 7-ի գիշերը կռիւց Գեր. Խոր. անդամներին հրաժեշտ տալու և օրհնելու: Թողնում եմ ձեզ պատկերացնելու այն սրտառուչ բոսէն, երբ ամենքս զիտակցելով, որ սիրեցեալ Հայրապետի կեանքի վերջին ժամերն ենք վայելում, արտասուքը կոկորդներին յուսադրում էինք Նորան և մեզ, որ զեւ Նորին Սրբութեան կեանքը պէտք է հայ տառապեալ եկեղեցուն, և որ զեւ ինքը կապրի հմուտ բժիշկներին ձեռք առած միջոցների շնորհիւ: Ամբողջ գիշերը մենք անցկացրինք Նորին Սրբութեան անկողնու մօտ: Մայիսի 8-ի առաւօտեան զարկերակին արգէն բուսական թոյլ էր և ձայնը նուաղ: Հրաւիրուած բժիշկը յայտնեց, որ այլևս յոյս չկայ: Ս. Հայրապետը ժամը 10,30-ին օրհնեց բոլորին, միաբանութեան, հայ ժողովրդին և աւելացրեց. «Երբ հայ ազգը աւելի բախտաւոր վիճակ կունենայ, յիշեցէք, որ ես Նորա բարօրութեան համար

աշխատողն եմ եղելու: Կէս ժամից յետոյ խաղաղ աւանդեց հոգին:

Մայր Տաճարի սղոյ դանդի ձայնը յայտնեց միաբանութեան և Վաղարշապատի հայ հաւատացեալներին Նորին Սրբութեան մահուն գոյժը:

Մեծ բաղմութեամբ հաւատացեալներ՝ արք և կանայք, ծերք և տղայք դունդադունդ գալիս էին յարգանք մատուցանելու իրենց սիրեցեալ Հայրապետի աճիւնին:

Ժամը 12-ին քաջած հեռագիրները ծանուցին աշխարհի ամեն կողմ ջրուած հայութեան նոյն գոյժը:

Նոյն օրը երեկոյեան Հայաստանի առողջապահական կոմիտսարիատի ներկայացուցիչ բժիշկները գալով յայտնեցին, որ կառավարութիւնը ցանկանում է անդամ հատել Նորին Սրբութեան դին և դմսել, քանի որ 10 օր պէտք է մնայ: Հէնց այն գիշերը գեղորայք սրահելով արեւնադարձ երակների մէջ, յաջորդ օրը Մայիսի 9-ին բացեցին միայն որովայնը և մանրամասն քննեցին. (այս մասին արդէն ստացած կը լինէք Գեր. Խոր. չրջ. դրութիւնը, ուստի աւելորդ եմ համարում այստեղ կրկնել):

Մինչև թաղման օրը՝ Մայիս 18-ը, Նորին Սրբութեան դին գրուած էր վեհաբանի դաշիւճում, ուր ամենայն օր առաւօտեան ժ. 11-ին կատարուէր հոգեհանգիստ բռնն բաղմութեան ներկայութեամբ, իսկ երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ամբիժք՝ Մայր Տաճարում:

Մայիսի 17-ին կէսօրից յետոյ ժ. 4-ին սկսուեց դին Վեհաբանից տաճար փոխադրելու թափօրը: Տասնեակ հազարաւոր ժողովուրդ, որոնք եկել էին մերձակայ և հեռաւոր վիզերից և քաղաքներից, հարիւրաւոր քահանաներ և համայնքի ներկայացուցիչներ մասնակցում էին թափօրին արտասուքն աչքերին: Բաղմութեան շատութեան պատճառով երեք ժամում հազիւ հնարաւոր եղաւ դադարը Վեհաբանից Մայր Տաճար իջեցնել, հանգիստները զբնեւոյ, Տաճարի շուրջը պտտեցնելով: Ամբողջ գիշերը Տաճարի դռները բաց էին և հաւատացեալները մօտենում էին սրբազնասուր Հայրապետին վերջին հրաժեշտը տալու, սակայն շատերին հերթ չհասաւ մօտենալու գիւղին:

Մայիսի 18-ին ուխտասերների թիւը

կրկնապատկուեց: Վանքի բակում, Տաճարում, տանիքների վերայ կանգնելու տեղ չէր մնացել: (Ես նման բաղմութիւն Ս. Էջմիածնում յիշումեմ միայն Խրիմեան Հայրիկի օծման օրը և վերջին միւսոսօրհնութեան ժամանակ):

Ըստ աւանդութեան պատարագին էր Տեղակալ Խորէն Արքեպիսկոպոսը, որն օծեց Նորին Սրբութեան դին և պատշաճ քարոզ խօսեց, սակայն մեծ ժխտքի պատճառով անխելի մնաց:

Բաղմահալար ժողովրդեան մեծ իրարանցումի պատճառով շատ տեղերից նշանակուած ներկայացուցիչները անկարող եղան դամբանական խօսել:

Զանազան կողմերից եկած հարիւրաւոր քահանաների և պատգամաւորների համար հոգեհաց էր պատրաստած միաբանական ընդարձակ սեղանատուներ: Այս տեղ Խորէն Արքեպիսկոպոսը խօսեց Նորին Սրբութեան գործունէութեան մասին, թուելով մի քանի պատմական նշանակութիւն ունեցող դէպքեր: Ապա Բագրատ Արքեպիսկոպոս, որպէս Եւրոպայի և Եգիպտոսի թեմերի ներկայացուցիչ խօսեց դրուատելով Նորին Սրբութեան գործունէութիւնը: Ապա խօսեցի նուաստս որպէս Երուսաղէմի, Կ. Պոլիսի պատրիարքութեան և Պարսկահնդկաստանի թեմի ներկայացուցիչ, յատկապէս ծանրանալով այն մեծ դէպքի վերայ, որ Նորին Սրբութիւնը իւր վճռական միջամտութեամբ Երուսաղէմի Աթոռը փրկեց այն մեծ վտանգից, որին ենթակայ էր մինչև Օրմանեան Սրբազանի Երուսաղէմ ժամանելը: Խօսեց նաև Գարեգին Արքեպիսկոպոսը, որ Կ. Պոլիսի պատրիարքի ներկայացուցիչն էր: Ի վերջոյ խօսեց մեր լեզուաբան Ստեփանոս Մալխասեանը՝ Վերաստանի Հայոց թեմի պատգամաւորը՝ բոլոր պատգամաւորների կողմից ցուակցութիւն յայտնելով Գերագոյն Խորհրդին և Ս. Էջմիածնի միաբանութեան մեծ կորուստի համար, որ սղով համակելէ ամբողջ հայութեան. նա յոյս յայտնեց, որ Գերագոյն Խորհուրդը կը կարողանայ լրջութեամբ ասանել եկեղեցու բարձր ղեկավարութիւնը, մինչև Տիրոջ օգնութեամբ կ'ընտրուի նոր Պահակալ Ս. Լուսաւորչի Աթոռի:

Ծանր ժամանակ ենք ապրում մենք և դուք. ծանր էին երկու կորուստներն

միաժամանակ, որ սգով համակեց մեզ բուրբիս և մեզ հետ միասին նաև ամբողջ հայ ազգին: Այս ծանր բոլեյն մեզ բոլորիս վերայ պարտաւորութիւն է դնում ամենայն ոչաւրջութեամբ և հեռատեսութեամբ կշռադատել ներկան և ապագան և աշխատել Ս. Լուսաւորչի Գահի հաստատութեան և երկու տաքելական աթոռների Ս. Էջմիածնի և Երուսաղէմի վերայ բազմեցնել արժանաւոր յաջորդներ:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը Հայրապետի ղին ամփոփելուց յետոյ ձեռնարկեց Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու խնդրին:

Ինչպէս լսում ենք, արտասահմանում սխալ տեղեկութիւն են տարածում իրր թէ Խորհրդային Կառավարութիւնը արգելք է յարուցանում Ազգային-Եկեղեցական ժողով գումարելու և Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրելու մասին: Սակայն դա չի համապատասխանում իրականութեանը, որովհետեւ

1) Նորին Սրբութեան մահուան երկրորդ օրը Հ. Հ. Ներքին Գ. Կորմիսսարը անձամբ գալով Ս. Էջմիածին ցաւակցութիւն յայտնեց Նորին Սրբութեան մահուան առիթով և միաժամանակ հաւատարմացրեց, որ Կառավարութիւնը ղէպի Ս. Էջմիածինն ու Հայոց Հայրապետութիւնը կորսկէ վերաբերմունք ունի և ցանկանում է Հայրապետական Աթոռի Ս. Էջմիածնում մնալը:

2) Մթերքների և առհասարակ անհրաժեշտ նիւթերի այս սուր պակասի ժամանակ Գերագոյն Խորհրդի ղիմումը յարգեց և թաղման առթիւ անհրաժեշտ նիւթերը տրամադրեց:

3) Գերագոյն Խորհուրդը պաշտօնապէս ղիմում անելով Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան խնդրել էր. ա) թոյլ տալ Ազգ. - Եկղ. ժողով գումարել Ս. Էջմիածնում, բ) թոյլ տալ արտասահմանից եկող ընտրեալ պատգամաւորներին և եպիսկոպոսներին գալ անարգել մասնակցել Ազգ. - Եկղ. ժողովին և վերադառնալ, գ) թոյլ տալ այս ընտրական շրջանում թերթ հրատարակել Ս. Էջմիածնում և դ) թոյլ տալ արտասահմանի հայ թերթեր ստանալ, ծանօթանալու արտասահմանում արձարձուող մտքերի հետ:

Ներքին Գործոց Կոմիսսարը այս օրեւ

ընս բանաւոր յայտնեց, որ Գեր. Հոգ. Խորհրդի յարուցած խնդիրները Կառավարութեան կողմից զբաղան լուծումն են ըստացել և զրուոր պատասխան կը տրուի, երբ Կեղրոնական Գործադիր Կոմիտէի նախագահ Պ. Կասեանը կը վերադառնայ Մոսկովայից, ուր մասնակցում է Կուսակցութեան XVI-րդ համագումարին: Այս հիման վերայ Գեր. Հ. Խորհուրդը շատով կ'ուղարկի իւր հրովարտակը ընտրութեան ժամանակը նշանակելով սոյն տարուայ Հոկտեմբերի 26-ը, կցելով նաև 1925 թուին Նորին Սրբութեան հաստատած Կանոնադրութիւնն և թէ ո՞ր տեղից քանի՞ պատգամաւոր է սպասում:

Ուրեմն ոչ միայն չպէտք է հաւատալ վերոյիշեալ լուրերին, այլ պէտք է մաքսով և ամեն կերպ աշխատել որ բոլոր արտասահմանեան պատգամաւորները անշուշտ գան և մասնակցին Ազգ. - Եկղ. ժողովին և կաթողիկոսական ընտրութեան:

Վերջացնելով նամակս խնդրում եմ ընդունեցէք իմ եղբայրական ողջագուրանքը և ցանկութիւնները՝ տեսնել ձեզ քաջառողջ և աննկուն ձեր պարտաւորութեանց կատարման մեջ:

Թող Ամենաբարձրեալը մխիթարէ ձեզ և մեզ և ոյժ ու կարողութիւն տայ տանելու մեզ բոլորն հասած ծանրութիւնն ու վիշտը:

20 Յունիսի 1930 թ. Աղօթակից ձեր՝

Ս. Էջմիածին Մասթոս Արքեպիսկոպոս



Ամենայն Հայոց Կաթողիկոսին բնօրու-
բեան պայմաններուն եւ պարագաներուն վը-
րայ Մայր Աթոռէն Գեր. Տեղապան Սբբա-
զանին ուղղուած պաշտօնագիրներուն պաշ-
ենները:

Ինչպէս կ'երեւի այս պաշտօնագիրներէն
Մայր Աթոռոյ միաբան բոլոր եպիսկոպոս-
ներ կը հրաւիրուին անձամբ մասնակցել Ա-
մենայն Հայոց Կաթողիկոսին բնօրութեան:
Այդ սկզբունքով է որ Ս. Աթոռիս միաբան
եպիսկոպոսներ իսկ առանձին առանձին հը-
րաւիրագիրներ ընդունած են:

Թ. 825

18 Յուլիսի 1930 ամի

Ս. ԷԶՄԻԱՍԹԻՆ

Ի ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳՈՅՍ
Ս. ԷԶՄԻԱՍԹԻՆ ՔՐԻՍՏՈՍԱՆՆԵՐ ՈՂՋՈՅՆ

Տեղապանի Պատրիարքի Հայոց Ս. Երու-
սակէմի, Գերապոսի Ս. ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈ-
ՊՈՍԻ ՆՇԱՆՆԱՆ

Սրբազնագոյն Հայրապետն մեր, Մայ-
րագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն
Հայոց Ս. Ս. ԳԷՈՐԳԻ Ե-րդ, յետ իննետա-
սանամեայ Հայրապետութեան իւրոյ, ան-
քննելի կամօքն Աստուծոյ փոխեցաւ յա-
տեացս յՑ-ն Մայիսի այսր 1930 ամի, թող-
լով թափուր զԱթոռ Կաթողիկոսութեան Ա-
մենայն Հայոց եւ զՄիաբանական Ուխտ Սըր-
բոյ Աթոռոյս ի վիշտս եւ ի տրտմութիւնս:

Այսու Հրովարտական կրկին ծանու-
ցանելով զայս զոյժ սգադիթ Ձերումդ Գե-
րաշնորհութեան եւ ի ձեռն Ձեր համօրէն հո-
գեորականաց եւ բարեպաշտօն ազգայնոց
մերոց՝ ամենայն հաւատարիմ զաւակաց
Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի, բնակելոց ի
քաղաքս եւ ի զիւզս Պատրիարքութեան Հա-
յոց Երուսակէմի, Գերագոյն Հոգեւոր Խոր-
հուրդս Սրբոյ Էջմիածնի հրաւիրէ զՁերդ
Գերաշնորհութիւն եւ զմիաբանական Ուխտ
Սրբոյ Եկեղեցւոյ ուղղել զՋերմաղին զա-
ղօթս եւ զմաղթանս առ Քահանայապետն Յա-
ւիտենից՝ Փրկիչն մեր Յիսուս՝ հանգուցա-
նել ի լոյս երեսաց Իւրոց զհոգի երջանկա-
լիչատակ Հայրապետին մերոյ եւ զմեզ՝ զոր-
բացեալ զաւակունս Մօրս Լուսոյ Սրբոյ Էջ-
միածնի՝ միախառնել պահպանել օգնակա-
նութեամբ եւ շնորհօք Սուրբ Հոգւոյն:

Հնազանդեալ կամաց Ամենախնամ Ա-
րարչին, յետ ամփոփելոյ ի հոգ տապանի
զնշխարս Հոգելոյս Հայրապետին մերոյ եւ
զկնի հոգալոյ զարժանն զեղանակէ անտայ-
թաք առաջընթացութեան Հոգեւոր եւ Եկե-
ղեցական զործոց, ըստ ներման հանգամա-
նաց, եւ ի նկատ առեալ, զի ընտրութիւն
նորոյ Կաթողիկոսի Ամենայն Հայոց պարտ
է լինել ոչ անազան քան զվեց ամիսս ըզ-
կրնի մահուանն, ըստ տնօրէնութեան եր-
ջանկայիշատակ Ս. Ս. ԳԷՈՐԳԻ Կաթողիկոսի
եւ համաձայն 22-րդ յօդուածոյ Յատուկ Կա-
նոնադրութեան, որ վասն զուամբելոյ զԱզ-
գային-Եկեղեցական ժողով, զոր հաստատ-
եալ է Հոգելոյս Հայրապետն ի կենդանու-
թեան իւրում ի 22-րդում աւուր Հոկտեմ-
բեր ամսոյ 1925 ամի, ուստի Գերագոյն Հո-
գեւոր Խորհուրդս տնօրինեաց հասուցանել
զայս ի զխտութիւն Ձերդ Գերաշնորհութեան
եւ հայ ժողովրդեան, որ ի շրջանի պատրի-
արքութեանդ կայ, եւ յանձն առնել տալ
ընտրել, ըստ սահմանեալ կանոնաց, յա-
տուկ իմն քրիստոնէական նախանձախնդրու-
թեամբ, հաւատով, սիրով եւ յուսով զմի
պատգամաւոր աշխարհիկ, իրբեւ զներկա-
յացուցիչ ի կողմանէ հայազնից մերոց, բը-
նակելոց ի Պատրիարքական շրջանիդ, նաեւ
տալ ընտրել զմի ներկայացուցիչ՝ ի կողմա-
նէ Սրբազումար Միաբանութեանդ համա-
ձայն Յատուկ Կանոնադրութեան յաղագս
Ազգային Եկեղեցական ժողովոյ:

Պարտ է ամենայն պատգամաւորաց
պատրաստ գտանիլ աստ՝ ի Մայր Աթոռոջ,
ի 26-րդ աւուր Հոկտեմբեր ամսոյ այսր 1930
ամի, վասն ընտրելոյ զարժանաւոր յաջորդ
Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի առ
ի կառավարել զԵկեղեցին Քրիստոսի եւ պայ-
ծառացուցանել զՀայրապետականն Աթոռ,
որպէսզի ընտրեալ Պետն եւ Գլուխն Հայաս-
տանեայց Ս. Եկեղեցւոյս վարեսցէ զՀայրա-
պետական Իշխանութիւնն յամենայնի ըստ
անտեղիւր Աւետարանական վարդապետու-
թեան եւ ըստ եկեղեցական կարգաց սըր-
բոց Հարց եւ Ազգային-Եկեղեցական ժողո-
վոց՝ ի պարձանս լրութեան Ազգիս, ի պայ-
ծառութիւն եւ ի բարեգարգութիւն Եկեղե-
ցւոյ մերոյ Սրբոյ:

Առաջի աչաց ունելով եւ կշռադատե-
լով զամենայն հանգամանս Հայաստանեայց
Առաքելական Ս. Եկեղեցւոյս, նաեւ զազ-

դային-կրօնական, զբարոյական և զկանոնական պարտիս Կաթողիկոսական պատգամաւորաց հոգեւորականաց և աշխարհականաց հարադատ և հաւատարիմ զաւակաց Մայր Աթոռոյս, Գերագոյն Հոգեւոր Խորհուրդս յոյժ անհրաժեշտ համարէ զներկայութիւն Ձերդ Գերաշնորհութեան և պատգամաւորաց Հայոց երուսաղէմի աստ՝ եւ զանմիջապէս մասնակցութիւն ի գործ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքի-Կաթողիկոսի Ամենայն Հայոց և ի վճռահատումն խնդրոց, յիշատակելոց յօրակարգի առաջիկայ Ազգային-Եկեղեցական Ժողովոյ:

Ներկայութիւն Ձերդ Գերաշնորհութեան աստ՝ ի Մայր Աթոռոջ, յԱզգային-Եկեղեցական Համագումարի, լիցի, արդարեւ, մի-խիթարութիւն և ուրախութիւն վասն Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյս և միաբանական Ուխտի Սրբոյ Աթոռոյս: Իսկ եթէ անհնարին լիցի այդ, յայն զէպս բարեհաճեսցիք առաքել զհոգեւորական ներկայացուցիչ Ձեր:

Ի վերջ բանիցս Գերագոյն Հոգեւոր Խորհուրդս հանդերձ միաբանական Ուխտիւ Սրբոյ Էջմիածնի ջերմագին աղօթիւք առ Աստուած հայցէ՝ զանասանութիւն և զհաստատութիւն վասն Մայր Աթոռոյս և Ընդհանրական Հայրապետութեան Հայոց, Ըզպայծառութիւն վասն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ, զյարատեութիւն և զանշարժութիւն վասն Պատրիարքական Աթոռոյն Սրբոյ երուսաղէմի, զշինութիւն և զբարգաւաճումն վասն Հայաստան Աշխարհիս, զերջանիկ կեանս և զյաջողութիւն ամենայն բարենպաստակ գործոց վասն ամենայն ժողովրդականաց հայազնէից, պահպանելով զամենեւեան ընդ հովանեաւ ամենազօր Աջոյ Իւրոյ ի խաղաղութեան և յերջանկութեան, ամէն:

Տեղակալ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Նախագահող Գերագոյն Հոգեւոր Խորհրդոյ՝
ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Անդամք Գերագոյն հոգեւոր Խորհրդոյ
ԲԱԳԲԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՏԹԼՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԿԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԿԷՆՈՐԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Շ Ր Զ Ա Ր Ե Ր Ա Կ Ա Ն

ԲՈՒՈՐ ԹԵՄԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Թ. — 863

18 Յուլիսի 1930 ամի

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հանգուցեալ երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Ե-րդ Ընդհանրական Կաթողիկոսի թաղման սգահանդէսը՝ ըստ ներման ժամանակի՝ ամենայն շուքով կատարելուց յետոյ՝ Հայրապետական Տեղակալի եւ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի էական հոգան էր ջանք ու աշխատանք չը խնայել Հայրապետական Աթոռ երկար թափուր չը թողնել, այլ վեց ամսուայ ընթացքում զուամբելով Ազգային-Եկեղեցական Ժողով՝ ընտրել տալ Կաթողիկոս ամենայն Հայոց, ինչպէս և Ազգային-Եկեղեցական Ժողով զուամբելու Հայրապետահաստատ կանոնադրութեան 22-րդ յօդուածով նախատեսուած է:

Այս է պահանջում հայ Եկեղեցւոյ դերագոյն շահը:

Այսպէս խորհելով՝ Ամենապատիւ Տ. Տեղակալի և Գերագոյն Հոգեւոր Խորհրդի կողմից տարւոյս մայիսի 28-ին, Թ. 454 զրութեամբ պաշտօնական զիմում եղաւ Խորհրդային Հայաստանի Կենտրոնական Գործադիր Կոմիտէի եւ Ժողովրդական Կոմիտսրների Խորհրդի Նախագահութեանց, որ թոյլատրուի զուամբել Ազգային-Եկեղեցական Ժողով՝ մօտաւորապէս Հոկտեմբերի վերջերին:

Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Իշխանութիւնը իր կենտրոնական խնդրի հետ արծարծել է նաեւ քանի մի կարեւոր հարցեր եւս, որոնք նպատակ ունին Ազգային-Եկեղեցական Ժողովի զուամբումը զիւրացնելու և ժողովը ազատ ու հեղինակաւոր դարձնելու, որոնք են՝ ա) Դիւրութիւններ ընձեռել՝ Խորհրդային պետական օրէնքով թոյլատրուած՝ պատուիրակներ իւր և պատգամաւորների ժողովներ զուամբելու: Բ) Երաշխատել և զիւրացնել արտասահմանի պատգամաւորների ազատ մուտքն և ելքը Խորհրդային Հայաստան: Գ) Ազգային-Եկեղեցական Ժողովի օրակարգի հարցերի, որոնք հոգեւոր ընդթ ունին, Խորհրդային օրէնքով թոյլատրուած՝ ազատ քննութիւնն ապահովել: Դ) Կաթողիկոսական ընտրութեան շրջանում արտասահմանի բոլոր հասանքների հայ թերթերի ստացումն արտօ-

նեւ: Ե) Նոյն շրջանում թոյլատրել պարբերական հրատարակութիւն ունենալ՝ Կաթողիկոսական ընտրութեան խնդիրները հետադիմութիւն ունեցող հարցեր լուսարանելու նպատակով:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ուրախ է այժմ հաղորդելու բոլոր հայ թեմերի հոգեւոր Իշխանութեանց ու մարմիններին եւ նոցա միջոցով հայ հաւատացեալ ժողովրդին ի միամտութիւն, որ արդէն ստացել է Խորհրդային Հայաստանի Կառավարութեան ոչ միայն բանաւոր հաւատարմացումը Ազգային-Եկեղեցական ժողովի գումարման թոյլտրութեան եւ վերեւում յիշատակուած նորա արձարձած յարակից խնդիրների գրական լուծման մասին, այլ եւ նորա Յուլիսի 6-ի Թ. 574 զրուար պատասխանը, որի վաւերական պատճենը այսու ուղարկուած է Միութեանական եւ արտասահմանեան բոլոր թեմերին:

Ազգային-Եկեղեցական ժողովի օրակարգի հարցերն են.

Ա) Ընտրութիւն Մայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի Ամենայն Հայոց:

Բ) Ընտրութիւն Տեղակալի Ամենայն Հայոց Մայրագոյն Պատրիարք-Կաթողիկոսի:

Գ) Ընտրութիւն Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամների:

Դ) Ազգային-Եկեղեցական Սահմանադրութեան քննութիւն եւ հաստատութիւն:

Ե) Զեկուցում Հայոց Ազգային Եկեղեցու բարեփոխութեան մասին:

Զ) Ս. Էջմիածնի եւ նորա հոգեւոր, կըրթական ու կուլտուրական յարակից հաստատութիւններին նախահաշուի վաւերացում:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը՝ ընդ ամեն ուղարկելով նաեւ ընտրական հրովարտակը, առաջարկում է, առանց յապաղման, կատարել պատգամաւորների ընտրութիւնը:

Ազգային-Եկեղեցական ժողովը՝ ըստ հնաւանդ նուիրական սովորութեան, որ կանոնական որոշման բնոյթ է ստացել, կը գումարուի Ս. Էջմիածնում: Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը խորապէս համոզուած է թէ՛ հա-

ւատացեալ հայ ժողովուրդը, որ միշտ նախանձախնդիր է Հայոց Հայրապետական գահի անասանութեան եւ հեղինակաւորութեան՝ կ'աճապարէ ձեռնարկել պատգամաւորների ընտրութեան եւ իր ընտրեալ հեղինակաւոր պատգամաւորներին կը պարտադրէ անձամբ ներկայ լինել Ազգային-Եկեղեցական ժողովին՝ ժողովի հեղինակութիւնը բարձրացնելու, օրակարգի հարցերի հեղինակաւոր լուծմանը նպաստելու եւ Ս. Էջմիածնի Հայրապետական գահը բաղմնելու արժանաւոր Աթոռակալ, որ կարողանայ՝ ներկայ համաշխարհային յեղեղուկ եւ ծանր մոմենտին Ս. Էջմիածնի Ընդհանրական Հայրապետութիւնն եւ նրանով Հայ Եկեղեցին անասան պահել, հայ Եկեղեցու միասնականութիւնը ապահովել եւ իր պատմական գերին հաւատարիմ մնալով՝ ի սփիւռս ցրուած վտարանդի հայութեան օգտակար եւ ազգային ու բարոյական կուլտուրայի նեցուկն ու խթանը հանդիսանալ:

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը միանգամայն մտած է, որ հայ հաւատացեալ ժողովուրդը ի նկատի կ'առնէ Էջմիածնի պատասխանատուութեան հանգամանքը եւ՝ խոհեմութեամբ ու հեռատեսութեամբ մօտենալով պատգամաւորական ընտրութիւններին՝ կ'ընտրէ խոհեմ եւ հեռատես անձինք, որոնք իրենց գիրքի վեհութիւնն ու քաղաքական միջավայրի հոգեբանութիւնը կ'ըմբռնեն ու ըստ այնմ կը ղեկավարուին՝ նպաստելով առաջիկայ Ազգային-Եկեղեցական ժողովը խաղաղ բանալու, օգտակար զարձնելու եւ խաղաղ գոցելու:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի Տեղակալ եւ Նախագահող Գերագոյն Հոգեւոր Խորհրդի՝

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Գերագոյն Հոգեւոր Խորհրդի Անդամներ
ԲԱԳՐԱՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՄԱՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

(Պատկեր)

Հ. Ս. Խ. Հ.

Բ. Գ. յե. Կ. Բ.

Պատգամավորական Խորհուրդների

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԳԻՐ

Կ Ո Մ Ի Տ Ե

6-ն Հուլիսի 1930 թ. 574

ՅԵՐԵՒԱՆ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻՆ
ԵՋՄԻԱԾՆՈՒՄ

Հայաստանի ՍԽՀ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի նախագահի կարգադրությամբ ի պատասխան Գերագույն Հոգեվոր Խորհրդի 1930 թ. Մայիսի 28, ՆՕ-454 գրության ՀՍԽՀ Կենդգործկոմի քարտուղարությունը հաղորդում է:

Ա) 1930 թ. աշնանը եղմիաձուլ կաթուղիկոսի ընտրության համար գումարավելիք ընդհանուր յեկեղեցական ժողովը, ինչպես նաև Կաթուղիկոսի ընտրության հետեւանքով Հայաստանի ԽՍՀ սահմաններում պաշտամունքի գործոց պատգամավորներ ընտրելու համար հավատացյալների ժողովներն ու համագումարները չեն հակասում Հայաստանի ՍԽՀ Սահմանադրության 5-րդ հոդվածին, վորի հիման վրա քաղաքացիների խղճի ազատությունն ապահովելու նպատակով ընդունվում է բոլոր անձանց կրոնական պրոպագանդայի ազատությունը:

Բ) Հավատացեալների վերոհիշեալ ժողովների ու համագումարների կազմակերպության ապահովումը զաշնակից մյուս հանրապետություններում, վորոնց սահմանադրությունները ունեն համանման նորմա, վերաբերում է զաշնակից հանրապետությունների սուվերեն իրավասությունը վերջինների մարմիններին եւ բոտ պատկանելուն ուղարկվում է Ձեր զիմումը:

Գ) Ոտարահպատակ հավատացյալների մուտքը ԽՍՀ Միություն, ուստի նայե Հայաստանի ԽՍՀ սահմանները, վերոհիշեալ ժողովներին մասնակցելու համար, կարող ետեղի ունենալ ընդհանուր հիմունքներով աշխինքն՝ ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչությունների յեվ հյուպատոսարանների տրված խուլովությամբ անցագրերի վրա նշանակված վիզաների ձեւով, նշած ոտար յերկրյա քաղաքացիների ԽՍՀՄ գալու իրավունքի

իրագործումը կապված է նրանց ազգային անցագրերով վիզա ստանալու հետ:

Դ) Խորհրդային յերկրում տարածվելիք տպագիր գրվածքների հրատարակության հարցերը կենտրոնացած են Գրառեպգլխվարում, բոտ վորում մամուլի միջոցով քաղաքացիների կարծիքը արտահայտելու ազատությունը ապահովված է Հայաստանի ԽՍՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով, Գրառեպգլխվարի մարմինները չեն կարող արգիլել կրոնական հարցերի վերաբերյալ տպագիր գրվածքների հրատարակությունը յեթէ միայն այդ գրվածքները մասնավորապես հակախորհրդային նպատակներ չեն հետապնդում:

Հայաստանի ԽՍՀ Կենտրոնական
Գործադիր Կոմիտեյի Քարտուղար
(ստոր.) Գ. ՄՈՎՍԵՍՅԱՆ

Սոյն պատճենի հարազատությունը Գերագույն Հոգեւոր Խորհուրդը հաստատում է ստորագրութեամբ եւ Խորհրդի կնքով:
17-ն Յուլիսի 1930 թ. Ս. Էջմիածնի

Անդամ Գերագույն Հոգեւոր Խորհրդի՝
(ԿՆԽԲ) ԴԷՈՐԳ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Քարտուղար՝ Յ. Քոչարեան

ՅՐԱՍԱՊԷԻՍ ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ
ՖԵՐԱԸՆՈՐԻ

Տ. ՄԵՍՐՈՊ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Թ.— 869

22 Յուլիսի 1930 ամի

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Գերագույն Հոգեւոր Խորհուրդը ընդ սմին ուղարկում է Ձեր Գերաշնորհութեան տարւոյսի հոկտեմբերի 26 ին գումարուելիք Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի եւ յարակից խնդիրների վերաբերութեամբ բուր թեմակալ Առաջնորդներին ուղարկուած շրջաբերականը, որին կցուած է Խորհրդիս զիմումի առթիւ Հայաստանի Կառավարութեան տուած գրաւոր պատասխանի վաւերացրած պատճենը:

Եղբայրական սիրոյ ողջոյններով
Անդամ Գերագույն Հոգեւոր Խորհրդի
ՄՍՏԹԷՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Քարտուղար Յ. Քոչարեան

Երուսաղեմի Պաշխարհական Տեղապահ
Գերազանց

Տ. ՄԵՍՐՈՊ ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Թ.— 870

22 Յուլիսի 1930 ամի

Ս. ԷԶՄԵՆՆԻՆ

Գերազանց Հոգևոր Խորհուրդը ներքակ
ուղարկելով Ձերգ Գերաշնորհութեան Հայ-
րապետական ընտրութեան հրովարտակներ
յանուն Տ. Տ. Բարդէն Եպիսկոպոս Գիւլի-
սերեանի, Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնու-
նու և Մատթէոս Եպիսկոպոս Գալղզեանի,
խնդրում է նեղութիւն կրել յանձնելու ըստ
պատկանելեաց:

Եղբայրական սիրոյ ողջոյններով

Անգամ Գերազանց Հոգևոր Խորհրդի

ՄՍՏԹԼՈՍ ՍՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Քարտուղար Յ. Քոչարեան

Ի Կալկաթա-Հնդկաց,

յ՝ 12 Դեկտեմբերին 1929:

Առ պատական խմբագրութիւն «ՍԻՈՆ»
Կրօնաքերքի, ի Սուրբ փնս Յակոբեանց,
Երուսաղէմ:

Գոհ եղեց յոյժ եթէ ազգասիրաբար
շնորհ արասջիք հրատարակել յէջս պատ-
ուական ամսաթերթիդ՝ զպատճեն սրբա-
տառ Կոնդակի Վեհափառ Հայրապետին
Հայոց առ իմ նուաստութիւն յաւուր քա-
ռանաւանայ Գրական Յորելեմիս որ տօնե-
ցաւ թէ աստ ի Կալկաթա և թէ անդ ի ցան-
կալի ծննդավայրին իմում ի Նոր-Ջուղա՝
ի 4 Նոյեմբերին անցեալ 1929 ամին:

Կից ընդ օրհնասաք Կոնդակի Վեհա-
փառին առաքեմ և զպատճեն հեռագրին
զոր Սրբապետուրբ Կաթողիկոսն Ամենայն
Հայոց առաքեալ էր ի շնորհաւորութիւն
Յորելեմիս, օրհնութեամբ հանդերձ: Առա-
քեմ նոյնպէս և զօրինակ զրութեան «Գե-
րազոյն Հոգևոր Խորհրդին» զոր ստացայ
ընդ Կոնդակին:

Կոնդակ Վեհափառին ընթերցեալ եղև
ի Նաղարկթայ սուրբ եկեղեցւոյ մերում
աստ յաւուր կիրակէի որ էր «Կարմիր Կիւ-
րակէի» 7 Ապրիլին անցելոյ՝ ի լուր բազ-
մաթիւ ժողովրդեան որք եկեալ էին յառ-
կապէս լսել զբանս Կոնդակին՝ զի զուն ու-
րեք ընթերցեալ լինին Կոնդակք Հայրա-

պետականք աստ ի Կալկաթա ուր գտանին
յազգէս, ըստ մեծի մասին Նոր-Ջուղա-
յեցիք:

Կանխաւ մատուցանելով Ձեզ զջերմ
շնորհակալիւ իմ վասն բարեհաճ ընդու-
նելութեան խնդրանացս, պատիւ տնձին:
համարիմ, զալ և մնալ, միշտ ամենախո-
նար ծառայ Ձեր՝

Մեսրոպ Յ. Սերեանց

Յ. Գ.

Ներքակ ի սմին առաքեմ և զբախտա-
կան մի զրեալ ի Պարոն Արտաշէսէ Թ. Ալ-
լահիէրդեան, մի ի Հայ ուսուցչոյն «Մար-
դասիրական ձեմարանին» քաղաքիս, յա-
ղաքս իմոյ անդլիերէն բանախօսութեան
ի կաճառի «Պատմաբանիցն Հնդկաստանի»
զկենաց և զգործոց խօջայ Պետրոսի Յա-
րութիւնեան՝ հայկազն զիւսպէտին որ ի
մեծի ճգնաժամուն անգլիացւոց աստ ի
Բանգալա, յամին 1756, խաղաց յոյժ կա-
րեւոր զեր իմն յօգուտ զոռոզ որդւոցն Ալ-
րիօնի՝ զուով այր ազգեցիկ և հեղինակա-
ւոր ի զրուսն իշխանացն նահանգիս ուս-
տի և անհրաժեշտ վասն աղուխտոցն անգ-
լիոյ: Գոհ եղեց յոյժ եթէ ազգասիրաբար
հիւրընկալջիք յէջս պատուական ՍԻՈՆի ի
քաջալերականակ զրոգին (*):

Մ. Յ. Ս.

Պատեն հետագրին usaghay ի Վեհափառ
Հայրապետ ի շնորհաւորութիւն Յորելեմիս:

Էջմիածին

31 Դեկտեմբեր, 1928

Վարդանեան,

ձեմարան Հայոց,

ի Կալկաթա:

Շնորհաւորում ենք Մեսրոպ Աթեմեանի
զրական կրթական ազգօգուտ գործունե-
ութեան Յորելեանն, օրհնում ենք Յորել-
եանին:

Գեորգ Կարովիկոս Ամենայն Հայոց

Ծանօթութիւն: — Հեռագրին զրեալ էր Հա-
յերէն՝ որպէս ի վեր, այլ լատին տառիւք,
ըստ սովորականին:

Պարոն Վիքթօր Վարդանեան էր քար-
տուղար Յորելեանական Յանձնախումբին:

Մ. Յ. Ս.

(*) Այս Մատենախօսականը կը հրատարակուի ՍԻՈՆի
յաջորդ քիւլին մէջ:

Պատճեն գրութեան « Գերագոյն Հոգևոր Խորհուրդի » առաջնայ ընդ արքայազ Կոնյակիի Վեհափառին :

Թ. 556

4 Նոյեմբեր, 1928 ամի

Ս. ԷՋՄԻԱՏԻՆ

Մեծարգոյ Յոբելիար

Պ. Մեհրովբայ Յ. Աէթեանց

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը Հոգևորների 31-ի հեռագրով շնորհաւորեց Ձեր քառասնամեայ գրական և կրթական գործունէութեան Յոբելեանը, որի առթիւ այսօր ուղարկուեց նաև Հայրապետական օրհնատաք Կոնյակը Ձեր անունով, յարգելի Վերջի Կարգանեանի հասցեով :

Գերագոյն Հոգևոր Խորհուրդը եւս ի սրտէ շնորհաւորելով Ձեր քառասնամեայ օգտաւէտ գործունէութեան Յոբելեանը, մաղթում է յարգելի Յոբելիարիդ երկար և երջանիկ կեանք և կատարեալ յաջողութիւն Ձեր ձեռնարկած բոլոր ազգօգուտ և բարի գործերի մէջ :

Անդամ Գերագոյն Հոգևոր Խորհրդի՝
Խորհն Արքեպիսկոպոս
'Իրանապետ' Ռուբեն Եպիսկոպոս
'Բարտուղար' Յ. Բոչարեան

Պատճեն Կոնյակիի Վեհափառ Հայրապետի առ Յոբելեան Մեհրովբ. Յ. Սեքեանց որ ի Կալկարա :

ԳԻՈՐԳ Ժառայ Յիսուսի Բրիտոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Մայրապոյն Պատրիարք համազգային նախամեծար Աթոռոյ Արարատեան առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի :

Մեծարգոյ Պ. Մեհրովբայ Յ. Աէթեանց՝ հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս՝ ողջոյն և օրհնութիւն Հայրապետական :

Քաջայայտ են Ձեզ, սիրելի որդեակդ հոգևոր, ամենայն պատմութիւնք անձից անցելոց վտարանդի Հայոց ի Հնդկի, գորս մանրակրկիտ հետազօտութեամբ ի յոյս ամեալ է Ձեր և այժմ ևս շարունակէք ուսումնասիրել և ի յայտ բերել զգործս և զարժանիս եղին : Արդէն իսկ գիտէք եթէ՝ որպիսի հանրօգուտ գործունէութեամբ բաղումք ի նոցանէ զինքեանս երեւելիս կա-

ցուցին յաչս ազգայնոց մերոց և օտարաց ի գանազան աստարէզս :

Նոքա եղեն, զի ի դարս անցեալս հիմնարկեցին զբազում եկեղեցիս և զազգային կրթարանս, սկիզբն արարին անդրանիկ լրագրութեան մերոյ ի Մայրաքաղաքի Հնդկաց, հաստատեցին և բարգաւաճ արարին զՄարդասիրական ձեմարան Հայոց ի Կալկաթայ քաղաքի, որ առուել քան զմի դար լուսաւորէ և զառաւարակէ զմանկունս Հայոց : Որդիական սիրով և ջերմութեամբ զգացմամբ շաղկապեալ ի մի առ Մայր Աթոռս Սուրբ Էջմիածին, հանապազ ջանային ըստ հնարաւորութեան ի կատար ածել զբարոյական պարտիս իւրեանց առ ազգն մեր և Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին առատաձեւն բարեգործութեամբ իւրեանց :

Հանապազ յիշելով օրհնութեամբ զայս ամենայն բարեմասնութիւնս և զազգօգուտ գործունէութիւնս նախնեացն Հնդկահայոց, մխիթարեալ լինիմք զարդիս ի սիրտ և ի հոգի, յորժամ անդեկանամք և իմանամք, զի ի ժառանգս և ի յաջորդս նոցա զոն անձինք, որք զարժանաւոր նախնեաց իւրեանց զնմանութիւն յինքեանս բերելով, կատարեն սրտեանդն օգուով զօրբազան պարտիս իւրեանց առ ազգն մեր, առ Հայրենիս և առ Մայր Աթոռս Ս. Էջմիածին :

Եւ զմինն յայդպիսեաց արժանաւորաց ի հեռաւոր զաղթավայրիդ զՁեզ գիտեմք, սիրելի զաւակդ մեր հոգևոր, քանզի Դուք՝ յընթացս քառասնից ամաց, փայլեալ էք զբական վաստակօք Ձերովք և արդիւնաւէտ գործունէութեամբ յանդաստանի ազգային կրթութեան և գրականութեան : Ուստի զօհունակութեամբ սիրտի իրազեկ եղաք, զի յայսմ աւուր՝ ի 4 Նոյեմբեր ամսոյս, կատարի քառասնամեայ Յոբելեան, հանրօգուտ գործունէութեան Ձերոյ :

Ընկալարժէք, որդեակդ սիրելի, զօրհնութիւնս բազմափիշտ Հայրապետիս հանուրց Հայոց՝ ի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի :

Ընկալարժէք, վաստակաւոր մշակդ ազգիս, զՀայրական զօհունակութիւն և զշնորհաւորութիւն մեր յափանց Մայր Արաքսի և ի ստորոտից վահապանձ ալեւոր Մասեաց :

Եւ այսու Հայրապետական Կոնյակաւ

օրհնելով զՁեզ, զվաստակս և զմեղուաջան աշխատանս Ձեր, մաղթեմք ի Տեառնէ պարգեւել Ձեզ առողջութիւն և երկարակեցութիւն վասն ազգօգուտ գործունէութեան, պահպանել և զօրացուցանել զՁեզ ի հայրենասիրութեան, յազգասիրութեան եւ ի գործս բարիս:

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն և յաւէտ օրհնեալ ի մէնջ, ամէն:
Վշտալի ԳԵՌՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԵՒ ՆՐԱՅՐԱՊՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ

Ի 4 Նոյեմբերի, 1928 ամի,
ըստ տոմարիս ՌՅՀԸ,
ի Հայրապետութեան մերում Ամ. Հայոց
մէջ ամի,
յ՝Արարատեան Մ. Աթոռ Ս. Էջմիածնի,
ի Վաղարշապատ:
Թ. 517

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԿԵԼԻԿԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԱՆԹԻԼԵԱՍԻ ՄԷՋ

1915-էն ի վեր Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնն ալ, Թիւրքիոյ բովանդակ հայութեան հետ, զրկուած իր բոլոր բնիկ, հաստատուն և պատմական զիրութիւններէն, եղաւ թափառական և բարբարոսական, եւ Վեհափառ ու ալեփառ Սահակ Ս. Կաթողիկոսը չկորսնցուց իր հաւատքը, վերակազմելու համար իր Աթոռը Կաթողիկոսարանով և ուսումնարանով:

Քանի որ Սիւրիոյ ասպնջական հողին վրայ համախմբուած էին բիրտօր Հայեր Կիլիկիայէն և հայաբնակ ուրիշ քաղաքներէն, հարկ անհրաժեշտ էր այդ չըջանակին մէջ կազմակերպել ամէնէն յառաջ Կաթողիկոսական թեմը. և այս առաջին քայլը յաջողեցաւ յաւէտ ողբացեալ Ամեն. Դուրեան Եղիշէ Ս. Պատրիարքին իմաստուն կարգադրութեամբ և Ս. Յակոբայ Պարծն. Միաբանութեան բարեացակամութեամբ, որուն հետեանքով Երուսաղէմի Աթոռին հոգեւոր իրաւասութիւնը Պերութի, Շամի և Լաթաքիոյ չըջանակներուն մէջ, փոխանցուեցաւ Կիլիկիոյ Աթոռին, և Վեհ. Սահակ Կթղս. կարող եղաւ ստեղծել առաջնորդական երեք նոր թեմեր, որոնք աւելնալով արդէն Կիլիկիոյ Աթոռին պատկանող Հալէպի և Կիպրոսի թեմերուն վրայ, հինգ թեմեր կազմակերպուած եղան Կաթողիկոսական աթոռներով:

Երկրորդ առնելիք քայլն էր Կաթողիկոսարանի համար հաստատուն տեղ մը գտնել:

Հալէպին էր Կաթողիկոսանիստ քաղաք ըլլալու իրաւունքը. որովհետեւ սկիզբէն ի վեր Սիւրի հետ և անոր հաւատարմ զիրքունեցաւ Հալէպ: Թէ՛ Կլիմայի և Թէ՛ քաղաքական պատճառներով մա՛նաւանդ Կիլիկիոյ Կաթողիկոսները Հալէպ կը նստէին յաճախ, այնպէս որ Հալէպի Քառասուն Մանկունք եկեղեցին տեսած է Կաթողիկոսական և Կաթողիկոսական ձեռնադրութիւններ և օծումներ, սրբալոյս Միւռոնի օրհնութիւններ, իսկ բուն մատուռը՝ Քառասուն Մանկանց այդ եկեղեցւոյն մէջ՝ եղած է նաեւ դամբարան Կաթողիկոսներու և Կաթողիկոսներու: Բայց 1915-էն ետքը, Սիւրիոյ մէջ քաղաքական պայմաններու նորադոյն դասաւորման հետեանքով Պերութի խրեց առաջնութիւնը՝ դառնալով բովանդակ Սիւրիոյ հոգատար կառավարութեան կեդրոն, ինչպէս նաեւ Լիբանանի հանրապետութեան մայրաքաղաք, և Հալէպ մնաց ետեւ, թէ՛ ամէնէն մեծ հայաբնակ քաղաքն է:

Սիւրիա իսկապէս կրօնական երկիր մըն է բազմաթիւ յարանուանութիւններով, որոնց բոլոր հոգեւոր պետերը Պերութին հաստատած իրենց Աթոռները. և իրերու բնական բերմունքով Կիլիկիոյ Աթոռն ալ պիտի հաստատուէր Պերութի, և ասիկա փափաքն էր նաեւ Բարձր Քօմիսէրութեան: Բայց Պերութի մէջ չը կար յարմար տեղ Կաթողիկոսարան բնելու համար:

Անթիլիասի մէջ Նիյր Իսքի որբանոցի շէնքերուն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սրամազրութիւն հնարաւորութիւն առաւ Վեհ. Սահակ Կթղին. որ Կաթողիկոսարանն ալ կազմակերպուի հոն իր ուսումնարանին հետ:

Անթիլիասի շէնքերը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սրամազրող պայմանագրութիւնը ստորագրուեցաւ Պերութի մէջ, 1930 Ապրիլ 7-ին, Նիյր Իսքի Քարաուղար Մր. Պարքէյէ Էջիսընի և Կիլիկիոյ Վեհ. Սահակ Կաթողիկոսի կողմէն, զայն իրբե

վկայ ստորագրեցին նաև Բարդէն Եպիսկոպոս, Մր, Մարչ և Լեոն Զէնեան:

Պայմանագիրը անգլիերէն է և կը բաղկանայ ութը յօդուածներէ, որոնցմէ կ'ամփոփենք հետեւեալները:

Յօդ. 2. Վարձակալութիւնը հինգամեայ է, 1930 Յուլիս 1 էն մինչև 1935 Յուլիս 30: Եթէ վարձակալը ուզէ երկարել այս պայմանաժամը, պէտք է որ իր փափաքը յայտնէ այդ մասին, ապահովագրելով նոստալով մը, պայմանաժամին լրանալէն երեք ամիս յառաջ:

Յօդ. 3. Վարձակալը կը խոստանայ որ չէնքերը բացարձակապէս պիտի զործածուին կաթողիկոսարանի և զպրոցի համար, ուր պիտի պատրաստուին եկեղեցականներ և ուսուցիչներ, հետեւալ պայմաններով.

ա) Դպրոցը պիտի վայելէ օժանդակութիւնը Յանձնաժողովի մը որ կազմուած է նիւ Եօրքի մէջ նիյր Իսթի և Ամերիկայի Հայոց ներկայացուցիչներէ:

բ) Դպրոցին վերատեսուչը և ուսուցչական մարմինը պիտի նշանակուի Վեհ. Կաթողիկոսի կողմէն և պիտի հաստատուի նիւ Եօրքի Յանձնաժողովի կողմէն:

գ) Երկու կողմէն կ'որոշեն զպրոցը բանալ յառաջիկայ աշնան:

Յօդ. 4. Դպրոցի բացումէն յառաջ անոր վարչական մեթոդին, առարկաներուն և ուսմանց ծրագրին համաոտ մէկ վաւերագիրը պիտի պատրաստուի Ն. Ս. Օժուրեան Սահակ կթղի. կողմէն, խորհրդակցութեամբ Աթոռակից Գեր. Տ. Բարդէն Եպիսկ., Գեր. Շահէ Ծ. Վրդ. Դասպարեանի, և պիտի զրկուի վերոյիշեալ Յանձնաժողովին:

Թէ՛ չէնքերու զործածութեան, թէ՛ նիւ Եօրքէն ապահովուած նիւթական օժանդակութեան տեւականութիւնը կախուած է ծրագրին համամատ ձեռք բերուելիք արդիւնքէն և ազդուութենէն:

Յօդ. 5. Տարեկան վարձքը մէկ տօլար է:

Յօդ. 6. Վարձակալը պարտաւոր է լաւ վիճակի մէջ պահել կալուածը. ոչ մէկ ծառ պիտի կտրուի, ո՛չ ալ ունէ փոփոխութիւն պիտի կատարուի չէնքերուն վրայ առանց կալուածատիրոջ հաւանութեան:

Յօդ. 7. Վարձակալը իր վարձակալութեան շրջանին պարտաւոր է վճարել

կալուածատուրքը, ինչպէս նաև զոհացում տալ կառավարութեան կամ քաղաքապետութեան պահանջներուն:

Յօդ. 8. Վարձակալը կրնայ ապահովագրել կալուածը:

Ինչպէս որ կը տեսնուի այս ամփոփումէն, նիյր Իսթ Բըլլփը, որ այժմ եղած է նիյր Իսթ Ֆաունտէյըն (Հիմնարկութիւն Մօտաւոր Արեւելքի), բացարձակապէս բարեկեցեամբ և անշահախնդիր ոգիով կը զործակցի կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին, որպէս զի Ն. Ս. Օժուրեանը կարենայ կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կազմակերպել լրջօրէն, կեդրոն դարձնելով զայն պատաստութեան հայ եկեղեցականներու և հայ ուսուցիչներու. երկու զլրատոր զործօն ուժեր, որոնց պէտք ունի Սիւրիոյ հայութիւնը:

Սիւրիոյ մէջ բոլոր յարանուանութեանց եկեղեցական և կրթական կազմակերպութիւններուն կեդրոնն է իւրաքանչիւրին հոգեւոր իշխանութիւնը:

Եւ մեր այժմեան վիճակին մէջ ալ ա'յսպէս պէտք է ըլլայ ո՛չ միայն Սիւրիոյ մէջ՝ այլ նաև Եւրոպայի և Ամերիկայի մէջ(*):

Ապահովութեան և փրկութեան միակ ճամբան Հայ եկեղեցին է, հայր հա՛յ պահելու համար բոլոր զաղթավայրերու մէջ:

Յուսով ենք որ քիչ տառնէն Անթիլիաս պիտի գտնայ հոգեւոր և մտաւոր կրթութեան վստարան մը:

Դպրոցը, որ պիտի բացուի այս աշնան, պիտի վայելէ Գեր. Շահէ Ծ. Վարդապետի կորովն ու խնամքը:

Շահէ Վրդ. Դպրեվանքի կարող վարդապետներէն մէկն է: Դուրեան Սըրազան մասնաւոր համակրանք կը տածէր հանգէպ Շահէ Վարդապետի, որուն վերատեսուչ նշանակուելը Անթիլիասի զպրոցին մեծ հրճուանք պատճառեց իրեն, այնպէս որ փափաքեցաւ անձամբ տեսնել իր աշակերտը երուսաղէմի մէջ: Շահէ Վրդ. ուշ հասաւ երուսաղէմ, լալու համար իր սի-

(*) Եւրոպիոյ հայ զաղութներու կազմակերպութեան համար ալ Ամենայն Հայոց կաթողիկոսին լիազօր պատուիրակ Թորգոմ Սըրազան մեզմէ անկախաբար մինեւոյն կարծիր յայտնած է իր տեղեկագրին մէջ, որ ճրատարակուեցաւ Սիոնի այս օրերուն մէջ:

բնիլի ուսուցչին գերեզմանին վրայ և հազիրէ հինգ օր, Յուլիս 17-22, կրցաւ մնալ Ս. Յակոբի մէջ՝ հարկ եղած խորհրդակցութիւնը կատարելու համար Բարզէն Սրբազանի հետ Անթիլիասի զպրոցի ուսմանց ծրագրին և թեկնածուներու ընտրութեան և ընդունելութեան պայմաններու մասին:

Գեր. Շահէ Վարդապետ 48 տարեկան է այժմ. հաւատքի և համոզումի մարդ է: Բոլորովին անծանօթ չէ իրեն սիրելական միջավայրը: Ամերիկա երթալէ յառաջ Հալէպի մէջ վարած է առաջնորդական պաշտօն և այնչափ գոհ եղած է ժողովուրդը որ մինչև հիմայ գրուատիքով կը յիշատակուի իր գործունէութիւնը Հալէպի մէջ:

Ամերիկայի մէջ անցուցած իր 17 տարիներուն առաջին երեքը նուիրեց իր ուսումը կատարելագործելու Պոստոնի կից Բէյպրիճի Աստուածաբանական դպրոցին և Հարվըրտ համալսարանի մէջ: Յետոյ 14 տարի շարունակ վարեց Պոստոնի նման լայնածաւալ թեմի մը հոգեւոր հովուութիւնը, և իր ջանքերուն շնորհիւ է որ Պոստոն ունեցաւ իրեն սեպհական եկեղեցին, որուն կէտը քիչ տտնէն զգալի եղաւ Պոստոնի թեմին հայ կեանքին գործառնութեանց մէջ:

Գեր. Շահէ Վարդ. ամէն յարմարութիւն և կարողութիւն ունի վերատեսչի բարձր պաշտօնը արժեցնելու Անթիլիասի զպրոցին մէջ և առաջնորդելու այն երկտասարդներուն, որոնք քիչ տտնէն պիտի համախմբուին հոն՝ սորվելու և պատրաստուելու համար իրենց Մայրենի եկեղեցւոյն և ազգային դպրոցին ծառայութեան:

Ինչպէս երբեմն Մամուրյա մը ասպնջական եղաւ Հայոց կաթողիկոսական աթոռին, Բիւզանդական կայսրութեան քիչ շատ ապահով և սակայն օտար սահմաններուն մէջ, այժմ ալ Անթիլիաս մը կը հիւրընկալէ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը օտար միջավայրի մը մէջ, յաւիտենական Լիբանանու ստորոտը, Հայոց համար շատ բարեկացական կառավարութեան մը չըջանակին մէջ, և Ֆռանսայի նման լուսաւոր պետութեան մը հոգատար հովանիին տակ, հոն դանկելով ապահով կուտան մը՝ վերակազմելու համար իր հոգեւոր-վարչական յօրինուածքը և իր զպրոցական գործը:

Մ Ա Ն

ՊԱՏՐԻԿ ԷՖ. ԿԻԼՊԷՆԿԵԱՆԻ

Դուրեան Սրբազանի պէս Պատրիկ Կիւլպէնկեան ալ զոհ գնաց դաժան և դաւաճան հիւսղութեան մը, երբ յոյսեր և հաւանականութիւններ կային երկուքին ալ կեանքին երկարութեան համար:

Կիւլպէնկեան տասը տարիներէ ի վեր կը նեղուէր դժուարամիտութենէ, բայց ողջապահիկ պայմաններով կը կարծէր զիմազրել վտանգին, զոր նկատի առնելով Փրօֆ. Մարիօն խորհուրդ կուտար իրեն որ գործողութեամբ առաջքը առնէ բարգուծութիւններու: Կիւլպէնկեան չուզեց յանձնուիլ նշարակին, բայց յետոյ ստիպուեցաւ տեղի տալ զխտութեան պահանջին: Մայիս 19-ին մտաւ Նիւ Եորքի Փոլիֆիլիֆ հիւանդանոցը, և յաջողութեամբ անցաւ առաջին գործողութեան մէջէն: Յունիս 9-ին կատարուեցաւ երկրորդ գործողութիւնը նոյնքան յաջողութեամբ, բայց Յունիս 12-ին վատթարացաւ իր վիճակը և հակառակ զխտութեան բոլոր ճիգերուն և ընտանեկան անձնուէր խնամքներուն՝ մահը գաղբեցուց ապրելէ թանկագին կեանք մըն ալ:

Կիւլպէնկեան անունը իր հարստութեան համար չէ որ սիրուած է հայ ժողովուրդին մէջ: Այդ անունը ազնուական աւանդութեան մը մարմնացումն է. ներշնչում մը՝ որ կ'ողբորէ, պարծանք մը՝ որով հայ ժողովուրդը կրնայ հպարտանալ: Կիւլպէնկեանք, իրենց ծագումով ազնուական, իրենց աշխատութեամբ անզուգական, իրենց սեպ յարումովը իրենց ազգին և իրենց Մայրենի եկեղեցւոյն՝ օրինակելի, առեւտրական մարդիկ մէջ կանուխէն ծաւալուն և օժուն համբաւ շինեցին՝ իրենց ձեռներէց, հեռատես և ուղղամիտ գործառնութիւններով:

Փոքր Ասիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ գործակալութիւններ ունէր Կիւլպէնկեան Տաւը: Երկրի առեւտրական ապրանքներուն մեծ մասը (բուրդ, պրօն, մորթ, ճահրի, խէժ քիթրէ) ափիօն, արմտիք, Էւայն, Էւայն) Կիւլպէնկեան Տան միջոցով կը փոխադրուէին Եւրոպա: Սերովքէ և Սարգիս

Եղբայրներ, իրենց անքակտելի սիրով, իրենց հնարամիտ գործունեութեամբ, իրենց բարեպաշտութեամբ հայ ազգին սիրելի և պատկառելի գաւաիններն էին։ Կ. Պոլսի մէջ շատ կանուխէն անոնք իրենց խելքին և գրամին արժէքները նուիրեցին ազգին, և Ս. Փրկչի Հիւանդանոցը առարկայ եղաւ իրենց մասնաւոր հոգածութեան, այնպէս որ այս յարումը և փարումը Ազգին Տան՝ աւանդական պարտք մը եղաւ նոյն ինքն Պատրիկի համար, որ ցո՛րչափ մնաց Կ. Պոլսի՝ իր ժամանակին լաւագոյն մասը նըւիրեց Ս. Փրկչի Հիւանդանոցին բարեկարգութեան և պայծառութեան, իբրեւ Ատենապետը Հոգարարձութեան նոյն հաստատութեան։

Կիւլպէնկեան հարապատներ, Սերովբէի և Սարգսի հորաբարոյ և հորամոյն զաւակները, հակառակ այն տաղնապնդուն որոնք սարսկելին Թիւրքիոյ մէջ հայ վաճառականութիւնը, առետրական նոր ըմբռնումներով ու միթոսներով բարձր և յաջող պահելին իրենց վաճառատան պատմական բարի համբաւը և աւելի ևս զարգացուցին առետուրի արուեստն ու գիտութիւնը նոյն իսկ Եւրոպական միջափայրերու մէջ։ Հայացի խոհեմութիւն, իրենց կենցաղավարութեան մէջ փափկութիւն, և բացարձակ պարկեշտութիւն իրենց առետրական գործառնութեանց մէջ, Կիւլպէնկեան համբաւին ապահովեցին այնպիսի վարկ մը, որ անսպառ զանձն է բարոյական հարստութեան։

Անգամ մը՝ Շիրքաօ, Փիւլման վաճառատան այցի զացած էի. հոն, բոլորովին սլատահմամբ, Տիար Կ. Փիւլման, զիս ծանօթացուց Ամերիկացիի մը, չեմ յիշեր Ամերիկայի ո՞ր քաղաքէն. մարդը հասկընալէ ետքը թէ հայ եկեղեցական մըն եմ, առաջին հարցումը սա՛ եղաւ ինծի. ուրեմն կը ճանչնա՞ք Նիւ Եօրքի Կիւլպէնկեան Տունը։ — Անշուշտ, կը ճանչնամ, պատասխանեցի, և յարեցի ինչո՞ւ կը հարցնէք. — Մհ, շատ պարկեշտ և ծանօթ մարդիկ են։ Ազգային հպարտութիւնս թե առաւ կարծես։ Որովհետեւ հսկայ Ամերիկայի առետրական լայնատարած ապարէշին մէջ Կիւլպէնկեան Տան վայելած յարգին ու վարկին մէջ Հայ անունը կը տարփողուէր։

Հայու ձեռներէջ ոգիին արտաքոյ կարգի

խելացի մարմնացումն է Սարգիս Կիւլպէնկեանի հարապատը, Տիար Գալուստ, որ միջազգային հռչակ մը եղած է։

Կիւլպէնկեաններու վրայ փայլած և յաջողած առետրական գործունեութեան ոգին պատիւ կը բերէ հայութեան, որմէ զատ կրնան առնել բոլոր անոնք որ թէեւ հայ են, բայց կ'ուզեն տարրեր չափոնիչի մը հետեւիլ իրենց առետուրին մէջ և չեն յաջողիր։

Պատրիկ Կիւլպէնկեանի տարածամ մահուան առթիւ բերնք այս խորհրդածութիւնները, պարզապէս վեր հանելու համար սո՛ իրողութիւնը թէ խելքով և պարկեշտութեամբ ստացուած հարստութիւն մը և շահուած համբաւ մը, կ'անդրադառնայ ցեղին կամ ազգին վրայ։

Սերովբէ և Սարգիս Եղբայրներ հարբստացան նոյն ուղղութեամբ և յարգուեցան թէ՛ իրենց ազգին և թէ՛ առետրական աշխարհի մէջ, եւ շատեր, որոնք Կիւլպէնկեան Տան առետրական գործառնութեանց մէջ մաս և բաժին ունեցան ունէ կերպով, շահեցան և զիրք շինեցին իրենց համար։ Կիւլպէնկեանք շնատան իրենց հարստութեան վրայ, տուի՛ն ազգին և ազգային պէտքերուն՝ իրենց զգացումին և գատուութեան համոծայն, և կուտան մինչեւ հիմայ, և պիտի տան ցո՛րչափ ապրի և տեւէ Կիւլպէնկեան խելքն ու աւանդութիւնը այս մշտափոփոխ երկրագունտի իրականութիւններուն մէջ։ Եւ կրնանք վերկայել թէ Կիւլպէնկեանք առետրաբանական ոգիով տուին շատ անգամ. մենք զիտեմք միայն յայտնի տրուածները, բայց չենք գիտեր զազանները. որովհետեւ անոնք չուզեցին որ իրենց աջ ձեռքին տուածը նոյն իսկ ձախը իմանայ։

Պատրիկ Կիւլպէնկեանի մահով կը խլուի հայ ժողովուրդին մէջէն ազգային բարեբար մը, որ Ամերիկահայ զաղութին նահապետը եղած էր իր տարիքին և բռնած պատկառելի զիրքին բերմունքով։

Պատրիկ, իր ընտանեկան կեանքին մէջ ահուկի ցաւեր և վիշտեր կրեց, առանց կորսնցնելու իր ողջմտութիւնը իբրեւ քրիստոնեայ հոգի և գործնական կեանքի մարդ։ Իր եղբայրը Յովհաննէս, գործունեայ և օգտակար կեանքի մը փառքին մէջ մահացաւ. իր Տիկինը, վաղահաս մահուան մը

սուգը բերաւ իրեն. և ինքն կրեց զայն ապնուօրէն, առանց խորհելու նոր ամուսնութեան վրայ. իր եղբայրը՝ Կիւլլապին եւ որդին՝ Սերովբէ, իր աչքերուն առջեւ զնդակահար ինկան, ապերախտ մոկեցնած ի մը կողմէն, և Պատրիկ իր կործարին տակ խեղդեց զառն կսկիծը. իր սիրելի որդւոյն ներսէսի առանին կեանքին տրուած հարուածը և իր հոգեհատոր թոռնիկին Պօղոսի անակնկալ մահը, իրարու ետեւէ եկան զարնուիլ իր վիշտերով ամբացած ալեռն-թին և ինքն անաստան մնաց, սփոփանք զանկեով բարեկործութիւններու մէջ:

Երուսաղէմի Ընծայարանը Սերովբէի յիշատակին նուիրեց. մէկ մարմնաւոր զաւկի տեղ ութեակ մը հոգեւոր զաւակներ նուիրելով իր շատ սիրած եկեղեցւոյն: Յուսաստանի մէջ հայ գաղտնի կեանք տուաւ որպէս զի իր անորդի եղբոր ողբացեալ Կիւլլապին՝ բազում որդիներ յարուցանէ այդ թշուառ հայ գաղութին մէջ: Հալէպի Մայրանոցը, իր սիրելի կենակցին՝ Տիկին Վիր-ժինի փառաւոր յիշատակը պիտի ըլլար:

Սերովբէ և Սարգիս Կիւլպէնկեաններ և անոնց նախնիքը վաղ ժամանակներէ ի վեր կապուած են Ս. Աթոռիս իրենց թանկագին յիշատակներովը: Իսկ մեր օրերուն Պատրիկ ամէնէն նոր և փառաւոր յիշատակ մը ուզեց թողուլ Ս. Յակոբի և Հայ եկեղեցւոյ Կիւլպինկեան Ընծայարանի հաստատութեամբ, ինչպէս նաեւ Քալուստ Կիւլպէնկեան՝ նոր Մատենադարանի շինութեամբ:

Ընծայարանի հաստատութիւնը շատ լաւ կը տուած եւ մտածուած ծրագրի մը արդիւնք էր: Օր մը, հաւանաբար, առիթ կ'ունենամ վաւերագրեալ մէկ պատմութիւնը տալու Կիւլպինկեան Ընծայարանի հաստատութեան, բայց առ այժմ բաւական կը համարիմ ըսել թէ 1918-ին Ամերիկայի մէջ փորձ մը ըրինք հաստատել Ընծայարան մը, նիւ Եօքքի Theological Union Seminary-ի գործակցութեամբ, ուր պիտի հաստատուէր հայ ուսուցչական աթոռ մը. թեկնածուներ ձրի ուսում պիտի առնէին հոն, իսկ իրենց ապրուստի, բնակարանի, եայն ծախքերը պիտի հոգար Պատրիկ Կիւլպէնկեան. բայց մեր այդ ձեռնարկը չյաջողեցաւ, որովհետեւ մեր Կոմիտէ (1918 Յունվար 5) համապատասխանող նախապա-

տրաստութեամբ թեկնածուներ չգտնուեցան պէտք եղած թիւով: Այնուհետեւ Կիւլպէնկեան Երուսաղէմ գործուց իր աչքը. մնացածը յայտնի է:

Պատրիկ Կիւլպէնկեանի այս ժեսը արդիւնք էր իր խորունկ հաւատքին Հայաստանեայց եկեղեցւոյ կատարած և կատարելիք գերին վրայ հայ ժողովուրդի մէջ՝ իրրեւ առաջնորդ եւ պահապան: Ո՛րչափ զգուած էր անարժան եկեղեցականներէ, ընդհակառակն այնչափ յարգանք և համարում կը տածէր արժանաւորներուն համար:

Կիւլպէնկեան միայն զրամ չտուաւ Ընծայարանի համար, այլ նաեւ իր հողին զրաւ գործին մէջ: Կանոնաւոր կերպով հետեւեցաւ Ընծայարանի ուսումնական յառաջդիմութեան, տեղեկագիրներ ուղղելով ուսմանց նիւթերուն և Կիւլպէնկեան սաներու աշխատութեան չափին վրայ: Անցեալ տարի ուզեց զաւ երուսաղէմ և անձամբ տեսնել Ընծայարանին վիճակը, եւ կաւ մինչեւ Աղեքսանդրիա, բայց ստիպուեցաւ փութով վերադառնալ Եւրոպա՝ իր առողջութեան խանգարման պատճառով:

Փարիզ, մեր վերջին տեսակցութեան մէջ, իր միակ հետաքրքրութիւնը սա էր. «Կիւլպէնկեան սաները շնորհքով մարդ եղան. օգտակար պիտի ըլլան. ինծի համար ան է կարեւորը». հաւաստեցի թէ մենք ըրինք ինչ որ կարելի էր ընել. վստահ եղիք որ դուք խղուր տեղ չտուիք և մենք խղուր չաշխատեցանք. մնացածը, աստուածային օրհնութեամբ, ժամանակի գործ է: Եւ երբ անձկայրեաց կը սպասէինք իր սաներուն ձեռնադրութեան առթիւ իրենց ուղղուած նամակներուն և հեռագրին պատասխաններուն, իր մահուան գոյժը կը հասնէր՝ կրկնելու համար մեր թախիծը, Դուրեան Սրբազանի մահուան վրայ:

Նորընծայք շատ տխրեցան. թէեւ անձանթ անոր գէմքին՝ բայց հոգեով չափ կը սիրէին զինքը, «Հայրիկ» կ'ըսէին եւ կը զգային որ հայրական անկեղծ սիրտ մը կը բարթալէր միշտ իրենց համար նիւ Եօքքի մէջ, և այդ սիրտը յանկարծ դադրած էր այլեւս:

Վստահ ենք սակայն որ Կիւլպէնկեաններու աշնուական ու ազգասէր ոգին, որ ապրեցաւ և արտայայտուեցաւ Սերովբէի

և Սարգսի և Պատրիկի մէջ, պիտի շարունակէ ապրիլ նաև Պատրիկի եղբոր Յարութիւնի և զաւկին Ներսէսի մէջ, և հայ ժողովուրդը պիտի չկորսնցնէ Կիւլպէնկեան ազնուականութեան բարեքնները վայելելու հաճոյքն ու պարծանքը:

Տրամախառն ուրախութեամբ կը հրատարակենք Տիար Յարութիւն Կիւլպէնկեանի նամակը, որուն մէջ բառադրատգրուած է ողբացեալ Բարեբարին նամակը, ուղղուած հանդուցեալ Եղիշէ Ս. Պատրիարքին, իր սաներուն պատրաստութեան նկատմամբ: Կը հրատարակենք նաև Տեղապահ Գեր. Մեսրոպ Սրբազանին զգայուն տողերը, որով պատասխանեց այդ նամակին:

Նիւ Եորք, Յունիս 20, 1930

Գերապախ

S. Մեսրոպ եպ. Նեանեան

Պատր. Տեղապահ Երուսաղէմի

Երուսաղէմ

Գեր. Սրբ. Հայր.

Դուրեան Սրբազանի վախճանման տրիսբառիթ գոյժն զեւ չի հասած, ինչպէս նաև Եղբորս վերջին հիւանդութեամբ անկողին մտնելէն առաջ, իր կողմէ Դուրեան Սրբազանին ուղղեալ զրի առնուած մէկ նամակին պարունակութիւնն կը փափաքիմ նոյնութեամբ Ձեզ հաղորդել.—

«Ինձի համար փափաքելի է այս վերջին վճարման առթիւ, որ կուզայ փակել խոստացուած ընդհանուր գումարը, խնդրել մի քանի խօսք և իմանալ Ձեզմէ այն ինչ որ միայն պիտի կրնայ պարգեւել այն գոհունակութեան զգացումը, զոր մէկը կ'աւնենայ արդիւնաւոր զօրժ մը կատարելէ յետոյ:

«Կիւլպէնկեան դատարանը իրմէ ոպտուած պտուղը տուա՞ւ. Կիւլպէնկեան դատարանի հինգ տարուան յիշատակն և սարկաւազներու ուխտին և ընդգրկած իտէալին մշտավառ և մնայուն առհաւատչեան և վկան ըլլալիք վանքին մէջ ինչ կարգադրութիւն խորհած էք:

«Մեր սոյն զօրժը ազգային կարեւոր և ամենակենսական պէտք մը լրացուցած պիտի ըլլայ այն տանն, երբ ազգն ստանայ անոր արժանաւոր պատուը յանձին և զօր-

ժունէութեանը մէջ ապագայ առաջնորդներուն, որոնց ի սրտէ կարողութիւն և անսպառք ազգաշէն երկար կեանք կը մաղթեմ:

«Յայտնելով նաև իմ որտաղին շնորհակալութիւնը Ձերզ Սրբազնութեան, և Բարգէն Սրբազանին, որ առիթ ընծայեցիք ինձի ազգօգուտ սոյն զօրժին կատարման և առ այդ Ձեր ջանքերը լայնօրէն ի սպաս զրիք, մաղթելով նաև որ լիուրի վարձատրուին այս առթիւ մեր անուցած յոյսերը ապագային »:

Եղբորս կողմէ զրի առնուած սա տողերն, զորս նոյնութեամբ Ձեզ կը հաղորդեմ, կը յաւելում որ հոն յիշեալ վերջին վճարման գումարն՝ Զ 500—ի չէքն Ձեր անուան ըլլալով ներփակ կ'ուղարկեմ:

Կիւլպէնկեան դատարանի ութ սարկաւազներուն ամսոյս 22—ին վարդապետ ձեռնադրուին աւետող ձեր հեռագիրն յոյժ ցաւալի է որ Եղբորս կենդանութեանը չը հասաւ. վասնզի նա արդէն քսան և չորս ժամ առաջ մահացած էր: Կը խնդրենք որ սոյն առթիւ մեր շնորհաւորութիւնները և բարեմաղթութիւնները ընդունիք և տաք իրենց:

Եւ մատչելով ի համբոյր Ս. Աջոյզ

Մնամ ակնածանօք,

Յարութիւն Կիւլպէնկեան

Երուսաղէմ, 21 Յունիս 1930

Ազնուաւոր

Տիար Յարութիւն Կիւլպէնկեան

Եւայլն, Եւայլն,

Նիւ Եորք

Պատիւ ունեցանք ընդունելու Ձեր 20 Յունիս թուակիր պատուական նամակը, ներփակ չէքով միասին, որուն փոխարժէքը՝ Զ 500 (հինգ հարիւր) գանձելով անցուցինք իր պատկանեալ հաշուոյն:

Մինչդեռ այստեղ ակնդէտ կը սպասէինք Ձեր ողբացեալ Հարազատէն ու եւ լուրի մը՝ ի պատասխան մեր հեռագրին, որով կ'աւետէինք իր ութը սաներուն մօտաւրտ ձեռնադրութիւնը, Կոստանդնուպոլսի թերթերը՝ ձեռնադրութեան նախօրեակին բերին անոր անակնկալ մահուան գոյժը, ինչ որ շանթահարող ապաւորութիւն թողուց մեր վրայ և սրտաբեկեց ամէնքս:

Ո՞վ մտքէն կ'անցընէր թէ ընդհանուրէն սիրուած ու յարգուած Զեր Մեծանուն Հարազատը յանկարծ վերջ պիտի տար այսպէս իր բեղուն ու արդիւնաւոր կեանքին, անմխիթար տրտմութիւն ու սուգ պատճառելով իր վշտահար սիրելիներուն, ինչպէս նաեւ իրմէ բարերարեալ անձանց ու հաստատութեանց, որոնք ամէնքը այժմ առհասարակ կ'ողորմէին զանոնք մահը մեծանուն եւ պատուական այդ անդուգական Հայուն, որ իր ամբողջ կեանքին մէջ այնքան թշուառութիւններ ամօքեց եւ կրթական ու բարեսիրական հաստատութեանց բազմերախտ սատարողը հանդիսացաւ:

Այս անակնկալ գոյժը բնական է որ պիտի ցնցէր նաեւ Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, որ Հայ Երեսօտէի հին ու նոր բարերարներու կարգին անջնջելի կերպով պիտի զրոյմէ իր սրտին վրայ ՊԱՍՏՆԻԿ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ անունը. վասնզի Անիկա ոչ միայն նիւթապէս սատարեց Սուրբ Աթոռիս, այլ իմաստութիւնը ունեցաւ իր հիմնած Դասարանով ընծայել Ազգին եւ Եկեղեցոյն իրենց կոչման գիտակ եւ մտաւոր պատրաստութեամբ օժտուած հոգեւորականներու խումբ մը, եւ ասով բարոյական գեղեցիկ կոթող մը կանգնեց Սիոնի վրայ:

Գոյժէն առաւելապէս զգածուեցան Հանգուցեալին ութը նորընծայ արեղայ սաները, որոնց վրայ ձգուած կրօնաւորական սեւ տարազը սուղի սքեմ մը եղաւ միանգամայն իրենց համար: Մեր սրտերը մորմոքեցան նաեւ կարգալով Զեր նամակին այն տողերը զորս Հանգուցեալը անձամբ գրի առած էր զրկելու համար Սուրբ Աթոռոյս երջանկայիշատակ Տէր Եղիշէ Դուրեան Ս. Պատրիարքին: Նախախնամութիւնը, սակայն, այնպէս անօրինած է եղեր որ երկու սիրելի կեանքերը խլուին մեզմէ զրեթէ միաժամանակ, ու անոնք չկարենան կենդանի աչքով վայելիլ իրենց նիւթական ու բարոյական զոհողութեանց այս գեղեցիկ արդիւնքը:

Այժմ մեզ կը մնայ խոնարհիլ եւ օրհնել Աստուծոյ անհասանելի կամքը, հայցելով մեր յաւէտ ողբացեալ ազգանուէր Մեծանուն Բարերարին հոգւոյն յաւիտեանական հանգիստ եւ Գերազնիւ Հարազատիդ եւ իր վշտակիր զաւակներուն եւ համօրէն պարագայից երկար եւ անփորձ

կեանք, մխիթարութեամբ Սուրբ Հոգւոյն:

Ինչպէս կանուխէն ծանուցած էինք հեռագրով, Յունիս 22-ին, Կիրակի, մեր ձեռնադրութեամբ կուսակրօն քահանայութեան աստիճան ընդունեցին ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ԴԱՍՏՆԻԿ-ի հետեւալ ութը սարկաւադները.

1. Կարապետ Զալբեան, Այնթապցի, եղաւ Դաւիթ Արեղայ.
2. Սարգիս Մանուկեան, Վանեցի, եղաւ Սիոն Արեղայ.
3. Հայկ Արարհամեան, Վանեցի, եղաւ Հայկազուն Արեղայ.
4. Եղնիկ Վրթանէսեան, Պալքէսէցի, եղաւ Պարզե Արեղայ.
5. Գրիգոր Բասարմեան, Զէյթունցի, եղաւ Գեղամ Արեղայ.
6. Ներսէս Տէր Յակոբեան, Վանեցի, եղաւ Զգօն Արեղայ.
7. Արփիար Մանուկեան, Վանեցի, եղաւ Սերովբէ Արեղայ.
8. Մատթէոս Գույումճեան, Հաճընցի, եղաւ Շաւարշ Արեղայ:

Յիշատակէն եօթներորդին անունը զբռնուեցաւ ի յիշատակ Զեր եղբարախտ եղբորորդւոյն Սերովբէի:

Իսկ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ԴԱՍՏՆԻԿ-ի ութը նորընծաներուն իրենց աշակերտութեան հինգամեայ շրջանին ուսած առարկաներուն եւ իրեն հոգեւոր ասպարէզի տպագայ մը շահներ ձեռք բերած պատրաստութեան մասին ընդարձակօրէն գրուած ըլլալով արդէն մեր ՍԻՈՆ ամսաթիւրին մէջ, որ մամլոյ տակ է այս պահուս, աւելորդ կը համարինք նոյնը կրկնել այստեղ եւ երկուրեւ գրութիւնս: Պիտի գտնէք այնտեղ պատասխանը այն ամէն հարցումներուն զորս Հանգուցեալ Բարերարը գրի առած էր իր իսկ ձեռքով:

Այս ամթիւ կուգանք տեղեկացնել թէ կարգադրուած է որ ամսոյս 27-ին, Վարդապատի օրը, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ յատուկ եպիսկոպոսական պատարագով Հոգեհանգստեան պաշտօն կատարուի Զեր յաւէտ ողբացեալ եղբոր եւ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ բարհամբաւ Գերզաստանի համօրէն ննջեցեալներուն հոգւոյն համար, նաեւ ժամուցներ բաժնուին եկեղեցական Դասուն եւ նոյն օրը հոգւոյ հաց տրուի Միաբանութեան եւ Վանուցս մէջ բնակող ազգաանկներուն:

Ջերմապէս ողջունելով զձեզ եւ երկար ու բարեբաւտիկ կեանք մաղթելով Զեր

Սիրելութեան և Հանգուցեալի սպաւոր զաւակներուն և բոլոր պարագաներուն,

Մնամք վշտակից Զեզ և ի սրտէ

Աղօթանուէր

Պատրիարքական Տեղապահ

ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆՆԱՆ

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

ժառանգաւորաց վարժարանի գծադրութեան և նկարչութեան ուսուցիչ Տիար Արամ Խաչատուրեան պատրաստած է ՊԱՏԿԵՐԱԳԻՐԸ Հայ երուսաղէմի: Պատկերները ուղղակի իր ձեռքով լուսանկարուած ու դասաւորուած են խնամքով և մեծ ծախքով: Այս ՊԱՏԿԵՐԱԳԻՐԸ զազափարը յղացած էր Հնգյւ: Դուրեան Սրբազան, որ անոր առաջին օրինակը միայն տեսաւ: Դործը հետաքրքրական է ըստ ինքեան, և հ'արժէ որ գտնուի ամէն տան մէջ օրինակ մը, մտքով և աչքով պատելու համար Ս. երկրին Հայ Ազգին պատկանող սրբավայրերուն մէջ:

Նոյն ինքն Տիար Ա. Խաչատուրեանի գրչէն Մանուշում մը գրած ենք Սիոնի այս թիւին կողքին վրայ: Զերմօրէն կը յանձնարարենք զայն մեր ընթերցողներուն ուշադրութեան:

L'Esprit Francais Դրական և Գեղարուեստական Շաբաթաթերթի Մարտ 28 և Ապրիլ 4, 11, 18 թիւերուն մէջ ուշադրաւ յօդուածներու շարք մը ստորագրած է Տիար Լեոն Կիւմիւշկէրտան, L'Arménie avant la Guerre, խորագրով որուն մէջ ճարտար և յստակ կերպով խտացուցած է Հայկական Դատին պատմութիւնը՝ իր ձախողութեան մէջ:

Յօդուածները վաւերագրեալ են և այնպիսի ոճով մը գրուած են որ զէպքերը ինքնին կը խօսին:

Տիար Լեոն Կիւմիւշկէրտան, որ արդէն նախանձելի անուն մը չինեց Ֆռանսայի մամուլին մէջ, իրազեկ է մեր ազգային կեանքին, և ուրախ ենք որ ուղղակի կը խօսի ֆռանսացիներուն իր ազգին յուսախարութիւններուն վրայ, ո՛չ թէ փրօփակակոն ընելու զիտումով, այլ պատմագրելու համար այն քաղաքական իրականութիւնները, որոնց պատասխանատու ղերակատարը եղաւ նոյն ինքն Ֆռանսա:

La Semaine Egyptienne-ի Յունիս 30-ի թիւին մէջ (Nos 27-28), էջ 18, Ս. Սեդրաք յօդուած մը ունի Au sein de la Communauté Arménienne, vers le Rapprochement des Églises կրկնակ խորագրերներով: Եօդուածագիրը ներշնչուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսին մահուան առթիւ Անկիլիքան եկեղեցւոյ կողմէն պաշտօնապէս արտայայտուած համակրանքի ցոյցէն, ինչպէս նաեւ Կ. Պոլիս Մայր Եկեղեցւոյ մէջ նոյն առիթով կատարուած հոգեհանգստեան պաշտօնին հայ կաթողիկ եկեղեցականի մը ներկայութենէն: Դարձեալ Թորոնթ Սրբազանի և Պսակ Քնչյի. հետ խօսակցութիւններ ունեցած է յօդուածագիրը, որոնց ապաւորութեան տակ կը ջատագովէ եկեղեցիներու իրարու մերձեցումը և ո՛չ թէ միացումը իրարու հետ:

Մերձեցում միշտ կայ եկեղեցիներու միջև, մա՛նաւանդ պաշտօնական առիթներով: Երբ մեծ և զօրաւոր համարուած եկեղեցիներ կը զաղրին շահագործելէ փոքրիկ և անզօր եկեղեցիներու ժողովուրդներուն չքաւորութիւնը և զգացումները, եկեղեցիներու իրարու մերձեցումը սրտագին նկարագրի մը պիտի առնէ ինքնին:

Առաջին անգամ Պոստօնի Պայքար թերթն է որ իր 1930 Մայիս 25, Կիրակի օրուան երրորդ էջին մէջ հրատարակած է Անթիլիասի չէնքերուն լուսանկարները և առեկեկութիւններ տուած ձեռնարկութեան մասին հետեւեալ խորագրին տակ. Կիլիկիան Ռուսմական Հասաւորիւն մը Անթիլիասի նախկին Որբանոցի շէնքին մէջ, Պէյրութի մօտ, Սիւրիա, ընդ հովանաւորութեամբ Ն. Ս. Օժութեան Տ. Տ. Սահակ Բ. Ս. Կաթողիկոսին Կիլիկիոյ:

Դարձեալ Պայքար իր Մայիս 29, ԵՃ. օրուան թիւին մէջ, երկրորդ էջ, Հրատարակած Շահէ Ծ. Վ. Դասպարեանին շատ յաջող մէկ լուսանկարը:

Ամերիկայի մէջ ամէն շաբաթ հարիւր միլիոն մարդ կ'երթայ պատկերասաղ (սինեմա) զիտելու 20,500 թատրոններու մէջ. իսկ Ամերիկայէն դուրս, պատկերասաղի զացողներուն թիւն է հարիւր յիսուն միլիոն, 37,000 է աւելի թատրոններու մէջ:

Բոլոր աշխարհի պատկերասաղի առևտուրին հարիւրին 85-90% Ամերիկայի ձեռքն է. իսկ անոր զրամագլուխն է ԵՐԿՈՒ ՀԱՉԱՐ ՄԻԼԻՈՆ, ՏՈՒՍ:

Պատկերասաղը նկատուած է աշխարհիս ամէնէն հզօր գործիքը իբրեւ միջոց հանրային դաստիարակութեան և զբօսանքի:

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՏԵՂԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Գեր. Տ. Մեսրոպ Ապս. Նշանեանի Տեղապահութեան պաշտօնին հաստատմը պաշտօնապէս հաղորդուեցաւ Ն. Մրբազնութեան, Պաղեստինի Բարձր Փոփխեւորութեան կողմէն հետեւեալ պաշտօնագրով:

Secretariat
Government Offices
Jerusalem

N° 1903/30

19 June, 1930

Right Reverend Sir,

I am directed by the High Commissioner to inform you that His Excellency has received notification of your election as LOCUM TENENS of the office of the Armenian Patriarch and to inform you that His Excellency accords you recognition in that capacity until such time as a successor to the late Patriarch Tourian shall have been elected.

I am, Right Reverend Sir,

Your obedient servant,

E. MILLS

Acting chief Secretary

The Rt. Rev.

BISHOP MESROB NISHANIAN

Locum Tenens of the Armenian

Patriarchate, Jerusalem.

(Թարգմանութիւնը)

19 Յունիս 1930

Գերապատիւ Տէր,

Բարձր Գօմիւթըին հրահանգով կ'իմացնեմ Ձեզ թէ Նորին Վսեմութիւնը ընդունած է Հայոց Պատրիարքութեան Ձեր Տեղապահ ընտրուելուն պեկուցումը, և թէ Նորին Վսեմութիւնը կը ճանչնայ Ձեր այդ իշխանութիւնը մինչեւ որ ընտրուի յաջորդ մը հանգուցեալ Դուրեան Պատրիարքին:

Կը մնամ Ձեր Գերապատուութեան

հնազանդ ծառան

Է. ՄԻԼՍ

Աւագ Քարտուղար

Փերաւնորհ

Տ. Մեսրոպ Ա. եպիսկոպոս Նշանեան

Պատրիարքական Տեղապահ Հայոց

Պատրիարքութեան. Երուսաղէմ

ՊԱՏՐԻԱՐԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ս. Արոսիս Միաբանական Ժողովը Մայիս 5-ին քամ էր իր վերջըրքեր նիստը եւ Տեղապահութեան պաշտօնին կոչած էր Լուսարարապէս Գեր. Տ. Մեսրոպ Ա. Ապս. Նշանեանը:

Ն. Գերապատուութիւնը Մայիս 8-ին ներկայացաւ Երուսաղէմի Վսեմ. Կառավարչին իբրեւ Տեղապահ, եւ առաջին առիթով իրենց խօսակցութեան նիւթ եղաւ նոր պատրիարքի ընտրութեան վերաբերեալ խնդիրներ:

Միաբանական Ժողովին վերջին նիստը տեղի ունեցաւ Յունիս 19-ին, Միաբանութեան Կանոնագրին Պատրիարքի ընտրութեան վերաբերեալ յօդուածներուն բարեփոխութիւնը նկատի առնելու համար:

Կ'արձանագրենք հետեւեալ պաշտօնագիրները, որոնք ինքնին ցոյց կուտան թէ պատրիարքի ընտրութեան նախապատրաստութիւնները ե՞րբ սկսած են եւ մինչեւ ո՞ւր հասած են երբ կը գրենք այս տղերք:

Տեղապահ Մրբազանին Տեղեկագիրը, ուղղուած Միաբանական Ժողովին, որ գումարուեցաւ Յունիսի 19-ին:

19 Յունիս 30

ՊԱՏԿ. ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԺՈՂՈՎԻՆ

Ինչպէս յայտնի է՝ Պատկ. Միաբանական Ընդհանուր Ժողովոյս տարւոյս Մայիս 5-ի Ա. Նիստին մէջ կոչուեցանք Ս. Աթոռոյս Պատրիարքական Տեղապահութեան պաշտօնին:

Մեր ընտրութեան չորրորդ օրը՝ այսինքն Մայիս 8-ին՝ Տնօրէն Ժողովի անդամներ՝ Գեր. Տ. Տ. Մկրտիչ և Մատթէոս Ս. Եպիսկոպոսներու, Հոգ. Տ. Կիւրեղ Վարդապետի և Միաբանական Ընդհանուր Ժողովի Առենապետ Տ. Սուրէն Վարդապետի կողմէ ներկայացուեցանք Երուսաղէմի Վսեմ. Կառավարչին իր պաշտօնատան մէջ:

Տեսակցութեան պահուն Նորին Վսեմութիւնը ի միջի այլոց յայտնեց՝ թէ Հոգատար Կառավարութեան ցանկութիւնն է, որքան կարելի է չուսում, Հայոց Պատրիարքը ընտրուած տեսնել, որպէսզի գործերու ամբողջ պատասխատուութիւնը իր վրայ կրող պաշտօնական անձ մը ունենայ իր

դէմ և, յարեց. Երուսաղէմի Հայոց Պատրիարքի ընտրութեան նախկին կերպը վերջ դրած ըլլալով այլևս՝ հարկ կը ներկայանայ Կանոնի Պատրիարքի ընտրութեան վերաբերեալ յօդուածները փոփոխել և ներկայ պայմաններուն պատշաճեցնել դանտնք։ Ապա մեր կարծիքը հարցուց և ուղեց իմանալ թէ ի՞նչ կը խորհինք այս մասին։

Մենք պատասխանեցինք՝ թէ ի յարգանս մեր Հանգուցեալ Սրբազան Պատրիարքին՝ քառասնօրեայ սուգի շրջան մը ունինք, հեռեակէս այս օրերուն մէջ չենք կրնար տակաւին զբաղիլ այս խնդրով։

Հիմա որ քառասնօրեայ սուգի շրջանը լրացած է արդէն և 14 օրեր ալ անցած են անոր վրայէն՝ ժամանակը հասած կը համարինք որ Պատկ. Միաբանական Ընդհանուր Ժողովը ձեռնարկէ Պատրիարքական ընտրութեան նախապատրաստական աշխատութեանց։

Այժմ ամենակարեւոր և էական խնդիր մը ունինք առջեւինս, այն է՝ պատրիարքական ընտրութեան եղանակը. այսինքն Կառավարութեան կամքին և ստեղծուած ներկայ պայմաններուն պահանջին համաձայն փոփոխութիւնը Ազգային Սահմանադրութեան և Միաբանական Կանոնադրի Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ յօդուածներուն։

Ատիկա շատ լուրջ և կենսական խնդիր մըն է, որ մինչև չլուծուի, կարելի պիտի չըլլայ ողջունել մեր Նոր Պատրիարքը իր Աթոռին վրայ։

Նախ քան Միաբանական Ընդհանուր Ժողով հրաւիրելը, Ս. Աթոռոյ Տնօրէն Ժողովը ամսոյս 17-ին յատուկ նիստ մը նուիրեց և կարճեաց երկար փոխանակութենէ և խորհրդակցութիւններէ ետք՝ Ժողովի աշխատութեանց ղեկութիւն մը ընծայելու նպատակաւ՝ Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ յօդուածները պարունակող նախագիծ մը պատրաստեց, որուն մէջմէկ օրինակը ունիք ամէնքդ ի ձեռին։

Ատիկա, ինչպէս ըսուեցաւ, նախագիծ մըն է, և Պատկ. Ժողովիս կը մնայ լուրջ և հասուն խորհրդածութեամբ քննել անոր մէն մի յօդուածները, և ատոնց մասին ազատօրէն և անկաշկանդ յայտնել իր կարծիքը, որպէսզի մենք ալ մեր կարգին կաշկանք Պատրիարքական ընտրութեան նոր

եղանակի վերաբերմամբ Պատկ. Միաբանական Ընդհանուր Ժողովիս կամքն ու տեսակէտը ներկայացնել Հոգատար Կառավարութեան։

Ամենայն յաջողութիւն և արդիւնաւորութիւն մաղթելով՝

Մնամք Ազօթարար
Պատրիարքական Տեղապան
ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆՆԱՆ

Ն Ա Խ Ա Դ Ի Ծ

ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳՐԻ ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԸՆԴՏՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԿԱՆ ՅՕԻՈՒԱԾՆԵՐՈՒՆ

20— Երբ Երուսաղէմի Պատրիարքը վախճանի, Միաբանութիւնը իր մէջէն Տեղապահ մը կ'ընտրէ և Հոգատար Կառավարութիւնը կը հաստատէ զայն։

21— Պատրիարքի վախճանումէն քառասուն օր յետոյ Տեղապահը նիստի կը հրաւիրէ Միաբանական Ընդհանուր Ժողովը, որ զազանի քուէարկութեամբ պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցանկ մը կը պատրաստէ։

22— Սուրբ Երուսաղէմի Պատրիարք ընտրուելու անձը զոնէ 35 տարին լրացուցած և Միաբանութեան եպիսկոպոսներէն կամ վարդապետներէն պէտք է ըլլայ, միանգամայն Միաբանութենէ զատուած մէկը պէտք է ըլլայ։ Միաբանութենէ զատուած չեն համարուիր այն անձերը, որ Երուսաղէմի Պատրիարքին հաւանութեամբ ազգային պաշտօններ կը վարեն։

23— Յաջորդ օրը Տեղապահը երկրորդ նիստի մը կը հրաւիրէ Միաբանական Ընդհանուր Ժողովը, որ այդ ցանկին մէջէն կրօնից, ուսման և բարի վարուց նկատմամբ ամենէն աւելի արժանաւորութիւն ունեցող անձը Պատրիարք կ'ընտրուի գաղտնի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ։ Ընտրելեաց այս ցուցակէն դուրս անձի վրայ քուէարկութիւն չի կրնար ըլլալ։

Ընտրութեան արդիւնքը կը հաղորդուի Սուրբ Եջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսին, և անոր վաւերացումը ստացուելէ յետոյ՝ Հոգատար Կառավարութեան միջոցաւ կը ներկայացուի Լոնտոն՝ Թագաւոր-Կայսեր հաստատութեան։

Տեղապան Սրբազան հեճեւեալ պաշտօնագիրով կը պատասխանէ պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Սմբատ Եպսի. Գամակներուն եւ տեղեկութիւն կուտայ պատրիարքական ընտրութեան նախապատրաստութեան մասին:

20 Յունիս 1930

Գերապատիւ

Տ. Սմբատ Ս. Եպիսկոպոս Գաղական,
Պատրիարքական Փոխանորդ Ս. Արքեպիսկոպոս
Կ. Պոլիս

Ընդունած ենք ձեր Ս. եղբայրութեան Յունիս 3, 10 թուակիր Համար 730, 731, 734 նամակները:

Ս. Աթոռոյ Պատկ. Միաբանական Ընդհանուր Ժողովը իր երէկեան (19 Յունիս) Բ. Նիստին մէջ նշանակեալ ընդունեց եւ իւրացուց Տնօրէն Ժողովոյս կողմէ ներկայացուած Երուսաղէմի Պատրիարքի ընտրութեան վերաբերեալ Ազգային Սահմանադրութեան 20, 21, 22 եւ 23 բարեփոխեալ Յօդուածներու նախագիծը:

Յիշեալ Յօդուածները Պատրիարքի ընտրութեան իրրե Կանոն ընդունելէ յետոյ քուէարկեց նաեւ հետեւեալ բանաձեւը.

«Ժողովս որոշեց այս անգամուան համար, բացառաբար, նկատի ունենալ Միաբանութենէ զուրս գտնուած բարձրաստիճան եկեղեցականներ, պայմանաւ որ, յառաջիկայ նիստի մը մէջ եթէ որոշուին այդ անձը կամ անձերը, տան անոնք նախապէս իրենց միաբանակցութեան զբաւոր Ուխտագիրը. Միաբանութենէն առաջարկուած բանաձեւին համաձայն»:

Նկատելով նախ թէ ամէն կողմէ բազմանք կը յայտնուի որ Երուսաղէմի Պատրիարքի ընտրութեան մէջ մասնակցութիւն ունենայ նաեւ Հայ Ժողովուրդը, եւ երկրորդ՝

Նկատելով թէ գոյութիւն չունի ուրիշ իրաւագոր կեդրոնական մարմին մը, որ փոխարինէր Կ. Պոլսի Ազգային Երեսփոխանական Ժողովը, եւ եթէ ունենար իսկ դարձեալ Հոգատար Կառավարութեան արգելքին պիտի հանդիպէր այն սկզբունքով որով կը մերժէ Կ. Պոլսի Ազգային Պատրիարքարանի մասնակցութիւնը, Տնօրէն Ժողովս նպատակադարձաբար գտնեց Երուսաղէմի Պատրիարքի ընտրութիւնը ենթարկել Ամենայն Հայոց Կաթողիկոսի վաւերացման,

ըստ որում Սուրբ Էջմիածնի Հայրապետ ընտրուած ըլլալով Հայ Ազգի հոգեւորական եւ աշխարհական ներկայացուցիչներէ բաղկացեալ համագալին Ժողովէ մը, ամբողջ Ազգը կը ներկայացնէ Ինք, որով եւ իր վաւերացումը ազգային վաւերացման կնիք կը ստանայ:

Միաբանութիւնը այսպէս գտաւ խնդրը լուծելու միակ ելքը:

Ներքեակ կը գտնէք Պատկ. Միաբանութեան Ընդհանուր Ժողովին ուղղած մեր Պատգամադրին եւ յիշեալ բարեփոխուած Յօդուածներու պատճենները:

Պատրիարքի ընտրութեան վերաբերեալ Միաբանական Ընդհանուր Ժողովի ընդունած Յօդուածները եւ այս անգամուան համար, իրրե բացառութիւն, քուէարկած Բանաձեւը յատուկ պաշտօնագրով մը պիտի ներկայացնենք Հոգատար Կառավարութեան, եւ Անոր հաւանութիւնը ստանալէ յետոյ պիտի աշխատինք չյապաղեցնել այլեւս Պատրիարքի ընտրութիւնը:

Ողջունելու Սիրոյ, Աղօթակիր
Պատրիարքական Տեղապան
ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆՆԱՆ

Միաբանական Ժողովին Գիւմրի Յունիս 19-ի նիստին մէջ տրուած որոշումը պաշտօնապէս կը հաղորդէ Տեղապան Սրբազանին:

Համար 1/10055/15

23 Յունիս 1930

Գերաշնորհ

Տ. Մեսրոպ Ս. Եպիսկոպոս Նշանեան,
Բարեխնամ Պատրիարքական Տեղապան
եւ Նախագահ Պատկ. Միաբանական
Ընդհանուր Ժողովոյ Ս. Յակոբեանց
Առաքելական Արքեպիսկոպոս,
Երուսաղէմ

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Ս. Աթոռոյ Միաբանական Ընդհանուր Ժողովը, Յունիս 19-ի Հինգշաբթի, Կէսօրէն առաջ ժամը 9-ին, 2եր Սրբազնութեան նախագահութեան տակ զումարուեցաւ ի ներկայութեան 32 հոգեւորական անդամոց, ունենալով հետեւեալ Օրակարգը.

«Նախագիծ՝ Միաբանական Կանոնադրի Պատրիարքական ընտրութեան վերաբերեալ Յօդուածներուն»:

Ժողովս նկատի առնելով Պաղեստինի Անգլիական տիրապետութենէն յետոյ ստեղծուած պայմանները, քուէարկեց՝ Ազգային Սահմանադրութեան երեսօղէմի Պատրիարքի ընտրութեան վերաբերեալ 20, 21, 22 և 23 Յօդուածներուն համապատասխան հետեւեալ բարեփոխուած Յօդուածները:

«20 — Երբ Երեսօղէմի Պատրիարքը վախճանի, Միաբանութիւնը իր մէջէն Տեղապահ մը կ'ընտրէ և Հոգատար Կառավարութիւնը կը հաստատէ զայն:

21 — Պատրիարքի վախճանումէն քառասուն օր յետոյ Տեղապահը նիստի կը հրաւիրէ Միաբանական Ընդհանուր Ժողովը, որ զազանի քուէարկութեամբ պատրիարքական ընտրելեաց հնգանուն ցանկ մը կը պատրաստէ:

22 — Սուրբ Երեսօղէմի Պատրիարք ընտրուելու անձը զոնէ 35 տարին լրացուցած և և Միաբանութեան եպիսկոպոսներէն կամ վարդապետներէն պէտք է ըլլայ, միանգամայն Միաբանութենէ զատուած մէկը պէտք է ըլլայ: Միաբանութենէ զատուած է են համարուիր այն անձերը որ Երեսօղէմի Պատրիարքին հաւանութեամբ ազգային պաշտօններ կը վարեն:

23 — Յաջորդ օրը Տեղապահը երկրորդ նիստի մը կը հրաւիրէ Միաբանական Ընդհանուր Ժողովը, որ այդ ցանկին մէջէն կրօնից, ուսման և բարի վարուց նկատմամբ ամենէն աւելի արժանաւորութիւն ունեցող անձը Պատրիարք կ'ընտրէ զազանի քուէարկութեամբ և քուէից բացարձակ առաւելութեամբ: Ընտրելեաց այս ցուցակէն զուրս անձի վրայ քուէարկութիւն չի կրնար ըլլալ:

Ընտրութեան արդիւնքը կը հաղորդուի Սուրբ Էջմիածին Ամենայն Հայոց Կաթողիկոսին, և Անոր վաւերացումը ստացուելէ յետոյ, Հոգատար Կառավարութեան միջոցաւ կը ներկայացուի Լոնտոն՝ Թագաւոր-Կայսեր հաստատութեան»:

Բաց աստի Պատրիարքական յառաջիկայ ընտրութեան համար միայն բացառապէս ընդունեց հետեւեալ Բանաձեւը.

«Ժողովս որոշեց այս անգամուան համար, բացառաբար, նկատի ունենալ Միաբանութենէ զուրս գտնուած բարձրաստիճան եկեղեցականներ, պայմանաւ որ, յա-

ռաջիկայ նիստի մը մէջ եթէ որոշուին այդ անձը կամ անձերը, տան անոնք նախապէս իրենց միաբանակցութեան գրաւոր Ուխտագիրը, Միաբանութենէն առաջարկուած Բանաձեւին համաձայն»:

Անդամ Երեսօղէմի Պատրիարքական Միաբանական Ընդհանուր Ժողովի

(Ստորագրութիւն)

Մկրտիչ Եպս. Աղաւունցի, Մասթոս Եպս. Գալղեան, Յարութիւն Վրդ. Պարոնեան, Համազասպ Վրդ. Ղազարեան, Վրբանէս Վրդ. Գասպեան, Սահակ Մ. Վ. Ասուածասուրեան, Գեորգ Վրդ. Ճանարեան, Մուշեղ Վրդ. Հայրապետեան, Անդրեաս Վրդ. Լօմանեան, Ներսէս Վրդ. Թորոսեան, Յակոբ Վրդ. Թաւեան, Սուրեն Վրդ. Քեմհանեան, Վահան Վրդ. Գեորգեան, Յովհաննէս Վրդ. Ասասուրեան, Տրդատ Վրդ. Պերպերեան, Կիւրեղ Վրդ. Իսապիւն, Եսայի Աբեղայ Ամբարչեան, Գաբելին Աբեղայ Պիլլիլեան, Դաւիթ Աբեղայ Չալրեան, Սիւն Աբեղայ Մանուկեան, Հայկազուն Աբեղայ Աբահամեան, Պարգեւ Աբեղայ Վրբանէսեան, Գեղամ Աբեղայ Քասիմեան, Զգօն Աբեղայ Տէր Յակոբեան, Սերովբէ Աբեղայ Մանուկեան, Շաւարշ Աբեղայ Գույումեան, Զենօբ Աբեղայ Վահանեան, Նիխազար Սարկ. Տէրտեան, Սիմէոն Սարկ. Մարտիրոսեան, Յակոբ Սարկ. Տէրվիւսեան, Ղազարոս Սարկ. Տիւրքեան:

Տեղապահ Մքազան պաշտօնապէս կը հաղորդէ Երեսօղէմի վսեմ. Կառավարչին Միաբանական Ժողովի կողմէն Բարեփոխուած Կանոնագիրը:

26 Յունիս 1930

ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹԵԱՆ

ԵՐՈՒՍՍՂԷՄԻ ԿՍՌԱՎԱՐՁԻՆ

Սուրբ Աթոռոյս ողբացեալ Տէր Եղիշէ Գուրեան Պատրիարքի վախճանումէն յետոյ սուգի աւանդական շրջանը աւարտած ըլլալով, կարեւոր և անհրաժեշտ գատեցինք ըստ օրինի սկսիլ նոր Պատրիարքի ընտրութեան նախապատրաստական աշխատութեանց, ուստի այս գործով զբաղելու հրաւիրեցինք Միաբանութեան Ընդհանուր Ժողովը, որ ամսոյս 19 ին նիստ գումարեց մեր նախադահուածութեան ներքեւ:

Այդ նիստին մէջ ուշադրութեան առնուեցան մեր Ազգային Սահմանադրութեան երուսաղէմի Պատրիարքի ընտրութեան վերաբերեալ 20, 21, 22, և 23 Յօդուածները, որոնք չէին պատշաճօր այլևս ներկայ պայմաններուն, ըստ որում Պաղեստին բաւերախօսքէն Իրիտանական տիրապետութեան և պաշտպանութեան տակ զանուելով այժմ, դադարած է այլևս Թիւրքիոյ մաս կազմելէ: Հետեւապէս ժողովը, իր տեսակէտով, ինչ ինչ փոփոխութեանց ենթարկեց յիշեալ չորս յօդուածները:

Այս փոփոխութեանց մէջ աչքի դարնող կէտն է ընտրուած անձը Սուրբ Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին և Մայրապոյն Պատրիարքին վաւերացման ենթարկելու պարագան, որ թելադրուած է հետեւեալ պատճառներէն.

ա) նկատելով թէ ստեղծուած նոր պայմաններուն հետեւանքով երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը չի կրնար այլևս ունէ վարչական կապ ունենալ արտասահմանի ազգային մարմիններուն հետ, և

բ) նկատելով թէ Կոստանդնուպոլսի Ազգային երեսփոխանական ժողովը որ իբրև Թիւրքիոյ Հայոց ներկայացուցիչ մարմին՝ ինք կ'ընտրէր ասիէ առաջ երուսաղէմի Պատրիարքը, կորսնցուցած է այժմ իր այդ հանգամանքը և կորուած են իր վարչական յարաբերութիւնները երուսաղէմի Պատրիարքարանին հետ,

Ուստի երուսաղէմի Պատրիարքին ազգային հանգամանքը պահպանելու համար Միաբանական Ընդհանուր Ժողովը ամենէն ուղիղ և բանաւոր կերպը նկատեց ընտրուած անձը Կառավարութեան ներկայացնելէ առաջ ենթարկել Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Մայրապոյն Պատրիարքի վաւերացման, ըստ որում վերջինս, իբրև Գերագոյն Պետ Հայաստանեայց Եկեղեցւոյն, Հայ Եկեղեցիին և Հայ Ազգը ներկայացնող հոգեւորական և աշխարհական պատգամաւորներէ բաղկացեալ Ընդհանուր Ժողովէ մը ընտրուած ըլլալով, անկա իր անձին վրայ կը կեդրոնացնէ զինքն ընտրող Հայ Եկեղեցիին և Հայ Ժողովուրդին կամքը, և հետեւաբար իր տուած վաւերացումը կը կրէ ընդհանուր կնիք:

Բաց աստի, Միաբանական Ընդհանուր Ժողովը քուէարկելով Բանաձև մը ընդու-

նեց որ պատրիարքական ընտրելիաց հնգանուն ցանկի յառաջիկայ պատրաստութեան ժամանակ, բացառապէս, այսինքն միայն այս անգամուան համար, նկատի առնուին նաև երուսաղէմի Միաբանութեան չպատկանող բարձրատիճան եկեղեցականները, պայմանաւ որ նախապէս անդամակցին առնաք երուսաղէմի Միաբանութեան, ինչպէս եղաւ մեր ողբացեալ Եղիշէ Դուբեան Պատրիարքի ընտրութեան պարագային:

Պատիւ ունինք մեր նամակին կցել Միաբանական Ընդհանուր Ժողովի կողմէ մեզ ներկայացուած Տեղեկագրին հայերէն բնագիրը և անոր անգլիերէն թարգմանութիւնը, երկուքն ալ ստորագրուած ժողովին ներկայ անդամներէն:

Մնամք Անձնուէր

Տեղապահ

Պատրիարքոսրեան Հայոց Երուսաղէմի ՄԵՍՐՈՊ ԵՊՍ. ՆՇԱՆԱՆ

ԶԵՌՆԱԿԻՐՈՒԹԻՒՆ

ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ԴԱՍԱՐԱՆԻՆ ՈՒԹՂ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐՈՒՆ

Այս տարի, 1930 Յուլիս ամսու հետ կը բոլորուէր Ընծայարանի Կիւլպենկեան Դասարանի ուսմանց շրջանը, և այդ դասարանին ութը սարկուազ անդամները կ'աւարտէին իրենց ուսանողական կեանքին հինգամիս ընթացքը, և ներկայացնելով իրենց փոքրիկ ուսումնասիրութիւնները կամ, ինչպէս կ'ըսուի, աւարտաճառերը, կ'արժանանային Զեռնադրութեան իրաւունքին և շնորհին:

Ս. Յակոբի համար երկարողի աշխատանքի և խնամքի արդիւնքով ձեռք բերուած Հոգեւոր Հունձ մըն է ասիկա, որուն նշանակութիւնը բացատրած ենք մեր առաջին խմբագրականին մէջ: Իսկ այս սինակներու մէջ պիտի արձանագրենք Զեռնադրութեան պարագաներն ու պատմութիւնը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Մեր ութը սարկուազունք մաղուած են Ժառանգաւորաց Վարժարանի 17 անդամաց մէկ դասարանէն և բարձրացած են սարկուազութեան աստիճանին 1926

Հովտամերձեր Յին, Ամեն. Դուրեան Եղիշէ Ս. Պատրիարք Զօր ձեռնադրութեամբ, եւ կազմած են Ընծայարանիս Կիւլպէնկեան դասարանը: Դպրոցական իւրաքանչիւր տարւոյն վերջը զրաւոր և բերանոցի քըննութիւններով չափուած է իրենց ուսումնական յառաջդիմութիւնը, բացի եռամսեայ մասնաւոր քննութիւններէ: Ընծայարանի մէջ իրենց գլխաւոր ուսուցիչները եղած են:

1) Ամեն. Դուրեան Եղիշէ Սրբադան, որ աւանգած է իրենց Պատմ. Հայ Մատենադրութեան, Բանասիրութիւն հայ լեզուի, Պատմ. Լատին եւ Յոյն գրականութեան, Պատմ. Փիլիսոփայութեան, Պատմ. կրօնից և մասնաւորապէս Պատմ. հայ գիշարանութեան, Բարոյագիտութիւն, եւ տարերք Լատիներէնի:

2) Բարգէն Սրբազան, որ աւանդեց իրենց աշխարհաբար և զրաբար լեզուները, աշխարհաբարի պատմութիւն, Պատմ. Հայց. Եկեղեցւոյ, Պատմ. ընդհ. Եկեղեցւոյ, Պատմ. մատենադրութեան Ս. Դրոց, Ներածութիւն Ս. Դրոց, Աստուածաբանութիւն, Կանոնագիտութիւն, Տոմարագիտութիւն, Ծրագրագիտութիւն:

3) Վեր. Հայր Զարլս Պրիմէն՝ Անգլիերէն լեզու և զրականութիւն, Պատմ. Իսրայէլի, Աստուածաբանութիւն Հին Կտակարանի, Պատմ. Առաքելական դարու, Մանկավարժութիւն, Ընկերաբանութիւն:

4) Պրն. Լեոն Զիլինկիրեան Երաժշտութիւն:

Ասոնցմէ զատ Ֆոանսերէնի, Յունարէնի, Արարերէնի և Երբայերէնի մասնաւոր դասեր առին: Ամեն. Դուրեան Եղիշէ Սրբազան իր կարգ մը դասերուն համար Ֆրանսերէն գիրքեր զործածել տուաւ, նոյնպէս Բարգէն Սրբազան՝ Փոանսերէնէ աշխարհաբար թարգմանութիւններ ընել տըւաւ աշխարհաբար լեզուի դասախօսութեան առին. Ընդհ. Եկեղեցւոյ Պատմութեան համար զործածուեցաւ Ֆոանսերէն դասագիրք: Այնպէս որ օտար լեզուներու մէջ, Անգլիերէնէն յետոյ Ֆոանսերէնը և զաւ իրենց ուսումնական լեզուն:

Ուսումնական աշխատութեան զուգընթաց, մարդուեցան և վարժուեցան աստուածային պաշտամունքի զործադրութեան ըստ Ս. Յակոբի և Ս. Տեղեաց բազմապա-

հանջ կարգաւորութեան, աստու իրիկուն անխափան:

Դպրոցական շրջանի վերջին տարւոյն համար իրենց տրուեցան հետեւեալ նիւթերը, զորս պիտի ուսումնասիրէին և պիտի պատրաստէին իրրեւ աւարտածաւ:

1. Տեղեացի Եւրոպական Կարապետ Սրբագիւր
2. Խորենացիին Պատմութեան Ա. Գիրքը Սարգիս »
3. Օմենցիի ընդհանր Երևույթականաց ճառը Հայկ »
4. Եղիշէի Բ. Յեղեղակը (Զրադաշտականութեան վտանգը) Եղիշէ »
5. Ն. Լաւրառնացւոյն Թուրքը առ Լեւոն Գրիգոր »
6. Ն. Շնորհաւոյ Ողբ Եղեղայն Ներսէս »
7. Թուրք Ղ. Փարսկացւոյ առ Վահան Սրբիար »
8. Եղեղիկի Ընդհանր Մարկիոնի գրուածը Մատթէոս »

Ամէնէն յառաջ այս զործերուն բնագիրները աշխարհաբարի պիտի վերածէին, յետոյ բանասիրական, պատմական, աստուածաբանական և այլն հարկաւոր ծանօթութիւններով պիտի լուսարանէին և պիտի ներկայացնէին զործը: Կատարեցին այս աշխատութիւններն ալ և ներկայացուցին զանոնք զպրոցի Տեսչութեան իրենց Զեռնադրութիւնէն յառաջ:

Այս աշխատութիւնները, իրրեւ փորձ ուսումնական կեանքի, զոհացուցիչ են: Անդրադոյն հետազօտութիւններով և վերաքննութիւններով կրնան կոկուրլ և հրատարակուիլ:

Ս. Յակոբի մէջ ուսումնական կեանքին և զրասեղանի խաղաղ աշխատութեան և պրպտումներու առաջին պտուղն է տսիկա, իրրեւ տպացոյց Դուրեանի շուշին և շուքին տակ կազմակերպուած և հաստատուած մտաւորական սուրբ զործին, որով հետզհետէ պիտի ուժաւորուի Սիոնի այս փառապանծ հաստատութիւնը, և պիտի ճառագայթէ հաւատքի և գիտութեան լոյսը միանգամայն, վկայելու համար Հայ ժողովուրդի ապրելու իրաւունքին և անոր հոգեւոր ու մտաւոր առողջութեան:

ԿՈՉՈՒՄԸ

Զեւնադրութեան նախորդ երեկոյն կը կատարուի Կոչման արարողութիւնը, որ ուրիշ բան չէ, բայց եթէ ընծայեալներուն հրապարակային քննութիւնը, անոնց կեանքին, նկարագրին, ուսման և պատրաստութեան կողմէն:

Կոչման արարողութիւնը պարզ ձեակերպութիւն մը չեղաւ մեր ընծայեալներուն համար. որովհետեւ տարիներէ ի վեր մեր աշխարհն առջև ապրկեցան անոնք իրենց երկտասարդութիւնը, կազմուեցան և պատրաստուեցան սրբազան պաշտօնի կոչուելու համար, թէև իրենց մանկութիւնը անցաւ հայ ժողովուրդի տառապանքներուն և արիւններուն մէջէն, անբաղձալի վայրերու և պայմաններու մէջ...

Այնպէս որ զպրոցներու Փոխ-Տեսուչ Հոգ. Կիրակի Վրդ. Իսրայէլեան, որ իրրեւ խաւարաւոր, Զեւնադրիչ Գեր. Մեսրոպ Ս. Եպս. ին հետեւալ հարցումներուն սրտի կատարեալ անդորրութեամբ և մտքի պայծառ գիտակցութեամբ կը պատասխանէր Յունիս 21 Շր. երեկոյ, Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ, թէ ասոնք իրենց յօժար կամքով կուգան ստանձնելու Փրկչին լուծը, թէ հրաժարած են աշխարհիկ կապերէ, թէ մաքուր և անարատ կեանք մը ապրած են իրենց ծնունդէն ի վեր, թէ լիովին սորված են քահանայութեան ուսումը և տառուածային օրէնքներու գիտութիւնը, թէ կրնան ուխտել որ պիտի հետեւին Քրիստոսին՝ կուրծք տալով կեանքի բոլոր դառնութիւններուն (ազգատութիւն, քաղց, ծարաւ, վիշտ, հալածանք, չարչարանք «վասն Քրիստոսի»): Ընծայեալներ հաւատքով, սիրով և յուսով խոնարհեցուցին իրենց գլուխները և զգայուն համարձակութեամբ ուղղակի պատասխանեցին իրենց եղած հարցումներուն, խոստացան հեռի մնալ զաւանարանական հին և նոր մոլորութիւններէ, պաշտպանել իրենց Մայրենի Եկեղեցւոյն ուղղափառութիւնը, հետեւիլ քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ սուրբ և ուղղափառ հայրերուն և մասնաւորապէս Հայաստանեայց Եկեղեցւոյ առաքելաշնորհ հայրերուն, Լուսաւորէն մինչև Շնորհալի և Գրիգոր Տաթևացի, և միաձայն խոստովանութեամբ

սուրբ իրենց Մայրենի Եկեղեցւոյն հաւատքի զաւանութիւնը:

Շատ կանոնաւոր ու զաշնաւոր անցաւ Կոչման արարողութիւնը: Ժառանգաւոր զպրններ և Ընծայարանի Մեկդոնեան զասարանին սարկաւազները, հրճուանքով և յուզմունքով երգեցին սաղմոսներն ու շարականները, իրենց ուսուցչին, Տիար Լեւոն Զրկինկիրեանի վարժ առաջնորդութեամբ, իրենց երէց եղբայրներուն Կոչումին առթիւ, և Զեւնադրիչ Տ. Մեսրոպ Սրբազան հայրական զորովով ընդունեցաւ պաշտօնական յայտարարութիւնն ու ուխտը այս երկտասարդ նուիրեալներուն, կրկնով իր լանջքին խորը Դուրեան Սրբազանի ոգին, զոր կ'ղգային նաև ծնրաղիր ընծայեալներ այս խորհրդաւոր պահուն:

ԶԵՒՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1930 Յունիս 22. Կիրակի, Տօն Կաթողիկէ Եկեղեցւոյ Սրբոյ Էջմիածնի:

Պատմական և խորհրդաւոր օրուան մը յիշատակին կը զուգադիպէր Զեւնադրութիւնը: Կոչումը տեղի ունեցաւ Շր. երեկոյ, Ս. Գրիգոր Լուսաւորէի Սրտաշատու Սրբոյ իրապէս եղևու տօնին. իսկ Զեւնադրութիւնը կատարուեցաւ Ս. Էջմիածնի Մայր Եկեղեցւոյն հիմնարկութեան և շինութեան տօնին:

Տեղապահ Տ. Մեսրոպ Սրբազան, իր Լուսարարապետի հանգամանքով, կանխապէս ամէն բան կարգադրած էր վայելչօրէն:

Տեղական սովորութեանց համաձայն Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ միայն Պատրիարքներ Զեւնադրութիւն կը կատարեն. իսկ եպիսկոպոսներ Ս. Յակոբէն զուրս՝ ուէ Եկեղեցւոյ մէջ, ընդհանրապէս Ս. Հրեշտակապետ և Ս. Յարութիւն՝ Փրկչի Դերեղմանին առջև:

Բայց Տնօրէն Ժողովը ի յարգանս Դուրեան Սրբազանի, որ եթէ ողջ ըլլար Ս. Յակոբի մէջ ինքն պիտի գնէր իր ձեռքերը իր այս մատաղերամ հոգեւոր զաւակներուն գլուխը, որոշեց որ Զեւնադրութիւնը կատարուի պատրիարքական եկեղեցւոյ մէջ:

Այս պատճառով Սրբոց Յակոբեանց Տաճարը վայելչօրէն պնտուած էր իր տօնական յարգարանքին չքեղութեամբ:

Զեռնադրիչ Սրբազանը չառ թանկազին զգեստաւորութեամբ հանդերձեալ էր կատարելու համար մեծ շնորհաբաշխութիւնը: Սարկաւազունք և զպիւրք պատմութեան ուսած էին իրենց աստիճանին համեմատ: Հաւատացեալ հետաքրքիր բազմութիւնը անհամբեր կ'սպասէ որ սկսի Զեռնադրութեան արարողութիւնը: Ս. Պատարագը արդէն սկսած է և հասած է ժամը ծաշու ընթերցումներու:

Վերջապէս կը հնչէ «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» շարականը (ԳԶ), որուն մէջ Սրբազան քերթողը հաւատքի, զգացումի և տեսիլքի կամուրջ մը կը նետէ այս գեղեցիկ տիեզերքի Սրբաշին և անոր պաշտամունքին նուիրեալ այս նորընծայ պաշտօնեաներու Զեռնադրութեան խորհուրդին միջև, անշուշտ հռչակելու համար թէ պարզ արարողութիւն մը չէ որ կը կատարուի այս Զեռնադրութեամբ, այլ հոգեկան իրականութիւն մը կը տիրէ կրօնքի խորհրդականութիւններուն մէջ:

Դարձեալ հակիրճ և վերջնական հարցաքննութիւն մը Զեռնադրիչ եպսօ. կողմէն, ընծայեալներու արժանաւորութեան մասին, և տրուած հաստատական պատասխանին վրայ խարտաւիւղի կողմէն, «Շնորհօքն Աստուծոյ Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ կ'ըսէ Զեռնադրիչն, կոչեմ (անունները տալով) զսարկաւազունս ի քահանայութիւն» և աղօթենք որ բարեբար Աստուած իր սուրբ պարգևներով (չընորհքներով) պայծառապէս փայլեցնէ առոնք, մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցաւ:

Զեռնադրութեան առաջին աղօթքէն յետոյ, նորընծաներ ժողովուրդին կը դառնան ծնրադիր և ձեռամբարձ, և կ'երգուի Աստուծային և երկնաւոր շնորհը, երեք կրկնութեամբ: Հրաշալի է այս երգը իր իմաստով ու եղանակով: Եղանակը յուզիչ է և խոճ է իմաստը. որովհետեւ, Աստուծոյ շնորհքն է որ քահանայութեան և եկեղեցւոյ ծառայութեան կը կոչէ նուիրեալը (Զեռնադրիչը պարզ միջնորդն է այդ շնորհաբաշխութեան) հիմնուելով թէ՛ անոր անձնական և թէ՛ ժողովրդեան կողմէ տրուած վկայութեան վրայ. այդ սկզբունքով և այդ հասկողութեամբ է որ Զեռնադրիչը իր ձեռքերը կը դնէ ընծայեալին գլուխը, բառ առ բառ կրկնելով երգուած

Աստուծային և երկնաւոր շնորհը և աւելցնելով. «Ես դնեմ ձեռս ի վերայ սորա, և դուք ամենեւեան աղօթս արարեմք, զի արժանի լիցի սա զասկիան քահանայութեան անարատ պանիլ առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Ես ձեռք կը դնեմ ասոր (զլիսուն) վրայ, իսկ դուք ամէնքդ ալ աղօթեցէք որ ասկիա արժանի ըլլայ քահանայութեան աստիճանը անարատ պահելու Տէր Աստուծոյ սեղանին առջև:

Որչափ խորհրդաւոր: Զեռնադրիչը ձեռք պիտի դնէ, բայց բոլոր ժողովուրդը պիտի աղօթէ, ոչ միայն այդ պահուն, այլ նաեւ միշտ, որպէս զի Զեռնադրեալը կարող ըլլայ իրեն տրուած քահանայական աստիճանը անարատ պահել Աստուծոյ սեղանին առջև: Անկեղծ հոգիներու հեծեծանքն է Աղօթքը, որ բարիին կը տենչայ միշտ: Մարդկային տկարութիւնները կը հալին և կը փարատին՝ երբ հաւատացեալներ կ'աղօթեն իրարու համար: Մարդ է քահանան. ինչպէս որ ան կ'աղօթէ ժողովուրդին համար, ժողովուրդն ալ պէտք է աղօթէ քահանային համար. այսինքն՝ օգնէ անոր յաջողութեան՝ իր անկեղծ բաղձանքներով, իր անխաղախ սիրով, իր բարեացակամ վերաբերմունքով, ի հարկին նաեւ իր զոհողութեամբ, և աղօթէ այս ոգիով:

Զեռնադրիչ եպսօ. ընծայեալներուն ուրարները լուծի օրինակով կը դնէ անոնց ճիտերուն վրայ, և ահա կը դուռն մարգարէական պատշաճ պատգամներ եղեկիւնէն, Մաղաքիայէն, Եսայիէն, ինչպէս նաեւ Պետրոսի Կաթողիկեայց Ա. Թուղթէն, և Պօղոսի առ Տիմոթէոս Ա. Թուղթէն, և վերջապէս Ղուկասու Աւետարանէն ներչընչող հատուած մը «Եւ դարձաւ Յիսուս զօրութեամբ հոգւոյն ի Դաւիթիս»:

Ս. Պատարագը կը շարունակուի մինչև Ողբոյնի հրաւերը: Սաղմոսէ մը ետքը, սարկաւազունք կ'եղանակեն Աստուած մեծ հօգը քարոզը, որ աղօթքի և աղաչանքի հիանալի թելադրանք մըն է ամէնուն համար, որմէ յետոյ Զեռնադրիչ եպսօ. կը կարգայ երկու մեծ աղօթքները, կուտայ կրօնաւորի սե փիլոնը ընծայեալներուն և կ'օրհնէ անոնց քահանայական զգեստները: Վերջին աղօթքին կցուած է Նարեկին հո-

գեղունչ հեծեմանքներէն մէկը, Աղաչեմ զանկոտիսկի, որ իր գրական յօրինումա-
քով և աղօթական շունչով, կրօնական բա-
նաստեղծութեան գոհար մըն է. վասն զի
առ Աստուած հաւատքը աղօթողին, իրա-
կանութիւն մը կը դառնայ, և մարդ կ'ըզ-
գայ որ առանց Աստուծոյ, առանց աստ-
ուածային շնորհքի չի կրնար քահանայա-
նալ և ծառայել անոր սեղանին:

Աղօթքէն ետքը կը հնչէ քահանայա-
կան զգեստաւորումի երգը, Խորհուրդ խո-
րիմ և քիչ ետքը նորընծաներ քահանայա-
կան փառքով զարդարուած և պսակուած
կը շարունակեն Աւագ սեղանի գեղարուեստա-
կան ոսկեհող խաչկալին երկու կողմը:

Ս. Յակոբի զանձարանին ամէնէն վա-
ղիւտչ և արժէքաւոր զգեստները տրուած
են նորընծաներու, համագոյն և համա-
չափ, մութ կարմիր մետաքսէ յատակի վը-
րայ ոսկեթել բանուածքով շուրջաւորներ,
իրեւ թէ լուսինէն ծորող ոսկի ճառագայթ-
ներով հիւսուած ըլլային, և մարգարտա-
յեռ թագեր իրենց զլիւին:

ՕՏՈՒՄ

Ձեռնադրութենէն ետքը ամէնէն յու-
ղիչ և զմայլելի արարողութիւնն է օծումը.
վասն զի ո՛չ միայն Աստուածային շնորհին
զգալի ձեռով մը յայտնաբերութիւնն է Օ-
ծումը, այլ նաեւ յուղիչ պահ մը նոր ան-
ուանակոչութեան: Ամէն բան նոր, ամէն
բան մաքուր և ամէն բան խորհրդաւոր:

Ձեռնադրիչ եպօսէն. սկսեալ մինչև հա-
ւատացեալներէն իւրաքանչիւրը կ'ապրին
անձկութեան, յուզմունքի քանի մը վայր-
կեաններ:

Անոնք որ վայելած են Ձեռնադրու-
թեան և Օծման յուզումները և վերացում-
ները, անոնք միայն կրնան անդրադառ-
նալ կրուած ազդեցութիւններուն և տպա-
ւորութեան վրայ: Զարմանալի փոփոխու-
թիւն մը կը կրէ մահկանացու և մեղա-
ւոր մարդը այդ պահուն, կ'զգայ որ նոր
կեանք մը արթնցած է իր ներքը: Ինքը
առաջուան մարդը չէ այլևս: Օ՛հ, երանի՜
թէ այս նոր կեանքին, այս հոգեւոր կեան-
քին թարմութիւնը կտրելի ըլլար մշտնջի-
նաւորել բոլոր ձեռնադրեալներու կենցա-
ղին մէջ:

Առաջիկոյ Աղաւնոյ, սրբալոյս մեռնի
հեղումին ազգարար շարահանը:

Եւ ահա՜ կարգով կ'օրհնուին, կ'օծ-
ուին և կը սրբադործուին ճակատը, աջ և
ձախ ձեռքերը Տէր Դաւիթ, Տէր Սիոն,
Տէր Հայկազուն, Տէր Պարգե, Տէր Գե-
ղամ, Տէր Զգօն, Տէր Սերովբէ, Տէր Շա-
ւարշ և Տէր Զենոբ քահանաներուն:

Հին անուններ և կոչումներ Տեղի տը-
ւած են նոր մտաւորպարներու:

Թէև Ձեռնադրիչ եպօսին իրաւունքն է
ընտրութիւնը նոր անուններու, բայց փափ-
կանկատութեամբ երբեմն հասկնալ կ'ու-
զեն նաեւ ձեռնադրողին կամքը: Վասն
զի ո՛չ միայն Ձեռնադրիչ եպօսը. իտէալ
մը, տեսիլ մը ունի իրեն համար, և կը
փափաքի որ իր ձեռնադրածները այդ
իտէալն ու տեսիլը արժեցնելու կարող
հոգեւորականներ ըլլան, այլ նաեւ աստ-
ուածային ծառայութեան նուիրուողներ՝
իրենք ալ ունին իտէալներ և տեսիլներ,
և կը բաղձան իրենց համար ընտրել այն-
պիսի մտաւորպարներ, որոնց կ'ուզեն հե-
տեւիլ և նմանիլ անոնց:

Աւետարանի մէջ կը տեսնենք որ երբ
Տէր Յիսուս-Քրիստոս իր աշակերտները
ձկնորսութենէն առաքելական պաշտօնի կը
կոչէ, կը փոխէ անոնց անունները, իրեւ
արտայայտիչը անոնց նոր պաշտօնին և
նկարագրին:

Ձեռնադրութեան ատեն անուն փոխել
թէև Աւետարանի պատմութեան հետեւ-
թիւն մըն է քրիստոնէական եկեղեցւոյ
մէջ, բայց կանոնական պարտադրութիւն
մը չէ եղած, այլ պարզ սովորութիւն մը.
որովհետեւ կը պատահի որ անունները ան-
փոփոխ պահուին:

Դպրեմանքի մէջ, Օրմանեան և Դուր-
եան Սրբազաններ կը նախընտրէին ազգա-
յին փառաւոր և պայծառ ղէմքերը վերա-
կենդանացնել, և անոնց մէջ ալ ուշա-
դրութիւն կը դարձնէին երկվանդ անուն-
ներու, նոյն ատեն չէին ուզեր անտեսել
ձեռնադրեալներուն փափաքը:

Ձեռնադրիչ Տ. Մեսրոպ Սրբազան ըն-
տրեց այնպիսի անուններ, որոնք մասնաւոր
նշանակութիւն մը ունին: Դաւիթ, սուրբ-
զրական անուն մըն է, Իսրայէլի պատ-
մութեան փառաւոր ղէմքը, որ անունը
եղած էր նաեւ ողբացեալ Լուսարարա-

պետ Դաւիթ Վրդ. Տէրաէրեանի, որուն իրրեւ միաբան նախանձաշուքութիւնը, կը գովութի մինչեւ հիմայ Ս. Աթոռի մէջ: Սիրուն, թէեւ տեղական ու աշխարհադրական առնուն, որուն վրայ կանգնած է Հայոց Մայրավանքը, Ս. Գեորգի, բայց եղած է նաեւ կաթողիկոսի մը անունը մեր պատմութեան մէջ (767-775): Հայկրագուն, Հայկ պանծալի անունը կը մշտնջենաւորէ. Պարգև, Գեղամ, Շաւարշ Դուբեանի աշակերտներէն Դպրեւ-վանքցի երեք նահատակ վարդապետներու յիշատակը վերակենդանացնելու համար ընտրուած. Գեղամ, հայ նահապետներու գեղեցիկ գէմքերէն, որ դարերէ ի վեր կ'ապրի հայ պատմութեան և հայ աշխարհագրութեան մէջ, Գեղամայ Ծովով: Զգօն (Ափրաատ), Պարսկաստանի եկեղեցիէն վաղնջական նըշտնաւոր գէմք մը, իրրեւ արտայայտիչը իմաստութեան և զգօնութեան, որուն զործը հայերէնի ալ թարգմանուած է Զգօն անունով: Իսկ Զեռք, Գլակայ վանքին պատմագիր վանահայրը, շունչ մը կը բերէ Մամիկոնեաններուն Տարօնէն:

Կարելի չէ ըսել թէ ի՞նչ զգաց ժողովուրդը երբ իր անձկութիւնն ու յուզմունքը փարատեցաւ օծումէն ետքը, և ի՞նչ զգացին նոյն ինքն օծեալներ՝ իրենց նոր անուններով:

Իրողութիւնը այն էր որ այս փառահեղ և արժանափայլ հանդիսաւորութիւնը, նոր ոյժեր կ'ընծայէր Ս. Գեորգիին՝ օծեալ հոգիներով և պայծառակերպուած գէմքերով:

ՈՂՋՈՐՅՆ

Օծումէն ետքը Ողջոյն:

Քրիստոնեայ եկեղեցւոյն մէջ զիրար ողջունել, ներողութեան և սիրոյ ոգիով, շատ հին է: Աստուծոյ Տաճարին մէջ պէտք է մոռցուին հեռ, քէն, ոխ, ատելութիւն, երբ եկեղեցին կ'զգայ որ Քրիստոս իր մէջն է, իրեն հետ է, խաղաղութիւն կը տիրէ հոն: Մարգրիկ մեղանշական են, սակայն, միշտ բան մը կ'ունենան իրարու հանդէպ. բայց որովհետեւ եկեղեցին միեւնոյն հաւատքով, միեւնոյն սիրով իրարու միացած հաւատացեալներու ժողովն է, պէտք է որ այդ հաւատքն ու սէրը սրբապղծող սեւեթներութիւն չմնայ հաւատացեալներու ժո-

ղովին մէջ: Անոր համար է որ Ս. Պատարագի ընթացքին սարկաւազը կ'ազդարարէ Ողջոյն տոյ միմիանց ի համոյր սրբութեան. — սուրբ համոյրով ողջունեցէք զիրար: Եւ ստուգիւ եկեղեցւոյ վաղեմի ժամանակներուն հաւատացեալները կը համբուրէին զիրար: Իրական համոյրը զըծախտաբար տեղի տուաւ զեղծումի, և եկեղեցւոյ առաջնորդները արգիլեցին դայն և տեղը զրին պարզ ողջոյնը այն ձևով որ կը զործադրուի այժմ:

Զեռնագրութեան առթիւ ողջոյնը կը տրուի նորընծայ օծեալներուն: Զեռնագրիչ կաթողիկոսէն սկսեալ բոլոր ներկայ եկեղեցականներ կը համբուրեն նորընծային կամ նորընծաներուն ճակատներն ու ձեռնամած ձեռքերը: Անոնք աստուածային շնորհքով և Ս. Հոգւոյն օծութեամբ մաքրուած, նորոգուած ճակատներ ու ձեռքեր են: Հարկ է սուրբ ողջոյններով համբուրել զանոնք և ողջունել անոնց մուտքը մեծ խորհուրդներու սրբարանին մէջ, ողջունել և շնորհաւորել զանոնք որ քալին ու ծառային արժանիքներու բարձրութեան վրայ:

Պատարագի աւարտումին նորընծաներ վար կ'իջնեն խորանէն և կը շարունակեն ատեանի առջև, երեսներն ժողովուրդը, իւրաքանչիւրին առջև դրոյալ մը, որոնց վրայ մէկ մէկ Աւետարան, քովերներն մէկ մէկ զպիր. իրենց օծեալ և մածեալ ձեռքերը երկարած զբաղալին մէկ կողմը, և երբ իրենք լսիկ մնջիկ կը կարգան Աւետարանը, ժողովուրդը կը փութայ ողջոյնի համոյրը զրոշմել իր նորընծայ պաշտօնեաներուն օծեալ ձեռքին վրայ: Աղուոր անցք մը, հանգէս մը հոգեւոր, ուր քահանայ և ժողովուրդ կը շրջուին իրարու, կը շնորհաւորեն զիրար և կ'աղօթեն իրարու համար:

Երեսաղէմի Կառավարիչը Վսեմ. Քիթ Բոչ, որ մեծ հետաքրքրութեամբ և համբուրութեամբ ներկայ գտնուեցաւ Զեռնագրութեան, սկիզբէն մինչև վերջը, շնորհաւորեց նորընծաները, «Շնորհաւորեմ» հայերէն բառով, Տ. Բարգէն Սրբազանի առաջնորդութեամբ:

Տքթ. Պօլընթըն, որ Կանոնիկոս Հայր Պրիճմէնի միամեայ արձակուրդին առթիւ եկած էր Երեսաղէմ, անոր տեղը լեցնե-

լու, իր ակադեմական պատմութեանով ներկայ էր Կոչումին և Ձեռնադրութեան, եկեղեցականներու հետ բոմ բարձրացաւ և ճիշդ անոնց նման ողջունեց իր աշակերտները:

ՎԵՂԱՐԻ ՏՐԷՆՈՒԹԻՒՆ

Նոյն Կիրակի երեկոյեան Ձեռնադրել Տ. Միսրոպ Եպիսկոպոս կատարեց վեղարի օրհնութիւնն ու տրւեցութիւնը:

Վեղարը, ըստ աւանդութեան, եղիպտացի մեծ անապատականին, Սուրբ Անտոնի, զլիսանոցն է: Աստուր բուն նպատակն է օգնել որ աչքերը վարժուին ինքնամիտփման. հոգեւորական մարդը ինքն իր մէջ սեւեռութիւն իր նպատակին, այնպէս որ, եթէ կարելի է, ունէ կերպով չխանդարտուի այդ սեւեռումը: Այդ էր պատճառը որ հին ատեններ վեղարը կ'իջնէր աչքերէն վար և ո՛չ թէ վեր: Բայց վեղարը պարզ միջոց մըն է արեւելի և ո՛չ թէ նպատակ կրօնաւորական կեանքին մէջ. այնպէս որ եթէ նուիրեալը չունի հոգեկան ամբուլթիւն և անգեղի նկարագիր մը, անոր ամբողջ գլուխը թաղիքներով ալ ծածկու, դարձեալ կը դառնա: Վեղարը այլևս սկզբունքով նշանակութիւն ունի մեր եկեղեցւոյ մէջ. որովհետեւ նկարագրին կը նայինք վեղարաւորին և ո՛չ թէ անոր վեղարի ձեւին. վեղարը շատոնց պաշտօնական համադրեալն մասը կը կազմէ ամուրի եկեղեցականութեան, և ատով է որ ճանչցուած են մեր եկեղեցւոյն հոգեւոր պետերը ամէն կողմ, մասնաւոր տիրապետող պետութիւններու առջեւ. իսկ մեր օրերուն թէ՛ իջմիածնի և թէ՛ Երուսաղէմի մէջ եկեղեցիէն դուրս ալ հայ վանականներու սովորական գլխանոցն է ան: Երուսաղէմի մէջ մասնաւոր Ս. Յակոբի Միաբանները իրենց վեղարով կը ճանչցուին յարաւորաւորութիւններու և օտարներու առջեւ:

Վեղարը, պահելով հանդերձ իր անտոնեան ծագումը, այլևայլ ձեւեր առած և ազգայնացած է յոյներու, լատին միաբանութիւններու և հայ կաթողիկոսներու քով: Հայ. եկեղեցւոյ մէջ ալ հետզհետէ գեղարդիտական ձեւ մը առած է՝ Հայաստանի «կաթողիկէ» գմբէթներուն նմանութեամբ: Արուեստի կողմէն ուրեմն՝ Հայոց վեղարը

կը մարմնացնէ հայ ճարտարապետութեան ինքնայատուկ, հայացի գիծերէն մին, որ ստուգիւ շատ վայելուչ և գրաւիչ է իբրեւ գլխանոց: Հայ գեղարուեստի պատմութեան տեսակէտէն ուրեմն Հայաստանն է որ կ'ապրի հայ վեղարաւորներուն գլխուն մէջ և կ'արտայայտուի անոնց գլխուն վրայ երկնասլաց «կաթողիկէ»ներու սիրուն և չքեղ կոթողութեանով:

Վեղարի Տրւեցութեան արարողութեան աղօթքներն ու ընթերցուածները կրօնական խոր շունչ մը ունին: Հոգեւոր ծառայութեան նուիրեալներու ճամբան զրուարին է և վտանգաւոր՝ շատ անգամ. ո՛չ միայն անձնական արթնութիւն պէտք է չլինալու համար փորձանքներու մէջ, այլ նաև անհրաժեշտ է արիական խտնուածք և քաջութիւն՝ հեռացնելու համար փորձանքը, որ յաճախ ինքնին ալ կուգայ, իր հրապոյրներով թակարդելու համար մարդը: Այս բոլորին դէմ արթուն և պատրաստ դտնուելու համար, աղօթքներ, սաղմոսներ, շարականներ ա՛յնպիսի ընտանքով մը դասաւորած են որ նորընծայ կրօնաւորներ կրնան անոնց տպաւորութիւնը և զասը շմոռնալ իրենց կեանքին բոլոր տեսչութեան մէջ:

Եպիսկոպոսը վեղարը տալու ատեն զըրեթէ սա՛ իմաստով կ'ըսէ.

— Աստուած է որ կը հագուենցնէ քեզի նոր մարդը. մարդը Աստուծոյ կողմէն ստեղծուած է արդար, սուրբ և ճշմարիտ ըլլալու համար. դուն առիր այս վեղարը, որ խորհրդանշանն է հնազանդութեան քու եկեղեցւոյդ. հոգիովդ գիշեր ցորեկ կեցիր Աստուծոյ սիրոյն մէջ:

Պահպանիչով կը կնքուին փառաւոր օրուան փառահեղ հանդէսները, և նորընծայ վեղարաւորներ, իրենց յուզումներուն և վերացումներուն մէջ, կը կանգնին խորանին երկու կողմերը, լսելու համար Ձեռնադրութեան Քարգը:

ԱՄՓՈՓՈՒՄԸ ՔԱՐԳԻՆ

Քարգը խօսեցաւ Տ. Բարդէն Սրբազան, որ վեց տարի անընդհատ ուսուցիչը եղած է այս դասարանին, որ շատ մօտէն գիտէ նորընծաներուն իւրաքանչիւրին հոգեբանական վիճակը և մտաւորական արժէքը,

և որ Կոչման արարողութենէն մինչև վեղարի տըւելութիւնը, հոգեկան հրճուանքով, սրտի յուզումով և տամուկ աչքերով հետեցեալ իր աշակերտներուն ուխտին նըւիրագործման այս խորհրդաւոր արարուածին: Ա. Յակոբի մթնոլորտը 24 ժամերէ ի վեր եղբարականացած է աղօթքի, խունկի, լոյսի, ուխտի, օրհնութեան, տեսիլներու, նպատակի, ապագաներու զարմանալի ներգաշնակութեամբ: Երկ-կոյնան թեթև ստուերները կ'սկսին թանձրանալ Ա. Յակոբի կամարներուն տակ: Դուրսան Սրբազանի յիշատակն ու հոգին անուրջի մը քաղցրութիւնը և դառնութիւնը միանգամայն կը բերէ ընծայականերու եւ ընծայողներուն. որովհետեւ թափուր է պատրիարքական սեւաքող աթոռը, ուրկէ տարիներով ճառագայթեց իմաստուն զրլուխ մը, աղուոր աչքերու պերճախօս նայուածքներու մէջէն: Ժողովուրդը հետաքրքիր, Միաբանութիւնը ունկնդիր, իսկ ժառանգաւոր դպիրներ, Ընծայարանի սարկաւազներ և նորընծայ արեղաներ ուշադիր, լարուած կ'սպասեն:

Կ'ամփոփենք գլխաւոր գիծերը Քաղցրին:

Ա.

Շատ խորհրդաւոր օրուան մը հանդիպեցաւ ձեր ձեռնադրութիւնը: Ա. Էջմիածնի հիմնարկութեան տօնն է այսօր: Երազի մը իրագործումն է Կաթողիկէի շինութիւնը: Դուք գիտէք պատմութիւնը այդ երազին: Լուսաւորչի առաքելական ոգւոյն կոթողն է ան. տառապանքներէ, չարաբանքներէ, խորվիրապի արհաւիրքներէն չվախցող և տարիներով վսեմ երազի մը, պայծառ տեսիլի մը սեևոտած հոգիի մը յաջողութեան կոթողը: Էջմիածին, Կաթողիկէ, Հայաստանայց եկեղեցի, Հայրապետութիւն Ամենայն Հայոց, ամէնքն ալ երազուած, ծրագրուած իրականութիւններ են հայ ժողովուրդի քրիստոնէական կեանքի պատմութեան մէջ: Դիտէք թէ Ա. Սահակն ալ տեսաւ երազ մը, որ պահ մը անարեկ ըրաւ զինքն, մտածելով որ իր սերունդին գիծը այլևս պիտի չկրնար արժանաւոր յաջորդներ հասցնել Լուսաւորչի աթոռին համար. բայց իր մտքի և հոգիի աչակերտները փարատեցին այդ վախը:

Դուք գիտէք նաև աւելի փառահեղ և խորհրդաւոր երազ մը, հայ վարդապետներու նախատիպար Սուրբ Մեսրոպին տեսիլը: Հայերէն այբուբէնքին վարպետն ու վարդապետը երազեց շարունակ, մինչև որ լոյսի պէս առատ յոյսը և խանդավառ տեսիլը թանձրացուց, վերածեց հրաշալի իրողութեան մը, որուն շնորհիւ հայ ժողովուրդը և հայ եկեղեցին կ'ապրին և կը շինեն մինչև այսօր իր արտայայտիչը աւետարանով քաղաքակիրթ կեանքի մը:

Իոյր աղուոր գործեր, բոլոր հրաշալի գիւտեր, մարդկային յառաջդիմութեան բոլոր ազդակները, նախ երազներ են, տեսիլներ են որ մտքի և հոգիի յարտաե դորձակցութեամբ կը վերածուին շօշափելի իրողութիւններու:

Այսօր ձեր ալ պատանեկան կեանքին երազները իրականութիւն մը եղան. լոյսի և շնորհքի մէջ կերտուեցաք նոր կեանքի մը տեսիլները հետապնելու և իրագործելու համար:

Հայ ժողովրդի զոյութեան յարատեւութեան զաղտնիքն է երազը. հայը տեսիլքի ժողովուրդ մըն է: Հայը մինչև հիմայ կորած կորստուած պիտի ըլլար այս երկրագունտի թատերաբեմէն, եթէ չունենար տեսիլը գեղեցիկ և տեսական իրողութիւններ: Դուք սուրէն և կրակէն անցած, հալածուած և իր հայրենիքէն զրկուած ժողովուրդի մը ծոցէն ելաք: Կոտորուեցանք, կոզոպտուեցանք, ոտնակոխ եղանք, բայց կ'ապրինք, եւ նոր կեանքի տեսիլն է որ կ'ապրեցնէ մեզ: Եթէ օր մը զաղրի հայը երազելէ, չուտ կը հասնի մանգաղը մահուան: Եթէ դուք ալ զաղրիք ըլլալէ տեսիլի մարդը, եթէ չըլլաք տեսանող մարդարէներ, կը զաղրիք ճառագայթելէ:

Ասիկա խորանն է լոյսի: Տեսիլի մը պայծառ և կենսատու լոյսերով ողողուած հոգիով ու մտքով միայն պիտի կրնաք ծառայիլ ասոր: Յիշեցէ՛ք Փրկչին պատգամները. դուք աղէք. ուշադրութիւն ըլլէք որ չկորսնցնէք ձեր համը: Դուք լոյս էք. աշխատեցէ՛ք որ չխաւարի ան ձեր ներսը: Աւրուած, անհամ աղը կը նետուի փողոցը և անցորդներ կը կոխկուտեն զայն: Անլոյս ճրագը կը նետուի մէկդի, բանի չի ծառայեր:

Արբաղան քերթողը Լուսաւորչի բեր-
նէն կ'երգէ. — Եկայք շինեցուք աւոր
գիւղերսն շուտ, քանի ի սաւ ծաղկաց մեկ
շոյս ի Հայաստան աշխարհի:

Հայ հոգեւորականին պարտքն է պայ-
ծառ պահել լոյսի խորանը, անոր երազա-
յին եւ տեսական իրականութիւններուն
մէջ:

Խորհրդաւոր է այս օրը ձեր ձեռնա-
դրութեան: Հայ եկեղեցւոյ լուսեղէն խո-
րանին նուիրուեցաք այսօր. ձեր ուխտը
կնքուեցաւ եւ նուիրագործուեցաւ Ս. Հո-
ղոսն շնորհարաշխ օծումով: Լոյսի պէս ա-
նարատ եւ յաւերժական պիտի ըլլայ ձեր
նոր կեանքը:

Բ.

Որպէս զի կարենաք ծառայել եւ ար-
ժեցնել ձեր կոչումն ու պատրաստութիւ-
նը, պէտք ունիք ապահով կանոնի մը:
Սուրբն Պօղոս տուած է այդ կանոնը իր
Տիմոթէոս աշակերտին եւ գործակցին, որ
ձեզ նման երիտասարդ պաշտօնեայ մըն էր՝
նուիրուած Աստուծոյ գործին: Ապահով է
այդ կանոնը, որովհետեւ ուղղակի առաքե-
լական ժամանակներուն փորձառութիւնը
կը բերէ մեզի, ոչ այնքան հեռի մեր Փրկի-
չին ժամանակէն: Դուք սերտեցիք Պօղոս
առաքելային կեանքն ու գործերը: Տեսիլի
հրաշալի մարդն է ան. վստահ իր յայտ-
նութիւններուն եւ հաստատ իր քայլերուն
մէջ: Մեծ Առաքելը սա՛ պատուէրը կու
տայ Տիմոթէոսին. — «Այլ օրինակ լինի՞ր
հաւատացելոց՝ քանիք, զնացիք, սիրով,
հաւատով, սքաւորեալք» (Ա. Տիմ. Դ. 12):
Կանոն մը հինգ յօդուածներով, ամէն մէկ
բառ կշռուած, ճշգրտուած: Աստուծոյ ծա-
ռայութեան նուիրուած հոգիներ այս հինգ
պայմաններով պիտի ապացուցանեն իրենց
օգտակարութիւնը եւ պիտի առաջնորդեն
հաւատացեալներուն, այսինքն՝ իրենց խօս-
քով, իրենց ընթացքով, իրենց սիրով, ի-
րենց հաւատքով եւ իրենց սուրբ վարքով:
Այս պայմաններէն իւրաքանչիւրը մեծ ար-
ժէք կը ներկայացնէ արդէն. բայց բոլորը
միացած պիտի արտայայտուին հոգեւորա-
կաններու վրայ. միայն մէկը կամ երկու-
քը, կամ հինգէն ունէ մէկը առանձինն
բաւական չէ. այլ հինգը միանգամայն:

ԲԱՆԻԻԲ

Պէտք է քարոզել Աստուծոյ խօսքը:
Առաքելակա՛ն է հայ վարդապետին պաշ-
տօնը: Անոր բեմէն Աւետարանի պատգամ-
ները միայն պէտք է ճառագայթեն. անոր
բերնէն աստուածային ճշմարտութիւններ
պէտք է բխին: Լաւ ուսումնասիրուած,
լաւ սերտուած, լաւ մարտուած Աւետարա-
նի մը խօսքերն ու քարոզները, եւ ոչ թէ
անպատրաստ, ճոռոմ, չաղփաղփ խօսքեր:
Ընկերային յարաբերութիւններու մէջ ալ
այնիւ, կշռուած, անուշ խօսքը, որ կը
շինէ լսողը, եւ զղջումի կը բերէ մեղաւո-
րը, որ սփոփանքի ցօղեր կը թափէ վշտոտ
հոգիներուն վրայ: Խօսքը ամէնէն հրաշա-
լի արտայայտութիւնն է մարդկային կարո-
ղութեան: Ան է միջոցը խորհուրդները եւ
իրողութիւնները հաղորդելու ուրիշներուն:
Պէտք է որ տէրը ըլլաք այնիւ, շինիչ եւ
հաղորդական խօսքի: Եւ որպէսզի կարե-
նաք տիպար եւ օրինակ ըլլալ ձեր խօսքե-
րով, պէտք է որ միշտ սորվիք: Ձեր բուն
ուսումնական եւ մտաւորական կեանքը կ'ըս-
կըսի այսուհետեւ: Ի՞նչ որ սորվեցաք զըպ-
րոցի մէջ, բաւական չէ ձեր խօսքերը աղ-
ղեցիկ եւ օրինակելի ընծայելու: Պէտք ու-
նիք աւելիին: Մի՛ դադրիք սորվելէ եւ սոր-
վեցնելէ Աստուծոյ խօսքը, հմտութեամբ,
պարզութեամբ, շնորհքով եւ արդիւնաւո-
րութեամբ:

ԿՆԱՅԻԲ

Խօսքին ընկերն է ընթացքը: Խօսքը
կը կորսնցնէ իր արժէքը եթէ ընթացքով
չապացուցուի անոր իրականութիւնը: Խօս-
քը իր հեղինակութիւնը կ'ստանայ գործ-
նական կեանքէն: Եթէ դուն Բարի եղիւր
քարոզիս ուրիշներուն, եւ սակայն եթէ
ինքնին չար ես դուն, արժէք չունի խօս-
քդ: Պէտք է զգուշանալ խօսող մեքենա-
ները դառնալէ: Հեղինակութիւնը գործքով,
արդեամբ կը շինուի բարոյական եւ կրօ-
նական աշխարհի մէջ: Չես կրնար օրէնքին
բնները զնել հաւատացեալներու ուսին
վրայ, եւ ձեռքովդ իսկ չմօտենալ ատոր:
Հակառակ է այդ Աւետարանի ոգւոյն եւ
Բարոյականի գերագոյն սկզբունքներուն:
Աւետարանի պաշտօնեային պարտքն է գոր-

ծով կատարել ինչ որ կը քարոզէ բերնով կամ կ'ուսուցանէ: Հաւատացեալներուն ամէնէն չինիչ և ամէնէն անառակելի դասը տուած պիտի ըլլաք ձեր Գնացիւի, ձեր ապրած գործնական կեանքով, ձեր կենցաղով:

ՍԻՐՈՎ

Հասկնալու համար Սիր բառին իմաստը Պօղոսի բերնին մէջ, պէտք է յիշէք Ա. Կորնթացոց ԺԳ. գլուխը: Մարդիկ կարող են շատ քաջապօրծութեաններ ընել, իրբեւ արդիւնք իրենց ֆիզիքական և բարոյական ընդունակութիւններուն և կարողութիւններուն, և դուք կրնաք ձեր ծառայութիւններու ընթացքին ընել այնպիսի գործեր, որոնք կրնան զարմացնել ուրիշները, բայց Աւետարանի ոգիով ու բարոյականով անարժէք պիտի համարուին ատենք: Հարուստ մը եթէ իր բոլոր ունեցածը տայ կարօտներուն, եթէ անվախ մէկը ինքզինքը կրակներու մէջ ալ նետէ իրբեւ՝ ապացոյց իր քաջութեան, այսպիսի անձնագործութիւն մը իսկ անարժէք է. որովհետեւ այս բոլորը ջոյշի համար են, և սէրը չէ ատենց ազդակը: Անկեղծ և անխառն սէրը, որ աստուածային է, գերազանց է մարդկային բոլոր գործողութիւններուն: Ձեր ծառայութեան զսպանակը պիտի ըլլայ այդ սէրը. առանց ատոր ո՛րչափ ալ պերճախօս ըլլաք, թանաղի մը պէս անարժէք ձայներ հանած պիտի ըլլաք: Առաքեալը կ'ըսէ. ո՛չ միայն մարդոց լեզուները, այլ նաեւ եթէ հրեշտակներու լեզուն ալ կարենամ խօսիլ, և սէր չունենամ, տարբերութիւն մը չիմ ունենար պղինձէն կամ ծնծղայէն, որոնք տաղտկալի զօղանջ մը միայն ունին: Վասնզի ամէն բան եղծանելի է և վաղանցիկ: Աէրն է որ կայուն է և տեական: Աւետարանի պաշտօնակցին հիմնական հարստութիւնն է Պօղոսի հասկցած սէրը: Աէր առ Աստուած, սէր առ տառապեալ մարդկութիւն. անշահախնդիր սէրը, մեր Փրկչին սէրը, որով Ան լոյս տուաւ կոյր աչքերու եւ ոյժ մարդոց՝ որ կարենան յաղթել մեղքին, այն սէրը որուն կրակով այրեց փճացուց ատելութեան սերմերը զինքը սիրողներու մէջ, այն սէրը որով ինքն սիրեց իրենները և փապառ սիրեացոյ:

ՀԱՒԱՏՈՎՔ

Կարելի չէ առանց հաւատքի յաջողիլ ոեւէ ձեռնարկի և գործի մէջ: Ընդհանուր սկզբունք է տսիկա: Տեսիլի մարդը ամէնէն յառաջ հաւատքի մարդ է: Տեսիլ եւ հաւատք անբաժան են իրարմէ: Տիմոթէոսին յանձնարարուած հաւատքը, Աւետարանի հաւատքն է: Եթէ չէք հաւատար, չէք կրնար քարոզել, չէք կրնար աշխատիլ, չէք կրնար յառաջգիմել: Ձեր բերնէն ելած խօսքերուն, ձեր ձեռքի գործերուն ամէնէն յառաջ դուք պիտի հաւատաք: Եւ զիտէք թէ ո՛րչափ խնդիրներ կան կրօնքի աշխարհին մէջ, որոնք իրականութիւններ են միայն հաւատքի մարդուն համար: Հաւատքը աղբիւրն է կորովի, քաջութեան, զոհողութեան, բարձրագոյն և աղնուաղոյն ծառայութեան: Սուրբն Պօղոս տիպար հաւատացեալն է ամէնէն յառաջ: Անոր հաւատքը Յիսուս Քրիստոսի վրայ այնքան անկեղծ և այնքան հաստատուն էր որ միշտ իր մէջ կ'զգար զԱյն: Անոր չարչարանքները իր մարմնոյն մէջ կը կրէր ան և կը պարծնար Անոր խաչով. իսկ իր վերացումներուն և յափշտակութիւններուն մէջ դէմ յանդիման կը տեսնէր զԱյն: Պօղոս պերճախօս մը չէր, բայց քաջ հմուտ էր հաւատքի գիտութեան, և այդ հաւատքով է որ յաջողեցաւ իր առաքելութեան մէջ: Ի հարկէ, ձեր իրաւունքն է տսիկա, պիտի փափաքիք յաջողիլ ձեր բոլոր խորհուրդներուն մէջ. բայց զիտեք որ հաւատքի մէջ է այդ յաջողութեան զապանիքը:

Պիտի հանդիպիք անհաւատներու, պիտի չըջապատուիք կրօնքը ծաղրողներէ, պիտի տեսնէք որ կա՛ն կարգ մը մարդիկ որ նոյն իսկ Աստուծոյ գէմ կը հայհոյեն խօսքով ու գրչով, որոնք պիտի դժուարացնեն ձեր ծառայութիւնը. բայց եթէ չունենաք այն հաւատքը, որ կրնայ լուսները խախտել իրենց տեղերէն կամ ծառերը խել իրենց արմատէն, չէք կրնար յաղթել այդ դժուարութիւններուն: Մշակեցէ՛ք ձեր հաւատքի կարողութիւնը եւ տուէ՛ք լաւազոյն օրինակը հաւատացեալներուն:

ՍՐԲՈՒԹԵԱՄԲ

Մաքուր կեանքը անառիկ ամբոցն է կրօնաւորին: Բոլոր աշխարհ չարի մէջ է: Իսկ Աւետարանի պատգամն է սրբութիւն, մաքրութիւն: Մեր Փրկիչը իր վերջին ազօթքին մէջ սրբութիւն մաղթեց իր աշակերտներուն համար: Անմաքրութիւններով ողողուած է մարդկային կեանքը: Դուք ձեր մաքուր կեանքին օրինակով պիտի առաջնորդէք ժողովուրդին: Սրբութիւնը նոյն ինքն անմեղութիւնն է: Զգուշացէ՛ք մեղքերէ և մեղանչելէ: Մեր բոլոր ձիրքերն ու առաւելութիւնները կը կորսնցնեն իրենց ընդունակութիւնն ու արժէքը, եթէ չենք սպառազինուած սրբութեամբ: Պէտք է յիշէք որ Աստուած սուրբ է և կը բնակի սուրբերու մէջ, և կը յայտնուի սրբութեամբ: Դուք նոր և սուրբ կեանքի մը կոչուեցաք այսօր և օծուեցաք անոր համար. պէտք է մնաք այն սրբութեան և օծութեան մէջ, որպէսզի կարենաք օրինակ ըլլալ հաւատացեալներու:

Եւ սուրբ կ'ըլլաք, եթէ Պօղոսի պէս խաչուած մնաք աշխարհի և աշխարհը՝ ձեզի, երբ որ չէք քաղեր հասարակաց ցիխոտ ճամբաներէն, երբ որ կը վախճնէք մեղքը որ չմօտենայ ձեզի:

Դեռ շատ երիտասարդ էք: Զեր տարիքին և կարիքին բերմունքով չէք կրնար թափանցել կեանքի մթին և դժուարին կողմերուն: Ինչ որ չէք կրնար տեսնել և հասկընալ այժմ, բայց պիտի գայ ժամանակ մը որ շատ զիւրութեամբ պիտի տեսնէք զանոնք և պիտի ըմբռնէք: Մինչև այդ կէտը՝ փորձառութիւն ըստեած գործնական իմաստութեան ուղիին վրայ պիտի գտնէք զուք զձեզ: Դուք շատ երիտասարդ էք, ըսի, և սակայն օրինակ պիտի ըլլաք ձեզմէ աւելի երիտասարդներուն, ինչպէս նաեւ ձեզմէ վեր և աւելի վեր տարիքի աստիճաններուն վրայ հասածներուն: Օրինակ պիտի ըլլաք ձեր խօսքով, ձեր ընթացքով, ձեր սիրով, ձեր հաւատքով, և ձեր սրբութեամբ, որպէսզի մէկը չհամարձակի արհամարհել ձեր երիտասարդութիւնը:

Օրինակը, այսինքն գործնական կեանքը ամէնէն աւելի համոզիչ դասն է որ կըրնայ տրուիլ հաւատացեալներուն. ամէն ոք կը խոնարհի ատոր առջև, վերէն վար. այլ-

ևւս մեծ ու փոքր չկայ օրինակին առջև. յայտուն և փայլուն իրականութիւնը միայն կայ մէջտեղ:

Յիշեցէ՛ք մեր Մեծ-Վարդապետին անջնջելի օրինակը և ոսկի խօսքերը իր Յուրիկանի առթիւ: Ի՞նչ որ եղած եմ իրբեւքահայ եղած եմ: Դուրեան իրեն ընծայուած բոլոր փառքերը վերագրեց իր քահանայական սուրբ կոչումին: Ան ձեռքը անգամ մը դրած էր մաճին վրայ և յիսուն տարի շարունակ իր ձեռքը չվերցուց մաճին վրայէն, չդարձաւ իր ետեւը, այլ նայեցաւ միշտ զէպի յառաջ, ապագային նայեցաւ. վասնզի բոլոր անոնք որ անգամ մը մաճին վրայ դրած են իրենց ձեռքը, բայց կը դառնան և իրենց ետեւը կը նային, ահօսը կը ծօի և իրենք ալ կ'իյնան:

Պիտի գտնուին խոր և ողջ չխորհողներ սր պիտի մեղքնան ձեր երիտասարդի գեղին և շնորհին, պիտի փորձեն ձեզ որ ձեռք քաշէք մաճէն: Զգոյշ և իմաստուն պիտի ըլլաք. անոնք միայն մարդկայինը մտածողներ են, չեն տեսներ և չեն հասկնար աստուածայինը. վասնզի տեսիլի և հաւատքի մարդիկ միայն կը տեսնեն աստուածային բաները, և կ'ըսեն հրապուրչիւնը ունի «Երթ յետս իմ, սատանայ»:

Յիշեցէ՛ք այս փառաւոր օրը ձեր կեանքին մէջ, Էջմիածնի կաթողիկէի լուսափայլ տօնը և օրը ձեր ձեռնադրութեան և օծութեան. յիշեցէ՛ք միշտ կենդանի օրինակը ձեր և մեր Մեծ-Ուսուցչին, որու աշակերտելու բախտն ու պատիւը ունեցաք. յիշեցէ՛ք ձեր սիրելի բարերարը, որուն սիրտը տրոփեց իր Մայրենի Եկեղեցւոյն և այս փառաւոր հաստատութեան նուիրեալ հոգիներ պատրաստելու համար. յիշեցէ՛ք ձեր մանկութեան օրերը, Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայութան գրասեղանները և մտածեցէ՛ք ձեր նուիրման այս խորհրդաւոր օրերուն վրայ թէ՛ ո՛ր էիք և ի՞նչպիսի հանգրուանի մը հասաք, յիշեցէ՛ք այս բոլորը, և օրինակ եղէք հաւատացեալներուն օրանիւք, գնացիւք, սիրով, հաւատովք և սրբութեամբ, ի փառս Աստուծոյ և ի պարծանս Հայաստանեայց Սուրբ Եկեղեցւոյ. Ամէն:

ԸՆԹՐԻԲ

Կիրակի երկօրեան հանդիսաւոր էր ընթրիքի սեղանը: Տքթ. Ա. Պարոնիկեան իր տիկնոջ հետ սարքած էին զայն ի պատիւ Միարանութեան եւ նորընծաներուն մանաւանդ, կազդուրելու համար առաւելանէ ի վեր Ս. Յակոբի հոգեւոր խորհրդանքին մէջ խոնջած մարմինները: Պարագային պատշաճ ուղերձներ եղան սեղանի վրայ: Տեղապահ Տ. Մեսրոպ եպս. Միարանութեան անունով շնորհակալութիւն յայտնեց Պարոնիկեան զոյգին եւ օրհնեց զանոնք: Տքթ. Ա. Պարոնիկեան խանդավառութեամբ արտայայտեց իր տպաւորութիւնը օրուան հանդէսներուն եւ իր Մայրենի եկեղեցւոյն կենդանութեան մասին: Տ. Բարգէն եպս. պատասխանեց Տքթ. Պարոնիկեանի ուղերձին եւ շնորհաւորեց Միարանութիւնը եւ նորընծաները: Տ. Մկրտիչ եպս., հայրական յորդորներ ուղղեց նորընծաներուն, իսկ Տիար Դր. Մխալեան, իրրեւ ժողովրդական բաղձանք, յայտարարեց որ ուսեալ եկեղեցականութիւնը զործակցի ուսեալ աշխարհականութեան հետ եկեղեցւոյ զործերուն մէջ: Ժառանգաւորք երկեցին: Դուրեան Սրբազանի ողին եւ անուշ զէմքը տեսիլի մը ստուերներուն տակ կարծես կը լեցնէր պատրիարքական թափուր սեղանը: Ուրախ էին բոլոր սեղանակիցները. զոհութեան աղօթքով կնքուեցաւ ընթրիքի վաշիւքը, եւ նորընծաներ առաջնորդուեցան իրենց մենարանը:

ՔԱՌԱՍՈՒՆՔԸ

Մեր նորընծաները առին ձեռնադրութեան շնորհն ու օծումը, սքողեցին իրենց խոնարհ գլուխները վեղարով եւ գացին Սրբոց Յակոբեանց տաճարին հիւսիսակողմը, Ս. Թորոսի մենիկ եւ կոկիկ եկեղեցին, հոն անցընելու համար իրենց առանձնութեան քառասորեայ չըջանը՝ աղօթքի, ժամերգութեան, խորհրդածութեան, հոգեւոր մարդանքի, ծիսական վարժանքի եւ ընթերցումի հոգեմորոգ զբաղմունքներու մէջ:

Ս. Թորոս ո՛չ միայն եկեղեցի մըն է, այլ նաեւ Մատենադարանը հայերէն Զեռագրաց, որոնք շարուած փակուած են բարեյիշատակ Յարութիւն Պատրիարքի շինել տուած սրբուն ապակեղարաններու

մէջ, հեռի ջուրի եւ կրակի վտանգներէն:

Նորընծայք այդ հոգեւոր եւ հայ մատենադրութեան հայրերուն հոգիի եւ մտքի արուեստովու վաստակով արժէքաւոր սրբաւայրին մէջ շնչեցին Քառասորի խորհրդաւոր անուշութիւնները. հոն կերան իրենց պահոց հացը, հոն քնացան՝ քով քովի շարուած մահճակալներու վրայ, հոգեւոր զինուորութեան մէջ զինակից եւ խաչակից եղբայրներու պէս, Յունիս 22—Յուլիս 21:

Քառասունքը Հին եւ Նոր Կտակարանի հոգեւոր փորձագութիւններու մէկ պատկերն է որ Հայ եկեղեցւոյ մէջ՝ կը վերակենդանանայ նորընծաներուն պարտադրուած փորձերով:

Զեռնադրութենէն անմիջապէս ետքը առանձնանալ ատեն մը, խորհիլ թէ ձեռնադրեալը ի՞նչ էր յառաջ եւ ի՞նչ եղաւ հիմայ, եղած է լաւագոյն եւ ապահովագոյն կերպը ինքնամփոփումի եւ ինքնաքննութեան: Սինայի մենաւորութեան մէջ Մովսէս վայելեց աստուածային փառքին յայտնութիւնը եւ կերանց օրէնքը, որ ուղղութիւն պիտի տար ընտրեալ ժողովուրդի կրօնական կեանքին եւ բարոյական կենցաղին: Յիսուս Քրիստոս, իր մկրտութենէն ետքը անապատի քառասորեայ մենութեան մէջ պատրաստուած, պարտութեան մատնեց Փորձիչը: Ասոնք յայտնութիւններն են կրօնական կեանքի մեծ փորձագութիւններուն: Աստուծոյ զործին նուիրուողներ պէտք ունին այդ փորձերուն, որովհետեւ անոնք ալ կոչուած են տալու իրենց պատգամները ժողովուրդին, եւ պատրաստ պէտք է ըլլան յաղթելու փորձանքներու: Պէտք է մտածել, պէտք է անդրադառնալ, պէտք է վարժուիլ եւ պատրաստուիլ իրենց պաշտօնին գործնական կերպերուն եւ տեսական սկզբունքներուն կրթութեան վրայ:

Մեր նորընծաներ՝ կրցան օգտակարապէս գործածել իրենց համար որոշուած առանձնացումի այդ պատահութիւնը, զբրկուելով սովորական կենցաղի պայմաններէն եւ վայելելով ներանձնական կեանքի մը ներշնչումները:

Միայն Հայր Սիոն ստիպուեցաւ ֆրոսանսական հիւանդանոցին մէջ անցընել իր քառասունին կարեւոր մասը, վերաբու-

ժական լուրջ գործողութեան մը ենթարկուելով իր գէմքէն, և հազիւ ապաքինած եկաւ միանալ իր օծակիցներուն Ս. Թորոսի մէջ:

ԱՆԻՄԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ

Տեղապահ և Ձեռնադրիչ Սրբազանը կարգադրած էր որ նորընծաներ իրենց առաջին պատարագը մատուցանեն Յուլիս 14, ԲՇ — Յուլիս 21, ԲՇ, ինը օրերու ընթացքին, իսկ Յուլիս 22, ԳՇ. Հայր Կիրեղ պատարագէ, նորընծաներուն ձեռնադրութեան խարտաւիղակը և վարժիչը քառասունքի միջոցին:

Ս. Յակոբ տասը օր անընդհատ հոգեւոր հարսնիքի մը խրախճանքով խոնդաւառուեցաւ: Տաճարին տրուած էր հանդիսաւորութեան շուք մը: Ս. Յակոբի աւանդատան մեծարժէք զգեստները, իրարմէ տարբեր նիւթով, չափով և արուեստով, ամէնուն ծաւքին մէջ ալ յիշատակ մը աշխարհի վրայ սփռուած հայութենէն, ի հանդէս կուգային պատմութեան համար աստուածային խորհուրդի նորընծայ պաշտօնեաները, որոնք իրենց առաջին յոյգքին և վարանմունքի թրթռումներուն մէջ կ'ելլէին լուսոյ սեղանը:

Երգեցմունքը ծանր, հանդիսաւոր, ժողովուրդը հրճուալից աղօթաւոր, իրենք պատարագիչները, վերացեալ, հոգեւոր,

մատուցին սուրբ և անմահ պատարագը, քրիստոնէութեան մեծ խորհուրդը, աղօթիցին ամէնուն համար, իրենց անձին համար, յիշատակիցին հանգուցեալները և ողջերը, մխիթարուեցան և մխիթարեցին մեզ:

Աղօթիցիք մենք, մենք ձեռնապսակ գլխով երկցադոյններս, որ աստուածային և երկնաւոր Շնորհը, որ արժանապէս կոչեց այս մատաղ հոգիները Հայաստանայց Եկեղեցւոյ սպասաւորութեան, կորովի և անսոյթաք պահէ զիրենք իրենց կոչման մէջ:

Վերջին պատարագիչն էր Հայր Սիոն, Յուլիս 22, ԳՇ.: Պատարագէն ետքը հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Ամեն. Դուրեան Եզրիչ Ս. պատրիարքի յիշատակին, հանգիստադրութեամբ Տ. Գեր. Մկրտիչ կաթ. Աղաւնուտի. նորընծաներուն երախտադիտական պարտքն էր այս, զոր եկեղեցւոյ արձակումէն յետոյ, իրենք առանձինն ալ հատուցին՝ երթալով Ս. Փրկիչ, Դուրեան Սրբազանի գերեզմանին վրայ, ուր ներկայ գտնուեցաւ նաեւ բազմութիւն մը ժողովուրդէն:

Կիւլպէնիեան ընծայարանի աշակերտներուն ուսանողական դասընթացքին պըսակն եղաւ իրենց Ձեռնադրութիւնը, և այս անդրանիկ պատարագներով ալ պաշտօնապէս հուշակուեցաւ իրենց գործնական մուտքը Ս. Եկեղեցւոյ ծառայութեան մէջ:

Ի ՎԱՐԴԱՊԵՏԷՆ ԱՌ ՆՈՐԸՆԵԱՅ ԱՇԱԿԵՐՏՍՈ ԻՒՐ

ՈՒՂԵՐՁ ԵՒ ԲԱՆ ԽՐԱՏՈՒ Ի ՔԱՌԵԱԿՍ

ՅԵՂԻՅԷ ՆՈՅՍ Ի ՔԱՌԱՍՆՕՐԵՍԱՅ ԱՌԱՆՁՆՈՒԹԵՂԷ ԻՒՐԵԱՆՑ

Ի Մայրաթան Ս. Յակոբյայ, Երուսաղիմ. — 1930, Յուլիս 14-22.

ԱՌ ՏԷՐ ԳԱՌԻԹ

Ձի ձիքենի վայելուչ, դո՛ւ ԿԱՐԱՊԵՏ, ի գաւիթ
Տընկեցար ի սրբանէ՛ս Տանն Աստուծոյ ի լուսեղէն,
Եւ քանաւայ եղեր այժմ օծմամբ Հոգւոյն յԱնեղէն.
Երգեա մի՛՛ս երգ հոգեւոր լի՛ շընորհօք իբրեւ զԴԱՌԻԹ:

ԱՌ ՏԷՐ ՍԻՈՆ

Ձանուն ՍԱՐԳՍԻ մեծին, արագահաս Սրբոյն Հայոց
Կրեցեր դու նախ, եւ եղեր սո՛ւր յուսմունքս քո ի դրպոց.
Բարձրադիտակ որպէս նոնի արդ ուռնացար քանի՞օ՛ն.
Լե՛ր ախոյեան եկեղեցւոյդ, Բանին քառոյ՝ ՏԷՐ ՍԻՈՆ:

ԱՌ ՏԷՐ ՀԱՅԿԱԶՈՒՆ

Դու ՀԱՅԿ, զաւա՛կ Վանեան, իբրեւ բողբոջ ազագուն
Ի հայրենի խլեցար զըրկաց, ընդ հուր անցեր եւ ընդ ջուր.
Հոգւով զըւարթ, մարմնով աշխոյժ, անուանեցար ՏԷՐ ՀԱՅԿԱԶՈՒՆ.
Լե՛ր անվախ, զոհ եւ նուէր Տանն Յակովբեանց զանձն քո տուր:

ԱՌ ՏԷՐ ՊԱՐԳԵՒ

Եւ դու Ե՛ՂՆԻԿ, այսր ի յափանցն ի Մարմարայ սլացեալ եկիր,
Առնուլ ըզլուծը՛ն փոքրոյի Տեառն մերոյ եւ Փրկչին.
Մի՛ լիջիր ի նոցանէ՛ որք ի քրքնամեացըն երկընչին.
Եղեր ՊԱՐԳԵՒ, պահեա՛ զշնորհդ, եւ յԱստուծոյ եւեթ երկի՛ր:

ԱՌ ՏԷՐ ԳԵՂԱՄ

Ի լեռանցն Զեքունցոց ի յանապասս, դու ԳՐԻԳՈՐ,
 Վարեցար. Տեսեր մահունս ի հասակիդ անխընամ.
 Եւ որդեգիր լեալ Գլխադին՝ ուսար ըզգիր եւ զերգ գոռ,
 Լէ՛ր օրհնաբան, զի կոչեցար զեղովն Հոգւոյն ՏԷՐ ԳԵՂԱՄ:

ԱՌ ՏԷՐ ԶԳՕՆ

Ի սանէ Տէր-Յակոբեանցն ընծայեցար, դու ՆԵ՛ՐՍԷՍ,
 Որդեգիր յՈւխտն Յակովբեանց, լեալ առակե՛ս Գրոց Սրբոց.
 Օ՛ն, ՏԷՐ ԶԳՕՆ, լե՛ր իմաստուն եւ հովիւ քաջ իբրեւ զՄովսէս.
 Սիրեա՛ ըզգիր, ըզբան Փրկչին քարոզեսչիր ի լեզու բոց:

ԱՌ ՏԷՐ ՍԵՐՈՎՔԷ

Որպէս ԱՐՓԻ յարեւելից աղօսաջան ծագեալ լոյս,
 Ընծայեցար ի Սուրբ Սիովն, եւ Դուրեանի առ ոսս եւ հարց
 Առե՛ր նոր լոյս. արդ՝ մի՛ անփոյթ առնիցես դու ըզ շնորհաց,
 ՏԷ՛Ր ՍԵՐՈՎՔԷ, եւ ի դերեւ Բարեբարացն հանցես ըզ լոյս:

ԱՌ ՏԷՐ ՇԱՒԱՐՇ

ՄԱՏԹԷՆՈՍ, կրսեր յեղբարս, լի՛ եռանդեամբ ՏԷՐ ՇԱՒԱՐՇ,
 Յո՛ււ լեզ լիցի օրն առաջին արժաստաց քոց նըւիրման.
 Կամաւ եկիր ի սուրբ պաշօն, ո՛չ ոք էած ըզ լեզ ի քառ,
 Եկեղեցւոյդ քո Մայրենի հաւասարիմ լե՛ր պաշտպան:

ԱՌ ՏԷՐ ԶԵՆՈՐ

Իսկ դու, իննե՛րորդ, յուրիցն վերայ յաւելուած,
 ԳՐԻԳՈՐ կոչմամբն հին, մաղքեմ լինել լեզ յարակայ
 Արքուն, սուրբ, փութաջան, պաշօնաւեր, ո՛չ բընէած,
 Սիրող պաշմութեանց որպէս ԶԵՆՈՐ՝ Հայր Գըլակայ:

Աղօրիսք եւ Օրհնութեամբ

ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ԿԵՆՍԱԿՐԱԿԱՆ ԳԻՐԵՐ

Յարգելու համար պատմութեան իրաւունքը կ'արձանագրենք մեր նորընծաներու կեանքին գլխաւոր կէտերը, դժուած ուղղակի իրենց գրչէն, գիծեր միայն՝ յըստակ, կարկառուն, որոնց մէջ կը տեսնենք թէ հայկական տառապանքի արհաւիրքներէն ճողոպրած անտիական զիմազիծներ են ասոնք, որ Ս. Յակոբի հովանիին ներքեւ կազմուեցան ու պատրաստուեցան սրբազան ծառայութեան համար:

Տ. ԴԱԻԹ ԱԲՂ. ԶԱԼԳԵԱՆ

Ծնած էմ 1906-ին Այնթապ: Հօրս անունը Ալեքսան՝ իսկ մօրս Հայկանուշ, որ դուստրն է Տէր Կարապետ քհնյ. Կիւլիւզ-Էանի: 1909-ին Ատանայի կոտորածին զոհ դացած է հայրս, Հասանպէյլի մօտերը, սրտաճմլիկ պարագաներու ներքեւ: Այսպէս երեք տարեկանին կորսնցնելով հայրս, որը կը մնանք երկու եղբայրներու և մէկ հասակ քրոջ հետ՝ մօրս խնամքին տակ:

1912-ին, վեցամեայ, մանկապարտէզ սկսայ յաճախել, կը մտնեմ Ազենական զպրոցի նախապատրաստական բաժնին մէջ:

Հաղիւ թէ վեց ամիս անցած, կը պայթի աշխարհաւէր մեծ պատերազմը. 1914-ին ուրիշ շատերուն հետ մենք ալ կը քշուինք մեր տունէն: Ստաթիկ անձրեւոտ և փոթորկալի օր մըն էր, երբ սկսանք աննկարագրելի չարչարանքներով չորս օրուան ճամբորդութիւնը՝ մինչև որ հասանք Եփրատի եզերքը: Հոս մնացինք 15 օր աւագակներու մշտական յարձակումներուն ենթակայ, յետոյ պարագաներու բերմամբ անցանք Պերէճիք քաղաքը, ապտելով Տէր-Զօրի արհաւիրքներէն: Զօրս երկար և տաժանելի տարիներ անցուցինք Պերէճիքի մէջ, և փախտական Հայէպ եկանք, ուրտեղ մօրս մահուան գոյժը առինք: Այլ-ևս բոլորովին որը՝ Ահարոնեան որբանոցը ընդունուեցայ. տարիի մը չափ հոն մնալէ վերջ Հայֆա եկայ եղբօրս քով: Տարի մըն ալ Հայֆա անցընելէ վերջ, ինքզինքս դտայ 1919 տարւոյն վերջերը:

Ժառանգաւորաց Վարժարանի վերաբացման տօթիւ 1920 տարւոյ Սեպ. 20-ին,

եկայ երուսաղէմ և զպրոց ընդունուեցայ:

Նախապատրաստական դաստրանէն սկսեալ վեց տարի ուսանելէ վերջ սարկաւազ ձեռնադրուեցայ և կոչուեցանք Կիւլ-պիկիկան Ընծայարան մեր հանգուցեալ Բարարին մականունով: Զօրս տարի ուսանելով՝ Տիրոջ օգնութեամբ արժանացանք քահանայական սուրբ աստիճանին, Նախախնամական կարգադրութեամբ մը՝ մեծ սպանդէն ճողոպրելէ ետք: Ուրիշ կերպով չեմ կրնար բացատրել թէ ինչո՞ւ ես ալ զոհ չեմ գացած Գողգոթայի ճամբուն վրայ:

Տ. ՍԻՈՆ ԱԲՂ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ծնած է 1906-ին Վանայ Կերաշէն գիւղը: Աւագանի անունն է Սարգիս: Զաւակըն է Իսաչան և Վարդուհի ամուլին, որոնք բարեկեցիկ և մաքուր կեանք մը կ'ապրէին իրենց պղտիկ ծովեկերեայ գիւղը: Ծնողքը ունէին երէց դաւակ մըն ալ Յարութիւն անունով, որ 1918-ի գաղթին Վասպուրականի մէջ մնացած է և անյայտ է, ինչպէս նաև 3 աղջիկներ՝ մեռած պատերազմի ընթացքին:

1915-ի կուռին Վասպուրականի ժողովուրդին հետ կովկաս անցած է: Երկու քուկէս տարի վերջ Վան վերադարձած է, և 1918-ին Վասպուրականի գաղթականներուն հետ Ուրմիոյ և Պարսկաստանի վրայէն՝ կոռլ ընթացքին՝ անցած է Միջագետք՝ Պագուպա: Հոն որբանոց մտած է, ծնողքը մեռած ըլլալով: Որբանոցով փոխադրուած է Նահր-էլ-Օմար, Պասրայի քով, և անկէ ալ 1921-ին որբանոցի հետ դարձեալ Բարեկործականի ջանքերով հաստատուած է Երուսաղէմ, Արարատեան որբանոց-վարժարան, ուր առած է նախակրթութիւնը: Իսկ 1923 Սեպտ. 26-ին 10 ընկերներով Ժառանգաւորաց Վարժարան մտած է և դասընթացքը աւարտելով՝ Սարկաւազ ձեռնադրուած է եօթը Կիւլպէկիկան դասընկերներով՝ Ս. Պատրիարքէն, 1926, Հոկտ. 3-ին, Կիրակի:

Տ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԲՂ. ԱՐԱՆԱՄԵԱՆ

Ծնած էմ Վան (քաղաքի մէջ) 1908-ին: Հօրս անուն Յովսէփ և մօրս՝ Գայիանէ. հոն ապրած էմ մինչև 1910: 1910—1914 հայրենի գիւղս Բերդակ գացած էմ, և նախնա-

կան կրթութիւնն առած՝ մեր գիւղի վարժա-
րանին մէջ: 1914—1915-ի Վանի հերոսա-
մարտին Վան կը գտնուէինք, և 1916-ին
գաղթեցինք Կովկաս և բնակեցանք հայա-
բնակ գիւղեր և քաղաքներ Ղարահամլա-
լու, Ղամուրլու և այլն: 1918-ին վերա-
դարձանք Վան և քանի տմիս վերջ Մարտ
21-ին տեղի ունեցաւ Վասպուրականի
«Նահանջ Բիւրոց»-ը ղեկի Պարսկաստան
և անկէ Պաղտատ. հոս Հայ-Տարագրելոց
Որբանոց մտայ 1919-ին: 1920 Օգոստոս
31-ին Պաղտատէն Պասրա, և 1922 Յուն-
վար 25-ին ղեկի երուսաղէմ. 1922 Փետր.
11 երուսաղէմ Հ. Բ. Ը. Միութեան Արա-
բատեան Որբանոցը՝ մինչև 1923 Սեպտ. 26:
Ժառանգաւորաց Վարժարանը մտանք 1923
Սեպտ. 26-ին 11 ընկերներով և չըջանա-
ւարտ նոյն դպրոցէն 1926-ին: 1925 Փետր.
4, մեծ պահոց Ա. չորեքշաբթին Ուրար
առի Հոգեւոյս Դուրեան Սրբազանէն: 1926
Հոկտեմբեր 3-ին սարկաւազութեան Ս.
Աստիճան՝ նոյն լուսահոգի Սրբազանէն:
Դրեթէ չորս տարի սարկաւազ մնացինք,
1926 Հոկ.—1930 Յունիս, և յետոյ քահա-
նայ ձեռնադրուեցանք 1930 Յունիս 22
Կաթողիկէ եկեղեցւոյ տօնին: Իրեւա ա-
ւարտաճառ ուսումնասիրելի Յովհաննէս
Օձնեցի Հայրապետի (717 — 728) «Ճառ
ընդգէմ երեսութականաց»:

Տ. ՊԱՐԳԵԻ ԱԲՂ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

Ծնած եմ Փոքր Ասիոյ Պալքէսի քա-
ղաքին մէջ 1905 Մայիս 8-ին: Հայրս
Վրթանէս՝ կառավարական պաշտօնեայ,
անտառաց տնօրէնութեան աւագ քարտու-
ղար էր և անգամ՝ տեղւոյն քաղաքական
ժողովին: Մայրս՝ Կիւլհանըմ (Վարդուհի):
Եղբայրներուս մէջ երրորդն եմ ծննդեան
կարգով, ունեցած եմ քոյր մըն ալ:

Նախնական կրթութիւնս առած եմ
տեղւոյն մանկապարտէզին և աղգային
նախակրթարանին մէջ: Ապա՝ հօրեղբորս
փափաքովը Պոլիս բերուած եմ և հոն Լան-
կայի Մինասեան Վարժարանին մէջ երկու
տարի (1918—1920) ուսումնաւորուեցաւ
եմ: Ապա՝ Կեղբոնական Վարժարանի երկ-
րորդ դասարանը մտած եմ և լրացուցած

եմ չորրորդ դասարանը (1920—1923):

Վերջին անգամ 1922-ին, երբ Յոյները
Փոքր-Ասիոյ արեւմտեան նահանգներէն
սկսան խուճապով նահանջել, թուրքերու
կողմէ անլուր տանջանքներով նահատակ-
ուեցան ի մէջ այլոց նաև Վրթանէսեան ըն-
տանիքին բոլոր անդամները: Ես հրաշ-
քով ազատեցայ: Քաղաքին մէջ պատահած
ղէպքերը մեծապէս աղղեցին և ցնցեցին
ամբողջ էութիւնս: Աղղիս ծառայէին զատ
ուրիշ վրէժի միջոց մը չգտայ: Արմաշի
Խնամակալութեան Պալատի մէջ բացած
Ընծայարանին աշակերտներէն եղայ (1924):
1925 Մարտ 31-ին երուսաղէմ ժամանե-
ցի, ուր՝ բարեբախտութիւն բունեցայ ող-
բացեալ Բարեբար Պատրիկ էֆէնտիին ծախ-
քով բացուած Կիւլպէնկեան Ընծայարանին
աշակերտելու:

1926 Հոկտ. 3, սարկաւազ ձեռնադր-
ուեցայ յաւէտ ողբացեալ և մեր ուսուցիչ
հոգեւոյս Դուրեան Սրբազանէն:

Վարդապետական աւարտաճառ տըր-
ւեցաւ ինծի Եղիշէի Բ. Յեղանակը: Դուր-
եան Սրբազանին աշակերտած եղայ 1926
— 1930:

Տ. ԳԵՂԱՍ ԱԲՂ. ՔԱՍԻՄԵԱՆ

Ծնած եմ Զէյթուն 1908-ին, հօրս ա-
նունն է Փանոս. մօրս Զարման: Վեց դա-
ւակներ ունէր հայրս. երկուքը աղջիկ,
չորսը տղայ: Հօրս վեց դաւակներուն վեր-
ջընթերն էի: Քաղաքիս մէջ մանկական
չըջանը բարացուցող մանկապարտէզի ըն-
թացք չեմ ունեցած: Եւ արդէն հաղիւ 6
տարեկան, եկա համալսարհային 1915-ի
մեծ պատերազմը: Թըքահայաստանի մէջ
առաջին անգամ տարագրութեան հանուե-
ցաւ Զէյթուն: Դէպի տարագրութիւն մեր
ճամբուն վրայ գլխաւոր կայաններ ունե-
ցանք նախ Մարաշ, Այնթապ, Բասու-
լայն, Եդեսիա, և ապա Տէր-Զօր — մարդ-
կային սպանդանոցը —:

Տէր-Զօրէն անցանք անապատներու
խորերը. հօրս և մօրս ողբալի կորուստէն
ետքը, հրաշալի կերպով ինքզինքս կրցայ
յանձնել անապատի վաչկատուն-Պէտէվի-

ներու-ցեղերուն: Ասոնց մէջ չորս տարուան ողբերգական, կսկծալի, հովիւի երազային կեանք մը անցնելէ ետքը, չեմ գիտեր թէ ի՞նչ հրաշքով, Մուսուլի մէջ նոր բացուած որբանոցին մէջ գտայ ինքզինքս 1919-ին: 1920-ին Պաքուպա, Վանեցիներու կազմած որբանոցին խառնուեցանք: 1921-ին փոխադրուեցանք Նահրէլ-Օմար: 1922-ի Յունվարին, Պաղատարի Տարագրելոց մարմինը որբանոցը երուսաղէմ փոխադրեց և յանձնեց Հ. Բ. Բ. Միութեան: 1923 Սեպտեմբեր 26-ին, Ժոնգ. դպրոց մտանք խումբ մը երիտասարդներու հետ, կրօնական սուրբ սքեմը կրկնուփափաքով: 1923-1926, դպրոցական կանոնաւոր չըջան մը բոլորելէ ետքը, սարկաւագ ձեռնադրուեցանք 8 հոգիով և կոչուեցանք Կիւլպէնկեան Ընծայարանի սաներ: 1926 - 1930, Ընծայարանի դասընթացքը աւարտելէ վերջ կոչուեցանք քահանայութեան սուրբ աստիճանին, Գրիստոսի եկեղեցիին ընդհանրապէս, Հայց. Առաքելական եկեղեցիին մասնաւորապէս ծառայութեան փոքրիկ բաժին մը բերելու նպատակով:

Տ. ԶԳՕՆ ԱԲՂ. ՏԵՐ-ՅԱՆՈՒԿԵԱՆ

Աւագանի անուամբ Ներսէս: Ծննդավայրը՝ Բէօջանի (Վան): Հօրը անուն՝ Պետրոս. մօրը՝ Սրբուհի: Հայրը Տէր-Պետրոս, մեծ հայրը Տէր-Յակոբ, և հօրեղբայրը Տէր-Յովհաննէս (այժմ ի Միջագետս), յաջորդաբար կոչուած են քահանայութեան ու իրր այդ մէկ դարէ աւելի ծառայած են Հայ. եկեղեցոյ: Զգօն արեղայ ուրախ է որ իր նուիրումով պիտի փառաւորէ իր հայրերուն ասպարէզը ու միեւնոյն ատեն տխուր՝ վաճառի կը կարծէ թէ վերջինը պիտի ըլլայ: Մանկութենէն հետեւած է իր գիւղի նախակրթարանին: 1915-ի Վանի Ապրիլեան պատերազմի նախօրեակին կ'ապաստանի Լիմ անապատ: Վասպուրականի մեծ գաղթերուն առթիւ երկիցս (1915—1916) կ'երթայ Ռուսահայաստան, Ս. Էջմիածին, Կամարու, և այլն: 1918 Մարտ 21-ին իր հայրենակիցներէն բխուորտներու հետ կը նահանջէ Սալմաստ, ապա կ'անցնի Ուրմի, Համատան, Սուլթանապատ և Պաղուպա, ուր կ'ընդունուի

Պաղատարի Հայ Տարագրելոց Մարմինին հովանաւորած որբանոցը և կ'աշակերտի բարձրագոյն դասարանին: 1920-ին որբանոցով կը փոխադրուի Նահրէլ-Օմար. 1922-ին կու գայ երուսաղէմ: Հոս Հ. Բ. Բ. Միութեան «Արարատեան Որբանոց»ին մէջ քանի մը ամիս մնալէ յետոյ Հոկտ. 3-ին կ'ընդունուի Ժոնգ. Վրթ. ք: 1926-ին կը լրացնէ մեր վարժարանին ընթացքը և իրր սան Կիւլպէնկեան Ընծայարանի Հոկտ. 3-ին կը ձեռնադրուի Աւագ Արեղ. լուսահոգի Դուրեան Ս. Պատրիարքէն:

Զգօն արեղայի աւարտական ուսումնասիրութիւնն եղաւ Ս. Ներսէս Ծնորհալիի Ողբ Եղեւիոյ քերթուածը:

Տ. ՍԵՐՈՎԷԷ ԱԲՂ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ծննդեան թուական 1908:

Ծննդավայր՝ Վանէն կէս ժամ հեռու Ծվստան գիւղ:

Հայրս Յովհաննէս երկրագործ. մայրս Տիւլպար: Ընդհանուր պատերազմէն առաջ հայրս զինուորագրուեցաւ. իսկ ընդհանուր տեղահանութեան ատեն եղբօրս մօրս և երկու քոյրերուս հետ միասին տարագրուեցանք Ռուսահայաստան, երկու տարի ետքը նորէն Վան վերադարձանք. այս միջոցին հայրս որ Ռուսերէն գերի բռնուած և Սիպերիա զրկուած էր կը վերադառնայ ու կը միանայ մեզի: 1918 Ռուս յիզափոխութեան հետեւանքով Ռուսեր կը ձգեն Վան ու մենք ստիպուած անոնց կը հետեւինք. սակայն չուտով Ռուսաստանի ճամբան կը զոցուի և մենք Պարսկաստանի ուղին կը բռնենք: Այս միջոցին հայրս կը մեռնի. եղբայրս արդէն զինուորագրուած էր, քոյրերս մեռած՝ մայրս ու ես միմեկ մնացինք: Պարսկաստանէն Անգղիային երու հովանաւորութեամբ Միջագետք հասանք. հոս մայրս ալ կորսնցնելու զժրախտութիւնը կ'ունենամ ու Պաղատարի Հայ Տարագրելոց մարմին լրացած որբանոցը կը մտնեմ: Այս և ասոր շարունակութիւնը կազմող Արարատեան որբանոցին մէջ կը ստանամ նախնական կրթութիւնս: 1924-ին Արարատեան որբանոցէն երուսաղէմի Ժառանգաւորացը կը մտնեմ: 1926 Հոկտեմբեր 3-ին Սարկաւագ կը ձեռնադրուինք 8 ընկերներով Դուրեան Սրբազանէն, իսկ

1930 Յունիս 22-ին Մեսրոպ Սրբազանէն կ'ընդունինք քահանայական կարգը 8 ընկերներով:

Տ. ՇԱԽԱՐՇ ԱԲՂ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Ծնած եմ 1906-ին, Աղիգլիէ. մկրտուած եմ անած Հաճէն՝ ուր անցուցեր եմ մանկութիւնս մինչև 1915: Ընտանեօք (հայրս՝ Գալուստ, մայրս՝ Երանուհի) տարագրուեցանք զէպի Տէր-Զօր, անկէ Մուսուլ եւ հաստատուեցանք Քէրքուք՝ մինչև անգլիական տիրապետութիւնը, որ Պաղտատ փոխադրեց Քէրքուքի կարուանին բեկորներս: Պաղտատի մէջ մտայ Աղգ. Մանկապարտէզ, յետոյ մօտ հինգ հարիւր որբերու հետ զրկուեցանք Բօր-Սաիտ, ուր Սիսուան մանկապարտէզին աշակերտեցայ:

Կրկնիկան Յունաստան կառավարութեան հովանաւորութեան անցնելէ ետք Ատանա դացինք. նախախնամութիւնը այնպէս տնօրինած էր որ հայրիկս բազմահազար կրկնիկներու իրենց ծննդավայրը վերադառնալու հոսանքէն չտարուի եւ Հաճէն չերթանք առ ի զղուշութիւն:

Աշակերտած եմ Ատանայի Արգարեան (1919-1920) վարժարանին եւ բողոքականներու Գոլէճին: Հիւս. Ամերիկա երթալու համար ճամբայ ելանք ու քէմալական յառաջխաղաչութիւն պատճառաւ ծնողքէս բաժնուելով Կիպրոսի Լիմասօլ քաղաքը մնացի տարի մը որբանոցի մէջ: Խաղաղութեան վերահաստատումով վերադարձայ Ատանա եւ այս անգամ ընտանեօք ճամբայ ելանք. դարձեալ ձախողելով իջանք Զահէ՝ ուր տարիի մը չափ մնալէ վերջ հաստատուեցանք Դամասկոս որու Աղգ. վարժարանին շրջանը աւարտեցի (1925-ին) վկայականով: Տեղւոյն պատրիարքական երբեմնի փոխանորդ Տ. Վահան Վրդ. Գէորգեանի կողմէ երեսօղէմի ժառանգաւորաց վարժարանը զրկուեցայ ուրիշ չորս ընկերներու հետ: 1926 Հոկտ. 3-ին սարկաւազ ձեռնադրուեցայ յաւէտ ողբացեալ Դուրեան Պատրիարք Սրբազանէն, Կիւլպէնկեան Ընծայարանի եօթն ընկերներովս եւ մինչև 1930-ի տարեշրջանը աշակերտած եմ նորին Սրբազնութեան եւ Տ. Բարդէն Եպս. Կիւլէսէրեանի եւ այլոց:

1930 Յունիս 22. Եկեղեցւոյ Տօնին ա-

րեղայական աստիճանը ընդունեցայ Տ. Մեսրոպ Եպս. Նշանեանէ, ու թ ընկերներով:

Տ. ԶԵՆՈՒ ԱԲՂ. ՎԱՀԱՆԵԱՆ

Ծնած եմ Խարբերդի Զարսանճազ պատուի Բաշադակ գիւղը. 1906 Փետր. 17-ին: Աւագանի անունով Գրիգոր:

Զաւակն եմ Դանիէլ եւ Խաթուն Վահանեանց: Փոքր հասակէ զրկուած ըլլալով ծնողքէս, Սարգիս Անձ հօրս խնամքը վայելած եմ:

Մանկարանի ուսումս ստացած եմ մեր գիւղի աղջային վարժարանը:

Կրթարանի եռամեայ շրջանը աւարտած եմ երկու տարիէն, շնորհիւ կարգ փախցնելու արժանանալուս, եւ նոյն դասընթացքի վկայականն ստացած եմ Խարբերդի Եփրատ դղիճէն:

Վարժարանի քառամեայ տարեշրջանին միայն երեք տարին լրացուցած եմ երեսօղէմի ժառ. Վարժարանին մէջ:

Ուրարակութիւն ընդունած եմ հանդուցեալ ազգապարձանք Դուրեան Սրբազան Պատրիարքէն:

Սարկաւազ ձեռնադրուած եմ հոգեւոյս Տ. Եղիշէ Սրբազան Եպս. Զրիւնկիրեանէն, 1928, Հոկտ. 12-ին:

Կուսակից Քահանայ ձեռնադրուեցայ Գեր. Տ. Մեսրոպ Սրբազանէն, 1930, Յունիս 22-ին:

Կեանքիս նպատակն է օգտակարութիւն՝ Աղգիս եւ Վանքիս (*):

(*) Հայր Զենոր, ժառանգաւորաց վարժարանի մէջ աշակերտակից էր մեր ութ նորընծաներուն: Կիսակատար թողուց իր ուսումը եւ պահ մը դուրսը զեղարուեստի ճեսեւելէ ետքը, միաբան եղաւ Ս. Զակարի, եւ զոհացուցիւ կերպով ծառայեց Ս. Զաքարիան Տաճարին մէջ:

Տեղապահ Սրբազան իր ձեռնադրութեամբ կարգակից ըրաւ Հայր Զենորը իր նախկին դասընկերներուն:

ՎԱՍԵՄ. ՊՈՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ

Նշանաւոր հայուն մահաւան զոյժը
Հ. Բ. Ը. Միութեան եկրպոստի Շրջ. Յանձ-
նաժողովի կողմէն հազարդուեցաւ թէ՛ Պատ-
րիարքարանիս և թէ՛ Հ. Բ. Ը. Միութեան
Երուսաղէմի Մասնաժողովին:

Պատրիարքական Տեղապահ Գեր. Մե-
րոպ Ս. Եպս. Նշանեան, գութկան հեռա-
գիրը առնելէ ետքը, կարգադրեց որ հե-
տեւել օրն իսկ, Յունիս 28, ՇԲ. Մեծն
Ներսէսի Տօնին, հանդիսաւոր պատարագ
մատուցուի Սրբոց Յակոբեանց Տաճարին
մէջ, Գլխադիրն սեղանին վրայ և կատար-
ուի հոգեհանգստեան պաշտօնը:

Նախապէս ծանուցուած ըլլալով այս
կարգադրութիւնը երուսաղէմի Հայոց, բա-
ւական ժողովուրդ ներկայ էր եկեղեցին.
միւս կողմէն նախակրթարանի և Մանկա-
պարտէզի երկուսն ուսանողներ իրենց հա-
մագլխատներով շարքեր բռնած էին սրբա-
վայրին մէջ: Պատարագիչն էր Բարգէն
Սրբազան, որ ճաշու գիրքին ընթերցումէն
ետքը խօսեցաւ իր քարոզը, Յիւսէֆ Դե-
աւազնադրեց ընթերցող (Եբր. ՓՊ. 7) և
ըսաւ թէ այսօր հայ ազգին երկու մեծ ա-
ռաջնորդները կը յիշենք, մին՝ պատմա-
կան մեծ դէմք մը, Հայ. Եկեղեցւոյ երեկի
Հայրապետներուն մէջ հազուապէս հոգե-
ւորական մը, Ս. Լուսաւորչի սերունդէն,
Սուրբն Ներսէս, իսկ միւսը, մեզի ժամա-
նակակից և զործակից անձնաւորութիւն
մը, աշխարհական Առաջնորդ մը Վսեմ.
Պօղոս փաշա Նուպար:

Մեծն Ներսէս զինուորութեանէ կոչուե-
ցաւ կաթողիկոսութեան, Արշակ թագաւո-
րին ստիպումով, և հեղինակը եղաւ մար-
դասիրական այնպիսի ձեռնարկներու և
հաստատութեանց Հայաստանի մէջ, Դրդ
դարուն, որոնք յատուկ են մեր այս լու-
սաւորեալ դարերուն: Այն ատեն անձա-
նօթ էր Ամերիկա և Եւրոպայի մէջ հեթա-
նո՞ս էր ժողովուրդներուն մեծամասնու-
թիւնը: Մեծն Ներսէս, քրիստոնէական
լուսաւոր տեսիլներով օժտուած Առաջնորդ
մը, զործնականացուց Աւետարանի մար-
դասիրական սկզբունքները, կազմակեր-
պեց դպրոցներ յոյն և ասորի լեզուներով,
հաստատեց հիւրանոցներ, հիւանդանոց-

ներ, ձերանոցներ, աշխատեցաւ քնջել հայ
բարքերու մէջէն հին հաւատքին վերջա-
մնացութիւնները, և իր առաքինութիւն-
ներուն թափը զգացուց նոյն իսկ հայ ար-
քունքի մէջ, կշտամբելով հոն տիրող քա-
րոյական ապականութիւնները: Մեծն Ներ-
սէս կենդանի կոթող մըն է հայ պատմու-
թեան մէջ և լուսաշող առաջնորդ մը Հայ
Եկեղեցւոյ ոյ մէջ:

Իսկ հնգշ. Պօղոս փաշա մեծ մարդա-
սէրն է մեր ժամանակներուն: Անոր կեն-
սագրութիւնը հրատարակուած է, հետա-
քըքիրներ կրնան կարգաւ կրկին կրկին:
Ես այս հոգեւոր հանդէսին մէջ, իրրեւ ծա-
նօթ մեծանուն հանգուցեալի անձին և
զործերուն, պիտի բռնմ որ մեր գնահա-
տանքը և յարգանքը Անոր հանդէպ, չէ
ուղղուած անոր արտղոսին և դրամին, այլ
անոր ծառայութեան սկզբունքին և կեր-
պին:

Պօղոս փաշա ամէնէն յառաջ մա՛րդ
մըն է, և կատարելագործուած մարդ մը:
Ան լու պատրաստութեամբ նետուեցաւ
կեանքի պայքարին մէջ, մշակուած ուղե-
ղով և արուեստի և դիտութեան զրահներով
զինուած: Այս պատրաստութեան շնոր-
հիւ է որ ան բազմապատկեց իր հայրենի
հորատութիւնը և զայն զործածեց ի նպաստ
հայ ժողովուրդի պէտքերուն՝ բարեկործու-
թեան բոլորովին նոր, մարդասիրական կեր-
պերով. ան իր ողջութեան իր իսկ խել-
քով ու ձեռքով յատկացուց հայ ժողովուր-
դին գրեթէ ինչ որ ունէր: Եւ այս բոլորը
ըրաւ այնպիսի համեստութեամբ մը, որ
կատարելապէս աւետարանական է: Պօղոս
փաշային ամէնէն մեծ և իր սրտին ամէնէն
մօտիկ ձեռնարկն եղաւ Հ. Բ. Ը. Միու-
թիւնը: Բարեկործականը, որուն ստոյգ
նշանակութիւնը դժբախտաբար դեռ չէ ըմ-
բռնուած պէտք եղածին պէս հայ ժողո-
վուրդի բոլոր խաւերուն մէջ, այնպիսի
կազմակերպութիւն մըն է որ կը միացնէ
բոլոր հայերը իրենց ազգային կեանքին
մէջ, առանց խտրելու սեռը, տարիքը,
դասանութիւնը, կուսակցութիւնը: Եւ այս-
պիսի Միութեան մը շնորհիւ է որ հայ ազ-
գը պիտի կրնայ հոգալ իր ներքին պէտ-
քերը և կարօտ չըլլալ օտարներու օգնու-
թեան:

Պօղոս փաշա Բարեկործականով ամէնէն գործնական զտը տուաւ հայ ժողովուրդին՝ միութեան վրայ: Այնպէս որ Բարեկործականին բարոյական ներքին արժէքը շատ աւելի բարձր է և հարուստ քան թէ անոր նիւթական հարստութիւնը, որ զժախտաբար զեռ շատ հեռի է Բարեկործականի հանդուցեալ հիմնադրին զիտած նպատակէն. որովհետեւ հայ ժողովուրդը այս քառորդ դարու ընթացքին մէջ զեռ չկրցաւ ըմբռնել Հ. Բ. Ը. Միութեան ոգին. այն ոգին որուն պէտք ունի մա՛նաւանդ այսօր ազգովին վերաշինուելու և ուժովնալու համար:

Այսօր ժողովուրդը ևնք այս սրբազանքի մէջ յարգելու համար հայ ազգին աշխարհական մեծ Առաջնորդին յիշատակը, որ միշտ կենդանի պիտի մնայ այս ժողովուրդին մէջ և պէտք է մնայ և առաջնորդէ մինչև որ հասնի իր նպատակին: Օրհնենք իր յիշատակը և ազօթենք որ Տէրը լուսաւորէ իր հոգին:

Ս. Պատարագի աւարտումէն ետքը կատարուեցաւ հոգևհանգստեան պաշտօնը Պատարագական Տեղապահ Մեսրոպ Սրբազանի հանդիսադրութեամբ: Շատ ներդաշնակ և սրտաշոյղ եղաւ պաշտամունքի այս մասն ալ, թրթռացնելով հաւատացեալ հոգիները, որոնք եկեղեցիէն ելան, տանելով իրենց հետ հայ ժողովուրդի մեծ առաջնորդներուն անմոռանալի յիշատակները:

Այս հոգեւոր հանդէսէն զտա Յիսուսակի Հանդիս մըն ալ սարքուեցաւ Հ. Բ. Ը. Միութեան Երուսաղէմի Մասնաճիւղի կողմէն, Յուլիս 5, ՇԲ. երեկոյ, ժամը 7.20—8.30, ժառանգաւորաց վարժարանի սրահին մէջ, նախագահութեամբ Պատրքին. Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Ս. Եպս. Նշանեանի և ներկայութեամբ Երուսաղէմի Կառավարիչ Վսեմ. Գրիթ Բոչի:

Սրահը ողորդուած էր ելեքարական յորդ լուսով. սրահի արեւմտեան ճակտին վրայ Մեծ Հանգուցեալին պատկերը՝ չըջանալուած սև շղարշներով:

Նախագահ Սրբազանը զբաւոր ուղերձով մը բացաւ հանդէսը, ի վեր հանեց Պօղոս փաշային ծառայութիւնը: Տիար Լեոն Զէնեան՝ անդիլերէն զբաւոր ուղերձ մը քաւ Երուսաղէմի Վսեմ, Կառավարչին:

յանուն Հ. Բ. Ը. Միութեան Երուսաղէմի Մասնաճիւղին, պատկերացուց Պօղոս փաշայի և անոր Հօր մարդասիրական ծառայութիւնները, Բարեկործականի նպատակն ու գործունէութիւնը, և հակիրճ տեղեկութիւն մը Միութեան Երուսաղէմի մասնաճիւղին վրայ: Ն. Վ. Երուսաղէմի Կառավարիչը այնքան ներշնչուեցաւ այս ուղերձէն որ՝ բեմ ելաւ և շատ համակրալից խօսքեր ուղղեց Հայ եկեղեցւոյն, հայ ժողովուրդին հասցէին, և զիտել տուաւ թէ ինքն այս միջոցին Հայց. եկեղեցւոյ պատմութիւնը կը կարդայ. և կարելի չէ որ երբ մէկը կարդայ այդ պատմութիւնը՝ և չհամակրի Հայոց եկեղեցւոյն: Պարծառքով յիշեց Դուրեան Սրբազանի հետ իր ունեցած մտերիմ բարեկամութիւնը և յայտարարեց որ հոս հաստատուած Ընծայարանը իր շունչը պիտի տարածէ շատ հեռուները. զովեց Պօղոս փաշայի մարդասիրական մեծ ոգին, որ զոյութիւն տուաւ Բարեկործականի: Տիար Գրիգոր Մխալեան կարդաց Պօղոս փաշային կենսագրութիւնը, որուն մէջ խնամքով շեշտեց Մեծագործ Հայուն ազգային ծառայութեան հանդրուանները և նուիրած գումարները: Բարգէն Սրբազան էր վերջին խօսողը, որ շատ կարեւոր իրողութեան մը վրայ դարձուց ունեկնորներուն ուշադրութիւնը. ամէն մարդ, հայ թէ օտար, ամէնքն ալ կը խոստովանին որ մեծ անձնաւորութիւն մըն է Պօղոս փաշայ խելացի մարդ մը. որ իր խելքն ու գրամը նուիրած է իր ազգին. մեր մէջ ալ, ամէն հայ, ինչպէս նաեւ հայ մամուլը, առանց բացառութեան, զովեաներով կը յիշատակեն անոր առաքինութիւններն ու ազգային ծառայութիւնները: Եթէ այս բոլոր գնահատումներ անկեղծ և գովեստներ իրական են, և վստահ եմ որ է՛ն, այն ատեն պէտք է գործնականապէս յարգել հանգուցեալին յիշատակը՝ բոլորուելով Հ. Բ. Ը. Միութեան շուրջը. որովհետեւ Բարեկործականը Պօղոս փաշային միակ խեղալը եղաւ, իր կեանքին վերջին 25 տարիները Բարեկործականին նուիրեց, անով զբաղեցաւ, անոր վրայ խօսեցաւ, և ուղեց որ հայ ժողովուրդը հասկնայ զայն:

Այս և ասոր նման Յիշատակի հանդէսներ, սպասուներ, համակրանքի ցոյցեր և արտայայտութիւններ ցաւ պիտի պատ-

ճառեն հանգուցեալ ոգւոյն, եթէ ատոնք մնան ցոյցի և խօսքի սահմանին մէջ. որովհետեւ Պօղոս փաշա այնքան համեստ, այնքան խոնարհ և բարի մարդ մըն էր որ չէր սիրեր ձեւերը: Եթէ կը խոստովանինք թէ Պօղոս փաշա հայ ազգին մեծ գաւառ-նեւերէն մէկն է, եթէ կը հաւատանք թէ խեղացի և ազգասէր մարդ մըն էր ան, պէտք է վստահիլ այդ խելքին, պէտք է հետևիլ անոր ազգասիրութեան օրինակին և բոլորուիլ Բարեգործականի շուրջ: Ամէն մէկ հայու համար գլխակցական պարտականութիւն մը պէտք է ըլլայ անդամագրուիլ Բարեգործականին, անոր հիմնադրին պէս, և յարգել յիշատակը մեծ հայուն: Բարեգործականը մեր ազգին համար ներքին գործութեան մշտաբուն աղբիւրը պիտի ըլլայ, եթէ հայ ժողովուրդին զաւակները գլխակցութեամբ բոլորուին անոր շուրջ և տան, ու կանոնաւորապէս տան, ինչ որ կրնան տալ: Հանգուցեալը այնքան համեստ էր որ չուզէր նոյն իսկ զինքն սիրողներ ու յարգողներ դրամ վատենն ծաղկեփռունջերու և ցաւակցական հեռագիրներու, այլ այդ դրամները նուիրեն Նուպարաշէնի. և ես օգտուելով առիթէն կոչ կ'ընեմ Երուսաղէմի հայութեան որ ծաղկի դրամ մը նուիրեն Նուպարաշէնի: Մասնախումբ մը պիտի կազմուի յաջորդ օրերու մէջ հաւաքելու համար ձեր նուէրները ի նպաստ Նուպարաշէնի և ի յիշատակ Մեծ Բարերար Պօղոս փաշա Նուպարի:

Ժառանգաւոր սանունք, նախակրթարանի աղջկունք ազգային երգերով, Տիարք Խնտամեան և Քիւրքճեան իրենց զոյգ ջութակներով, և Տիար Գ. Պարթեան իր մենեւերով, գեղարուեստական ընտիր շղթայով մը միացուցին ուղերձներու ընդհատը: Վերջապէս Տեղապահ Սրբազան Հոգւոցն ըսաւ և Տէրունական ազօթքով փակեց յաւէտ յիշատակիլի այս հանդէսը և ժողովուրդը արձակուեցաւ խիստ քաղցր յուշերու ներքեւ:

ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆՑ ՅԵՇԱՏԱԿԸ

Հնոցը. Դուրեան Սրբազանի կարգադրութեամբ Կիւլպէնկեանց յիշատակին Ս. Պատարագ կը մատուցուի Վարդապետի տօնին, կը կատարուի հոգեհանգստեան պաշտօն, և միաբանութեան կը տրուի հոգեհացի սեղան և ժամուց:

Վարդապետի տօնը Ս. Յակոբի մէջ ճոխացած է տեղական մասնաւոր հանդիսութիւններով: Օրուան պատարագիւն ու հանդիսադիրը պէտք է ըլլայ Ս. Պատրիարքը, որովհետեւ ո՛չ միայն հինգ Տաղաւարներէն մէկն է Փրկչին Այլակերպութիւնը, այլ նաև տօնն է Երուսաղէմի առաջին եպիսկոպոս և Ս. Աթոռիս պաշտպան Տեառնեղբայր Յակոբոս Առաքեալին: Այսօր նաև Ժողովրդ. Վարժարանին ուսանողները և Ընծայարանին Սարկաւազները սուրբ հաղորդութիւն կ'առնեն:

Այս տարի Յուլիս 27, Վարդապետի Կիւլպէնկեանց յիշատակին վրայ կ'աւելնար նաև Ընծայարանի Բարերար Պատրիկ Էֆ. Կիւլպէնկեանի մահուան տխուր յիշատակը:

Պատարագիւն էր Դեր. Մկրտիչ Եպս. Աղանունի, որ իր աւուր պատաճի քարոզին մէջ զրուստեց Կիւլպէնկեան բարեհամբաւ գերդաստանի ազգային և եկեղեցական ծառայութիւնները և երախտագիտութեամբ յիշատակեց ողբացեալ բարերար Պատրիկ Էֆ. Կիւլպէնկեանի յարումը Ս. Աթոռիս և ըրած մեծ ծառայութիւնը, Ընծայարանիս հաստատութեամբ: Օրհնեց բոլոր հանգուցեալ Կիւլպէնկեանց յիշատակները և արեւատութիւն մաղթեց ողջերուն համար:

Պատարագէն ետքը կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօնը Բարգէն Սրբազանի հանդիսադրութեամբ:

Իսկ երեկոյն Միաբանութեան տրուեցաւ հոգեհացի սեղանը, Տեղապահ Դեր. Մեսրոպ Սրբազանի նախագահութեամբ: Այս առթիւ Բարգէն Սրբազան ուղերձ մը ըրաւ, նկարագրելով Կիւլպէնկեան տան առեւտրական աշխարհի մէջ զբաւած գիրքը, անոնց բարեպաշտ և ազգասէր ոգին, որուն հարազատ ցոլացումն էր հանգուցեալ Պատրիկ:

Եթէ, ըսաւ Բարգէն Սրբազան, իմաստ մը ունի Հոգեհացը, ես պիտի ըսէի որ Պա-

տրիկի հոգին է որ մեզ հաւաքած է այսօր այս սեղաններուն շուրջ և մեր հետ է Ընծայարանիս Բարերարը, մանաւանդ իր սաներուն հետ և անոնց միջոցաւ: Բոլոր Հայոց պէս Կիւլպէնկեաններ ալ կը սիրեն Ս. Յակոբը: Անցեալ տարի Փարիզի մէջ Տիար Գալուստ Կիւլպէնկեան ինծի ըսաւ թէ Մատենագարանը շինելէն ետքը ուրիշ բաներ ալ պիտի ընէ: Եւ ասիկա, ըստ իս, կախուած է Միաբանութեան ծառայութեան արժէքէն: Իմ ջերմագին յանձնարարութիւնս այն է մեր նորընծաներուն որ մահու չափ հաւատարիմ ըլլան Սրբոց Յակոբեանց Աթոռին իրենց ծառայութիւններուն մէջ: Պատրիկ Կիւլպէնկեան զրամ տուաւ ծառայութեան այդ արժէքը ստեղծելու համար: Գալուստ Կիւլպէնկեան կրնայ այնչափ տալ որ Ս. Յակոբի զմէքը ոսկիով շինուի: Պէտք է արժեցնել այս բարի տրամադրութիւնները: Եւ ասիկա կախուած է, անգամ մըն ալ չհշտեմ, Միաբանութեան ծառայութեան արժէքէն: Օրհնեալ ըլլայ Կիւլպէնկեանց յիշատակը:

Անդանէն ետքը Տեղապահ Մեսրոպ Սըրբազան կարգաց էջմիածինէն Մատթէոս Արքեպիս. հետաքրքրական մէկ գրութիւնը, որ հրատարակուեցաւ ՍԻՈՆԻ այս թիւին մէջ, իբրեւ Միաբանութեան ուղղուած պաշտօնագիր, և ապա կատարուեցաւ Հոգեհանգստեան հակիրճ պաշտօն մը. Մկրտիչ Սըրբազան ըսաւ Հոգւոցը, որուն մէջ յիշատակեց Կիւլպէնկեան Պատրիկի հետ Հնդցը. Գէորգ Ե. Կթղկը. և Դուրեան Ս. Պատրիարքը: Տէրունական աղօթքով կնքուեցաւ յիշատակելի օրը Վարդապետի տօնախմբութեան:

ԴՈՒՐԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Դուրեան Հիմնադրամը առաւելագոյն շահով և ազահով կերպով արդիւնաւորելու համար, նոյն իսկ ողբացեալ Դուրեան Սըրբազանի ողջութեան, այլեւայլ միջոցներ կ'ուսումնասիրուէին:

Դուրեան Յորելեանի Կեղրկն. Յաննա ժողովը վերջնական կարգադրութիւն մը ընելու վրայ էր, երբ վրայ հասաւ Սրբազան Յորելեարին վախճանը: Վերջապէս, Ամբիկայի Դուրեան Յորելեանի Յանձնաժողովին հետ խորհրդակցելէ ետքը, Կեղրնական Յանձնաժողովը որոշեց հասութեան

կալուած մը կառուցանել Երուսաղէմի մէջ, Դուրեանաեկն անունով, և այդ կալուածին զուտ հասոյթը յատկացնել Դուրեան Մատենադարան փառապան ներքե հրատարակելի գիրքերու ծախքին:

Կեղրնական Յանձնաժողովը պաշտօնապէս գիտում ըրաւ Ս. Աթոռին Տնօրէն ժողովին որ Մեծ-Արտին վրայ գետին մը յատկացնէ հասութեան կալուածը կառուցանելու համար: Տնօրէն ժողովը սիրով ընդունեցաւ եղած առաջարկը, և նուիրեց արժէքաւոր գետին մը, Ս. Աթոռն ալ մասնակից ըրած ըլլալու համար Դուրեան Հիմնադրամի հանգանակութեան: Մեծ-Արտը Կարկուտեան դատէն շահուած հողամասին առնուն է: Դուրեանաեկնի համար յատկացուելիք գետինը պիտի ըլլայ ամէնէն բանուկ ճամբուն վրայ: Տնօրէն ժողովի կողմէն նուիրուած այս գետինին արժէքով, Դուրեան Հիմնադրամին քանակը մեծապէս կ'աճի, և շինուելիք կալուածին զուտ հասոյթն ալ ըստ այնմ կ'աւելնայ:

Դուրեան Յորելեանի Կեղրկն. Յաննա ժողովը իր վերջին նիստին մէջ, Օգոստ. 9. ԾԲ. առաւ, երախտագիտութեամբ արձանագրեց Տնօրէն ժողովին այս փառաւոր նուիրտութիւնը, և որոշեց հաղորդել զայն Նիւ Եորք, Դուրեան Յորելեանի Ամերիկայի Յանձնաժողովի Գարտուղարին, Տնօրէն ժողովի պաշտօնագրին պատճենին հետ:

Դուրեան Հիմնադրամի հաշուոյն կատարուած հանգանակութեան գումարը եղած է 3554 անգլիական ոսկի և մէկ շիլին, որ ի պահ պիտի դրուի Երուսաղէմի Պարքէյզ դրամատունը և հսկիչ Յանձնաժողովի մը միջոցաւ պիտի գործածուի կալուածին շինութեան:

Եւ կալուածին շինութենէն և անոր բերելիք զուտ հասոյթին ճշգումէն ետքն է որ պիտի ձեռնարկուի Դուրեան Մատենադարանի հատորներուն հրատարակութեան: Դուրեան Հիմնադրամի պահպանութեան, շահագործութեան և ատոր զուտ հասոյթին գործածութեան վերաբերեալ Կանոնագիրն ալ խմբագրուած է Բարգէն Սրբազանի կողմէն և ենթարկուած՝ Կեղրկն. Յանձնաժողովի անդամներուն քննութեան: Ըլլալիք գիտողութիւնները նկատի առնելէ ետքը, Կանոնագիրը պիտի ստանայ իր վերջին ձևը և պիտի դրուի գործադրութեան:

ՆՈՒՆԵՐ

ԳՈՒՐԵԱՆ ՄԱՏՆԱԳՐԱՐԱՆԻ

Գահիրէի Հայուհեաց Միութիւնը կը նը-
շարէ Սթէյլին 2

Սիրաքիւսէն (Նիւ-Եորք) Պրն. Սեդ-
րակ Ճիկէրճեան՝ երկու օրինակ The New
Reference Atlas of the world, 1929 C. S. Ham-
mond and Company. Inc. New-York, Brook-
lyn-Boston :

Կեսարացի Պ. Յակոբ Ս. Պալլոգճեան
Գահիրէէն, «Յուսարեր»ի Մատենաշարէն
22 կտոր գիրքեր :

1. Վ. Վալադեան. Կարմիր Աստղի սակ,
2. Ա. Ահարոնեան. Կարուսէր,
3. Չուցէրման. Լուսն Զրադացր,
4. Նաւասարդեան. Ինչ չէր եւ ինչ չալիսի
իցի մեր ուղին,
5. » Ն. Յ. Գ. Անելիք,
6. » Ն. Յ. Գ. Լիկւիդացիան,
7. Տօք. Գասպարեան. Պատմահասարակա-
գիական խնդիրներ,
8. Վարանդեան. Համայնավարութիւն եւ
Համաշխարհային Յեղափոխութիւն,
9. Աղեքսանդր Կուպրին. Կարկեմանէ Ա-
պարանջանը,
10. Լեւոնիդ Անպրիյե. Սանմանը ճղրա-
յուսած,
11. Ֆրանզեան. Հայ Հասարակական միսիօն,
12. Բաշխի Իշխանեան. Ներսէս ամիս Բօլշե-
ւիկեան բանտում,
13. Ռուբէն. Հայ Թրքական կնիքը,
14. Ջօլա. Թրեք Թաքէն,
15. Նժդէհ. Էջեր իմ Օրագրէն,
16. Ֆրանզեան. Հայ միսիօն,
17. Յուսարեր Սանմանագրական վէն
18. Նաւասարդեան. Հայաստանի Անկախու-
թիւնը,
19. » Դաւենակցութեան Բա-
ղանական ուղին,
20. Արշակունի. Խորհրդային Իշխանութեան
բնոյթը,
21. Նաւասարդեան. Ընկերավարութիւնը եւ
Դիմոկրատիզմը,
22. Շանթ. Կայսր,

Ս. Աթոռիս Մատենադարանին նուիրուած է
Նալեան Յակոբ պատրիարքի Գաղղոցիին նօ-
տրգիր զեղեցիկ մէկ ընդօրինակութիւնը ուղղակի

հեղինակին Ձեռագրաց վրայէն : Ձեռագիրը շատ
լաւ պահուած է, եւ Թանկագին յաւելուած մըն է
Մատենադարանին հաւարածոյին վրայ : Հետեւեալ
յիշատակարանը գրուած է նուիրատուութեան առ-
թիւ :

Տիկին Պապրիկ Թեքեան Կոստանդնու-
պոլսցի, զարդա յնակալ ի Գանիրեհ, զայս
ձեռագիր մատենա քաղաքացոց նուիրեհ Մատե-
նադարանի Մրոց Յակոբեանց Առաքելական
Արտոնոյն Հայոց յերուսաղիմ վասն յիշատակի
վաղամեկիկ որդոյ խոյն Նշանայ հանգուցեղոյ
աստ ի Գանիրեհ. Յամի Տեառն 1930 :

ԳԵՐ. Տ. ԲԱՐԳԷՆ ՍՐԲԱԶԱՆԻ ՄԵԿՆՈՒՄԸ

Ժոն. Վրթ. ի և Ընծայարանի ուսուցիչ
և ՍԻՈՆԻ խմբագրապետ Գեր. Տ. Բարգէն
Եպսկ. Կիւլէսէրեան Օգոստ. 13 ԴՇ. առաւ
մեկնեցաւ Ս. Աթոռէս գէպի Անթիլիան-Պէյ-
րութ իր նոր պաշտօնին ձեռնարկելու հա-
մար :

Սրբազանը երուսաղէմը կը թողու՝ վեց
տարուան արգիւնաւոր աշխատանք մը զուլս
հանելէ յետոյ : Ն. Սրբազանութիւնը 1928-ին
կոչուած էր աթոռակցութեան Կիլիկիոյ Վե-
հափառ Կաթողիկոսին կողմէ : Բայց Ն. Ս.
Օծութեան հաճութեամբ չէր ուզած կիսկա-
տար թողուլ իր ստանձնած պատասխանա-
տուութիւնը Ս. Աթոռիս ուսումնական գոր-
ծերուն մէջ : Այժմ Կիւլպէնեան դասարա-
նի շրջանը լրացած է և ուսանողները կու-
սակրօն քահանայութեան ձեռնադրութիւնն
ստացած են, ՍԻՈՆԻ Նոր Շրջանն ալ չորս
տարուան պայծառ կեանքով մը հիմնաւոր-
ուած և արմատացած է արգէն. ուստի Ն.
Սրբազանութիւնը սրտի անգործութեամբ կը
մեկնի Ս. Քաղաքէն՝ իր հետ տանելով միայն
խորունկ վիշտը Դուրեան Սրբազանի մահ-
ուան :

Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ.
Մեսրոպ Սրբազանի փափաքով՝ Բարգէն
Սրբազան սպասեց հոս Լոնտոնէ վերադար-
ձին Ս. Աթոռոյս միաբաններէն Տ. Տ. Նորայր
և Տիրան արեղաներուն, և Ժոն. Վրթ. ին
և Ընծայարանի յառաջիկայ տարուան ու-
սումնական նախագիծին պատրաստութեան
գործին մասնակցեցաւ և ՍԻՈՆԻ կանոնա-
ւոր հրատարակութեան համար ալ հարկ
եղած կարգադրութիւնները ըրաւ :

Սրբազանին ի պատիւ ողջերթի թէյա-

ոեղան տրուեցաւ նախ Հ. Բ. Բ. Միութեան երուսաղէմի Մասնաճիւղին կողմէ, Յուլիս 30, ԴՇ. զիւրբ, Բարեւիրականի սրահին մէջ, որուն ներկայ գտնուեցան 70 հրաւիրեալներ: Հանդէսը վարեց տեղւոյս հայ և օտար շրջանակներու մէջ ամէնէն ծանօթ և յարգուած դէմքերէն Բժ. Վահան Գալպիւսեան:

Իսկ Օգոստ. 9-ին, ՇԲ. երեկոյ, բոլորովին մտերմական մթնոլորտի մը մէջ, Աբրազանը հիւրն էր Ժոն. Վրժ. Ի և Լնծայաբանի Տեսչութեան:

Հաւաքոյթը տեղի ունեցաւ Կիւլպէնկեան դասարանին մէջ, ուր Աբրազանը այնքան տարիներ դասախօսած էր: Խօսեցան Գալոցներու նախկին տեսուչ և այժմ Տեղապահ Աբրազան, այժմու տեսուչ Գեր. Տ. Կիւրբղ Վրդ., Վեր. Կանոնիկոս Պրիմէն, նորընծայ արեղաներէն երկուքը, Հոգ. Տ. Տ. Գաւրիէ և Զոհն՝ իրենց ընկերներուն կողմէ, և Լնծայաբանի սարկաւազներէն, Բրշ. Սիմոն սարկաւազ: Ներկայ էին նաև Վեր. Պրիմէնի տիկինը, Դիւանապետ Տիար Կ. Նուրեան, Տիար Լ. Զէնեան, և ուսուցիչ Պ. Տարազեան:

Անկեղծ և երախտադիտական զգացումներ արտայայտուեցան Աբրազան ճամբորդին վեց տարուան Ս. Աթոռոյս մէջ ունեցած ուսումնական արդիւնաշատ գործունէութեան մասին՝ զայն զխնդով զանազան անկիւններէ, վասնզի Աբրազանը աշխատեցաւ իրր խմբադիր, քարոզիչ, ուսուցիչ և զաստիարակ՝ իր սաներուն սրտին մօտիկ:

Ամէնէն ետք Աբրազանը հրաժեշտի իր չքնաղ խօսքերով շնորհակալութիւն յայտնեց, պարզեց մեր եկեղեցւոյն այսօրուան վիճակը և ըսաւ. «Ես այնքան չեմ վախճար մարդորոններէ, որոնց հետ ճակատ ճակատի կարելի է մաքառիլ, բայց աւելի վրտանգաւոր են եկեղեցիին մէջ բոյն գրած ներքին թշնամիներ, որոնք եկեղեցիի աւնունով կը խօսին, բայց անոր հիմերը կը փորեն»: Արտայայտ զոչ մը ըրաւ նորընծայ կրօնաւորներուն և յորդորեց որ Աբրոց Յակոբեանց Աթոռին և Ուխտին հաւատարմութեամբ ծառայեն միշտ, մինչեւ իսկ իրենց արեան գնով:

Իր գործակիցներուն և սաներուն տըխրութիւնը ծանր չէ, վասնզի Աբրազանը կիսատ գործ մը չի թողուր իր ետեւ և մահաւանդ աւելի պատասխանատուութիւն պա-

հանջող և աւելի կարեոր ու բարձր գործի մը կը կանչէ զինք Տիրոջ ձայնը:

Գեր. Բարգէն Աբրազանի երուսաղէմի մէջ ունեցած գործունէութեան շուրջ ուրիշ առիթով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ

Երուսաղէմի Եթովպական նոր Հիւպատոս Մ. Բաղլօ Մէնամէնօ, Յունիս 13, Ուրբ. կէսօրէն առաջ ժամը 11-ին իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանին և ընդունուեցաւ Պատր. Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Ս. Եպս. Նշանեանի կողմէ:

Տեղապահ Աբրազանը, երեք օր վերջ, Յունիս 16, ԲՇ., ժամը 10,30-ին հետն ունենալով Հոգ. Տ. Գէորգ Վարդապետ ծանորդները, փոխադարձ այցելութիւն տուաւ Պ. Հիւպատոսին:

Նոյն օրը, կէսօրէն առաջ Նորին Աբրազանութիւնը, Տ. Գէորգ Վարդապետին հետ այցելեց Երուսաղէմի Վսեմ. Մեծ Միւֆթի Էֆէնտիին, և բարի գալուստ մաղթեց Նորին Վսեմութեան՝ Եւրոպայէն վերադարձին առթիւ:

Յուլիս 14, ԲՇ. Ֆոանսայի Ազգային Տօնի առթիւ, Պատր. Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Աբրազան, հետն ունենալով Դիւանապետ Տիար Կ. Յ. Նուրեանը, առտուն ժամը 11-ին այցելութիւն տուաւ Ֆոանսական Հիւպատոսին և շնորհաւորեց Պ. Ընդհ. Հիւպատոսը:

Պատր. Տեղապահ Գեր. Մեսրոպ Ս. Եպս. Նշանեան, հետն ունենալով Դիւանապետ Տիար Կ. Նուրեանը, Օգոստ. 11, Երկուշաբթի, կէսօրէն առաջ ժամը 11-ին այցելեց, Երուսաղէմի Գերմանական հիւպատոսարանը, և շնորհաւորեց Պ. Ընդհ. Հիւպատոսը, Գերմանիոյ Հանրապետութեան տարեգարձին առթիւ:

ՅԱԼԱԿՅՈՒԹԻՒՆ ԵՒ ՇՆՈՐՀԱՌՈՐՈՒԹԻՒՆ

Յակոբիկ Ասորիներու Պատրիարքը, Ամեն. Տ. Իգնատիոս-Իլիաս Գ., Մուսուլէն Հաղիրան 1 թուակիր արարեւելէն գրութիւն մը ուղղած է Տեղապահ Մեսրոպ Աբրազանին, որով իր ցաւակցութիւնը կը յայտնէ Ամեն. Դուրեան Ս. Պատրիարքի և Ամենայն Հայոց Վեհ. Հայրապետ Գէորգ

Ե. վախճանումներուն առթիւ, կը շնորհաւորէ Տեղապար Սրբազանին պաշտօնը և բարեմաղթութիւններ կ'ընէ Հայաստան-եայց եկեղեցւոյ պայծառութեան համար:

Տեղապար Սրբազան Յունիս 16 թուականին անգլիկներէն զրուցեալ մը պատասխանեց Ասորոց Ս. Պատրիարքին, յայտնելով իր և Միաբանութեան շնորհակալութիւնը:

ՊԱՂԵՍԻՆԻ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ՀԻՄՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Յունիս 19, ԵՇ. կէսօրէն ետքը ժամը 4-ին, Նորին Վսեմութիւն Պաղեստինի Բարձր Բժմիւտէրը կատարեց Երուսաղէմի Հնագիտական Թանգարանին հիմնարկութիւնը: Ըստ հրաւերի Նորին Վսեմութեան, սոյն հանդէսին ներկայ գտնուեցաւ Պատր. Տեղապար Գեր. Տ. Մեսրոպ Սրբազան, իր հետն ունենալով Հոգ. Տ. Կիւրեղ Վարդապետ Իսրայէլեանը:

«ԼԱՅԻ ՊԱՏ»ԻՆ ՔՆՆԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ
Ս. ՅԱԿՈԲԻ ՄԷՅ

Յունիս 28, ԵՖ. կէսօրէն ետքը ժամը 4-ին, Երուսաղէմի Կառավարիչ Վսեմ. Բիթ Բօչի առաջնորդութեամբ Ս. Յակոբ այցելեցին՝ Ազգերու Դաշնակցութեան ժողովին կողմէ Լացի Պատին խնդիրը քննելու համար Երուսաղէմ եկող Քննիչ Յանձնախումբին անդամները, մօտէն տեսնելու փափաքով այս պատմական հաստատութիւնը:

Քննիչ Յանձնախումբի անդամներն են. Նախագահ՝ Շուէտացի Վսեմ. Լօֆքընէ, (Շուէտական Կառավարութեան նախկին Արտաքին Գործոց Նախարար), Զուիցերացի Վսեմ. Զարլս Պարտէ (յայտնի Իրաւագէտ և Նախագահ Աւստրօ-Ռումանական Իրաւաբարական Խառն Դատարանի) և Հոլանտացի Վսեմ. Ս. Ժ. Վանքէմընէ (անդամ Հոլանտական Խորհրդարանի և նախկին Կառավարիչ Սոււմաթրայի):

Պատր. Տեղապար Գեր. Տ. Մեսրոպ Սրբազանի կողմէ ընդունուեցան Վսեմ. այցելուները Պատրիարքարանի Դահլիճին մէջ և մեծարուեցան թէյ յատկանով: Ապա պատեցան Պատրիարքարանը և առաջնորդուեցան Ս. Յակոբայ Տաճարը, ուր Տեղապար Սրբազանը ցոյց տուաւ անոնց Հայ

եկեղեցական հին գեղարուեստի ընտիր և գեղեցիկ նմուշներ: Վսեմ. այցելուներ շատ զոն տպաւորութիւն մը կրեցին այս այցելութենէն և շնորհակալութիւն յայտնեցին Տեղապար Սրբազան Հօր, իրենց հանդէպ ցոյց տրուած ընդունելութեան համար: Նաև իրենց հիացումը արտայայտեցին Հայ Գեղարուեստի նրբութեան մասին, որ զմայլելի յայտնութիւն մը եղած էր իրենց համար, և փափաք յայտնեցին դարձեալ գալ Ս. Յակոբ ըմբռնելու համար հայ գեղարուեստի վայելքը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԴԱՄԲԱՆԸ

Պարագաներու բերմունքով մինչև այս տարի կարելի էր եղած վայելուչ դամբարան մը շինել տալ Ս. Աթոռոյս Դահալալ Երջանկայիշատակ Վեհապետան Յարութիւն Ս. Պատրիարքի գերեզմանին վրայ: Անցեալ տարուան վերջը ձեռնարկուեցաւ այս գործին. պէտք եղած սպիտակ մարմարները բերուեցան Խալիլայէն, և Անթէպցի քարակոփ ուստա Յովհաննէս Ժիվէլեկեան հրաւիրուեցաւ Դահլիճէն, որ կուց կոփեց վայելչակերտ գործ մը, ձուռնաւ, յարեւմտեան կիրակոս պատրիարքի դամբարանին, միայն տնկէ քիչ մը փոքր ծաւալով, պառնաճեցնելու համար զիրքին անձկութեան:

Տապանաքարին վրայ քանդակուեցան հետեւեալ տողերը, Թորգոմ Սրբազանի գրչէն:

Տ. Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՔԵՊՍ. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ
ԱԶԳԱՍԷՐ ՊԱՏՐԻԱՐԷ Ս. ԵՐՈՒՍԱԼԷՄԻ

ՅԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ ԲՈՂԲՈՋԵԱԼ ՏՈՒՆԿ ՍԱ ԲԱՐԻ,
ԵԿԸ ԸՋՊԵՏՈՒՆՆԸ ԸՆԾԱՅԵԼ ՔՐԻՍՏՈՍԱԿՐՈՆ ՏԱՃԱՐԻ,
Ի ԳԱՒԱՌԻՆ ԲԱՐՁՐ ՇԱՅՈՑ ԵԿԱՅ ՇՈՎԻՒ ՆԱՍ ԸՆՏԻՐ,
ԵՒ ԱՊԱ ԶԱՍՍ ՔԱՍԵԻ ՄԻ ՊԱՏՐԻԱՐԷ ՔԱՋ ԱՆՁԸՆԴԻՐ՝
ՆԸԻՒՐԱԿԱՆ ԱՅՈՒՌՈՅ ՏԱՆԸՍ ՍԸՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ,
ՈՐ ՅԻՐ ԱՌՈՒՐՍԸ ՓԱՌՕՔ ՊԱՅՄԱՆԱՅՐ ԳԵՐԱԶԱՆՑ:

ԸՆԴ ՅՈՒՐՏ ԵՐՄԱՍԻ ԱՍՏԷՆ ՄԻՆՁ ԱՐԴ
ՄԱՐՄԻՆ Ի ՀՈՂ ԴԱՌՆԱՅ ՅԱԷՏ,
ՅԵՐԿԵՑ ԽՈՐԱՆԱՆ ԼՈՒՍԱԶԱՐԴ
ԽԱՅՏԱՅ ՀՈԳԻՆ ԵՐԱՆԱԷՏ:

ՄԵԵԱԼ 1817 ԳԶ. 1889 — 1910 ՀՈԿՏՄ. 4.

Վեհապետեան Յարութիւն Սրբազանը Ս. Աթոռիս բազմերախտ և բազմայիշատակ պատրիարքներէն է. իր անձնական բոլոր հարստութիւնը յատկացուցած է երուսաղէմի և եաֆայի մէջ հասութարեր կալուածներու, որոնք կարեւոր ազրիւրն են Ս. Աթոռիս այսօրուան եկամուտներուն:

Այն մեծ կալուածը, որ կառուցուած է երուսաղէմի մէջ եաֆա պողոտային վրայ, հանգուցեալ Դուրեան Սրբազան կոչեց ՎեհԱճէն, ինչպէս որ Պարոնտէրի Զիթաստանին մէջ շինուած Հովոցը անուանեց ՏիրԱճէն:

Տեղապահ Սրբազանի կարգադրութեամբ հանդիսաւոր պատարագ և հոգեհանգրտեան պաշտօն կատարուեցաւ Ս. Փրկիչ, Յունիս 29, Կիրակի առաւօտ և չքեղ հանգիսաւորութեամբ տեղի ունեցաւ բացումը գեղակերտ դամբանին:

Գեր. Մկրտիչ Եպս. իր աւուր պատշաճի քարոզին մէջ կենսադրութիւնը բրաւ մեծանուն պատրիարքին և պանծացուց անոր մատուցած ծառայութիւնը Հայ. Եկեղեցւոյ և մասնաւորապէս Ս. Աթոռիս, իր բարոյական և նիւթական արժէքներով:

Ս. Պատարագի աւարտումէն ետքը հոգեհանգստեան պաշտօնը կատարուեցաւ սուրբակի նորակերտ դամբարանին վրայ, նախագահութեամբ Տ. Մկրտիչ Սրբազանին:

Տեղապահ Մեսրոպ Սրբազան վերցուց ծածկոցը տապանաքարին վրայէն, և բոլոր Միաբանութիւնը և ժողովուրդը յարգանքի առջանցք մը բրին Վեհապետեանի շիրիմին շուրջ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

ԴՊՐՈՅՆԵՐՈՒ ՏԵՍՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Եպս. Նշանեան, որ քսան տարիներէ ի վեր կը վարէր Դպրոցներու Տեսչութեան պաշտօնը, իր հետզհետէ ծանրացող գրադումներուն պատճառաւ հրաժարեցաւ անկէ, և Տնօրէն ժողովը իր Յունիս 30-ի նիստին մէջ նոյն պաշտօնը յանձնեց Հոգ. Տ. Կիւրեղ Վարդապետ Իսրայէլեանի, որ արդէն իբրեւ Փոխ-Տեսչ

սուչ և աջ բազուկը Մեսրոպ Սրբազանին, մեծ հոգածութեամբ և աշակրջութեամբ ծառայած է Ս. Յակոբի կրթական յարկին, որ միանդամայն տունն է ուսանողներուն:

Հայր Կիւրեղ Ս. Աթոռիս անձնուէր Միաբաններէն է, ճշդապահ և անխոնջ, և փափաքող ներքին բարեկարգութեան, և վստահ ենք որ իր գործունէութենէն աւելի ևս պիտի օգտուին Դպրոցները:

ԳԵՐ. ՇԱՀԷՆ ՎԱՐԴԱՊԵՏ

Անթիլիասի Դպրոցին Վերատեսուչ Գեր. Շահէ Մ. Վ. Դասպարեան, որ Յունիս 17-22 երուսաղէմ անցուց, Յունիս 20 Կիր. առաւօտ հոգեւունչ քարոզ մը տուաւ Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ: Սոսեցաւ այս հաստատութեան կատարած և կատարելիք զերին վրայ, Դուրեանի դրած սկզբունքով և կերպով. շատ ցաւ յայտնեց որ ողջ չը գտաւ իր սիրելի և մեծանուն Ուսուցիչը, և շնորհակալութիւն յայտնեց Միաբանութեան, որ կարելի եղած զոհողութիւնները բրած է Դուրեան Սրբազանի հիւանդութեան գէմ կուսկու համար:

Շահէ Վարդապետ, որ Հայ Եկեղեցւոյ քաջախօս քարոզիչներէն է, շատ ազդուած էր Դուրեան Սրբազանի մահէն. յաճախ փղձկումներ ունեցաւ Դուրեանի վրայ խօսելու ատեն, նորընծաներ քառասունքի մէջ էին զեռ, այցելեց անոնց քանի մը անգամ, և իր եղբայրական խորհուրդներն ու փորձառութեան խրատները տուաւ անոնց և ողջագործանքով բաժնուեցաւ անոնցմէ:

Շահէ Վարդապետ շատ սիրեց երուսաղէմը, Ս. Յակոբը, և ոգեւորուած մեկնեցաւ գէպի Պերութ:

ՎԵՐԱԴԱՐՁ ԱՆԳԼԻԱՅԷՆ

Ս. Աթոռիս նորընծայ Միաբաններէն Հ. Նորայր Պողարեան և Հ. Տիրան Ներսեան, որ երկու տարիէ ի վեր Անգլիա կը գտնուէին, իրենց ուսումը կատարելագործելու համար, վերադարձան երուսաղէմ, Յունիս 30, ԴՇ. առաւօտ, Եգիպտոսի գիծով: Դպրոցներու Տեսուչ Հայր Կիւրեղ և նորընծայ կերպաներ կայարան գացին գիրենք զիմաւորելու, և Ս. Յակոբ մօտեկէ յառաջ ուղղուեցան Ս. Փրկիչ, այցելելու համար իրենց սիրելի ուսուցչին և հոգեւոր

ծնողին Դուրեան Արքայանի գերեզմանին:

Երկու երիտասարդ հոգևորականներ Անգլիոյ մէջ իրենց առաջին տարին անցուցին Միլֆորտի (Մանէշթրի մօտ) Ս. Յարութիւն Գօլէճին մէջ, որ վանական կարգուկանոնի տակ է. իսկ իրենց երկրորդ տարին անցուցին Լոնտօնի Քինկ Գօլէճի Աստուածաբանական ճիւղին մէջ: Այս երկու տարիները մեծապէս օգտակար եղած են իրենց զարգացման տեսակէտէն, և իրենց ծանօթութիւնը անգլիական կեանքին և կենցաղին, ինչպէս նաև իրենց այցելութիւնը Եւրոպիոյ գեղարուեստի և գիտութեան քանի մը գլխաւոր քաղաքներուն, Փարիզ, Պերլին, Վիեննա, Վիեննաիկ, Հոռմ, և Պրինտիպի զիծով Եզլապոս, լաւագոյն տոնթներ եղած են իրենց աշխարհածանօթութիւնը ընդլայնելու կողմէն: Հ. Նորայրով և Հ. Տիրանով՝ երկու թանկագին, թարմ, կորովի և քրիստոնէական տեսլիներով օժտուած ոյժեր կ'աւելնան ժառանգաւորաց վարժարանի և Ընծայարանի ուսուցչական մարմնի վրայ, յառաջիկայ դպրոցական նոր շրջանի մէջ, շարունակելու համար Դուրեան Արքայանի օրով սկսուած դպրոցական աշխատութիւնը:

ՄԵԿՆՈՒՄ

Տիար Լեւոն Զէնեան, որ Մայիս 17-էն ի վեր Երուսաղէմ եկած էր Բարզէն Արքայանի ուղղութեան տակ աշխատելու համար, Օգոստոս 13-ին մեկնեցաւ զէպի Հուլէպ, Պերութի ճամբով, մինչև Պերութ ուղեկցելով Բարզէն Արքայանի:

Զէնեան գրեթէ երեք ամիս մնաց Ս. Յակոբի մէջ, ներկայ գտնուեցաւ Ընծայարանի դասախօսութիւններուն, Տեղապահ Արքայանի կարգադրութեամբ վերաբեկու առաւ և մասնակցեցաւ ժամերգութեանց ժառանգաւորներու հետ, և հետաքրքրութեամբ սկսաւ ուսումնասիրել զբարբր:

Զէնեան սիրուեցաւ Ս. Յակոբի Միաբանութեան կողմէն և մասնաւոր համակրանքը վայելեց Գեր. Տեղապահ Արքայանին իր փայլուն ընդունակութիւններուն, եկեղեցասիրութեան և համեստութեան համար:

Վստահ ենք որ Ս. Յակոբի մէջ ձեռք բերած փորձութիւնները մեծապէս օգտակար պիտի ըլլան իրեն՝ կիրակնօրեայ Դպրոցներու կազմակերպութեան:

ՀՕՄՍԻ ՔԱՀԱՆԱՅԱՅՈՒՆ

Բրչն. Սարկաւազ Եղուարդ Ոսկերիւեան, Հալէպի Առաջնորդ Գեր. Արտաւազդ Եպիսկոպոսին յանձնարարութեամբ, Ս. Յակոբ հասաւ Յուլիս 5, ՇԲ., մարդուելու համար եկեղեցական արարողութիւններու մէջ: Եղուարդ Արկղ. բնիկ Զէյթունցի է եւ 17 տարուան ուսուցիչ՝ ազգային վարժարաններու մէջ: Մինչև և Սեպտեմբերի վերջը պիտի մնայ հոս և ապա Հալէպ երթալով Քահանայ պիտի ձեռնադրուի՝ հովուելու համար Հոմսի, և ի հարկին Համայի հայ գաղութները, և միանգամայն ուսուցիչը պիտի ըլլայ Հոմսի դպրոցին:

ԷԶՄԻԱՄԻՆ ԵՐԹԱԼԻԲ

ՊԱՏԳԱՄԱՌՈՂՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ս. Աթոռոյս Միաբանական Ընդհանուր Ժողովը Օգոստ. 16-ին Տեղապահ Տ. Մեօրոպ Եպս. Նախագահութեամբ նիստ գումարեց պատրիարքարանի դահլիճին մէջ և Գերագոյն Հոգեւոր Խորհուրդէն հասած նոր հրահանգին համաձայն Ս. Էջմիածնի մէջ գումարուելիք Ազգային-Եկեղեցական Ժողովին մասնակցելու համար՝ ձայներու մեծամասնութեամբ Երուսաղէմի Միաբանութեան ներկայացուցիչ ընտրեց Կ. Պոլսի Երուսաղէմի պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Սմբատ Եպս. Գաղաղեանը:

Տեղապահ Արքայանի ալ իր ձայնը տուած էր որդէն Տ. Սմբատ Եպս. ին, նըկատելով թէ իր պաշտօնին բերմամբ պիտի չկրնայ հեռանալ Երուսաղէմէն: Իսկ Տ. Մկրտիչ Եպս. Աղաւնունի և Տ. Մատթէոս Եպս. Գայրզճեան, որոնք նոյնպէս առանձին առանձին հրաւիրագրեր ընդունած են, ծերութեան և տկարութեան պատճառաւ անկարող ըլլալով կատարել այդ երկարատե ուղևորութիւնը մինչև Ս. Էջմիածին, իրենց ձայները տուին Գեր. Հոգեւոր Խորհուրդի անդամ Տ. Տ. Գարեգին և Բագրատ Արքեպիսկոպոսներուն:

Յառաջիկայ Հոկտ. 26-ին Ս. Էջմիածնի մէջ կատարուելիք Հայրապետական ընտրութեան մասին Գերագոյն Հոգեւոր Խոր-

հուրդէն ստացուած պաշտօնադրին համաձայն, ձեռնարկուեցաւ Երուսաղէմի Պատրիարքութեան շրջանի Հայ ժողովուրդը ներկայացնելիք աշխարհական պատգամաւորի ընտրութեան:

Հստայամ, Պատր. Տեղապահ Գեր. Տ. Մեսրոպ Ս. Եպս. Նշանեանի կողմանէ հրահանգներ տրուեցան Պաղեստինեան Թեմերուն (Բեթղէհէմ, Եաֆա-Ռեմէ, Հայֆա և Անդր-Յորդանան):

Օգոստոս 17, Կիրակի, Ժամը 9,30ին, Ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ Գեր. Տ. Մկրտիչ Ս. Եպս. Աղաւեսունիի նախագահութեամբ կատարուեցաւ ընտրութիւնը Երուսաղէմի Հայ ժողովրդեան Պատուիրակին: Ներկայից քուէներու առաւելութեամբ ընտրուեցաւ Երուսաղէմացի Ազն. Տիար Ղազարոս Մերկերեան:

Պաղեստինի միւս Թեմերէն ընտրուած պատուիրակներն են՝ Տիար Գառնիկ Պանգլեան՝ Բեթղէհէմէն, Տիար Գարեգին Թաղէսեան՝ Եաֆայէն, Տիար Սարգիս Տէր Մովսէսեան՝ Հայֆայէն և Տիար Գրիգոր Մխալեան՝ Անդր-Յորդանանէն: Ասոնք Տեղապահ Սրբազանի նախագահութեամբ ժողով պիտի գումարեն ընտրելու համար Երուսաղէմի Պատրիարքութեան շրջանի աշխարհական Պատգամաւորը:

Հալէպ. 17 Մարտ 1930

Կարողիկոսութիւն Հայոց Կիլիկիոյ

Համար 2392-10

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Դուբեան

Պատրիարք Հայոց

յԵՐՈՍՈՒՍԱՂԷՄ

Օրհնութեամբ և շնորհակալութեամբ ստացել էինք Ձերդ Սրբաղնութեան Համար 9544-17 և փետրուար 14 գթալիբ ու նպատարեր — Հարիւր քսան և ութը Անգ. Լիբա — գրութիւնը: Զէքը յանձնած էինք փետրուար 21ին նորեկ բռնազաղթիբուս «Բնամակալ Մարմնոյն» Դանձապահ Տիար Արմէն Մաղլուսեանին:

Վերջերս ալ ստացանք Ձեր Սրբաղնութեան երկրորդ նամակը Համար 9620-17 ու Մարտ 11, 53 սթէլլին 15 Շիլլինի չէքով, հանգանակութեան ցանկերով ու հաշուեցոյցով: Զէքը յանձնեցինք Մարտ 15ին ու կրկին գումարներու 181 Սթէլլին ու 15 Շիլլին ստացագրերը կը ներժակենք:

Ուրախութեան արտասուքներով կ'օրհնենք Հանգանակիչ երկուս Խուճիբը: Կ'օրհնենք զբրամական ու զգետնեղէնի նուիրատուք: Մեզի հետ հազարաւորներ կ'աղօթեն Ձեր պատուական կենաց, ու Միարանութեան դարուցի դարս բարգաւաճ յարատեւութեան համար:

Սուբիոյ ու Լիբանանի հանգանակութիւններէն՝ Պաղեստինի հանգանակութիւնը զուարթառատն է, իբրեւ ապացոյց սիրոյ ու խաղաղութեան հողամասին մէջ ապրողներուն եղբայրութեան զեղումին:

Պարգևատուն Աստուած վարձահատոյց ըլլայ իր կատարեալ պարգևներով:

Եղբայրական սիրոյ ողջագուրմամբ

Մնամ Ազօթաբար

(Ստորագրութիւն)

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԿԻԼԻԿԻՈՅ

Հ Ա Շ Ո Ւ Ե Յ Ո Յ Ց

Սիւրիոյ Երեւի Հայ զաղարկանաց ի նպաստ Պաղեստինի մէջ կասաբուած հանգանակութեան

Մ Ո Ւ Տ Ք

ԱՐԴԵՒՆԸ ԵՐՈՍՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

Լիբա Պաղ. Միլս

Վանքարնակներու Ցանձնաժողովին միջոցաւ Միարանութիւնէն եւ Վանուցս մէջ բնակող ազգայիններէն հանգանակուած, ըստ Տոմարի

36,745

Տիկնանց Օժանդակ Մասնախումբի ձեռամբ հանգանակուած

7,180

43,925

Քաղաքարնակներու Ցանձնաժողովին միջոցաւ հանգանակուած, ըստ Տոմարի

23,270

Երուսաղէմի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ միջոցաւ հանգանակուած, ըստ ցուցակի

5,470

Երուսաղէմի ԶէՅԹՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ կողմէ սարքուած Թատերական ներկայացումի արդիւնքէն

2,500

Երուսաղէմի ՄԱՐԱՇԻ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ միջոցաւ հանգանակուած ըստ ցուցակի

9,000

Երուսաղէմ, ՕՐ. ՇԵՆԷԼԷՐԷՆ ղրկուած

1,500

85,665

ԲԵԹՂԵՀԷՄԻ մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքը

15,200

ՌԷՄԷԼԻ մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքը

2,650

ԵԱՅԱՅԻ մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքը

41,600

ԿԱԶԱՅԻ մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքը

2,500

ՀԱՅՅԱՅԻ ԵՒ ՇԵՂԱԿԱՅԻՅ մէջ կատարուած հանգանակութեան արդիւնքը

38,260

Ընդհանուր գումար 185,875

Ե Լ Ք

Լիւր Պաղ. Միլս

Հանդերձեղէն հաւարող Տիկնանց Օժանդակ Մասնախումբին արուարձանները շրջելու օթոյի ծախք	1,000
Հաւարուած լաթերուն 6 հակերը կապելու համար եղած ծախքերը	2,925
Ն. Օժ. Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին զրկուած 2 շէրերուն ծախքը	0 200
	4,125
14 Փետր. 1930ին Ն. Օժ. Կիլիկիոյ Ս. Կա- թողիկոսին զրկուած, Թ. 202397 Ձէրով, 128 Սթէրլին	128,000
10 Մարտ 1930ին Նորին, Օժուքեան զըր- կուած, Թ. 202568 Ձէրով, 53 Սթէրլին եւ 15 Շիլլին	53,750

Ընդհանուր գումար 185,875

Ի Դիւանէ Հաշուակալութեան

Տեսուչ Ելեւստից

ՄԱՏԹԵՈՍ ԵՊՍ. ԴԱՅԷԴՃԱՆ

1930 Մարտ 10
Երուսաղէմ

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — Տիկնանց Մասնախումբին մի-
ջոցաւ վանքարանակ եւ բաղարարանակ բարեփոխ ըն-
տանիքներէն հաւարուած է 6 հակ գործածուած
զգեստեղէններ, որոնք զրկուեցան Հալէպի Ազգ.
Առաջնորդարանին:

Նոյնպէս, բաղարիս սզգայիներէն Լուսանկա-
րիչ Տիար Յովհաննէս Կ. Գրիգորեան, օտարներէն
հաւարած է գործածուած հանդերձեղէններ: Ասոնք
ալ 3-անուկով զրկուած են Հալէպի Ազգ. Առաջ-
նորդարանը, յատկացուելու համար նորեկ հայ զաղ-
թականներու պիտոյից:

Հեռագիրներ՝ որոնք բաւուած են Տեղապան Սրբ-
բազանին կողմէ՝ Քէնքրպրդիի Արքեպիսկոպոսին՝ իր
նախորդին մահուան. Յովակիմեան Սրբազանին՝ Յո-
րէլեանի շնորհաւորութեան. Տիար Պատրիկ Կիլիկեցիեա-
նի՝ իւրանուն սանեբու ձեռնադրութեան համար. եւ Յայն
Բարեբաւին մահուան առիթով՝ ցուակցականք ուղղեալ
Լոսնոն համգուցեալի ողջոյն Տիար Ներսէսի եւ Նիս-
Եոթի հանգուցեալի եղբօր Տիար Յարութիւնի:

Jerusalem, 28th May, 1930

ARCHBISHOP OF CANTERBURY
LONDON

Locum Tenens Armenian Patriarchate Je-
rusalem presents profound condolences in his
name and congregation and Armenians of Pa-
lestine for sad bereavement felt on the death of
saintly Lord Davidson Archbishop Canterbury.

Locum Tenens
BISHOP MESROB

Jerusalem, le 7 Juin, 1930

EMINENCE ARCHEVEQUE
STEPANNOS HOVAGUIMIAN
12, Rue Pirotzka
SOFIA

Au nom Congregation felicitons avec joie
votre Jubilee Diamant. Souhaitons viaillse heu-
reuse pleine santé pour pouvoir longtemps servir
Eglise à laquelle vous avez voué soixante an-
nées fécondes.

Locum Tenens
EVÊQUE MESROB

Jerusalem, le 22/6/1930

GULBROCO. LONDON

Deep sorrow sad condolences loss great
national Benefactor your father learnt by Con-
stantinople newspapers.

Locum Tenens
BISHOP MESROB

Jerusalem, le 22/6/30

GULBENKIAN NEW YORK

Profonde douleur condoléances attristées
mort grand bienfaiteur national Badrik Effendi
apprise par journaux Constantinople.

Locum Tenens
EVÊQUE MESROB

Jerusalem, 11/6/930

GULBENKIAN NEW YORK

Huit des diacres classe Gulbenkian seront
sacrés vartabeds dimanche 22 courant. A cette
occasion anticipons nos sincères félicitations pour
œuvres très méritoire vous avez accomplie en
dotant Eglise arménienne de huit nouveaux
dignes prelat. Prions pour votre santé pros-
perité et famille

Locum Tenens
EVÊQUE MESROB

Բ Ժ Ծ Կ Ա Գ Ի Ր Ք

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՏՈՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆԻ

ԸՆԴԱՐՁԱԿ 2 ՀԱՏՈՐ յոր կը պարունակէ

Ռուսահայ, Թուրքահայ, Պարսկահայ, Հնդկահայ, Եգիպտահայ, և այլն
հին և հնագոյն 40 է աւելի բժիշկներու կենսագրութիւնները, իրենց
լուսանկարներով, նաև իրենց գործերուն ու ժամանակակից ազգային
նշանաւոր անցքերու պատմութիւնը, սկիզբը ունենալով յառաջաբան մը
գրուած՝

ՎԵՂԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԷ

ՊԻՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊՐԱԿ ԱՌ ՊՐԱԿ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՄԲ

որուն համար Բարիզի Հայ Բժշկական Միութիւնը կազմած է յատուկ
յանձնաժողով

ՀՈՎԱՆԱԻՐՈՒԹԵԱՄԲ ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱՅԻ

ԵՒ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՄԲ ՎՍԵՄ. ԳԱՐԻԷԼ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆԻ

Անդամակցութեամբ՝ Պ.Պ. Տոքթ. Ալլահյէրտի, Տոքթ. Արթէն, Լևոն Բա-
շալեան, Տոքթ. Կ. Եաղուպ, Արմենակ Համբարձումեան, Վահան Մա-
լէղեան, Ռ. Որբերեան, Առաքել Սարուխան, Գր. Սինապեան, Տոքթ.
Մ. Քէպապճեան, Տոքթ. Պ. Քօլօլեան:

ԵՐԿՈՒ ՍՏՈՒԱՐ ՀԱՏՈՐԻՆ ԳԻՆՆ Է 2 ԱՆԳԼ. ՈՍԿԻ

Բաժանորդագրութեան փոխարժէքը կանխիկ ուղարկել՝

ՏՕՔԹ. ՔՕԼՕԼԵԱՆԻ 37 bis. Rue de Ponthieu, PARIS (8°).

Փարիզ, 24 Մայիս 1930

ԲԱՐԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԻՒԼԷՍԷՐԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ. Եկեղեցւոյ Բարեկարգութեան վերաբերեալ խնդիրներ: — Հայ.
Եկեղեցւոյ դիրքը, Բրիտ. Ընդհ. Եկեղեցւոյ մեջ: — Առաքելա-
կանութիւն Հայ. Եկեղեցւոյ: — Պետութիւն եւ Եկեղեցի:

(Առաջապաշտման ՄԻՋՆ Ամսագրէն)

Լոյս տեսաւ Ս. Աթոռոյս Տպարանէն եւ կը վաճառուի հասը 1 Շիլինի

ՍԻՈՆ ՆՈՒԻՐՈՂՆԵՐ 1930-Ի ՀԱՄԱՐ

Տ. Վառձապուհ Եպս. Քրպարեան՝ Բարի-
զէն, «Ռազմիկ» Միութեան՝ Նիւ Եորք:

Տ. Տիրան Աթղ. Ներսիսեան՝ Երուսաղէմէն,
Տ. Գրիգոր Ծ. Վ. Շաշամեանին Պերլին:

Տքթ. Ա. Պարոնիկեան՝ Լոսնիցկրունտէն,
Հայոց Եկեղեցիին Համա. — Քէլէկ-
եան Որբանոցին Պէյրութ. — Այան-
եան Տ. Յուսիկ Քհնյին. Պէյրութ. —
Կրթասիրաց Վարժարանին Հալէպ. —
Հայոց Եկեղեցւոյն Տրիպոլիս. — Միս
Ֆիրսըն որբանոցին Շէմլան. — Ազգ. Վար-
ժարանին Զահլէ. — Ազգ. Վար-
ժարանին Սայտա. — Տ. Խորէն Քհնյ.

Գուլիկեանին Սայտա. — Հայոց Եկե-
ղեցւոյն Սեւանիկ. — Տ. Արսէն Քհնյ.
Սաւոյեանին Տրամա. — Տօնիկեան Տ.
Ժիրայր Քհնյին. Բապալա. — Հայ Օգն.
Կոմիտէին Լոսնիցկրունտ:

Պալլզեան Լեոն՝ Նիւ Եորքէն, Ազգ. Վար-
ժարանին Հոմա. — Ազգ. Վարժարա-
նին Մուսուլ:

Մեծիկեան Գրիգոր՝ Ֆիլատելֆիայէն, Մե-
ծիկեան Օր. Սառային Պէյրութ:

Իբրանոսեան Կ.՝ Պերլինէն, Եկեղեցասիրաց
Միութեան Հալէպ. — Կիլիկեան Վար-
ժարանին Հալէպ:

Օգոստոսի վերջերը լոյս պիտի տեսնէ, Վեցեփիկի Մխիթարեան Տպարանէն, 250 մեծադիր էջերով, 120 լուսասիւղ եւ գունաւոր պատկերներով, Վասպուրականի, Վանի եւ Շասախի փառէզներով

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Շեղ Հատոր

Կը հրատարակուի ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
կողմէ, Ապրիլեան Հերոսամարտի 15 ամեակին առթիւ:

Գին 1.50 Տօլար

Դիմել՝ Haik Adjemian, TABRIZ (Persia)